


3020

Ա. Ասլեն


ԴԱՐՁԱԼ

ՍՈՑԻԱԼ-ՀԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ԹԵՔՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ



ԽՍՀՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ • 1938



3K33 մ.թ.
Դ-26

Պրոլետարներ բալոր յերկիրների, միացե՛ք

14 JUN 2005

Ի. Վ. Սաւեն

20 NOV 2009

Դ Ա Ր Զ Յ Ա Լ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ

Թ Ե Ք Մ Ա Ն Մ Ա Ս Ի Ն

ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Զեկուցում յեզ յեզրափակման խօսք Կոմունիստական Խնդեմացիոնալի Գործադիր Կոմիտեյի VII ընգլայնված պլենումում
7-13 դեկտեմբերի 1926 թ.

Կ Ո Ւ Ս Ա Կ Ց Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ց ՈՒ Թ Յ Ց ՈՒ Ն
ՅԵՐԵՎԱՆ • 1935

05.08.2013

3020

Առաջնական մասնակիցներ
Թարգմ. Լ. Արովյան յել Ա. Խոնդկարյան
Կոմիտու պր. Յե. Տեր-Մինասյան
Մրագրիչ Ա. Տեր-Մկրտչյան
Տեխն. խմբ. Տ. Խաչվանելյան

▲
Կուսական տպարան
Դպավետի լիազոր Ը-36, Պատվեր № 118
Հրատ. 277, Տիրամ 5800
ՊՍԻ
Խնդեքս - ԱՊ



И. В. СТАЛИН

ЕЩЕ РАЗ О СОЦИАЛ-ДЕМОКРАТИЧЕСКОМ
УКЛОНЕ В НАШЕЙ ПАРТИИ

Партизат, Эривань

ԶԵԿՈՒՑՈՒՄ

ԿԻԳԿԻ VII ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՊԼԵՆՈՒՄԻՆ

1926 թ. ԴԵԿԱՏԵՄԲՐԻ 7-ին

I. ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնկերներ, նախքան հարցի եյությանն անցնելը, թույլ տվեք միքանի նախնական դիտողություններ անել:

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին հարցը, դա—մեր կուսակցության ներսում յեղած պայքարի հարցն ե, այն պայքարի, վորը յերեկ չի սկսվել և վորը չե դադարում: Յեթե վերցնենք մեր կուսակցության պատմությունն այն մոմենտից, յերբ կուսակցությունը ծնունդ առավելք բոլենիկների մի խումբ 1903 թ. ու հետեւնք նրա հետագա ետապներին մինչև մեր ժամանակը, ապա կարող ենք առանց չափազանցացնելու ասել վոր մեր կուսակցության պատմությունը, դա—այդ կուսակցության ներսում յեղած հակասություննե-

թի պատմությունն ե, այդ հակասություն-
ների հաղթահարման և մեր կուսակցության
աստիճանական ամրացման պատմությունն
ե այդ հակասությունների հաղթահար-
ման հիմքի վրա: Կարելի յե կարծիվ, թե
ուստի մարդիկ խիստ կովարար են, սիրում
են դիսկուսիաներ մղել, տարածայնություն-
ներ են սերմանում և այդ պատճառով կու-
սակցության գարգացումը նրանց մոտ ըն-
թանում է ներկուսակցական հակասություն-
ների հաղթահարման միջոցով: Այդ սխալ ե,
ընկերությունն այստեղ կովարարությունը
չե: Բանն այստեղ այն սկզբունքային տա-
րածայնությունների առկայությունն ե, վո-
րոնք ծագում են կուսակցության գար-
գացման ընթացքում, պրոլետարիատի պայ-
քարի ընթացքում: Բանն այստեղ այն ե,
վոր հակասությունները կարելի յե հաղթա-
հարել միայն այն միջոցով, վոր պայքար
մղենք այս կամ այն սկզբունքի համար, պայ-
քարի այս կամ այն նպատակի համար, դե-
պի նպատակը տանող պայքարի այս կամ
այն մեթոդի համար: Ընթացիկ քաղաքա-

կանության հարցերում, զուտ գործնական
բնություններում կուսակցու-
թյան ներսում այլ կերպ մտածողների հետ
կարելի յե և հարկավոր ե ամեն տեսակ
համաձայնություններ կայացնել Բայց յե-
թե այդ հարցերը կապ ունեն սկզբուն-
քային տարածայնությունների հետ, ապա
վոչ մի համաձայնություն, վոչ մի «միջին»
գիծ չի կարող փրկել գործը: Սկզբունքա-
յին բնույթի հարցերում «միջին» գիծ չկա
և չի կարող լինել: Կուսակցության աշ-
խատանքի հիմք պետք ե դարձնել կամ մեկ,
կամ մյուս սկզբունքը: Սկզբունքային հար-
ցերում «միջին» գիծը, դա— ուղիղներն աղ-
բոտելու «գիծ» ե, տարածայնություններն
սքողելու «գիծ» ե, կուսակցության գաղա-
փարային վերասերման «գիծ», կուսակցու-
թյան գաղափարային մահվան «գիծ»: յ

Ի՞նչպես են ապրում ու զարգանում այժմ
սոցիալ-գեմոլիրատական կուսակցություն-
ներն Արևոտքում: Նրանց մոտ կուսակ-
ցության ներսում կան արդյոք հակասու-
թյուններ, սկզբունքային տարածայնու-

թյունները իհարկե, կամ: Այդ հակասությունները նրանք բաց են անում արդյոք և ջանմում են հաղթահարել ազնվաբար ու բացահայտ կերպով՝ կուսակցական մասսաների աչքի առաջ: Վհչ: Իհարկե, վհչ: Սոցիալ-դեմոկրատիայի պրակտիկան այդ հակասություններն ու տարածայնությունները ծածկելն ե, թագնելը: Սոցիալ-դեմոկրատիայի պրակտիկան այն ե, վոր իր կոնֆերենցիաներն ու համագումարները դարձնի պարագային բարեհաջողության դատարկ դիմականանդես, խնամքով թագնելով ու ավաղելով ներքին տարածայնությունները: Բայց դրանից վոչինչ չի կարող ստացվել, բացի ուղեղներն աղբոտելուց և կուսակցության գաղափարային աղքատացումից: Արևմտայելքոպական յերբեմնի հեղափոխական, իսկ այժմ ուժքորմիստական սոցիալ-դեմոկրատիայի անկման պատճառներից մեկն ել այս ե:

Բայց այդպես ապրել ու զարգանալ մենք չենք կարող, ընկերներ: Ակզբունքային «միջին» գծի քաղաքականությունը, դա—

մեր քաղաքականությունը չե: Ակզբունքային «միջին» գծի քաղաքականությունը, դա—թառամող ու վերասերվող կուսակցությունների քաղաքականությունն ի: Այդպիսի քաղաքականությունը չի կարող չհասցնել այն բանին, վոր կուսակցությունը դառնապարագ տեղն աշխատող ու բանվորական մասսաներից կտրված բյուրոկրատական դատարկ ապարատ: Այդ ուղին մեր ուղին չե: Մեր կուսակցության ամբողջ անցյալը հաստատումն ե այն դրույթի, վոր մեր կուսակցության պատմությունը ներկուսակցական հակասությունները հաղթահարելու և այդ հաղթահարման հիման վրա մեր կուսակցության շարքերն անշեղորեն ամրացնելու պատմությունն ե:

Վերցնենք առաջին շրջանը, «հսկրա»-յի շրջանը, կամ մեր կուսակցության II համագումարի շրջանը, յերբ մեր կուսակցության ներսում առաջին անգամ յերևան յեկան տարածայնությունները բոլշևիկների ու մենշևիկների միջև և յերբ մեր կուսակցության վերնախավը վերջիվերջո բաժանվեց

յերկու մասի՝ բոլորի կյան մասի (Լենին) ու
մենչեւկյան մասի (Պլեխանով, Ակսելով,
Մարտով, Զասուլիչ, Պոտրեսով), Լենինն
այն ժամանակ մենակ եր, Յեթե դռք
իմանայիք, թե այն ժամանակ ինչքան ճիշ
ու աղաղակ կար Լենինից հեռացած «անփո-
խարինելիների» մասին: Սակայն պայքարի
պրակտիկան ու կուսակցության պատմու-
թյունը ցույց տվին, վոր այդ տարբնթա-
ցության տակ սկզբունքային բազա կար,
վոր այդ տարբնթացությունն անհրաժեշտ
ետապ եր հսկապես հեղափոխական ու իս-
կապես բոլշևիկյան կուսակցության ծագման
ու զարգացման համար: Պայքարի պրակտի-
կան այն ժամանակ ցույց տվեց, վոր ա-
ռաջին՝ բանը քանակը չե, այլ վորակը, և
յերկրորդ՝ բանը ձեւական միասնությունը
չե, այլ այն, վոր միասնությունն սկզբուն-
քային հիմք ունենա: Պատմությունը ցույց
տվեց, վոր Լենինն իրավացի յեր, իսկ
«անփոխարինելիներն» անիրավացի եյին:
Պատմությունը ցույց տվեց, վոր յեթե չհաղ-
թահարվեյին Լենինի և «անփոխարինելի»

ներից միջն յեղած հակասությունները, մենք
իսկական հեղափոխական կուսակցություն
չեյինք ունենա:

Վերցնենք հետեւյալ շրջանը, 1905 թվի
հեղափոխության նախորեցի շրջանը, յերբ
բոլշևիկներն ու մենշևիկները գեռես մի կու-
սակցության ներսում իրար դեմ եյին կանգ-
նած վորպես յերկու միանգամայն տարբեր
պլատֆորմներ ունեցող բանակներ, յերբ
բոլշևիկները մեր կուսակցության փորձալ
պառակտման շեմքին եյին կանգնած և
յերբ մեր հեղափոխության դիմք պաշտպա-
նելու և պահելու համար նրանք ստիպված
եյին իրենց հատուկ համագումարը գումա-
րել (III համագումարը): Կուսակցության բոլ-
շևիկյան մասն այն ժամանակ ինչնիվ հաղո-
թող հանդիսացավ, նա ինչնիվ նվաճեց կու-
սակցության միծամասնության համակրան-
քը: Նրանով, վոր նա սկզբունքային տա-
րածայնությունները չեր ավաղում և պայ-
քարում եր այդ տարածայնությունները
հաղթահարելու համար՝ մեշեկներին մեկու-
սացնելու միջոցով:

Այսուհետև յես կարող եյի մատնանշել
մեր կուսակցության զարգացման յերրորդ
ստադիան, 1905 թ. հեղափոխության պար-
տությունից հետո յեկած ժամանակաշրջ-
անը, 1907 թվի ժամանակաշրջանը, յերբ
բոլցերիկների մի մասը, — այսպիս կոչ-
ված «ոտղովիստները», — Բողդանովի գլխա-
վորությամբ՝ հեռացավ բոլցերիմից։ Դա մի
կրթիկական շրջան եր մեր կուսակցության
կյանքում։ Դա այն շրջանն եր, յերբ հին
գվարդիային պատկանող մի ամբողջ շարք
բոլցերիկներ թողին-հեռացան Լենինից ու
նրա կուսակցությունից։ Մենշերին այն
ժամանակ աղաղակում եյին բոլցերիկների
կործանման մասին։ Սակայն բոլցերիմը
չկործանվեց, և ընդամենը մեկ ու կես տար-
վա պայքարի պրակտիկան ցույց տվեց,
վոր Լենինն ու նրա կուսակցությունն ի-
րավացի եյին, պայքար մղելով բոլցերիմի
շարքերի ներսում յեղած հակասություննե-
րի հաղթահարման համար։ Այդ հակասու-
թյունները հաղթահարվեցին վհչ թե դրանք
սկագելու միջոցով, այլ դրանք բացահայտե-

լու և մեր կուսակցության բարիքի ու ոգ-
տի համար պայքարելու միջոցով։

Այսուհետև յես կարող եյի մատնանշել
մեր կուսակցության պատմության չորրորդ
շրջանը, 1911—1912 թ. թ. շրջանը, յերբ
բոլցերիկները վերականգնեցին ցարական
ռեակցիայի կողմից համարյա ջախջախված
կուսակցությունը և լիկվիդատորներին դուրս
վորացին։ Նախորդ ժամանակաշրջանների
նման այստեղ ևս բոլցերիկներն ընթանում
եյին գեպի կուսակցության վերականգնում
ու ամրացումը վհչ թե լիկվիդատորների հետ
ունեցած սկզբունքային տարածայնություն-
ները սվաղելու միջոցով, այլ դրանք բա-
ցահայտելու և հաղթահարելու միջոցով։

Ապա յես կարող եյի մատնանշել մեր
կուսակցության զարգացման հինգերորդ
ստադիան, 1917 թվի Հոկտեմբերյան հե-
ղափոխությանը նախորդող ժամանակաշրջա-
նը, յերբ բոլցերիկների մի մասը բոլցերիկյան
կուսակցության հայտնի լիդերների գլխա-
վորությամբ տատանվեց ու չցանկացավ
ապստամբության դիմել, ավանդուրա համա-

բելով այս Հայտնի յե, վոր բոլեկիկներն
այս հակասությունն ել հաղթահարեցին վնչ
թե տարածայնությունները սվաղելու միշ-
ջոցով, այլ Հոկտեմբերյան հեղափոխության
համար բացահայտ պայքար մղելու միջոցով։
Պայքարի պրակտիկան ցույց տվեց, վոր յեթե
այդ տարածայնությունները չհաղթահարե-
յինք, մենք կարող ենք կրիտիկական դրու-
թյան մեջ դնել Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունը։

Վերջապես, յես կարող եյի ժամանակել
մեր ներկուսակցական պայքարի զարգաց-
ման հետազա շրջանները, Բրեստի հաշու-
թան ժամանակաշրջանը, 1921 թվի շրջանը
(արհմիութենական դիսկուսիա) և մնացած
ժամանակաշրջանները, վորոնք ձեզ հայտնի
յեն և վորոնց մասին յես այստեղ չեմ ըն-
դարձակարանի։ Հայտնի յե, վոր այս բոլոր
ժամանակաշրջաններում, ինչպես և անցյա-
լում, մեր կուսակցությունն աճում ու ամ-
րանում եր ներքին հակասությունները հաղ-
թահարելու միջոցով։

Իսկ սրանից ի՞նչ և ստացվում

Դուքս և գալիս, վոր Համեկի աճել ու
ամրացել և ներկուսակցական հակասու-
թյունները հաղթահարելու միջոցով։

Դուքս և գալիս, վոր ներկուսակցական
տարածայնությունները պայքարի միջոցով
հաղթահարելը մեր կուսակցության զարգաց-
ման որենքն եւ։

Կարող են ասել, թե դա — որենք և Համ-
եկ համար և վոչ թե մյուս պրոկտաբական
կուսակցությունների համար։ Դա սխալ եւ։ Այս
որենքը զարգացման որենք և բոլոր փոքրի-
շատե խոշոր կուսակցությունների համար,
մեենույն եւ խոսքը ԽՍՀՄ-ի պրոլետարա-
կան կուսակցության մասին և արդյոք, թե
Սրբամուտքի կուսակցությունների մասին։ Յե-
թե փոքրիկ յերկրի փոքրիկ կուսակցու-
թյան մեջ կարելի յե այս կամ այն կերպ
սվաղել տարածայնությունները՝ դրանք ծած-
կելով մեկ կամ միքանի անձեռի հեղինակու-
թյամբ, ապա բազմազան ուայուններ ունեցող
մեծ կուսակցության մեջ հակասությունները
հաղթահարելու միջոցով զարգանալը կուսակ-
ցության աճման ու ամրացման անխու-

սափելի տարրն եւ Բանն այսպես և ընթացել անցյալում։ Բանն այսպես և ընթանուանքի այստեղ կուզեյի վկայակուչել ենգելակությունը, վորը Մարքսի հետ միասին միայն մի տասնյակ տարի չե, վոր դեկավարել և Արևմուռքի պլրութարական կուսակցությունները։ Խոսքը վերաբերում և անցյալ դարի ուժունական թվականներին, յերբ Գերմանիայում թագավորում եր սոցիալիստների դեմ ուղղված բացարիկ որենքը, Մարքսն ու Ենգելը նստած ելին Լոնդոնում եմիգրացիայի մեջ, իսկ գերմանական սոցիալ-դեմոկրատիայի արտասահմանյան անլեգալ որգան «Սոցիալ-դեմոկրատ»-ն իրոք ուղղություն եր տալիս գերմանական սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքին։ Բերնշտայնն այն ժամանակ հեղափոխական մարքսիստ եր (նա դեռևս ուժորմիստների կողմը չեր քոչել), Ենգելը գերմանական սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականության ամենահրատապ հարցերի վերաբերյալ աշխույժ գրագրության մեջ եր գտնվում նրա հետ։ Ահա թե այն ժամա-

նակնա ինչ եր գրում Բերնշտայնին (1882 թ.).

«Ենչպես յերկում ե, մեծ յերկը ամեն մի բանվորական կուսակցություն կարող և զարդանալ միայն ներքին պայքարի մեջ, լիովին համապատասխան դիալեկտիկական զարգացման որենքներին։ Գերմանական կուսակցությունը դարձավ այն, ինչ վոր և, այդենախականների և լասալականների պայքարում, վորակեղ հենց բաղկառմ ինքը գլխավոր դեր եր խաղում։ Միասնությունը հնարավոր դարձավ միայն այն ժամանակ, յերբ թափթափակները, վորոնց լասալը գիտավորակ կերպով սնում եր վորպես գործիք, մազկեցին, և դա այստեղ մեր կողմից տեղի ունեցավ իիսան մեծ փութկոսությամբ։ Ֆրանսիայում այն մարդիկ, վորոնք թեպետ և զոհաբերել են բակունիստական թերիաները, բայց շարունակում են գործել պայքարի բակունիստական մեթոդներով ու դրա հետ մեկտեղ ուզում են շարժման դասակարգային բնույթը զոհել իրենց սոցիալական նպատակներին, նույնպես պետք ե մացլիճ, նախքան միանությունը նորից հնարավոր կլառնա։ Այդպիսի պայմաններում միասնություն քարոզել ցանկանալն ամենախսկան հիմարություն կլիներ, Բարոյական քարոզներով չի կարելի կանխել մանկական հիմանդրությունները, վորոնցով ժամանակակից պայմաններում հարկադրություն գտնվում է այդպիսով բուժմել նրանցից (պեր-

51
31703-1

болеть») (տես «Архив Маркса и Энгельса», դիրք I, էջ 324—325):

Վորովինեաւ, ասում եւ ենդելսը մեկ ուրիշ տեղում (1885 թ.):

«Յերբեք չի կարելի հակասությունները յերկար ժամանակով սրողած պահել, դրանք պայքարով են լուծվում» (տես նույն տեղ էջ 371):

Ահա թե ամենից առաջ ինչով պետք երացաւրել հակասությունների առկայությունը մեր կուսակցության մեջ և մեր կուսակցության զարգանալն այդ հակասությունները պայքարով հաղթահարելու միջոցով:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՄՈՒՄ

Բայց վորտեղից են առաջանում այդ հակասություններն ու տարածայնությունները, վորտեղ և նրանց աղբյուրը:

¹ Լրագրերում հրապարակված տեքստում այս ցիտատը, անփությությամբ, բերված եր վոչ-ամբողջութիւն: Ի. Աս.:

Յես կարձում եմ, վոր պրոլետարական կուսակցությունների ներսում յեղած հակասությունների աղբյուրը դահնվում եւ յերկու հանգամանքների մեջ:

Այդ լինչ հանգամանքներ են:

Այդ, նախ, բուրժուազիայի և բուրժուական իդեոլոգիայի ճնշումն եւ պրոլետարիատի ու նրա կուսակցության վրա՝ դասակարգերի կովկի պայմաններում, ճնշում, վորի առաջ հաճախ տեղի յեն տալիս պրոլետարիատի ամենից ավելի նվազ կայուն շերտերը, ապա ուրեմն նաև պրոլետարիատի կուսակցության ամենից ավելի նվազ կայուն շերտերը: Զի կարելի ընդունել, թե պրոլետարիատը հասարակությունից միանգամայն մեկուսացած ե, հասարակությունից դուրս ե կանգնած: Պրոլետարիատը հասարակության մի մասն ե, վորը բազմաթիվ թելերով կապված ե նրա բազմազան շերտերի հետ: Բայց կուսակցությունը պրոլետարիատի մի մասն ե: Այս պատճառով կուսակցությունն ևս չի կարող աղատ լինել բուրժուական հասարակության բազմազան շերտերի կապերից ու

ազդեցությունից: Բուրժուազիայի և նրա
իդեոլոգիայի ճնշումը պրոլետարիատի ու
նրա կուսակցության վրա արտահայտվում
է նրանով, վոր բուրժուական գաղափարնե-
րը, բարքերը, սովորությունները, տրամա-
դրությունները հաճախ թափանցում են պրո-
լետարիատի ու նրա կուսակցության մեջ՝
պրոլետարիատի վրոշ շերտերի սիջոցով,
վորոնք այս կամ այն կերպ կապված են բուր-
ժուական հասարակության հետ:

Յերկրորդ, դա—բանվոր դասակարգի
այլատարությունն ե, տարբեր շերտերի առ-
կայությունը բանվոր դասակարգի ներսում:
Յես կարծում եմ, վոր պրոլետարիատը վոր-
պես դասակարգ կարելի կլիներ բաժանել յե-
րեք շերտի:

Մի շերտը, այդ—պրոլետարիատի հիմ-
նական մասսան ե, նրա կորիզը, նրա մըշ-
տական մասը, այդ—«զտարյուն» պրոլետար-
ների այն մասսան ե, վորը վաղուց արդեն
խզել ե իր կապերը կապիտալիստների դա-
սակարգի հետ: Պրոլետարիատի այս շերտը

մարքսիզմի ամենից ավելի հուսալի հենաւ-
րանն ե:

Յերկրորդ շերտը, այդ—նրանք են, վոր
մոտ անցյալում են դուրս յեկել վոչ-
պրոլետարական դասակարգերից, գյուղա-
ցիությունից, քաղքենիական շարքերից, ին-
տելիգենցիայից: Դրանք—ուրիշ դասակար-
գերից յեկածներն են, վորոնք մոտ ժամանակս
են միայն լցվել պրոլետարիատի կազմի մեջ
և բանվոր դասակարգի մեջ մտցրել են
իրենց ընտելությունները, իրենց սովորու-
թյունները, իրենց տատանումները, իրենց
յերերումները: Այս շերտն ամենից ավե-
լի նպաստավոր հող ե ներկայացնում
ամեն տեսակ անարխիստական, կիսանար-
խիստական և ռուլտրա-ձախ» խմբավորում-
ների համար:

Վերջապես, յերրորդ շերտը, այդ—բան-
վորական արխտոկրատիան ե, բանվոր դա-
սակարգի վերնախավը, պրոլետարիատի ամե-
նից ավելի ավահովված մասը՝ բուրժուա-
զիայի հետ կոմպրոմիսների գնալու իր ձրգ-
տումով, աշխարհիս ուժեղներին հարմարվելու

իր գերակշռող տրամադրությամբ, «մարդկանալու» իր տրամադրությամբ։ Այս շերշան ամենից ավելի նպաստավոր հող են ներկայացնում բացահայտ ռեփորմիստների և ոպրորտունիստների համար։

Չնայած արտաքին տարրերությանը՝ բանվոր դասակարգի այս վեջին յերկու շերտերը ներկայացնում են շատ թե քիչ ընդհաւնուր միջավայր, վորը սնում և ոպրորտունիզմը ընդհանրապես, ոպրորտունիզմը բացահայտ, վորչափով հաղթանակում են բանվորական արիստոկրատիայի տրամադրությունները, և «ձախ» ֆրազով քողարկած ոպրորտունիզմ, վորչափով հաղթանակում են բանվոր դասակարգի կիսաքաղենիական շերտերի տրամադրությունները, այն շերտերի, վորոնք իրենց կապերը դեռ լիովին չեն խզել մանրերությունների, այն շերտերի, վորոնք իրենց կապերը դեռ լիովին չեն խզել մանրերությունների, այս փաստը, վոր «ուլտրա-ձախ» տրամադրությունները միշտ և ամենուրեք զուգադիպում են բացահայտ ոպրորտունիզմի տրամադրություններին, — այս փաստը վոչ մի զարմանալու բան չի պարունակում իր մեջու կենինը քանից ս

ասել ե, վոր «ուլտրա-ձախ» ոպրոդիցիան աջ, մենշևիլյան, բացահայտ ոպրորտունիստական ոպրոդիցիայի աստան եւ Յեվ դամիանգամայն ճիշտ եւ Յեթե «ուլտրա-ձախ» հեղափոխության կողմն ե միայն այն պատճառով, վոր նա հեղափոխության հաղթանակ ե սպասում վաղն և եր, ապա պարզ ե, վոր նա պետք ե անհուսության մատնիվի ու հուսախաբվի հեղափոխությունից, յեթե տեղի ունենա հեղափոխության կանգառում, յեթե հեղափոխությունը վաղն և եթ չհաղթի:

Բնական ե, վոր դասակարգային կովի զարգացման յուրաքանչյուր շրջադարձի, ոլայքարի յուրաքանչյուր սրման ու դժվարությունների ուժեղացման դեմքում պրոլետարիատի զանազան խափերի հայացքների, ընտելությունների ու տրամադրությունների մեջ յեղած տարրերությունների մեջ յեղած անխուսափելիորեն պետք ե գրսնորվի կուսակցության մեջ յեղած վորոշ տարածայնությունների ձեռվ, իսկ բուրժուազիայի ու նրա իգեորդիայի ճնշումն անխուսափելիու

րեն պետք ե սրի այդ տարածայնությունա-
ները, յելք տալով նրանց վորպես պրոլետա-
րական կուսակցության ներսում յեղող պայ-
քար:

Սրանք են ներկուսակցական հակասու-
թյունների ու տարածայնությունների աղ-
բյուրները:

Կարելի՞ յե արդյոք հեռանալ այդ հակա-
սություններից ու տարածայնություններից:
Վճռ, չի կարելի Կարել, թե կարելի յե
հեռանալ այդ հակասություններից, նշանա-
կում ե իրեն խաբել: Ենդեմն իրավացի յեր,
յերբ ասում եր, վոր կուսակցության ներ-
սում յեղած հակասությունները յերկար ժա-
մանակով սվաղել անհնարին ե, վոր պայ-
քարն ե լուծում այդ հակասությունները:

Այս չի նշանակում, թե կուսակցությու-
նը դիսկուսիոն ակումբի պետք ե վերածվի:
Ընդհակառակը, պրոլետարական կուսակցու-
թյունը պրոլետարիատի մարտական կազ-
մակերպությունն ե ու պետք ե մնա վորպես
այդպիսին: Յես միայն ուզում եմ ասել, վոր
չի կարելի իրենից վանել ու աչք փակել

կուսակցության ներսում յեղած տարածայ-
նությունների հանդեպ, յեթե այդ տարա-
ծայնություններն սկզբունքային բնույթ
ունեն: Յես միայն ուզում եմ ասել, վոր
սկզբունքային գծի համար պայքարելու
միջոցով միայն կարելի յե պրոլետարական
կուսակցությունն ազատ պահել բուրժուա-
զիայի ճնշումից ու ազդեցությունից: Յես
լոկ ուզում եմ ասել վոր ներկուսակցական
հակասությունները հաղթահարելու միջոցով
միայն կարելի կլինի հասնել կուսակցու-
թյան առողջացմանն ու ամրացմանը:

II. ՀԱՄԿԿ ՄԵԶ ՅԵՂԱԾ ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թույլ տվեք այժմ նախնական դիտու-
գություններից անցնելու համեկ մեջ յե-
ղած ոպողիցիայի հարցին:

Նախ և առաջ յես կուզեյի նշել մեր
ներկուսակցական ոպողիցիայի միքանի
առանձնահատկությունները: Յես նկատի
ունեմ նրա արտաքին, աչքի դարնող ա-
ռանձնահատկությունները, առայժմ ըստ
եյության չշոշափելով տարածայնություն-
ները: Յես կարծում եմ, վոր այդ առանձնա-
հատկությունները կարելի կլիներ հան-
գեցնել յերեք գլխավոր առանձնահատկու-
թյան: Այդ, նախ, այն ե, վոր համեկ
մեջ յեղած ոպողիցիան միտվարված ոպողի-
ցիա յե և վոչ թե ինչ-վոր «սոսկ» ոպողի-
ցիա: Այդ, յերկրորդ, այն ե, վոր ոպողի-

ցիան ջանում ե իր ոպորտունիզմը քողար-
կել «ձախ» ֆրազով, «հեղափոխական» լո-
գունգներով պճնվելով: Այդ, յերբորդ, այն
ե, վոր իր սկզբունքային անձնության
պատճառով ոպողիցիան մի գլուխ գանգատ-
վում ե, վոր իրեն չեն հասկացել վոր ո-
պողիցիայի լիդերներն ըստ եյության «չը-
հասկացվածների» Փրակցիա յեն: (Ծիծաղ):

Սկսենք առաջին առանձնահատկու-
թյունից: Ինչնվա՞ և բացատրվում այն
փաստը, վոր ոպողիցիան մեզանում հան-
գես և գալիս վորպես միավորված ոպողի-
ցիա, վորպես կուսակցության կողմից ա-
ռաջներում դատապարտված բոլոր և ամեն
տեսակի հոսանքների բլոկ, ըստ վորում
նա հանգես և գալիս վճէ թե վորին կերպ
«պարզուեն», այլ արոցկիզմի գլխավորու-
թյամբ:

Դա բացատրվում ե հետեյալ հանգա-
մանքներով:

Նախ, նրանով, վոր բլոկի մեջ՝ միավոր-
ված բոլոր հոսանքները, —թե արոցկիստնե-
րը, թե «նոր ոպողիցիան», թե «դեմոկրա-

տական ցենտրալիզմի՝ մնացորդները, թե
«բանվորական ոպողիցիայի» մնացորդները,—
դրանք բոլորն ել շատ թե քիչ ոպորտու-
նիստական հոսանքներ են, վորոնք կամ ի-
րենց ծագման ակզրից են պայքարել լենի-
նիզմի դեմ, կամ վերջին ժամանակս են
սկսել պայքարը նրա դեմ: Ինչ ասել կուզի,
վոր այս ընդհանուր գիծը պետք է հեշտաց-
ներ նրանց միավորվելը մի բլոկի մեջ՝
կուսակցության դեմ մղվող պայքարում:

Յերկրորդ, ընթացիկ շրջանի բեկումնա-
յին բնույթով, այն հանգամանքով, վոր
ներկայիս բեկումնային ժամանակաշրջանը
նորից շեշտակի կերպով գրեց մեր հեղա-
փոխության հիմնական հարցերը, և, վորով-
հետեւ բոլոր այդ հոսանքները հեղափոխու-
թյան այս կամ այն հարցում տարընթաց
ելին ու շարունակում են տարընթաց լի-
նել մեր կուսակցությունից, ուսաի բնական
և, վոր ներկա ժամանակաշրջանի հանրա-
գումարային բնույթը, տալով մեր բոլոր
տարածայնությունների հաշվեկշիռը, այդ
բոլոր հոսանքներին պետք ե մղեր դեպի

մի բլոկ, բլոկ մեր կուսակցության հիմնա-
կան գծի դեմ: Ինչ ասել կուզի, վոր այս
հանգամանքը չեր կարող չհեշտացնել բազ-
մազան ոպողիցիոն հոսանքների միավորու-
մը մի ընդհանուր բանակի մեջ:

Եերբորդ, այն հանգամանքով, վոր մեր
կուսակցության հղոր ուժն ու համախըմբ-
վածությունը՝ մի կողմից, առանց բացա-
ռության բոլոր ոպողիցիոն հոսանքների
թուլությունն ու մասսաներից կտրված լի-
նելը՝ մյուս կողմից, չեյին կարող ակներե-
վաբար անհուսալի չդարձնել այդ հոսանք-
ների բաժան-բաժան պայքարը մեր կու-
սակցության դեմ, վորի պատճառով ոպո-
ղիցիոն հոսանքներն անխուսափելիորեն
պետք է բոնեցին ուժերի միավորման ու-
ղին, վորպեսզի առանձին խմբերը գումա-
րելով՝ կոմպենսացիայի յենթարկեն նրանց
թուլությունը և դրանով իսկ, թեկուզ ար-
տաքուստ, բարձրացնեն ոպողիցիայի շան-
սերը:

Ե՛, իսկ ինչմի և բացարվում այն փաս-
տը, վոր հենց արոցկեզմն և հանդես գա-

Ամ վորպես ոպողիցիոն բլոկը գլխավորող է
Նախ, նրանով, վոր գոյություն ունետ-
ցող բոլոր ոպողիցիոն հոսանքներից արոց-
կիզմն ոպորտունիկմի ամենից ավելի ավարտ-
ված հոսանքն ե մեր կուսակցության մեջ
(Կոմիտենի Վ կոնգրեսն իրավացի յեր,
յերբ տրոցկիզմը վորպես մանր-
բուրժուական թեքում):

Յերկրորդ, նրանով, վոր մեր կուսակ-
ցության մեջ յեղած վոչ մի ոպողիցիոն
հոսանք չի կարողանում իր ոպորտունիկմն
այնպես ճարպիկ ու վարպետ կերպով դի-
մակավորել «Ճախ» ու հեղղղափոխական
ֆրազով, ինչպես արոցկիզմը: (Միծաղ):

Յեզ այս առաջին դեպքը չե, յերբ մեր
կուսակցության պատմության մեջ տրոց-
կիզմը հանդես ե գալիս՝ մեր կուսակցու-
թյան դեմ գնացող ոպողիցիոն հոսանքնե-
րի գլուխ անցած:

Յես կուզեյի մատնանշել մեր կուսակ-
ցության պատմության մեջ 1911—1914 թ.թ.
տեղի ունեցած հայտնի միջադեպը, յերբ
կազմվեց ոպողիցիոն հակակուսակցական

հոսանքների բլոկն այսպիս կոչված «Ոգոսա-
տոսյան բլոկ»-ի ձևով, Տրոցկու զիլսավո-
րությամբ: Յես կուզեյի մատնանշել այդ
միջադեպը, վորովհետեւ այն ներկայիս
ոպողիցիոն բլոկի մի ինչ-վոր նախատիպն
ե: Այն ժամանակ ընկ. Տրոցկին կուսակ-
ցության դեմ միավորեց լիկվիդատորներին
(Պոտրեսով, Մարտով և ուրիշներ), ոտղո-
վիստներին («վակերյողականներ») և իր
սեփական խումբը: Խոկ այժմ նա փորձ ա-
րեց ոպողիցիոն բլոկի մեջ միավորելու «բան-
վորական ոպողիցիան», «նոր ոպողիցիան»
և իր սեփական խումբը: Հայտնի յե, վոր
Լենինն այն ժամանակ յերեք տարի շա-
րունակ պայքարում եր «Ոգոստոսյան բլո-
կի» դեմ: Ահա թե Լենինն ինչ եր գրում
այն ժամանակ «Ոգոստոսյան բլոկ» մասին՝
նրա ձևավորման շեմքին.

«Այս պատճառով ամբողջ կուսակցության անունից
մենք հայտարարում ենք, վոր Տրոցկին հակակու-
սակցական քաղաքականություն ե վարում. վոր նա
պայքարում ե կուսակցական լեզվաբառելը, վոտք ե
դնում ավանդուրայի ու պառակտման ուղին... Այս

անվիճելի ճշմարտության մասին Տրոցկին լոռում է այն պատճառով, վոր նրա քաղաքականության ունալ նպատակների համար ճշմարտությունն անտանելի յեւ Խոկ ուեալ նպատակներն ավելի ու ավելի յեն պարզում և ակներն են դառնում մինչև իսկ նվազագույն չափով հեռատես կուսակցականների համար: Այդ ուեալ նպատակներն են—Պոտենտալների հակակուսակցական բլոկը վայերյոդականների հետ, վորակիսի բոլորին Տրոցկին սժանդակում և ու կազմակերպում այն... Այդ բլոկն, ինարկե, կաջակցի Տրոցկու «Փոնդին» և այն հակակուսակցական կոնֆերենցիալին, վոր նա դումարում ե, վորովհետև թե պ, պ. Պատրիամիտերը, թե վայերյոդականները այստեղ ստանում են այն, ինչ հարկավոր ե նրանց—իրենց ֆրակցիաների աղատությունը, այդ ֆրակցիաների սըրագործումը, նրանց գործունեյության քողարկումը, նրա փաստաբանական սպաշտանությունը բանգորների առաջ: Յեկ ահա հենց «սկզբանքային հիմունքների» տեսակետից մենք չենք կարող այդ բլոկը չընդունել վորպես ավանդյուրիզմ—այս բառի ամենաճշգրիտ իմաստով: Տրոցկին չի համարձակվի ասել, թե ինքը Պոտենտալի մեջ, ոտզովիստների մեջ տեսնում ե խական մարքսիստներ, սոցիալ-գեմոկրատիզմի սկզբունքայության խօսական պաշտպաններ: Ավանդյուրիստի վիքքի եյությունն ել հենց այն ե, վոր նա ստիպված ե լինում պերմանենա կերպով գլուխ ողբացնել... Տրոցկու բլոկը Պոտենտալի ու վայեր-

յոդականների հետ ավանայուրա յե հենց «սկզբունքային հիմունքների» տեսակետից: Դա նվազ ճիշտ չե կուսակցական-քաղաքական խոդիների տեսակետից... Մի տարգա փոքը ոլլենումից հետո իրականում ցույց ավեց, վոր հենց Պոտենտալի խումբն ե, հենց վակերյոդականների խումբն ե, վոր մարմացնում ե այդ բութքուական ազդեցությունը պղողետարիատի վրա... Վերջապես, յերբորդ՝ Տրոցկու քաղաքականությունն ավանայուրա յե կազմակերպական իմաստով, վորովհետեւ, ինչպես մենք արդեն մատնանշել ենք, նա խումբ ե կուսակցական լեզարթյունը ե, արտասահմանյան մի խմբի անունից (կամ յերկու հակակուսակցական ֆրակցիաների՝ Պոլսականների ու վայերյոդականների բլոկի անունից) կոնֆերենցիա կազմակերպելով, նա ուղղակի վոտք ե գնում պառակտման ուղին» (տես Լենին, Յերկեր, ճ. XI, մ. 2, եջ 189—194):

Այսպիսի գնահատական եր տալիս լենինը հակակուսակցական հոսանքների՝ Տրոցկու գլխավորած առաջին բլոկին:

Հիմնականում նույն այդ բանը հարկավոր ե ասել բայց ել ավելի կտրուկ կերպով, հակակուսակցական հոսանքների ներկայիս բլոկի մասին, վոր նույնպես ընկ. Տրոցկին ե գլխավորում:

Ահա այն բանի պատճառները, թե ինչու

մեր ոպողիցիան այժմ հանդես ե գալիս
միավորված ոպողիցիայի ձևով ու հանդես
ե գալիս վոչ թե հասարակ կերպով, այլ
արոցիկովմի գլխավորությամբ:

Այս ե ոպողիցիայի առաջին առանձնաւ-
հատկության բանը:

Անցնենք յերկրորդ առանձնահատկու-
թյանը: Յես արդեն ասել եմ, վոր ոպողի-
ցիայի յերկրորդ առանձնահատկությունը,
դա—նրա ուժգին ձգտումն ե իր ոպորտու-
նիստական գործը քողարկելու «ձախ», «հե-
ղափոխական» ֆրազով: Յես հնարավոր չեմ
համարում այստեղ ընդարձակաբանելու այն
փաստերի մասին, վորոնք ցուցադրում են «հե-
ղափոխական» խոսքերի և ոպորտունիստա-
կան գործերի մշտական տարբնթացությու-
նը մեր ոպողիցիայի պրակտիկայում: Բա-
վական ե աչքի անցկացնել թեկուղ այն
թեղիսներն ոպողիցիայի մասին, վոր ըն-
դունվել են Համեկ ԽՎ կոնֆերենցիայում,
վորպեսզի հասկանալի լինի այդ գիմակա-
վորման մեխանիկան: Յես կուղելի մեր կու-
սակցության պատմությունից բերել միայն

միքանի որինակ, վորոնք խոսում են այն
մասին, վոր մեր կուսակցության մեջ յեղած
բոլոր ոպողիցիոն հոսանքները, իշխանու-
թյունը վերցնելուց հետո յեղած ժամանակա-
շրջանում, ջանացել են իրենց վոչ-հեղափո-
խական գործերը քողարկել «հեղափոխա-
կան» ֆրազով, անընդհատ «ձախից» քննա-
դատելով կուսակցությունն ու նրա քաղա-
քականությունը:

Վերցնենք, որինակ, «ձախ» կոմունիստ-
ներին, վորոնք կուսակցության դեմ եյին
դուրս գալիս Բրեստի հաշտության շրջա-
նում (1918 թ.): Հայտնի յե, վոր նրանք
«ձախից» եյին քննադատում կուսակցու-
թյունը, Բրեստի հաշտության դեմ դուրս
գալով ու կուսակցության քաղաքականու-
թյունը վորակելով վորպես ոպորտունիս-
տական, վոչ-պրոլետարական, համաձայնո-
ղական՝ իմպերիալիստների նկատմամբ իսկ
իրականում բանից դուրս յեկավ, վոր Բրես-
տի հաշտության դեմ դուրս գալով՝ «ձախ»
կոմունիստները խանդարում եյին կուսակ-
ցությանը դադար ստանալու՝ Խորհրդային

իշխանությունը կազմակերպելու և ամրացնելու համար, ոգնում ելին ես-երներին ու մենաշեկերին, վորոնք այն ժամանակ Բրեստի հաշտության դեմ ելին կանգնած, հեշտացնում ելին իմպերիալիզմի գործը, վոր ձգտում եր իր սաղմի մեջ խեղդել Խորհրդային իշխանությունը:

Վերցնենք «բանվորական ոպողիցիան» (1921 թիվ): Հայտնի յե, վոր նա նույնապես «Ճախից» եր քննադատում կուսակցությունը, ամեն կերպ «Ճարդուփշուր» անելով նեպի քաղաքականությունը, իսպառ «Փետրահան» անելով լենինի դրույթն այն մասին, վոր ինգուստրիայի վերականգնումը հարկավոր և սկսել արդյունաբերության համար հումքային ու պարենային նախադրյալներ տվող գյուղատնտեսության զարգացումից, «Փետրահան» անելով լենինի այս դրույթը վորպես պրոլետարիատի շահերի մոռացում ու վորպես գյուղացիական թեքում: Իսկ իրականում դուրս յեկավ, վոր առանց նեպի քաղաքականության, առանց արդյունաբերության համար հումքային ու

պարենային նախադրյալներ ստեղծող գյուղատնտեսության զարգացման, մեզանում վոչ մի արդյունաբերություն չեր լինի, իսկ պրոլետարիատն ել կմնար ապադասակարգայնացած վիճակում: Բացի գրանից, հայտնի յե, թե այդ բոլորից հետո գեպի ուր սկսեց աճել «բանվորական ոպողիցիան»—դեպի աջ, թե դեպի ձախ:

Վերջապես, վերցնենք տրոցկիզմը, վորն արդեն միքանի տարի յե, ինչ քննադատում ե մեր կուսակցությունը «Ճախից» և վորը դրա հետ մեկտեղ հանդիսանում ե, ինչպես ճիշտ արտահայտվել ե Կոմինաերնի V կոնգրեսը, մանր-բուրժուական թեքում: Ընդհանուր ինչ կարող ե լինել մանր-բուրժուական թեքման ու իսկական հեղափոխականության միջև: Միթե պարզ չե, վոր «հեղափոխական» ֆրազն այստեղ մանր-բուրժուական թեքման լոկ քողարկումն եւ:

Ցես ել չեմ խոսում «նոր ոպողիցիայի» մասին, վորի «Ճախ» կանչերը կոչված են քողարկելու նրա վերակերպ տրոցկիզմի կողմից:

ի՞նչ են ասում այս բոլոր փաստերը:
Այն, վոր ոպորտունիստական գործի «Ճախ»
դիմակավորումը մեր կուսակցության մեջ
յեղած բոլոր և ամեն տեսակ ոպողիցիքոն
հոսանքների ամենաբռնորոշ գծերից մեկն և
իշխանությունը վերցնելուց հետո յեղած
ժամանակաշրջանում:

Ինչո՞վ և բացատրվում այս յերեսույթը:

Դա բացատրվում ե ԽՍՀՄ-ի պրոլետարիատի հեղափոխականությամբ, հսկայական հեղափոխական տրադիցիաներով, վոր կան մեր պրոլետարիատի ընդերքում: Դա բացատրվում ե ԽՍՀՄ-ի բանվորների ուղղակի ատելությամբ դեպի հականեղափոխական, դեպի ոպորտունիստական տարրերը: Դա բացատրվում ե նրանով, վոր մեր բանվորները պարզապես չեն լին բացահայտ ոպորտունիստին, վորի հետևանքով և հեղափոխական դիմակավորումն այն խայծն ե, վորը պետք ե գոնե արտաքուստ գրավի բանվորների ուղադրությունը և նրանց վըստահություն ներշնչի դեպի ոպողիցիքան:

Ուինակ, մեր բանվորները չեն կարողանում հասկանալ թե ինչպես ե, վոր անգլիական բանվորները մինչև այժմ գլխի չեն ընկնում ջրահեղձ անելու այնպիսի դավաճանաներին, ինչպես Թոմասն ե, ջրհոր գցելու նրանց (ծիծող): Ամեն մեկը, վոր գիտե՞մեր բանվորներին, հեշտ կհասկանա, վոր այնպիսի մարդիկ և այնպիսի ոպորտունիստներն, ինչպես Թոմասն ե, պարզապես որ չերին տեսնի բանվորների շրջանում: Այնինչ հայտնի յե, վոր անգլիական բանվորները վահայն չեն պատրաստվում ջրահեղձ անելու պարոնայք Թոմասներին, այլ և դեռ Գլխավոր խորհրդի անդամ են վերընտրում նրանց ու վերընտրում են վհչ թե հասարակ ձևով, այլ գեմոննատրացիայով: Պարզ ե, վոր այդպիսի բանվորները ոպորտունիզմի հեղափոխական դիմակավորման կարիքը չեն զգում, վորովհետեւ նրանք այսպիս ել չեն հրաժարվում դրանց իրենց շրջանն ընդունելուց: Խսկ սա ինչո՞վ և բացատրվում: Սա բացատրվում ե նրանով, վոր անգլիական բանվորների մոտ հեղափոխական տրա-

դիցիաները բացակայում են: Դրանք, այդ
հեղափոխական տրադիցիաները, հիմա յեն
ծնունդ առնում: Նրանք ծնունդ են առնում
ու զարգանում են, և հիմքեր չկան տարա-
կուսելու, վոր անդիշական բանվորները
կկոփէն հեղափոխական մարտերում: Բայց
քանի գեռ այդ չկա, տարբերությունն ան-
դիշական ու խորհրդային բանվորների միջև
մնում ե: Սրանով ե, իսկապես, բացատըր-
վում այն փաստը, վոր մեր կուսակցության
մեջ յեղած ոպորտունիստների համար վտան-
գավոր ե ԽՍՀՄ-ի բանվորներին մոտենալ
առանց մի վորոշ «հեղափոխական» դիմա-
կավորման:

Ահա թե վորոնք են ոպողիցիոն բլոկի
«հեղափոխական» դիմակավորման պատճառ-
ները:

Վերջապես, ոպողիցիայի յերրորդ առանձ-
նահատկության մասին: Յես արդեն ասել
եմ, թե այդ առանձնահատկությունն այն ե,
վոր ոպողիցիոն բլոկն սկզբունքային ձեւա-
վորում չունի, վոր նա անսկզբունք ե, նա
ամյորածե և վոր նրա առանձնահատկու-

թյունն ե՝ ոպողիցիայի լիդերների այստե-
ղից բղխող մշտական գանգատներն այն մա-
սին, թե նրանց «չեն հասկացել», «աղա-
վաղել են», նրանց վերագրել են այն, ինչ
նրանք «չեն ասել» և այլն: Դա իսկապես
վոր «հասկացվածների» Փրակցիա յի: Պրո-
լետարական կուսակցությունների պատմու-
թյունն ասում ե, վոր այս առանձնահատ-
կությունը («չեն հասկացել») առհասարակ
ուսուրառունիզմի ամենասովորական և ամենա-
տարածված առանձնահատկությունն ե: Դուք
պետք ե իմանաք, ընկերներ, վոր իսկ և իսկ
նույն բանն ե «պատահել» հայտնի ոպոր-
տունիստներ թերնշտայնի, Ֆոլմարի, Առե-
րի և այլոց հետ գերմանական սոցիալ-գե-
մոկրատիայի շարքերում 90-ական թվական-
ների վերջին և 900-ական թվականների
սկզբին, յերբ գերմանական սոցիալ-գեմոկրա-
տիան հեղափոխական եր, և յերբ այդ թունդ
ուսուրառունիստները մի շարք տարիների ըն-
թացքում գանգատվում եյին, թե իրենց
«չեն հասկացել», թե իրենց «աղավաղել
են»: Հայտնի յի, վոր գերմանական հեղա-

փոխական սոցիալ-դեմոկրատներն այն ժամանակ Բերնշտայնի ֆրակցիան «Հասկացվածների» ֆրակցիա անվանեցին. Զի կարելի պատահականությունն համարել այն փաստը, վոր այսպիսով հարկ ե լինում ոպողիցիոն բլոկը դասել «Հասկացվածների» ֆրակցիայի կարգը:

Սրանք են ոպողիցիոն բլոկի ամենագըլ-խավոր առանձնահատկությունները:

III. ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԿԿ ՄԵԶ

Անցնենք տարածայնություններին ըստ եյության:

Յես կարծում եմ, վոր մեր տարածայնությունները կարելի կլիներ հանգեցնել միքանի հիմնական հարցերի: Յես մանրամասնորեն չեմ շոշափի այդ հարցերը, քանի վոր դրա համար քիչ ժամանակ կա, իսկ զեկուցումն առանց այդ ել յերկարում եւ Մանավանդ վոր դուք ունեք Համեկ զերաբերյալ նյութերը, վորոնք, ճիշտ ե, բարգմանած ձեռվ տառապում են միքանի սխալներով, բայց հիմնականում այնուամենայնիվ ճիշտ պատկերացում են տալիսամեր կուսակցության մեջ յեղած տարածայնությունների մասին:

ՍոթիԱԼԻԽՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Առաջին հարց: Առաջին հարցը, այդ—մեկ յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորության վերաբերյալ հարցն ե, սոցիալիզմի հաղթական շինարարության հնարավորության հարցը:

Խոսքը վերաբերում ե ինարկե, վոչ Զերնոգորիային կամ նույնիակ վոչ Բուլղարիային, այլ մեր յերկրին, ԽՍՀՄ-ին: Խոսքը վերաբերում ե այնպիսի մի յերկրի, վորտեղ իմպերիալիզմ ե յեղել և զարգացել, վորտեղ կա խոշոր արդյունաբերության վորոշ մինիմում, վորտեղ կա պրոլետարիատի վորոշ մինիմում, վորտեղ կա պրոլետարիատին ղեկավարող կուսակցությունն: Այսպես ուրեմն՝ հնարավմբ ե արդյոք սոցիալիզմի հաղթությունը ԽՍՀՄ-ում, հնարավմբ ե արդյոք նրա մեջ սոցիալիզմ կառուցել մեր յերկրի ներքին ուժերի հիման վրա, այն հնարավորությունների հիման վրա, վոր կան ԽՍՀՄ-ի պրոլետարիատի տրամադրության տակ: Բայց ի՞նչ ե նշանակում սո-

յելալիզմ կառուցել, յեթե այս ֆորմուլան թարգմանենք կոնկրետ դասակարգային լեզվով: Սոցիալիզմ կառուցել ԽՍՀՄ-ում, այդ նշանակում ե պայքարի ընթացքում սեփական ուժերով հաղթանարել մեր, խորհրդային, բուրժուազիային: Հետևաբար՝ հարցը հանդում ե այն բանին, թե ԽՍՀՄ-ի պրոլետարիատն ընդունակ ե արդյոք իր սեփական ուժերով հաղթանարելու ԽՍՀՄ-ի բուրժուազիային: Այսպիս և միմիայն այսպիս ե դրվում հարցը մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու վերաբերյալ պրոլեմի լուծման ժամանակ:

Կուսակցությունն այս հարցին դրական պատասխան ե տալիս, վորովհետև նա յելնում ե այն բանից, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատը, պրոլետարական դիկտատուրան ԽՍՀՄ-ում հնարավորություն ունի իր սե-

փական ուժերով հաղթահարելու ԽՍՀՄ-ի
բուրժուազիային:

Յեթի սա սխալ լիներ, յեթե կուսակցու-
թյունը հիմքեր չունենար պնդելու, վոր
ԽՍՀՄ-ի պրոլետարիատն ընդունակ ե սո-
ցիալիստական հասարակություն կառուցելու,
չնայած մեր յերկրի համեմատական տեխ-
նիկական հետամնացությանը, ապա կուսակ-
ցությունը հիմքեր չեր ունենա այլևս իշխա-
նության գլուխ մնալու, նա այս կամ այն կերպ
պետք ե թողներ իշխանությունը և ոպողիցիոն
կուսակցության դրության անցներ: Վորով-
հետեւ յերկուսից մեկը, կամ մենք կարող ենք
սոցիալիզմ կառուցել և վերջին հաշվով կառու-
ցել այն, հաղթահարելով մեր «ազգային»
բուրժուազիային, — և այն ժամանակ կու-
սակցությունը պարտավոր է իշխանության
գլուխ մնալ ու ղեկավարել սոցիալիստական
շինարարությունը յերկուս՝ հանուն սոցիա-
լիզմի հաղթության ամբողջ աշխարհում.
կամ մենք իվեճակի չենք մեր սեփական
ուժերով հաղթահարելու մեր բուրժուազիա-
յին, — և այն ժամանակ նկատի ունե-

նալով, վոր բացակայում ե անհապաղ աչակ-
ցությունը գրսից, այլ յերկիրների հաղթա-
կան հեղափոխության կողմից, մենք ազնվո-
րեն ու բացահայտ կերպով պետք ե հեռա-
նանք իշխանությունից և ապագայում
ԽՍՀՄ-ի մեջ նոր հեղափոխություն կազմա-
կերպելու կուրս բոնենք: Կուսակցությունը
կարմղ ե արդյոք խարել իր գասակարգին,
տվյալ գեպքում՝ բանվոր դասակարգին: Վհչ
չի կարող: Այդպիսի կուսակցությունը հարկա-
վոր եր քառատեր Բայց հենց այն պատճառով,
վոր մեր կուսակցությունը բանվոր դասակար-
գին խարելու իրավունք չունի, կուսակցու-
թյունն ուղղակի պետք ե ասեր, վոր մեր յերկ-
րում սոցիալիզմ՝ կառուցելու հնարավորու-
թյան վերաբերյալ վստահության բացակա-
յությունը տանում է դեպի այն, վոր մեր կու-
սակցությունը հեռանա իշխանությունից և
կառավարող կուսակցության դրությունից
անցնի ոպողիցիոն կուսակցության գրության:

Մենք պրոլետարիատի դիկտատուրան
նվաճեցինք ու հենց զբանով ել բաղադրական
բազա ստեղծեցինք դեպի սոցիալիզմ առաջ

շարժվելու համար: Մեր սեփական ուժերով
մենք կարող ենք արդյոք ստեղծել սոցիա-
լիզմի տնտեսական բաղան, տնտեսական նոր
հիմքը, վորոն անհրաժեշտ և սոցիոլիզմի կա-
ռուցման համար: Վորոն և սոցիալիզմի տըն-
տեսական եյությունը և տնտեսական բա-
զան: Այս չե՞ արդյոք, վոր յերկրի վրա
ստեղծենք «յերկնային դրախտ» ու ընդ-
հանրական գոհություն: Վո՞չ, այդ չե՞ Դա
սոցիալիզմի տնտեսական եյության քաղքե-
նիական՝ մեջջանական պատկերացումն եւ
Սոցիալիզմի տնտեսական բազա ստեղծել—
այդ նշանակում եւ գյուղատնտեսությունը
դողել սոցիալիստական ինդուստրիային ու
դարձնել մի ամբողջական տնտեսություն,
գյուղատնտեսությունը յենթարկել սոցիա-
լիստական ինդուստրիայի ղեկավարությանը,
գյուղատնտեսության և ինդուստրիայի ար-
տադրանքների ուղղակի փոխանակման հի-
ման վրա հարթել քաղաքի ու գյուղի սիջեւ յե-
ղած հարաբերությունը, փակել ու վերացնել
բոլոր այն կանալները, վորոնց ոգնությամբ
դասակարգեր են ծնվում և ծնվում ե, ա-

մենից առաջ, կապիտալը, վերջիվերջու ստեղ-
ծել արտագրության ու բաշխման այն-
պիսի պայմաններ, վորոնք ուղղակի և ան-
միջականորեն տանում են դեպի դասակար-
գերի վոչչացումը:

Ահա թե այս մասին ինչ եր ասում ընկ.
Լենինն այն ժամանակաշրջանում, յերբ
նեպ եյինք մտցնում և յերբ ժողովրդական
տնտեսության սոցիալիստական հիմքի կա-
ռուցման հարցը ծառացավ կուսակցության
առջև իր ամբողջ հասակով.

«Մասնատրման փոխարինումը՝ հարկով,՝ նրա
սկզբունքային նշանակությունն եւ «ռազմական» կո-
մաններից զեպի նիւօս սոցիալիստական հիմքը: Վո՞չ
մասնատրում, վո՞չ հարկ, այլ խոշոր արդյունաբերու-
թյան («սոցիալիզացիայի յենթարկված») արդյունք-
ների փոխանակումը գյուղացիական արդյունքների
հետ, այս և սոցիալիզմի տնտեսական եյությունը
սոցիալիզմի բաղան» («Լենինսկի սборник» IV,
էջ 372):

Ահա թե Լենինն ինչպես և հասկանում
սոցիալիզմի տնտեսական բաղայի ստեղծման
հարցը:

Բայց սոցիալիզացիայի յենթարկված ին-

գուստը իշխի հետ զյուղատնտեսությունը
միակովելու համար անհրաժեշտ ե նախ և
առաջ ունենալ մթերքներ բաշխող որդան-
ների հարուստ ցանց, ինչպես սպառողական,
այնպես ել գյուղատնտեսական, արտադրա-
կան կոռոպերացիայի որդանների հարուստ
ցանց: Լենինը յելնում եր հենց այս գրույ-
թից, յերբ «կոռոպերացիայի մասին» իր
բրոյալը ասում եր, վոր

«Կոռոպերացիան մեր պայմաններում միշտ և ամե-
նուրեք միանգամայն համընկնում ե սոցիալիզմն»
(Լենին, հ. XVIII, գ. 2, էջ 144):

Այսպես ուրեմն՝ ԽՍՀՄ-ի պլուտարքա-
տընիր սեփական ուժերով կարող ե արդյոք
սոցիալիզմի տնտեսական բազա ստեղծել
մեր յերկրի կապիտալիստական շրջապատ-
ման պայմաններում:

Կուսակցությունն այս հարցին դրական
պատասխան ե տալիս (տես Համեկ XIV կոն-
ֆերենցիայի բանաձեռը): Լենինն այս հար-
ցին դրական պատասխան ե տալիս (տես
թեկուղ նրա «Կոռոպերացիայի մասին» բրո-

յուրը): Յեր շինաքարության ամբողջ
պրակտիկան զբական պատասխան ե տալիս
այս հարցին, վորովհետև մեր տնտեսության
սոցիալիստական սեկտորի բաժինը տարեց-
տարի աճում ե ի հաշիվ մասնավոր կապի-
տալի բաժնի՝ ինչպես արտադրության բնա-
գավառում, այնպես ել շրջանառության
բնագավառում, ըստ վորում մասնավոր կա-
պիտալի գերը, համեմատած մեր տնտեսու-
թյան սոցիալիստական տարրերի գերի հետ,
տարեց-տարի ընկնում ե:

Ե՛, իսկ ի՞նչ ե պատասխանում այս հար-
ցին ուղղվիցիան:

Նա բացասական պատասխան ե տալիս
այս հարցին:

Դուքս ե գալիս, վոր սոցիալիզմի հաղ-
թությունը մեր յերկրում հնարավոր ե, վոր
սոցիալիզմի տնտեսական բազայի կառուց-
ման հնարավորությունն ապահովված կարե-
լի յե համարել Արդյոք այս նշանակում ե,
վոր այդպիսի հաղթությունը կարելի յե
անվանել լիակատար հաղթություն, վերջ-
նական հաղթություն, վորն ապահովում ե

կառուցվող սոցիալիզմի յերկիրը դրսէց յեւ
կողամեն մի վտանգից, իմպերիալիստա-
կան ինտերվենցիայի և դրա հետ կապված
ուստավրացիայի վտանգից: Վճչ չի նշա-
նակում: Յեթե ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կա-
ռուցելու հարցը իր, «ազգային», բուրժուա-
զիայի հաղթահարման հարց ե, ապա սո-
ցիալիզմի վերջնական հաղթության հարցը
համաշխարհային բուրժուազիայի հաղթա-
հարման հարց ե, Կուսակցությունն ասում ե,
վոր մի յերկրի պրոլետարիատն իվիճակի
չե իր սեփական ուժերով հաղթահարելու
համաշխարհային բուրժուազիային: Կուսակ-
ցությունն ասում ե, թէ՝ վորպեսզի սոցիա-
լիզմը վերջնականապես հաղթի մի յերկրում,
անհրաժեշտ ե համաշխարհային բուրժուա-
զիայի հաղթահարումը կամ, գոնե, չեզոքա-
ցումը: Կուսակցությունն ասում ե, վոր այս-
պիսի խնդիրը համապատասխան ե միայն
միքանի յերկիրների պրոլետարիատի ուժե-
րին: Այս պատճառով վերջնական հաղթու-
թյունն այս կամ այն յերկրում նշանա-
կում ե պրոլետարական հեղափոխության

հաղթություն գոնե միքանի յերկիրներում:
Այս հարցը մեր կուսակցության մեջ առան-
ձին տարածայնություններ չի առաջաց-
նում, ուստի և յես նրա մասին չեմ ընդպար-
ձակաբանի, հետաքրքրվողներին մատնա-
նշելով այն նյութերը, վոր մոտ որերս բա-
ժանվել են կիֆկի ընդլայնված պլենումի
անդամներին:

«ԴԱՐԱԲԻ» ԳՈՐԾՈՒՆԵՐԸ

Յերկրորդ հարց: Յերկրորդ հարցը վերա-
բերում ե ԽՍՀՄ-ի ներկայիս միջազգային
դրության պայմանների պրոբլեմին, «դադա-
րի» այն ժամանակաշրջանի պայմաններին,
վորի ընթացքում մեզ մոտ սկսվեց և ծա-
վալվեց սոցիալիզմի կառուցման աշխատան-
քը: Մենք կարող ենք սոցիալիզմ կառու-
ցել ԽՍՀՄ-ում և պետք ե կառուցենք. Բայց
սոցիալիզմ կառուցելու համար նախ և առաջ
հարկավոր ե իր գոյությունը պահպանել:
Հարկավոր ե, վոր կարողանանք «դադար»
առնել պատերազմից, հարկավոր ե, վոր
ինտերվենցիայի փորձեր չլինեն, հարկավոր

ե միջազգային պայմանների մի վորոշ միջ-
նիուում նվաճել — պայմաններ, վորոնք ան-
հրաժեշտ են գոյություն պահպանելու և
սոցիալիզմ կառուցելու համար։ Հարց ե ծա-
դում. ինչի՞ վրա յե խարսխվում Խորհուրդ-
ների Հանրապետության ներկայիս միջազ-
գային գրությունը, ինչպէս և վորոշվում մեր
յերկրի դարձացման ներկայիս «խաղաղ»
շրջանը՝ գեպի կապիտալիստական յերկիրնե-
րը նրա ունեցած հարաբերության մեջ,
ինչի՞ վրա յե խարսխված այն «դադարը»
կամ «դադարի» այն շրջանը, վոր նվաճել
ենք, վորը լուրջ ինտերվենցիայի անհապաղ
փորձերի հնարավորություն չի տալիս կա-
պիտալիստական աշխարհին և վորը մեր
յերկրում սոցիալիզմ կառուցելու համար ան-
հրաժեշտ արտաքին պայմաններ ե ստեղ-
ծում, — յեթե ապացուցված ե, վոր ինտեր-
վենցիայի վտանգը գոյություն ունի և գեռ
գոյություն ե ունենալու և վոր այդ վտան-
գը կարող ե լիկվիդացիայի յենթարկվել՝
մի շարք յերկրներում պրոլետարական

հեղափոխության հաղթելու հետևանքով
միայն։

«Դադարի» ներկայիս ժամանակաշրջանը
խարսխվում ե առնվազն չորս հիմնական
փաստերի վրա։

Առաջին՝ իմակերիալիստների բանակում
յեղած հակասությունների վրա, վորոնք
չեն թուլանում և վորոնք դժվարացնում են
Խորհուրդների Հանրապետության գեմ միւ-
մյանց հետ համաձայնության գալը։

Երեկորդ՝ իմակերիալիզմի և գաղութա-
յին յերկիրների միջև յեղած հակասությունն-
ների վրա, գաղութային ու կախյալ յեր-
կիրներում յեղած ազատագրական շարժ-
ման աճման վրա։

Երրորդ՝ կապիտալիստական յերկիրնե-
րում հեղափոխական շարժման աճելու վրա
և բոլոր յերկիրների պլրոլիտարքների կողմից
գեպի Խորհուրդների Հանրապետությունն
ունեցած աճող համակրանքի վրա։ Կապի-
տալիստական յերկիրների պլրոլիտարքները
դեռևս անզոր են իրենց կապիտալիստների
դեմ ուղղակի հեղափոխություն բարձրաց-

նելու միջոցով աջակցելու ԽՍՀՄ-ի պրոլետարներին: Բայց իմպերիալիստական պետությունների կապիտալիստներն արդեն անդոր են «իրենց» բանվորներին շարժելու ԽՍՀՄ-ի պրոլետարիատի գեմ, վորովհետեւ բոլոր յերկիրների պրոլետարների համակրանքը դեպի Խորհուրդների Հանրապետությունն որեցոր աճում և և չի կարող չաճել: Իսկ առանց բանվորների այժմ չի կարելի պատերազմել:

Չորրորդ՝ ԽՍՀՄ-ի պրոլետարիատի ուժի և հզորության վրա, նրա սոցիալիստական շինարարության հաջողությունների վրա, նրա կարմիր բանակի կազմակերպվածության ուժի վրա:

Այս և սրանց նման պայմանների զուգակցումն ստեղծում և ռդադարից այն ժամանակաշրջանը, վորը Խորհուրդների Հանրապետության ներկայիս միջազգային դրության բնորոշ գիծն եւ:

Ներկայութեան «ԱԶԳԱՅԻՆ» ՑԵՎ ԽՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԻԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆԲԱԺԱՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ցեղական հարցը: Յերրորդ հարցը վերաբերում եւ այս կամ այն յերկրում պրոլետարական հեղափոխության ունեցած «ազգային» և ինտերնացիոնալ խնդիրների պրոբլեմին: Կուսակցությունը յելնում եւ այն բանից, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատի «ազգային» և ինտերնացիոնալ խնդիրները ձուլվում են բոլոր յերկիրների պրոլետարներին կապիտալիզմից աղատագրելու մի ընդհանուր խնդրի մեջ, վոր մեր յերկրում սոցիալիզմի կառուցման շահերն ամբողջապես ու լիովին ձուլվում են բոլոր յերկիրների հեղափոխական շարժման շահերի հետ՝ վորպիս բոլոր յերկիրներում հեղափոխության հաղթության մի ընդհանուր շահ:

Ի՞նչ կիներ, յեթե բոլոր յերկիրների պրոլետարները չամակրեյին ու չաջակցեյին Խորհուրդների Հանրապետությանը, Խնտերվենցիա կիներ դեպի Խորհուրդների Հանրապետությունը և նրա ջախջախումը:

Ի՞նչ կլիներ, յեթե կապիտալին հաջող-
վեր ջախջախել Խորհուրդների Հանրապե-
տությունը։ Բոլոր կապիտալիստական ու
գաղութային յերկիրներում կգար ամենասե-
ռեալցիայի դարաշրջան, բանվոր դասա-
կարգին ու ճնշված ժողովուրդներին կսկսե-
յին խեղզեվ լիկվիդացիայի կենթարկվե-
յին միջազգային կոմունիզմի դիրքերը։

Ի՞նչ կլինի, յեթե ուժեղանա ու աճի բո-
լոր յերկիրների պրոլետարյաների համակրան-
քըն ու աջակցությունը Խորհուրդների Հան-
րապետությանը։ Դա արմատապես կհեշ-
տացնի սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ-ում։

Ի՞նչ կլինի, յեթե ԽՍՀՄ-ում աճեն սո-
ցիալիստական շինարարության հաջողու-
թյունները։ Դա արմատապես կլավացնի
բոլոր յերկիրների պրոլետարյաների հեղափո-
խական դիրքերը կապիտալի դեմ մղվող
նրանց պայքարում, կիսախոտի միջազգային
կապիտալի դիրքերը պրոլետարիատի դեմ
նրա մղած պայքարում ու վերին աստիճա-
նի կրաքրացնի համաշխարհային կոմու-
նիզմի շանսերը։

Քայց սրանից կետեռում ե, վոր ԽՍՀՄ-ի
պրոլետարիատի շահերն ու խնդիրները
հյուսվում ու անխղելիորեն կապվում են
բոլոր յերկիրների հեղափոխական շարժման
շահերի ու խնդիրների հետ և, ընդհակա-
ռակը, բոլոր յերկիրների հեղափոխական
պրոլետարյաների խնդիրներն անխղելիորեն
կապվում են սոցիալիստական շինարարու-
թյան ճակատում ԽՍՀՄ-ի պրոլետարյաների
ունեցած խնդիրների ու հաջողությունների
հետ։

Այս պատճառով այս կամ այն յերկ-
րի պրոլետարյաների «ազգային» խնդիր-
ները հակադրել ինտերնացիոնալ խնդիրնե-
րին— նշանակում ե ամենակոպիտ սխալը
գործել քաղաքականության մեջ։

Այս պատճառով ԽՍՀՄ-ի պրոլետարյանե-
րի բուռն յեռանդն ու կրքոտությունը սո-
ցիալիստական շինարարության ճակատում
մղվող պայքարում պատկերել վորակես «ազ-
գային ներփակության» ու «ազգային սահ-
մանափակության» նշան, ինչպես յերբեմ

անում են մեր ոպողիցիններները, — նշանակում ե խելագարվել կամ յերեխայանալ:

Այս պատճառով մի յերկրի շահերի ու խնդիրների միասնություն ու անբաժանելիություն հաստատելը բոլոր յերկիրների պրոլետարների շահերի ու խնդիրների հետ, դա բոլոր յերկիրների պրոլետարների հեղափոխական շարժման հաղթության ամենաճիշտ ուղին ե:

Հենց այդ պատճառով պրոլետարական հեղափոխության հաղթությունը մի յերկրում վհչ թե ինքնանպատակ ե, այլ բոլոր յերկիրներում հեղափոխության զարգանալու և հաղթելու միջոց ու նեցուկ:

Այդ պատճառով սոցիալիզմ կառուցել ԽՍՀՄ-ում — այդ նշանակում ե կատարել բոլոր յերկիրների պրոլետարների ընդհանուր դրծը, այդ նշանակում ե կոփել հաղթությունը կապիտալի նկատմամբ վհչ միայն ԽՍՀՄ-ում, այլև բոլոր կապիտալիստական յերկիրներում, վորովհետև ԽՍՀՄ-ի մեջ յեղած հեղափոխությունը համաշխարհային

հեղափոխության մեջ մասն ե, նրա սկիզբը և նրա ծավալման բազան:

Սոցիալիզմի կարության շարժի ուստության ՇՈՒՐ

Զօրորդ հարց: Զորբորդ հարցը վերաբերում ե քննարկվող հարցի պատմությանը: Ոպողիցին հավատացնում ե, վոր մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցը մեր կուսակցության մեջ առաջին անգամ դրվել ե 1925 թվին: Համենայն դեպս ընկ. Տրոցկին XV կոնֆերենցիայում ուղղակի հայտարարեց. «Ինչու յեն պահանջում թերթիապես ընդունել սոցիալիզմի կառուցումը մի յերկրում: Վորտեղից մեջտեղ յեկավ այդ հեռանկարը: Ինչու մինչև 1925 թիվը վոչ վոք առաջ չեր քաշում այդ հարցը»:

Այսպիսով դուրս ե գալիս, վոր մեր կուսակցության մեջ մինչև 1925 թիվը այդ հարցն առաջ չեր քաշվում: Դուրս ե գալիս, վոր կուսակցության մեջ այդ հարցը միայն Բուլիսարինն ու Ստալինն են առաջ քաշել և տուաջ են քաշել 1925 թվին:

Ճշխտ և դա աբովյոք: Վհչ, ճիշտ չե:

Յես պնդում եմ, վոր մի յերկրում սուցիալիստական տնտեսություն կառուցելու հարցը կուսակցության մեջ առաջին անգամ առաջ ե քաշել Լենինը դեռևս 1915 թվին: Յես պնդում եմ, վոր այն ժամանակ Լենինին առարկում եր վոչ այլ վոք, բայց յեթե ընկ. Տրոցկին: Յես պնդում եմ, վոր այն ժամանակից ի վեր, այսինքն՝ սկսած 1915 թվից, մի յերկրում սոցիալիստական տնտեսություն կառուցելու հարցը քանիցս մեկնարանվել ե մեր մամուլում և մեր կուսակցության մեջ:

Դիմենք փաստերին:

ա) 1915 թիվ: Լենինի հոդվածը բոլշևիկների կենտրոնական որգանում («Սոցիալ-Դեմոկրատ»-ում)՝ «Յեվրոպայի Միացյալ Նահանգների լոգունդի մասին»: Ահա թե ինչ ե ասում Լենինն այդ հոդվածում.

«Սակայն վորպես ինքնուրույն լոգունդ «Աշխարհի Միացյալ Նահանգներ» լոգունդը հազեվ թե ճիշտ լիներ, նախ, այն պատճառով, վոր նա ձուլվում է սոցիալիզմի հետ. յերկրորդ, այն պատճառով, վոր նա

կարող եք ծնեցնել սխալ մեկնաբանություն մի յերկրում սոցիալիզմի հալթերու անհնարինության ու մնացած յերկիների հետ այդ յերկրի ունենալիք հարաբերության մասին: Ծնտեսական ու քաղաքական գարդացման անհավասարաշափությունը կապիտալիզմի անպայմանական որենքն ի Այստեղից հետեւում ե, վոր հնարավոր ե սոցիալիզմի հաղթությունը սկըզբնապես մերժանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած, կապիտալիստական յերկրում: Այդ յերկրի հաղթած պրոլետարիատը, ենսպրոպրիացիալի յե ներարկած լինելով կապիտալիստներին ու իր յեկըռում սոցիալիստական արտադրույթուն կազմակերպած լինելով¹, կըժառանը մնացած, կապիտալիստական աշխարհի դեմ, եր կողմը գրավելով ուրիշ յերկիրների ձագած դասակարգերին, այդ յերկիրներում ապստամբություն բարձրացնելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտության դեպքում մինչև անգամ ուսպական ուժով դուրս գալով շահագործողական դասակարգերի և նըրանց պետությունների գեմք... վորովհետեւ՝ «անհնարին և ազգերի ազատ միավորումը սոցիալիզմի մեջ, առանց սոցիալիստական հանրապետությունների շատթե քիչ յերկարատե համար պայքարի հետամնաց պետությունների դեմ» (Լենին, հ. XIII, եջ 133):

Ահա և ընկ. Տրոցկու առարկությունը,

¹ Բնողքծումն իմ և ի. Աս.:

վոր տրված են նույն այդ 1915 թվին Տրոցկու գեղամարած «Նաշ Թոլուժում»:

«Ճնտեսական ու քաղաքական զարգացման անհավասարաչությունը կապիտալիզմի անպայմանական որենքն ե»: Այստեղից «Սոցիալ-գենոկրատ»-ը (բոլշևիկ-ների կենտրոնական որդանը 1915 թ., վորտեղ և տըպ-ված ե լենինի վերոհիշյալ հոդվածը՝ ի. Աս.:) անում երայն յեղակացությունը, վոր հնարավոր ե սոցիալիզմի հաղթությունը մի յերկում, և վոր այդ պատճառով կարիք չկա պրոլետարիատի դիմատուրան յուրաքանչյուր առանձին պետության մեջ պայմանավորելու Ցելոսլայի Միացյալ Նահանգների ստեղծումով... Վոր վոչ մի յերկիր իր պայքարում չպետք ե տապահի մյուսներին, այդ մի տարրական միտք ե, վորի կրկնեն ոգակար ե ու անհրաժեշտ, վորպեսզի ինտերնացիոնալ զուգահեռներ գործողության գաղափարը չնենդափխիլ սպասողական ինտերնացիոնալ անդրծության գաղափարով Մյուսներին չսպասելով՝ մենք սկսում ու շարունակում ենք պայքարն ազգային հողի վրա, լիովին վստահ լինելով, վոր մեր նախաձեռնությունը զարկ կոտ մյուս յերկրներումյեղած պայքարին. իսկ յեթե այս բանը տեղի չունենա, ապա անհուսալի բան ե կարծել, — այս են վկայում թիւ պատմության փորձը, թիւ թեորետիկ կշռադատությունները, — վոր, որինակ, նեղափական Ռուսաստանը կարող կլինենք դիմանալ պահպանողական Յելյուպայի հանդեպ, կամ սոցիալիստական Գերմանիան

կարող կլինենք մեկուսացած մնալ կապիտալիստական աշխարհում: Սոցիալական հեղափոխության հեռանը-կարները քննության առնել ազգային զրչանակներում՝ կնշանակեր զոհ դառնալ հենց այն ազգային սահմանափակության, վորը սոցիալ-հայրենասիրության հյությունն ե» (ի. Տրոցկի, 1917, հ. III, մ. 1, էջ 89—90):¹

Դուք տեսնում եք, վոր «սոցիալիստական արտադրության կազմակերպման» հարցը կենինը դնում եր արդեն 1915 թ., Ռուսաստանի բուրժուա-դեմոկրատական հեղափոխության շեմքին, իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանում, յերբ հերթի յեր դրված բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերաճելու հարցը:

Դուք տեսնում եք, վոր այն ժամանակ ընկ. կենինին առարկում եր վոչ այլ վոք, բայց յեթե ընկ. Տրոցկին, վոր ակներևաբար, գիտեր, վոր կենինի հոդվածում խոսքը վերաբերում ե սոցիալիզմի հաղթությանը» և «մեկ յերկում սոցիալիստական

¹ Հնդկածութիւն իմ ե. ի. Աս.:

աբտագլություն կազմակերպելու» հնարաւ
վորությանը:

Դուք տեսնում եք, վոր «ազգային սահմանափակության» վերաբերյալ մեղադրանքըն առաջին անդամ առաջարկությունը կատարվել է ընկ. Տրոցկին դեռևս 1915 թվին, ըստ վորում այդ մեղադրանքն ուղղված եր վհչ թե Բուխարինի կամ Ստալինի դեմ, այլ Լենինի դեմ:

Հիմա ընկ. Զինովյեվը մի դլուխ մեջ և գցում «ազգային սահմանափակության» վերաբերյալ ծիծաղաշարժ մեղադրանքը: Բայց նա, յերսի, չի հասկանում, վոր դրանով իսկ կրկնում ու սհստավլրացիայի յե յենթարկում ընկ. Տրոցկու Փրազը, վորն ուղղված եր Լենինի ու նրա կուսակցության դեմ:

բ) 1919 թիվ: Լենինի հոդվածը՝ «Եկոնոմիկան ու քաղաքականությունը պլրուսարիատի դիկտատուրայի դարաշըջանում»: Առաջատի թերթուրայի դարաշըջանում:

«Ինչպես ել վոր ստին, զբարան բոլոր յերկիրների բուրժուաները և նրանց ուղղակի ու քողարկված աջակիցները (Ա հնտերնացիոնալի ռոոցիալիստաց), անտարակույս ե մեռմ—նիմնական սնիստական ները»),

պրոբենի տեսակետից պրոետարիատի դիկտատուրայի համար մեզանում նադրություն է ապահովված, կոմունիզմի նադրություն կապիտալիզմի նկատմամբ: Ամբողջ աշխարհի բուրժուազիան հենց այն պատճառով է կատարում ու գաղաղում բոլշևիզմի դեմ, սազմական արշավանքներ, զավարություններ և այլն ե կազմակերպում բոլշևիզմի դեմ, վոր նա հիանալի կերպով հասկանում ե մեր հադրության անխուսափելիությունը հանրային սնիստարյան վերակառուցման գործում, յերե մեզ ուղմական ուժով չհզմնեն: Խոկայդ կերպ մեզ նզմել երան չի հաշողլիւ¹ (Լենին, հ. XVI, եջ 350):

Դուք տեսնում եք, վոր Լենինի այս հոդվածում խոսքը «պլրուսարիատի դիկտատուրայի տնտեսական պրոբլեմի» մասին և, «հանրային տնտեսությունը» «կոմունիզմի հաղթության» ուղղությամբ «վերակառուցելու» մասին: Խոկ ինչ և «պլրուսարիատի դիկտատուրայի տնտեսական պրոբլեմը» և «հանրային տնտեսության վերակառուցումը» պլրուսարիատի դիկտատուրայի որով: Դա վոչ այլ ինչ և, յեթե վոչ սոցիալիզմի կառուցում մեկ յերկրում, մեր յերկրում:

¹ Հնդկածության իմ և ի. Աս.:

գ) 1921 թիվ: Լենինի բրոշյուրը «Պաշտոնական մասին»։ Հայոնի դրույթն այն մասին, վոր մենք կարող ենք ու պետք ե կառուցենք «մեր տնտեսության սոցիալիստական հիմքը» (տես «Պարենհարկի մասին»):

դ) 1922 թիվ: Բնկ. Լենինի յելույթը Մուկվայի խորհրդում, վորտեղ նա խոսում ե այն մասին, վոր «մենք սոցիալիզմը նիերքաշել ենք առողջա կյանքի մեջ», վոր «նեպական Ռուսաստանը կղառնա սոցիալիստական մասամբ» (տես Լենին, ճ. XVIII, մ. կ. 2, եջ 108); Բնկ. Տրոցկու առարկություն- «Հաշտության ծրագրի» նրա «Վերջաբանում» 1922 թ.՝ առանց ուղղակի մատնաշնչան, վոր նա բանավիճում ե Լենինի դեմ։ Ահա թե ինչ ե ասում ընկ. Տրոցկին այդ «Վերջաբանի» մեջ։

«Հաշտության ծրագրի» մեջ միքանի տնտեսմ կը- կընվող այն պնդումը, վոր պլուտոքական հեղափո- խությունը չի կարող հաղթությամբ պասակել աղ- գային շրջանակներում, մի կարգ ընթերցողների թիւ- սուական հարքած թվա մեր Խորհրդային Հանրապետու-

թյան համարյա հնգամյա փորձով։ Բայց այսպիսի յեղակացությունն անհիմն կլիներ։ Այն փաստը, վոր բանքուական պետությունը դիմացավ ու պահպան- վեց ամբողջ աշխարհի դեմ մուկ յերկրում, այն ել հետամենաց յերկրում, վկայում է, վոր պեռլիստարիտառը վիթխարի ուժ ունի, վորն ուղիւ, ավելի առաջակարի յերկիրներում ընդունակ կլինի խոկապես հրաշեներ գործելու Բայց պահաւապահնելով մեզ թե քաղաքական, թե ռազմական իմաս- տով՝ վարպետ պիտություն, մենք սոցիալիստական հա- սարակության ստեղծման չենք հասել և նույնիսկ չենք մատեցեր հեղափոխական-պետական ինքնապահպան- ման համար մզած պայքարն այդ ժամանակաշրջանում առաջ բերեց արտադրողական ուժերի արտակարգ նվազում։ իսկ սոցիալիզմը հնարավոր և միայն Նրանց անման ու ծաղկման հիման վրա Առեւրական բա- նակը ությունները բուրժուական պետությունների հետ, կանցեսիանները, Զենովայի կոնֆերենցիան և այլն չափանց ցայտուն վկայություն են, վոր մեկուսա- ցած սոցիալիստական ժիւացարությունն ազգային-պե- տական ըշշնակմերում անհնարին ե... սոցիալիստական մենեսուրյան իսկական վերելքը Ռուսաստանում հնարա- վոր կրանա միայն պրոլետարիատի հայրանակից նետա Յելենայի կարենցազույն յերկիրներում»¹ (Հ. Տրոցկի, 1917 թ. ճ. III, մ. 1, եջ 92—93):

¹ Բնդզնիքն իմն եւ թ. Աս.:

Ո՞ւմ ե առարկում այստեղ ընկ. Տրոցկին,
թե՝ «մեկուսացած սոցիալիստական շինա-
բարությունն ազգային պետական շրջանակ-
ներում անհնարին է»: Դե, ինարկե, վոչ Բու-
խարինին կամ Ստալինին: Ընկ. Տրոցկին
այստեղ առարկում ե ընկ. Լենինին, և նա
առարկում ե վոչ թե մի ինչ-վոր ուրիշ
հարցում, այլ հիմնական հարցում—«սոցիա-
լիստական շինաբարության մասին ազգա-
յին-պետական շրջանակներում»:

Ե) 1923 թիվ: Լենինի բրոշյուրը «Կոոպե-
րացիայի մասին», վորը հանդիսանում է նրա
քաղաքական կոտակը: Ահա թե լենինն ինչ ե
ասում այդ բրոշյուրում.

«Իրոք վոր, պետության իշխանությունն արտա-
դրության բոլոր խոշոր միջոցների նկատմամբ, պե-
տության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին,
այդ պրոլետարիատի դաշնութը բազմաժիշտն մանր ու
մանրագույն գյուղացիների հետ, գյուղացիության
դեկավարումն այդ պրոլետարիատի համար ապահո-
վելը և այն,— միթե սա այն ամենը չե՞ն, ինչ հար-
կելը ե, զորպեսդի կոոպերացիայից, միմիայն կոո-
պերացիայից, վորը մենք առաջ քամահրում ելինք
պորպես չարչիական ոռոգերացիա և վորը վորոշ տե-
ղորպես

սակատից իրավունք ունենք քամահրելու այժմ՝ նե-
պի պայմաններում նույնպես,— միթե սա այն ա-
մենը չե, ինչ անհրաժեշտ է լիակատար սովորակա-
կան հասարակություն կառուցելու համար» Սա դեռևս
սոցիալիստական հասարակության կառուցում չե,
բայց սա այն ամենն ե, ինչ անհրաժեշտ է ու բա-
վական՝ այդ կառուցման համար»¹ (տե՛ս հատ.
XVIII, մ. 2, էջ 140):

Թվում ե, թե դժվար ե ավելի պարզ
արտահայտվել: Ընկ. Տրոցկու մոտ դուրս ե
գալիս, վոր «սոցիալիստական շինաբարու-
թյունն ազգային-պետական շրջանակնե-
րում» անհնարին ե: Իսկ լենինը պնդում է,
վոր մենք, այսինքն ԽՍՀՄ-ի պրոլետարիա-
տը, այժմ, պրոլետարիատի գիկտատուրայի
ժամանակաշրջանում, ունենք «այն ամենը,
ինչ անհրաժեշտ ե» ու «բավական»՝ «լիա-
կատար սոցիալիստական հասարակություն
կառուցելու համար»: Հայացքների միմյանց
հակադիր լինելը լիակատար ե:

Սրանք հն փաստերը:

Այսպիսով դուք տեսնում եք, վոր մեկ

¹ Ընդդումն իմն ե: Խ. Աս.:

յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցը մեր
կուսակցության մեջ առաջ եւ քաշվել դեռևս
1915 թվին, այն առաջ եւ քաշել անձնապես
Լենինը, վորի դեմ այդ հարցում վիճել ե
վոչ այլ վոք, յեթե վոչ ընկ. Տրոցկին, մե-
ղադրելով Լենինին «աղղային սահմանափա-
կության» մեջ:

Դուք տեսնում եք, վոր այդ ժամանակից
ի վեր այդ հարցը մեր կուսակցության աշ-
խատանքի որակարգից դուրս չի յեկել ընդ-
հուպ մինչև ընկ. Լենինի մահը:

Դուք տեսնում եք, վոր այդ հարցն ընկ.
Տրոցկին միքանի անգամ եւ հաբուցել այս
կամ այն ձեռով վորպես թագցրած, բայց
միանգամայն վորոշակի բանավեճ ընկ. Լե-
նինի դեմ, ըստ վորում այդ հարցն ընկ.
Տրոցկին յուրաքանչյուր անգամ մեկնաբա-
նել ե վոչ թե Լենինի ու լենինիզմի վողով,
այլ Լենինի ու լենինիզմի դեմ:

Դուք տեսնում եք, վոր ընկ. Տրոցկին
ուղղակի սուս ե ասում, հավատացնելով, թե
մեկ յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցը

վոչ վոք առաջ չի քաշել մինչև 1925 թվա-
կանը:

ԽՍՀՄ-ում սոցիալիզմ ԿԱՌՈՒԵԼՈՒ ՀԱՐՑԻ
ԱՌԱՋՆԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՏՎՅԱԼ ՄՈՄԵՆՏԻՆ

Հինգերորդ հարց: Հինգերորդ հարցը վե-
րաբերում ե սոցիալիզմի կառուցման ակ-
տուալ լինելու խնդրի պլոբլեմին տվյալ մո-
մենուում: Ինչպէս սոցիալիզմի կառուցման
հարցն առանձնապես ակտուալ բնույթ ե
ստացել հատկապես այժմ, հատկապես վեր-
ջին ժամանակներս: Ինչպէս, որինակ՝ 1915,
1918, 1919, 1921, 1922, 1923 թ. թ. ԽՍՀՄ-ում
սոցիալիզմ կառուցելու հարցը քննարկվում
եր գեպօլից-դեպք, առանձին հոդվածնե-
րում, իսկ 1924—25—26 թ. թ. այդ հարցն ա-
ռանձնապես աչքի ընկնող տեղ գրավեց մեր
կուսակցական պրակտիկայում: Ինչպէս ե բա-
ցարվում այս:

Հստ իս՝ սա բացատրվում ե յերեք գըլ-
խավոր պատճառներով:

Նախ՝ նրանով, վոր վերջին տարիներս

հեղափոխության տեմպը մյուս յերկիրներում գանդաղել եւ, յեկել եւ այսպես կոչված «կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիան»: Այստեղից մի հարց. կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիան չի՞ տանում արդյոք դեպի այն բանը, վոր մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունները թուլանան կամ նույնիսկ վոչնչանան: Այստեղից՝ աճած հետաքրքրությունը գեպի այն հարցը, թե ինչ վիճակ եւ ունենալու սոցիալիզմն ու սոցիալիստական շինարարությունը մեր յերկրում:

Յերկրորդ, նրանով, վոր մենք նեոլ ենք մտցրել, թույլատրել ենք մասնավոր կապիտալը և մի վորոշ նահանջ ենք կատարել վորպեսզի վերախմբավորենք ուժերս ու հետո հարձակման դիմենք: Այստեղից մի հարց. արդյոք նեպ մտցնելը չի՞ կարող նըսպասել այն բանին, վոր մեր յերկրի սոցիալիստական շինարարության հնարավորությունները թուլանան: Այստեղից՝ մի նոր աղբյուր հարածուն հետաքրքրության դեպի այն հարցը, թե հնարավոր եւ ար-

ոյոք սոցիալիստական շինարարությունը միք յերկրում:

Յերրորդ, այն հանգամանքով, վոր մենք շահել ենք քաղաքացիական պատերազմը, վոնդել ենք ինտերվենցիոնիստներին և պատերազմից դադար առնելու հնարավորություն ենք նվաճել, նվաճել ենք դադարի ժամանակաշրջան, վորը նպաստավոր պայմաններ և ներկայացնում, վորպեսզի վերացնենք տնտեսական ավերումը, վերականգնենք յերկրի արտադրողական ուժերը ու մեր յերկրում զբաղվենք նոր եկոնոմիկայի կառուցումով: Այստեղից մի հարց. ի՞նչ ուղղությամբ պետք եւ տանել տնտեսության շինարարությունը, — դեպի սոցիալիզմի կողմը, թե՞ դեպի վորեւ այլ կողմ: Այստեղից մի հարց. յեթե շինարարությունը տանենք դեպի սոցիալիզմը, ապա հիմքեր կան արդյոք հուսալու, վոր մենք հնարավորություն ունենք սոցիալիզմը կառուցելու նեպի պայմաններում ու կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիայի որով: Այստեղից՝ ամբողջ կուսակցության և ամ-

բողջ բանվոր դասակարգի հսկայական հետաքրքրությունը դեպի այն վիճակը, վորունենալու յեւ սոցիալիստական շինարարությունը մեր յերկրում։ Այստեղից՝ ամեն կարգի ավալների ամենամյա հաշվարկները, վոր կատարում են կուսակցության ու Խորհրդային իշխանության որգանները՝ տնտեսության սոցիալիստական ձևերի տեսակարգը կշիռն արդյունաբերության ընագավառում, առևտուրի ընագավառում, հողագործության ընագավառում ուժեղանալու տեսակետից։

Ահա ձեզ յերեք զլիավոր պատճառներ, վորոնք ասում են, վոր սոցիալիզմի կառուցման հարցը մեր կուսակցության և մեր պրոլետարիատի համար նույնպես, ինչպես և Կոմինտերնի համար, ամենակտուալ հարց և դարձել։

Ոպողիցիան կարծում ե, թե ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հարցն ունի լոկթերիական հետաքրքրություն։ Դա սխալ եւ Դա խորագույն մոլորություն եւ չարցի այդպիսի մեկնաբանությունը կարող ե բա-

ցատրվել միայն նրանով, վոր ուղղվեցիան կատարելապես կտրված և մեր կուսակցական պրակտիկայից, մեր տնտեսական շինարարությունից, մեր կոռպերատիվ շինարարությունից։ Սոցիալիզմի կառուցման հարցն այժմ, յերբ մենք վերացրել ենք տնտեսական ավերմունքը, վերականգնել ենք արդյունաբերությունը և թևակոխել ենք ամբողջ ժողովրդական տընտեսությունը տեխնիկական նոր հիմքի վրա վերակառուցելու շրջանը, — սոցիալիզմի կառուցման հարցն այժմ հսկայական պրակտիկական նշանակություն ունի։ Տնտեսական շինարարության ժամանակ գրիծը դեպի ուրանելի բնույթ կառուցել, ինչ ուրանելի կառուցել ինչ հեռանկարներ պետք ե ունենալ մեր շինարարությունը, — այս բոլորն այնպիսի հարցեր են, առանց վորոնց լուծման աղջիկ ու խոհական տնտեսավարչները չեն կարող վոչ մի քայլ տնել գետի առաջ, յեթե նրանք ցանկանում են շինարարությանը վերաբերվել իսկապես գիտակից ու մտածված կերպով։ Արդյոք մենք

այն բանի համար ենք կառուցում, վորպես-
զի հող պարարտացնենք բուժժուական
դեմոկրատիայի համար, թե այն բանի հա-
մար, վորպեսզի սոցիալիստական հասարա-
կություն կառուցենք,— այժմ այս և մեր
շինարարական աշխատանքի արմատը: Ար-
դյոք մենք սոցիալիստական տնտեսություն
կառուցելու հնարավորություն ունենք այժմ,
նեալի պայմաններում, կապիտալիզմի մաս-
նակի ստարիլիզացիայի ժամանակ,— սա
այժմ մեր կուսակցական և խորհրդային աշ-
խատանքի ամենակարենոր հարցերից մեկն և

Լենինն այս հարցին դրական պատաս-
խան և տվել (տես թեկուզ «Կոոպերացիայի
մասին» բրոյալը): Կուսակցությունն այս
հարցին դրական պատասխան և տվել (տես
Համ ԿԿ ԽIV կոնֆերենցիայի բանաձել):
Ե՛, իսկ ոպողիցիմն: Յես արդեն ասել եմ,
վոր ոպողիցիան այս հարցին բացասական
պատասխան և տվել: Յես արդեն ասել եմ
Համ ԿԿ XV կոնֆերենցիայում աված իմ գե-
կուցման մեջ, իսկ այժմ ստիպված եմ կը ըկ-
նել այստեղ, վոր ընկ. Տրոցկին, ոպողիցիոն

բլոկի լիդերը, դեռևս բոլորովին նորերս,
1926 թ. սեպտեմբերին, ոպողիցիոններին
ուղղած իր հայտնի դիմումի մեջ հայտա-
րաբեկ ե, վոր «մեկ յերկրում սոցիալիզմ
կառուցելու թեորիան» նա համարում է
«աղքային սահմանափակության թեորիա-
կան արդարացում» (տես Ստալինի զեկու-
ցումը Համ ԿԿ XV կոնֆերենցիայում):

Ընկ. Տրոցկու այս ցիտատը (1926 թ.)
համեմատեցնեք նրա 1915 թ. հոդվածի հետ,
վորտեղ նա, բանավիճելով Լենինի հետ մեկ
յերկրում սոցիալիզմի հաղթելու հնարավու-
րության հարցի շուրջը, առաջին անգամ
գրեց ընկ. Լենինի ու լենինիստների «աղ-
քային սահմանափակության» հարցը,— և
դուք կհասկանաք, վոր մեկ յերկրում սո-
ցիալիզմ կառուցելու հարցում ընկ. Տրոց-
կին մնացել է սոցիալ-դեմոկրատական ժըխտ-
ման իր հին դիրքում:

Հենց այս պատճառով կուսակցությունը
պնդում ե, վոր արոցկիզմը սոցիալ-դեմո-
կրատական թեքում է մեր կուսակցության
մեջ:

Վեցերորդ հարց: Վեցերորդ հարցը վերաբերում է պրոլետարական հեղափոխության հեռանկարների պրոբլեմին: Ընկ. Տրոցկին XV կոնֆերենցիայի իր ճառում ասում եր՝ «Հենինը գտնում եր, վոր 20 տարվա ընթացքում մենք վոչ մի կերպ սոցիալիզմ չենք կառուցի, մեր գյուղացիական յերկրի հետամշացության պայմաններում 30 տարում ել չենք կառուցի: Յենթադրենք 30—50 տարի վորպես մինիմում»:

Ես պետք ե հայտարարեմ այստեղ, ընկերներ, վոր ընկ. Տրոցկու հերյուրած այս հեռանկարն ընդհանուր վոչինչ չունի ընկ. Լենինի այն հեռանկարի հետ, վոր նա ուներ ԽՍՀՄ-ի հեղափոխության նկատմամբ: Միքանի բոպեանց ընկ. Տրոցկին ինքն սկսում է իր ճառում պայքարել այդ հեռանկարի դեմ: Բայց այդ արդեն իր գործն եւ Բայց յես պետք ե հայտարարեմ, վոր վճչ լենինը, վճչ կուսակցությունը չեն կարող պատասխանատու լինել ընկ. Տրոցկու հերյուրած այդ

հեռանկարի և նրանից բղիսող յեղբակացությունների համար: Այն փաստը, վոր այդ հեռանկարը հորինելով ընկ. Տրոցկին սկսում է հետո իր ճառում պայքարել իր խոկ սեփական հորինվածքի դեմ,—այս փաստը խոսում է միայն այն մասին, վոր ընկ. Տրոցկին վերջնականապես խճճվել եւ ծիծաղելի դրության մեջ եւ դրել իրեն:

Լենինը բնավ չի ասել, թե «մենք վոչ մի կերպ սոցիալիզմ չենք կառուցի» 30 կամ 50 տարվա ընթացքում: Անա թե, իրոք, ինչ եր ասում լենինը.

«10—20 տարվա ճիշտ հարաբերություններ դրուցիներն հետ և ապահոված ե հաղթությունը համաշխարհային մասշտաբով (մինչև անգամ յեթե ձգձգվեն պրոլետարական հեղափոխությունները, վորոնք անում են), այլապես՝ սպիտակ դվարդիական տեսողիք 20—40 տարվա տահջանքներ» («Լենինյան ժողովածու» 14, էջ 374).

Լենինի այս դրույթից կարելի՞ յի արդ դյոք անել այն յեղբակացությունը, թե մենք «վոչ մի կերպ սոցիալիզմ չենք կառուցի 20—30 կամ 50 տարում»: Վահ, չի կարելի: Այդ

գրույթից կարելի յե անել միայն հետեւյալ
յեղբակացությունները. ա) գյուղացիության
հետ ճիշտ փոխարարելություններ ունե-
նալու գեպքում մեղ համար ապահոված
ե հաղթությունը (այսինքն սոցիալիզմի
հաղթությունը) 10—20 տարում. բ) այդ
հաղթությունը հաղթություն կլինի վճռ միայն
ԽՍՀՄ-ում, այլ հաղթություն «համաշխար-
հային մասշտաբով». գ) յեթե մենք այդ ժա-
մանսակամիջոցում հաղթություն ձեռք չբե-
րենք, ապա դա կլինի այն բանի նշանը,
վոր մեղ ջախջախել են, և ոլրութառարիատի
դիկտատորայի ոեւժիմին փոխարինել ե սովոր-
տակ-գլարդիական տեսորը, վորը կարող ե
տեսել 20—40 տարի:

Ինարկե, կարելի յե համաձայնել և չհա-
մաձայնել կենինի այս գրույթի և նրանից
բղխող յեղբակացությունների հետ. Բայց
աղավաղել այն, ինչպես ընկ. Տրոցկին ե այդ
բանն անում, չի կարելի:

Իսկ ի՞նչ ե նշանակում հաղթություն
«համաշխարհային մասշտաբով»: Արդյո՞ք այդ
նշանակում ե, վոր այդպիսի հաղթությունը

հավասարանշանակ ե սոցիալիզմի հաղթու-
թյանը մի յերկրում: Վաչ, չի նշանակում:
իր յերկերում կենինը խիստ կերպով զանա-
զանում ե սոցիալիզմի հաղթությունը մի
յերկրում՝ նրա հաղթությունից համաշխար-
հային մասշտաբով: Խոսելով «համաշխար-
հային մասշտաբով» հաղթության մասին՝
կենինն ուղղում ե ասեք վոր սոցիալիզմի հա-
ջողությունները մեր յերկրում, սոցիալիս-
տական շինարարության հաղթությունը մեր
յերկրում ունի այնպիսի հսկայական մի-
ջազգային նշանակություն, վոր այն (հաղ-
թությունը) չի կարող սահմանափակվել մեր
յերկրով, այլ պետք ե բոլոր կապիտալիս-
տական յերկիրներում առաջ բերի հզոր
շարժում գեղի սոցիալիզմը, ըստ վորում, յե-
թե ըստ ժամանակի նո չի համընկնում մյուս
յերկիրների պրոլետարական հեղափոխու-
թյան հաղթությանը, ապա նա համենայն
գեպս սկիզբը պետք ե հանդիսանա ուրիշ
յերկիրների պրոլետարական հուժկու շարժ-
ման դեպի համաշխարհային հեղափոխու-
թյան հաղթությունը:

Ահա թե վորն և հեղափոխության հեռաւ-
նկարն ըստ լենինի, յեթե նկատի առնենք
հեղափոխության հաղթության հեռանկարը,
վորի մասին և հենց խոսքը մեզանուժ, կու-
սակցության մեջ:

Այս հեռանկարը շփոթել ընկ. Տրոցկու
30—50 տարիների վերաբերյալ հեռանը-
կարի հետ,—նշանակում և զրարդութ լենին:

ԽՐԱԿԱՆՈՒՄ ԻՆՉԹԵՍ Ե ԴՐՎԱԾ ՀԱՐՁԸ

Յօրեւարդ հարց: Դիցուք թե, առում և
մեղ ուղղվեցիան, բայց վերջիվերջո մւմ
հետ ավելի լավ և դաշնոքի մեջ լինել—հա-
մաշխարհային պրոլետարիատի հետ, թե
մեր յերկրի գյուղացիության հետ, մւմ նա-
խալատվություն տալ—համաշխարհային
պրոլետարիատին, թե ԽՍՀՄ-ի գյուղացի-
ությանը: Բնդ սմին գործն ույնդեռ և պատ-
կերվում, կարծես թե կանգնած ե ԽՍՀՄ-ի
պրոլետարիատը և նրա առջև կա յերկու-
դաշնակից—համաշխարհային պրոլետարիա-
տը, վորը պատրաստ և առանց հապաղե-

լու տապալիլ իր լուրժուազիային, բայց
սպասում ե մեր նախամեծար համաձայնու-
թյանն այդ բանին, և մեր գյուղացիությունը,
վորը պատրաստ և ոգնելու ԽՍՀՄ-ի պրոլետա-
րիատին, բայց լիովին չի հավատացած, թե
ԽՍՀՄ-ի պրոլետարիատը կընդունի այդ ոգնու-
թյունը: Սա, ընկերներ, հարցի յերեխայական
գրումնեւ: Հարցի այսպիսի գրումն ընդհանուր
վոչինչ չունի վոչ մեր յերկրի հեղափոխության
ընթացքի հետ, վոչ ել ուժիրի այն հարա-
բերակցության հետ, վոր կա համաշխարհային
կառիտալիզմի և սոցիալիզմի միջև մղվող
կռվի ճակատում: Ներեցնք արտահայտու-
թյանս, բայց հարցն այդպիս կարող են
դնել միայն ինստիտուտկաները: Ցավոք սըր-
տի, բանն այնպիս չե, ինչպես այդ պատկե-
րում են ոպողիցիուներներից վոմանք, ըստ վո-
րում հիմքեր չկան տարակուելու, վոր մենք
հաճույքով կընդունելինք ողնությունը թե
մեկ, թե մյուս կողմից, յեթե դա միայն մե-
զանից կախված լիներ: Վոչ, իրական կան-
քում հարցն այդպիս չի դրված:

Հարցն ահա թե ինչպիս ե դրված. բանի վոր

Համաշխարհային հեղափոխական շարժման
տեմպը գանդաղել ե, սոցիալիզմի հաղթու-
թյուն Արևմուտքում դեռ չկա, իսկ ԽՍՀՄ-ի
պրոլետարիատն իշխանության գլուխ ե կանգ-
նած, տարեցարի ամրացնում ե այն, իր
շուրջն ե համախմբում գյուղացիության հիմ-
նական մասսաները, արդեն լուրջ հաջողու-
թյուններ ունի սոցիալիստական շինարա-
բության ճակատում ու հաջողությամբ ամ-
րապնդում ե բարեկամության կապերը բո-
լոր յերկիրների պրոլետարների և ճնշված
ժողովուրդների հետ, — ապա հիմքեր կմն
արդյոք ժխտելու այն, վոր ԽՍՀՄ-ի պրոլե-
տարիատը կարող ե հաղթահարել իր բուր-
ժուազիային ու շարունակել սոցիալիզմի
հաղթական կառուցումը՝ մեր յերկրում, չնա-
յած կապիտալիստական շրջապատմանը:

Ահա թե հարցն ինչպես ե գրված այժմ,
յեթե մեկնենք, ինարկի, վհչ թե ֆանտազիա-
ներից, ինչպես այդ անում ե ովողիցիոն
բլոկը, այլ սոցիալիզմի և կապիտալիզմի
միջև տեղի ունեցող պայքարի ճակատում

յեղած ուժերի իրական հարաբերակցու-
թյուննից:

Կուսակցությունն այս հարցին պատաս-
խանում ե, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատն
այսպիսի պայմաններում ի վիճակի յե հաղ-
թահարելու իր, «ազգային», բուրժուազիա-
յին ու հաջողությամբ սոցիալիստական տըն-
տեսությունն կառուցելու:

Իսկ ոպողիցիան ասում ե, վոր

«Առանց Յեկարպական պրոլետարիատի ու դդակի
պետական աջակցության, Ռուսաստանի բանվոր գո-
սակարգը չե կարողանա իշխանությունն իր ձեռքու մ
պահել և իր ժամանակավոր տիրապետությունը տհա-
կան սոցիալիստական դիկտատուրայի վերածել»:
(Տրոցկի, «Մեր հեղտափոխությունը», էջ 278):

Իսկ ի՞նչ իմաստ ունի ընկ. Տրոցկու այս
ցիտատը և ի՞նչ ե նշանակում «յեկարպական
պրոլետարիատի պետական աջակցությունը»:
Այդ նշանակում ե, վոր առանց այն բանի,
վոր պրոլետարիատը նախապես հաղթի
Արևմուտքում, առանց պրոլետարիատի

¹ Բնդգծումն իմն եւ Ե. Ս.:

կողմից իշխանությունն Արևմուտքում նախապես գրավելու, ԽՍՀՄ-ի պրոլետարիատը վնչ միայն չի կարող հաղթահարել իր բուրժուազիային և սոցիալիզմ կառուցել, այլ նա չի կարող նույնիսկ իշխանությունն իր ձեռքում պահել:

Ահա թե ինչպես ե դրված հարցը և ահա թե վորն ե մեր տարածայնությունների արմատը:

Ինչով ե տարբերվում ընկ. Տրոցկու այս գիրքն Ոտտո Բաուերի գիրքից:

Ցավոք սրտի, վոչնչով:

ՀԱՅԹՈՒԹՅԱՆ ՇԱՆՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուրիցորդ հարց: Դիցուք թե, ասում ե ոպողիցիան, բայց հաղթության շահսեր ովավելի ունի—ԽՍՀՄ-ի պրոլետարիատը, թե համաշխարհային պրոլետարիատը:

«Կարելի» յե արդյոք առակերպացնել,—ասում ե ընկ. Տրոցկին համ կ(բ)Կ ԽՎ կոնֆերենցիայի իր ճառաւմ,—վոր 30—50 տարիների ընթացքում յելքու պական կազիտալիզմը կնախավի, իսկ պրոլետարիատը հեղափոխություն կատարելու անընդունակ դուրս

կգա: Յես հարցնում եմ ի՞նչու յես պետք ե վերցնեմ այս նախադրյալը, վորը չի կարելի այլ կերպ անվանել, բայց յեթե չի մնավորված և նոսեանսամբյան նախադրյալ՝ յելքովական պրոլետարիատի մասին... Յես պնդում եմ, վոր յես վոչ մի թերբեկան կոմքաղաքական հիմք չունեմ կարծելու, թե մեզ համար գյուղացիութան հետ միասին սոցիալիզմ կառուցելու ավելի հաշու ե, քան յելքովական պրոլետարիատի համար իշխանություն վերցնելը» (տես ընկ. Տրոցկու ճառը Համկ(բ)Կ ԽՎ կոնֆերենցիայում):

Նախ, հարկավոր ե առանց վերապահումների գեն նետել Յելքովայում «30—50 տարվա ընթացքում» ճացում լինելու հեռանկարը: Վոչ վոք չի պարտավորեցրել ընկ. Տրոցկուն յելնելու Արևմուտքի կապիտալիստական յերկիրների պրոլետարական հեղափոխությունների այդ հեռանկարից, վորն ընդհանուր վոչինչ չունի մեր կուսակցության հեռանկարի համար: Ընկ. Տրոցկին ինքն ե իրեն կապել այդ հերյուրած հեռանկարի հետ և ինքն ել պատասխանաւու պետք ե լինի այդպիսի ոպերացիայի հետևանքների համար: Յես կարծում եմ, վոր այդ ժամկետները պետք ե կրծատվեն

առնվազն յերկու տնդամ, յեթե նկատի ու-
նենանք պրոլետարական հեղափոխության
իրական հեռանկարն Արևմուտքում:

Յերկրորդ, ընկ. Տրոցկին առանց վերա-
պահումների վճռում ե, վոր Արևմուտքի
պրոլետարները շատ ավելի մեծ շանսեր
ունեն հաղթահարելու համաշխարհային
բուրժուազիային, վորը հիմա իշխանու-
թյան գլուխ է կանգնած, քան ԽՍՀՄ-ի
պրոլետարիատն իր, «աղքային», բուրժուա-
զիային, վորը քաղաքականապես արդեն
ջախջախված է, իսկ անտեսական տեսակետից
հարկադրված է նահանջել պրոլետարիատի
դիկտատորայի ու մեր տնտեսության սո-
ցիալիստական ձևերի ճնշման առաջ: Յես
գտնում եմ, վոր հարցի այսպիսի դրվածքը
սխալ է: Յես գտնում եմ, վոր հարցն այս-
պես դնելով՝ ընկե Տրոցկին գլխովին մատ-
նում է իրեն: Միթե նույն այդ բանը չկյեն
ասում մեզ մենշևիկները 1917 թ. հոկտեմ-
բերին, յերբ նրանք բոլոր կտուրներից
բղավում եյին, թե Արևմուտքի պրոլետար-
ները շատ ավելի շանսեր ունեն տապա-

լելու բուրժուազիային և իշխանությու-
նը զրավելու, քան Ռուսաստանի պրոլե-
տարները, վորտեղ տեխնիկան քիչ ե զար-
գացած և վորտեղ պրոլետարիատը փոքրա-
թիվ է: Յեկ միթե այս փաստ չե, վոր
չնայած մենշևիկների վորը ու կոծերին,
Ռուսաստանի պրոլետարները 1917 թվի
հոկտեմբերին իշխանությունը վերցնելու և
բուրժուազիային տապալելու շատ ավելի
շանսեր ունեցան, քան Անգլիայի, Ֆրան-
սիայի կամ Գերմանիայի պրոլետարները:
Միթե ամբողջ աշխարհի հեղափոխական
պայքարի պրակարիկան ցույց չի տվել ու
չի ապացուցել վոր չի կարելի հարցն այն-
պես դնել ինչպես ընկ. Տրոցկին է դնում
այն:

Այն հարցը, թե շուտափույթ հաղթու-
թյան շահնսեր ով ավելի շատ ունի, չի
վճռվում մի յերկրի պրոլետարիատը մյուս
յերկրների պրոլետարիատին կամ մեր յերկ-
րի գյուղացիությունը մյուս յերկրների
պրոլետարիատին հակագրելու միջոցով:
Այդպիսի հակագրությունը համեմատու-

թյան յերեխայական խաղ և: Այս հարցը,
թե շուտափույթ հաղթության շանսեր ով
ավելի շատ ունի, վճռվում և միջազգային
ռեալ իրադրությամբ, ուժերի ռեալ հաւ-
քարերակցությամբ կապիտալիզմի և սոցիա-
լիզմի միջև մղվող պայքարի ճակատում:
Կարող և պատահել վոր Արևմուտքի
պրոլետարներն ավելի շուտ հաղթենա իրենց
բուրժուազիային և իշխանություն գրավեն,
քան մենք կկարողանանք կառուցել մեր
եկոնոմիկայի սոցիալիստական հիմքը: Սա
բոլորվին բացառված չեւ Բայց կարող և
պատահել և այն, վոր ԽՍՀՄ-ի պրոլետա-
րիատին կհաջողվի մեր եկոնոմիկայի սո-
ցիալիստական հիմքը կառուցել ավելի շուտ,
քան պրոլետարներն Արևմուտքում կտա-
պալեն իրենց բուրժուազիային: Այս ևս
բացառված չեւ:

Շուտափույթ հաղթության շանսերի
հարցի լուծումն այսուեղ կախված և կապի-
տալիզմի ու սոցիալիզմի միջև մղվող պայ-
քարի ճակատում յեղող ռեալ իրադրու-
թյունից ու միմիայն նըսանից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սրանք են մեր տարածայնությունների
հիմքերը:

Այս հիմքերից բղխում են գործ-
նական քաղաքական բնույթի տարածայ-
նություններն ինչպես արտաքին ու ներքին
քաղաքականության բնագավառում, այն-
պես ել զուտ կուսակցական բնագավառում:
Այս տարածայնությունները կազմում են
իններորդ հարցի առարկան:

ա) Կուսակցությունը, յենելով կապի-
տալիզմի մասնակի ստարիեզացիայի փառ-
տից, զանում և, վոր մենք ապրում ենք
միջնեղափոխական ժամանակաշրջան, վոր
կապիտալիստական յերկիրներում մենք ըն-
թանում ենք գեպի հեղափոխություն, և
կոմկուսակցության հիմնական խնդիրն այն
է, վորպեսզի ճանապարհ բաց անի գեպի
մասսաները, ամրապնդի կապերը մասսա-
ների հետ, տիրանա պրոլետարիատի մաս-
սայական կազմակերպություններին ու
բանվորների լայն մասսաները նախապատ-

բաստի գալիք հեղափոխական գոտեմարտերին:

Բայց ոպողիցիան, չհավատալով մեր հեղափոխության ներքին ռեժիսուրին ու վախենալով կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիայից, վորսես մի փաստից, վորը կարող է կործանել մեր հեղափոխությունը, հնարավոր և համարում (կամ համարել և) ժխտել կապիտալիզմի մասնակի ստարիլիզացիայի փաստը, կապիտալիզմի ստարիլիզացիայի վերջանալու նշան և՝ համարում (կամ համարել և) անդիքական գործադուլը, իսկ յերբ այնուամենայնիվ դուրս յեկավ, վոր ստարիլիզացիան փաստ և, ոպողիցիան վոր ստարիլիզացիան ամսար պահպան և, վոր ավելի վատ՝ փաստերի համար և վոր, նշանակում և, կարելի յե թուիչք գործել փաստերի վրայով, ճշան լողունգուերով ցույց անելով միասնական ճակատի տակտիկայի վերանայման մասին, Արևմուտքում արհեստակցական շարժման հետ կապերը խզելու մասին և այլն, Բայց ի՞նչ նշանակում հաշվի չնստել փաստերի հետ, նշանակում որյեկտիվ ընթացքի հետ Այդ նշա-

նակում և հեռանալ գիտության հողից ու կանգնել գրքացության հողի վրա:

Այստեղից—ավանդութիզմը ուղղվեցիոն բլոկի քաղաքականության մեջ:

Ե) Կուսակցությունը, յելնելով այն բանից, վոր ինդուստրացումը սոցիալիստական շինարարության հիմնական ուղին և, իսկ սոցիալիստական ինդուստրիայի համար հիմնական շուկա հանդիսանում է մեր յերկրի ներքին շուկան, գտնում և, վոր ինդուստրացումը պետք և զարգանա դյուղացիության հիմնական մասսայի (ել չենք խսում բանվորների մասին) նյութական դրության անվորների մասին) պահպան պահպան վեղ բարեկաման բազայի վրա, վոր գողումն ինդուստրիայի ու դյուղացիական տնտեսության միջև, պրոլետարիատի ու դյուղացիության միջև, պրոլետարիատի ու դյուղացիության այդ զողման բնագավառում հանդիսանում և, ինչպես կենին և արտահայտվում, «Խորհրդային իշխանության ալֆան ու ոմեգան» և մեր շինարարության հաղթությունը, վոր այս կապակցությամբ մեր քաղաքականությունն ընդհանրապես, հար-

կային քաղաքականությունն ու դների
քաղաքականությունը՝ մասնավորապես, այն
պես պետք է կառուցված լինի, վորակեսղի
նա ընդառաջի այդ դոդման շահերին:

Բայց ոպողիցիան, չճախատալով գյուղա-
ցիությունը սոցիալիզմի կառուցման գործի
մեջ ներգրավելու հնարավորությանը և,
ակներևարար, յենթագրելով, վոր ինդուստրա-
ցումը կարելի յե կառուցել ի մաս գյուղա-
ցիության հիմնական մասսայի, շեղվում և
դեպի ինդուստրացման կապիտալիստական
մեթոդների ուղին, գյուղացիությունը վոր-
պես «գաղութ», վորպես պրոլետարական պե-
տության կողմից «շահագործելու» ոբյեկտ
դիտելու ուղին, և առաջարկում և ինդուս-
տրացման այնպիսի միջոցներ (հարկային
ձնշման ուժեղացում գյուղացիության նկատ-
մամբ, արդյունաբերական ապրանքների
բացթողման գների բարձրացում և այլն),
վորոնք ընդունակ են միայն խափանելու ին-
դուստրիայի գորումը գյուղացիական աըն-
տեսության հետ, խարիսխելու չքավորների
ու միջակի տնտեսական դրությունը և կոր-

ծանելու ինդուստրացման բուն իսկ հիմ-
քերը:

Այստեղից—ոպողիցիայի սկեպտիկ վերա-
բերմունքը դեպի բլոկի գաղափարը պրոլե-
տարիատի ու գյուղացիության միջն և դեպի
պրոլետարիատի հեղեմոնիան այդ բլոկում,
մի վերաբերմունք, վոր հասուկ և սոցիալ-
դեմկրատիային:

դ) Մենք յենում ենք այն բանից, վոր
կուսակցությունը, կոմունիստական կուսակ-
ցությունը պրոլետարիատի դիկտատուրայի
հիմնական գործիքն ե, վոր մեկ կուսակցու-
թյան ղեկավարությունը,—կուսակցության,
վորն այդ ղեկավարությունը չի բաժանում
և չի կարող բաժանել ուրիշ կուսակցություն-
ների հետ,—այն հիմնական պայմանն ե, ա-
ռանց վորի աներևակայելի յե ողբուհարիս-
տի փոքրիշտե ամուր ու գարգացած դիկ-
տատուրա: Այս պատճառով մենք անթույլա-
տրելի յենք համարում ֆրակցիաների դոյու-
թյունը մեր կուսակցության ներսում, վո-
րովհետեւ ինքնին պարզ ե, վոր կազմա-
կերպված ֆրակցիաների առկայությունը

կուսակցության մեջ տաճում և դեպի միշտանական կուսակցության ճեղքատումը գուղանեռ կազմակերպությունների, դեպի նոր կուսակցության կամ նոր կուսակցությունների սաղմերի ու բջիջների կազմվելը յերկրում և, նշանակում ե, դեպի պրոլետարիատի դիկտատուրայի քայլայումը:

Բայց ոպողիցիան, այս դրույթներին բացահայտողեն չառարկելով, այսուամենայնիվ իր գործնական աշխատանքում յենում և կուսակցության միասնության թուլացման անհրաժեշտությունից, կուսակցության ներսում ֆըսակցիաների ազատության անհրաժեշտությունից, ուրիշն և նոր կուսակցության տարրերի գոյացման անհրաժեշտությունից:

Այստեղից—պառակտողական քաղաքականությունը ոպողիցիոն բլոկի գործնական աշխատանքում:

Այստեղից—ոպողիցիայի վողբերը կուսակցության մեջ տիրող «ոեժիմի» մասին, վորոնք ըստ եյտության արտացոլումն են այն բողոքների, վոր կան յերկրի վոչ-պրոլետա-

րական տարրերի մեջ պրոլետարիատի դիկտատուրայի դեմ:

Այստեղից—յերկու կուսակցության վերաբերյալ հարցը:

Այս և, ընկերներ, ոպողիցիայի հետ մերունեցած տարածայնությունների ընդհանուր գումարը,

IV. ՈՐՈՉԻՑԻԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԶ

Այժմ անցնենք այն հարցին, թե այդ տարածայնություններն ինչպես են գրակառվել գործնական աշխատանքի մեջ:

Այսպես ուրեմն՝ իրականում ի՞նչպիսին եր մեր ոպողիցիան իր գործնական աշխատանքի մեջ, կուսակցության դեմ մղած իր պայքարում:

Հայտնի յե, վոր ոպողիցիան գործում եր վիճակը մեր կուսակցության մեջ, այլև վիճակը մեր կուսակցության մեջ, որինակ՝ կոմիստերներն մյուս սեկցիաներում, որինակ՝ գերմանիայում, Ֆրանսիայում և այլն: Այս պատճառով հարցը պետք է դնել այսպես. ի՞նչպիսին եր իրականում ոպողիցիայի և նրա հետևողդների գործնական աշխատանքն ինչպես չամ կե-ի մեջ, այնպես ել կոմիստերների մյուս սեկցիաների մեջ:

ա) Ոպողիցիայի ու նրա հետևողդների

գործնական աշխատանքը չամ կե-ի մեջ: Ոպողիցիան իր «աշխատանքն» սկսեց նրանով, վոր ամենածանր մեղադրանքներն առաջադրեց կուսակցության դեմ: Ոպողիցիան հայտարարում եր, թե կուսակցությունը «սահում և գեղի ոպորտունիզմի ռելերը»: Ոպողիցիան պնդում եր, թե կուսակցության քաղաքականությունը «հեղափոխության դասակարգային գծին հակառակ և գնում»: Ոպողիցիան պնդում եր, թե կուսակցությունը վերասերվում և ու գնում և գեղի տերմիզոր: Ոպողիցիան հայտարարում եր, թե մեր պետությունը «բոլորվին ել պրոլետարական պետություն չե»: Այս բոլորի մասին հայտարարվում եր կամ ոպողիցիայի ներկայացուցիչների բացահայտ դեկլարացիաներում ու ճառերում (Կենտկոմի ու կվՀ-ի 1926 թվի հուլիսյան պլենում), կամ ոպողիցիայի ընդհատակյա դոկումենտներում, վոր տարածում եյին նրա կողման կիցները:

Բայց, այս ծանր մեղադրանքներն առաջադրելով կուսակցության դեմ, ոպողիցիան

գրանովի իսկ հոդ եր ստեղծում՝ կուսակցության ներսում նոր գուգահեռ բջիջներ կազմակերպելու համար, կուսակցության նոր գուգահեռ կենտրոն կազմակերպելու համար, նոր կուսակցություն ստեղծելու համար: Ոպոզիցիայի կողմանիցներից մեկը, պլ. Ռոսվլին, ուղղակի հայտարարում եր իր հոդվածներում, վոր գոյություն ունեցող կուսակցությունը, մեր կուսակցությունը, կապիտալիստների շահերն և պաշտպանում, վոր այդ բանը նկատի ունենալով՝ անհրաժեշտ է կազմակերպել նոր կուսակցություն, «զուտ պրոլետարական կուսակցություն», վորը գոյություն ունենար ու դորձեր գոյություն ունեցող կուսակցության կողքին: Ոպոզիցիան կարող ե ասել, թե ինքը չե կարող պատասխանատու լինել Ռոսվլու դիրքի համար: Բայց դա սխալ ե: Նա ամբողջությամբ ու լիովին պատասխանատու յե պլ. Ռոսվլին «արարքների» հոմար: Հայտնի յի վոր Ռոսվլին իրեն բացահայտորեն դասել ե ոպոզիցիայի կողմանիցների կարգը, վորի դիմ ոպոզիցիան վոչ մի անգամ վորձ

չի արել առարկելու: Այնուհետև հայտնի յի, վոր ընկ: Տրոցկին կենտկոմի հովվայան պիհնումում Ռոսվլուն պաշտպանում եր Մոլոտովի դեմ: Վերջապես հայտնի յի, վոր չնայած կուսակցության միահամուռ կարծիքին ընդդեմ Ռոսվլու, ոպոզիցիան Ռոսվլուն կուսակցությունից վտարելու դեմ եր քվիարկում կենտկոմում: Այս բոլորն այն ե ասում, վոր ոպոզիցիան բարոյական պատասխանատվություն եր վերցնում իր վրա Ռոսվլու «արարքների» համար:

Յեղրակացությունն: Համ Կկ ոպոզիցիայի դործնական աշխատանքը դրսերել ե իրն Ռոսվլու դիրքում, նոր կուսակցություն կազմելու թույլատրելիության վերաբերյալ նրա դիրքում:

Ասենք ուրիշ կերպ չեր ել կարող լինել: Վորովինակ յերկուսից մեկը. կամ կուսակցության դեմ այդ ծանր մեղադրանքներն առաջադրելով՝ ովոզիցիան ինքը չեր հավասում այդ մեղադրանքների լրջությանը և դրանք առաջադրում եր լոկ ցույց անելու համար,— և այն ժամանակ նա մոլու

բության մեջ եր գցում բանվոր դասակարգին, վորը հանցագործ բան եւ կամ ոպոզիցիան հավատում եր ու շարունակում է հավատալ իր մեղադրանքների լրջությանը,— և այն ժամանակ նա պետք է կուսակցության դեկավար կազմերը ջախջախելու, նոր կուսակցություն կազմելու կուրս բռնիր, և իրոք այդ կուրսն եր բռնել:

Ահա թե վորն եր մեր ոպոզիցիայի գեմքը չամ կե դեմ կատարած նրա գործնական աշխատանքում առ 1926 թվի հոկտեմբերը:

բ) Ոպոզիցիայի այն հետեւորդների գործնական աշխատանքը, վորոնք գտնվում են իրն գերմանական կոմիուսակցության մեջ: Մեր ոպոզիցիայի կողմից կուսակցության գեմ առաջադրած մեղադրանքներից յեխելով՝ «ուլտրա-ձախերը» Գերմանիայում պ. Կորշի գլխավորությամբ իրենց հետագայ յեզրակացություններն արին ու ի-ի վրա յեզրակացություններն արին: Հայտնի յե, վոր Կորշը, Գերմանիայի «ուլտրա-ձախերի» այդ իդեոլոգը, պնդում է, թե մեր սոցիալիստական ար-

դյունարերությունը «կուտ կապիտալիստական արդյունաբերություն» է: Հայտնի յե, վոր Կորշը մեր կուսակցությունն անվանում է «կուլակացման յենթարկված» կուսակցություն, իսկ Կոմինտերնը՝ «ուղղությունիստական» կազմակերպություն: Այնուհետև հայտնի յե, վոր այդ բանը նկատի ունենալով Կորշը քարոզում է, վոր անհրաժեշտ և «նոր հեղափոխություն» ԽՍՀՄ-ում գոյություն ունեցող իշխանության դեմ: Ուղղողիցիան կարող է ասել, թե ինքը չի կարող պատասխանառու լինել Կորշի դիրքի համար: Բայց դա սխալ է: Ուղղողիան ամերողջությամբ ու լիովին պատասխանառու յե պ. Կորշի «արարքների» համար: Այն, ինչ ասում է Կորշը, դա բնական յեզրակացությունն է այն նախադրյալներից, վոր մեր ոպոզիցիայի լիդերները կուսակցության դեմ ուղղված հայտնի մեղադրանքների ձևով հրացնում են իրենց կողմնակիցներին: Վորովհետև, յեթե կուսակցությունը սահում է դեպի ոպորտունիզմի ուղևերը, յեթե նրա քաղաքականությունը տարբե-

թաց և հեղափոխության դասակարգային
գծից, յեթե նա վերասերվում է ու գնում և
դեպի տերմիդոր, իսկ մեր պետությունը
բոլորովին ել պրոլետարական սկզբություն
չի, ապա այստեղից միայն մեկ յեղբակա-
ցություն կարող է լինել— նոր հեղափո-
խություն «կուլտակացման յենթարկված» իշ-
խանության դեմ: Բացի դրանից, հայտնի
յե, վոր «ուլտրա-ձախերը» Գերմանիայում,
ու վեղդինացիներն այդ թվում, Կորչին կու-
սակցությունից վտարելու դեմ են քվեար-
կել, դրանով իսկ բարոյական պատասխա-
նատվություն. վերցնելով իրենց վրա Կորչի
հականեղափոխական պրոպագանդայի հա-
մար: Ե՛, իսկ ում հայտնի չե, վոր «ուլտրա-
ձախերը» Համեկ մեջ ուղղեցիայի կողմա-
կից են:

գ) Ոպողիցիայի հետեւրդների գործ-
նական աշխատանքը Ֆրանսիայում: Նույն
այդ բանը պետք է ասել ոպողիցիայի
հետեւրդների մասին Ֆրանսիայում: Յես
նկատի ունեմ Սուվարինին ու նրա խումբը,
վորը գործում է հայտնի ժուռնալում՝ Ֆրան-

սիայում: Յելնելով այն նախադրյալներից,
վոր տվել և մեր ոպողիցիան կուսակցու-
թյան գեմ ուղղած իր մեղադրանքներում,
Սուվարինը գալիս և այն յեղբակացու-
թյան, վոր հեղափոխության հիմնական
թշնամին կուսակցական բյուրոկրատիան և,
մեր կուսակցության ղեկավար վերնախավը:
Սուվարինը պնդում է, վոր «վրկություն»
կարող է լինել միայն մեկ բան. նոր հե-
ղափոխությունն ընդում կուսակցության
կազմի և իշխանության կազմի մեջ յեղած
ղեկավար վերնախավի, նոր հեղափոխու-
թյուն նախ և առաջ ընդում քարտուղա-
րության: Այստեղ, Գերմանիայում— նոր
հեղափոխություն ԽՍՀՄ-ում գոյություն
ունեցող իշխանության դեմ: Այստեղ, Ֆրան-
սիայում— նոր հեղափոխություն կենտրոնի
քարտուղարության դեմ: Ե՛, իսկ ի՞նչպիս-
կազմակերպել այդ նոր հեղափոխությունը:
Կարելի՞ յե արդյոք այն կազմակերպել ա-
ռանց նոր հեղափոխության նպատակներին
հարմարեցրած հատուկ կուսակցության:
Իհարկե, չի կարելի: Այստեղից— նոր կու-

սակցություն ստեղծելու հարցը: Ոպողիցիան
կարող ե ասել թե ինքը պատասխանառու
չե Սուվարինի գրածների համար: Բայց
դա սխալ է: Նախ՝ հայտնի յե, վոր Սու-
վարինը և նրա խումբն ոպողիցիայի, մա-
նավանդ նրա տրոցկիստական մասի, կողմ-
նակիցներ են: Յերկրորդ, հայտնի յե, վոր
գեռևս բոլորովին մոտ անցյալում ոպողի-
ցիան նախագծում եր պ. Սուվարինին
տեղավորել Ֆրանսիայի կոմկուսակցության
կենտրոնական որդանի խմբագրության մեջ:
Ճիշտ ե, այս նախագիծը չհաջողվեց: Բայց
դա մեր ոպողիցիայի մեղքը չե, այլ դժբախ-
տությունը:

Այսպիսով դուքս ե գալիս, վոր ոպողի-
ցիան իր գործնական աշխատանքում,— յե-
թե նրան վերցնենք վճռ թե այն ձեռվ, ինչ
ձեռվ նա ինքն ե իրեն նկարում, այլ այն
ձեռվ, ինչ ձեռվ նա գրանորվում ե աշխա-
տանքի ընթացքում ինչպես մեղանում,
ԽՍՀՄ-ում, այնպես ել Ֆրանսիայում ու
Գերմանիայում,— յես ասում եմ, դուքս ե
գալիս, վոր ոպողիցիան իր գործնական

աշխատանքում ընդհանուր մոտեցել ե մեր
կուսակցության ղեկավար կազմերին ջար-
դուփշուր անելու և նոր կուսակցություն
կազմելու հարցին:

V. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՐԱՅԻ
ԹՇՆԱՄԻՆԵՐՆ ԻՆՉԻ ՀԱՍԱՐ ԵՆ
ԳՈՎՈՒՄ ՈՐՈՇԻՑԻԱՅԻՆ

Ինչի՞ համար են գովում ոպոզիցիային սոցիալ-դեմոկրատներն ու կաղետները կամ այլ կերպ—մւմ տրամադրություններն և արտացոլում ոպոզիցիան:

Դուք հավանորեն ուշադրություն եք դարձել վոր այսպես կոչված «ռուսական հարցը» վերջին ժամանակներս սոցիալ-դեմոկրատական ու բուրժուական մամուլի համար հրատապ հարց ե դարձել Արևմուտքում: Արդյոք դա պատահական բան ե: Ինարկե, պատահական չե: Սոցիալդմի աճումը ԽՍՀՄ-ում ու կոմունիստական շարժման ծավալումն Արևմուտքում չեն կարող մեծագույն տագնապ չծնել բուրժուազիայի շարքերում և բանվոր դասակարգի

մեջ նրա գործակալները հանդիսացող սույնակեմոկրատական լիդերների շարքերում: Զրբաժան գիծը հեղափոխության և հականեղափոխության միջև այժմ անցնում ե ԽՍՀՄ-ի պրոլետարական կուսակցության նկատմամբ վոմանց կողմէց ցուցաբերվող չարակամ ատելության ու մյուսների կողմէց ցուցաբերվող լնկերական բարեկամության գծով: «Ռուսական հարցի» մեծագույն միջազգային նշանակությունն այժմ մի փաստ ե, վորի հետ կոմունիզմի թշնամիները չեն կարող հաշվի չնստել: Ռուսական հարցի շուրջը յերկու ճակատ ե կազմվել: Խորհուրդների Հանրապետության հակառակորդների ճակատ և նրա անձնվեր բարեկամների ճակատ: Ի՞նչ են ուզում Խորհուրդների Հանրապետության հակառակորդները: Նրանք ձգտում են այն բանին, վոր բնակչության լայն մասսաների մեջ գաղափարային ու բարոյական նախադրյալներ ստեղծեն՝ պրոլետարական դիկտատուրայի դեմ պայքարելու համար: Ի՞նչ են ցանկանում Խորհուրդների Հանրա-

պետության բարեկանները։ ըստնք ձդտում
են այն բանին, վոր պրոլետարիատի լայն
խավերի մեջ գաղափարային ու բարոյա-
կան նախագրյալներ ստեղծեն՝ Խորհուրդների
Հանրապետությանն աջակցելու, նրան
պաշտպանելու համար։

Այժմ տեսնենք, թե սոցիալ-դեմոկրատ-
ներն ու ռուսական եմիգրացիային պատ-
կանող կաղետներն ինչի համար են գովում
մեր ոպողիցիային։

Ահա թե ինչ ե ասում, որինակ, Պառլ
Աելին, այդ հայտնի սոցիալ-դեմոկրատա-
կան լիդերը Գերմանիայում։

«Մենք այն կարծիքն եյինք, վոր բանվորների հա-
տուկ շահերը, վերջին հաշվով սոցիալիզմի շահերը,
հակասության մեջ են գոնվում գյուղացիական սե-
փականության գոյության հետ, վոր բանվորների ու
գյուղացիների շահերի նույնականությունը լոկ յե-
րևութական ե, և վոր ռուսական հեղափոխության
հետագա զարգացումը կորի ու ավելի ակներեկ
կդարձնի այդ հակասությունը Շահերի ընդհան-
րության գաղափարը մենք համարում ենք կոալի-
ցիայի կերպարանափոխած գաղափար։ Եեթե ընդ-
հանրապես մարքսիզմն ունի հիմնավորվածության

գեթ ստվերը, յեթե պատմությունը գիտելիո-
րեն ե զարգանում, ապա այդ հակասությունը պիտօք
ե շախչախեց կոալիցիոն գաղափարը այնպես, ինչպես
այն արդեն շախախաված ե Գերմանիայում... ԽՍՀՄ-
ում տեղի ունեցող անցքերը գրսից, Արևմտյան Յեղ-
րապայից զիտողներիս համար պարզ ե. մեր հայցե-
ները համընկնաւմ են ոպողիցիայի հայցիներին...
Փաստն առկա յէ, վոր Ռուսաստանում նորից ե
սկսվում ինքնուրույն, հակակապիտակիստական շար-
ժում զասակարգային կուլի նշանի տակը («Լապյով-
գեր Ֆուկոցայտունդ», 30 հուլիսի 1926 թ.)։

Վոր այստեղ, այս թիտատի մեջ, կա մի
վորոշ խառնաշփոթություն բանվորների ու
գյուղացիների շահերի Շնորհականության
հարցում, այդ ակներեւ ե: Բայց վոր Պառլ
Աելին գովում ե մեր ոպողիցիային այն
բանի համար, վոր նա պայքարում ե բան-
վորների ու գյուղացիների բլոկի գաղա-
փարի դեմ, բանվորների ու գյուղացիների
դաշինքի գաղափարի դեմ,—այդ նույնպես
անկասկածելի յէ։

Ահա թե ինչ ե ասում մեր ոպողիցիայի
մասին վոչ անհայտ Դանը, ռուսական
սոցիալ-դեմոկրատակայի լիդերը, ռուսական»

մենշևիկների լիդերը, վորոնք սլայքարում են կապիտալիզմը ԽՍՀՄ-ում վերականգնելու համար.

«Գոյություն ունեցող հասարակակարգի իր քննադատությամբ, վորը համարյա բառացի կրկնում ե սոցիալ-դեմոկրատիայի քննադատությունը, բոլշևիկյան ոպոզիցիան նախապատճառաւում ե մժեր... սոցիալ-դեմոկրատիայի գրական պլատֆորմի ընկարմանը»:

Յել ապա՝

«Վահայն բանվորների մեջ, այլև բանվոր-կամունիստների ջրջանում ոպոզիցիան աճեցնում է այնպիսի գաղափարների ու արամազլրությունների ծիւըը, վորոնք վարպետ ինսամբը դեպքում ճեղառւթյամբ կարող են տալ սոցիալ-դեմոկրատիան պատկեր» («Социалистический Вестник», №17-18):

Թվում ե, թե պարզ եւ
իսկ ահա թե ինչ ե գրում մեր ոպոզիցիայի մասին Միլյուկովի կուսակցության կենտրոնական որդան «Последние Новости»-ն.

«Այսոր ոպոզիցիան խարխլում ե դիկտատուրան, ոպոզիցիայի յուրաքանչյուր նոր հրատարակությունն

արտասահմում ե ավելի ու ավելի «սարսափելի» խոսքեր, ինքն ոպոզիցիան եվոլյուցիա յի կատարում դեպի ավելի շեշտակի անակնկալ հարձակումները տիրապետող սկսածմի վրա, և այդ ասայմբ բավական ե, վորպեսզի շնորհակալությամբ ընդունենք այն, վորպես խոսափող քաղաքականապես դժգոն բնակչության լայն խավերի համար» («Последние Новости», № 1990):

Յել այնուհետև՝

«Մորհրդային իջխանության համար ամենասարսափելի թշնամին այժմ նա յե, վորը սողալով մտենում ե նրան աննկատելի կերպով, բոլոր կողմերից ընդդրկում ե նրան իր շոշափուկներով և լիկվիդացիայի յի յենթարկում նրան ավելի վաղ, քան նա նկատում ե, վոր լիկվիդացիայի յի յենթարկված չենց այս գերը, վորն անխուսափելի ու հարկավոր ե նախապատրաստական ժամանակաշրջանում, վորից մենք գետ դուրս չենք յելել, այս գերն ե խաղում խորհրդային ոպոզիցիան» («Последние Новости», № 1983, 27 օգոստոսի ս./թ.),

Յես կարծում եմ, վոր կոմենտարիաներն այստեղ ավելաբդ են:

Յես սահմանափակվում եմ միայն այս ցիտատներով, ժամանակի կարճությունը

նկատի ունենալով, թեև կարելի յեր ըերեւ
տամնյակ ու հարյուրավոր նույնպիսի ցի-
տատներ:

Ահա թե ինչի համար են դովում մեր
սպողիցիային սոցիալ-գեմոլրատներն ու կա-
դետները:

Արդյոք սա պատահական բան է: Վաչ,
պատահական չե:

Սրանից յերեւմ ե, վոր ոպողիցիան ար-
տացոլում ե վաչ թե մեր յերկը պրոլետա-
րիատի տրամադրությունները, այլ վոչ պրո-
լետարական տարրերի տրամադրություն-
ները, վորոնք դժգոհ են պրոլետարիատի
դիկտատուրայից, չարացած են պրոլետա-
րիատի դիկտատուրայի դեմ ու անհամբե-
րությամբ սպասում են նրա քայլքայմանը,
նրա անկմանը:

Այսպիսով՝ մեր ոպողիցիայի ֆրակցիոն
պայքարի տրամարանությունն իրականում
հանգեցրեց այն բանին, վոր մեր ոպողիցիա-
յի ճակատն որեկտիվորեն ձուլից պրոլե-
տարիատի դիկտատուրայի ճակառակորդ-
ների ու թշնամիների ճակատի ճետ:

Արդյոք ոպողիցիան ցանկանում եր այդ:
Իհարկե, նա այդ չեր ցանկանում: Բայց
բանն այստեղ կախված ե վաչ թե նրանից,
թե այստեղ ինչ ե ցանկանում ոպողիցիան,
այլ նրանից, թե որյեկտիվորեն դեպի ինչն
ետանում նրա ֆրակցիոն պայքարը: Ֆրակ-
ցիոն պայքարի տրամարանությունն այս կամ
այն մարդկանց ցանկություններից ավելի
ուժեղ ե: Ենք հենց այդ պատճառով բանն
այնպիս դասավորվեց, վոր ոպողիցիայի ճա-
կատն իրականում ձուլվեց պրոլետարիատի
դիկտատուրայի ճակառակորդների ու թշնա-
միների ճակատի ճետ:

Լենինն ուսուցանում եր մեզ վոր կո-
մունիստների հիմնական պարտականությու-
նըն ե պաշտպանել ու ամրացնել պրոլետա-
րիատի դիկտատուրան: Իսկ զործն այնպիսի
ընթացք ընդունեց, վոր ոպողիցիան իր
ֆրակցիոն քաղաքականության շնորհիվ ըն-
կավ պրոլետարիատի դիկտատուրայի ճակա-
ռակորդների բանակը:

Ահա թե ինչու յենք մենք ասում, վոր
ոպողիցիան իր կապերը կտրել ե լենինիզ-

մի հետ վաչ միայն թեորիայում, այլև պրակա-
տիկայում:

Յեզ այլ կերպ չեր ել կարող լինել:
Ուժերի հարաբերակցությունը կապիտալիզ-
մի և սոցիալիզմի միջև տեղի ունեցող պայ-
քարում այնպիսին ե, վոր բանվոր դասա-
կարգի շարքերում այժմ հնարավոր և յեր-
կու քաղաքականությունից մեկը. կամ
կունիոնիզմի քաղաքականությունը, կամ սո-
ցիալ-դեմոկրատիզմի քաղաքականությունը:
Յերրորդ դիրք գրավելու համար ոպողիցի-
այի արած փորձը՝ համեկ դեմ ուղղած սպայ-
քարի սրման պայմաններում՝ անխուսափե-
լիորեն պետք ե վերջանար նրանով, վոր
ֆրակցիոն պայքարի ընթացքն ոպողիցիա-
յին նետեր լենինիզմի հակառակորդների
բանակը:

Դա հենց այդպիս ել յեղավ, ինչպես յե-
րեւում ե բերված փաստերից:

Ահա թե ինչի համար են գովաւմ ոպո-
ղիցիային սոցիալ-դեմոկրատներն ու կա-
դետները:

VI. Պո՛քացիոն ԲԼՈԿԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ես վերեւում ասացի, վոր կուսակցու-
թյան դեմ մղած իր պայքարում ոպողիցիան
գործի յեր դնում ամենածանր մեղադրանք-
ներ կուսակցության դեմ: Յես ասացի, վոր
իր գործական աշխատանքում ոպողիցիան
մոտեցավ պառակտման ու նոր կուսակցու-
թյուն կազմելու հարցի բուն իսկ շեմքին:
Այստեղից մի հարց ոպողիցիային ինչքան
ժամանակ հաջողվեց մնալ այդ պառակտու-
ղական դիրքում: Փաստերն ասում են, վոր
այդ դիրքում նրան հաջողվեց մնալ ընդամե-
նը միքանի ամիս: Փաստերն ասում են,
վոր առ այս տարվա հոկտեմբերի սկիզբն
ոպողիցիան հարկադրված յեղավ ընդունելու
իր պարտությունը և նահանջելու:

Ինչի՞ց եր առաջ յեկել ոպողիցիայի նա-
հանը:

Յհս կարծում եմ, վոր ոպողիցիայի նաև
հանջն առաջ եր յեկել հետևյալ պատճառ-
ներից:

Առաջին, նրանից, վոր ոպողիցիան
ԽՍՀՄ-ում բանակ չունեցավ: Շատ կարող
ե պատահել վոր նոր կուսակցություն կա-
ռուցելը հրապուրիչ խնդիր ե: Բայց յեթե
դիսկուսիայից հետո գուրս ե գալիս, վոր
նոր կուսակցություն կառուցելու համար
մարդիկ չկան, ապա պարզ ե, վոր նահանջն
այստեղ միակ յելքն ե:

Եերկրորդ, նրանից, վոր ֆրակցիոն պայ-
քարի ընթացքում ոպողիցիային հարել եյին
ամեն տեսակ կեղտոտ տարրեր ինչպես մե-
զանում, ԽՍՀՄ-ում, այնպես ել արտասահ-
մանում, իսկ սոցիալ-դեմոկրատներն ու կա-
դետներն սկսեցին ամբողջ ուժով գովել
նրան, իրենց համբույրներով նրան անպա-
տիվ անելով ու խայտառակելով բանվոր-
ների աշքում: Ուպողիցիայի առաջ մնում եր
ընտրություն անել. կամ թշնամիների այդ
գովեստներն ու համբույրներն ընդունել
վորպես պատշաճ բան, կամ կտրուկ զըա-

դարձ կատարել դեպի նահանջը այն հուսով,
վորպեսզի ոպողիցիայից մեխանիկորեն պոկ-
վեն նրան հարած կեղտոտ պրէերը: Նահան-
ջելով ու ստորագրելով իր նահանջը՝ ոպո-
ղիցիան ընդունեց, վոր յերկրորդ յելքն իր
համար միակ ընդունելի յելքն ե:

Եերերորդ, այն հանգամանքից, վոր գուռ-
թյունը ԽՍՀՄ-ում ավելի լավ դուրս յեկավ,
քան ոպողիցիան յենթագրում եր, իսկ կու-
սակցական մասսաներն ավելի գիտակից ու
համախմբված դուրս յեկան, քան կարող եր
թվականությունը պայքարի սկզբում: Ինար-
կե, յեթե յերկրում ճգնաժամ լիներ, յեթե
բանվորների գժգոհությունն աճեր և յեթե
կուսակցությունը պակաս համախմբվածու-
թյուն յերեան բերեր,—առա ոպողիցիան
ուրիշ ուղիով կզնար ու չեր վճռի նահան-
ջել: Բայց փաստերը ցույց տվին, վոր ոպո-
ղիցիայի հաշիվները տաղալվել են նաև այս
ընազավառում:

Այստեղից—ոպողիցիայի պարտությու-
նը:

Այստեղից—նրա նահանջը:

Ապողիցիայի պարտությունն անցել և
յերեք ետապ:

Առաջին ետապ—այդ՝ ոպողիցիայի 1926
թվի հոկտեմբերի 16-ի «հայտարարությունն
ե»: Այս դոկումենտի մեջ ոպողիցիան
հրաժարվել և ֆրակցիաների ազատության
թերթիայից ու սրբակալիկայից և պայքարի
ֆրակցիան մեթոդներից՝քացահայտ ու աներկ-
միտ կերպով ընդունելով իր սխալներն այդ
լրացալառում: Բայց ոպողիցիան հրաժար-
վեց վոչ միայն դրանից: Թանի վոր իր «հայ-
տարարության» մեջ ոպողիցիան սահմանա-
ծրվել և «բանվորական ոպողիցիայից» ու
ամեն տեսակ կորչերից ու Սուվարիններից,
դրանով իսկ նա հրաժարվել և նաև իր այն
գաղափարային դիրքերից, վորոնք մոտ
անցյալում նրան մոտեցնում ելին այդ հո-
սանքներին:

Յերերորդ ետապ—այդ՝ փաստական հրա-
ժարումն և այն մեղադրանքներից, վոր մոտ
անցյալում ոպողիցիան առաջարում եր
կուսակցության դեմ: Հարկավոր ե ընդու-
նել և ընդունելով այդ, հարկավոր ե ընդ-

գծեր վոր համեկ ԽV կոնֆերենցիայում
ոպողիցիան չհամաձակվեց կրկնել իր մե-
ղադրանքները կուսակցության գեմ: Յեթե
կենտկոմի ու Կվ.Հ.ի հուլիսյան պլենումի
արձանագրությունները համեմատենք Համ-
կա ԽV կոնֆերենցիայի արձանագրություն-
ների հետ, ապա չենք կարող չնշել վոր
ԽV կոնֆերենցիայում հին մեղադրանքնե-
րի, այն ե՝ ոպորտունիզմի մեջ մեղադրե-
լու, տերմիգորիանականության մեջ մեղա-
դրելու, հեղափոխության դասակարգային
գրելու, գիտականության գասակարգային
գծից սահելու և այլնի մեջ մեղադրելու հետքն
անգամ չի մնացել: Յեթե, բացի դրանից,
ուշադրության առնենք այն հանդամանքը,
վոր մի ամբողջ շարք պատվիրակներ դիմե-
ցին ոպողիցիային հին մեղադրանքների վե-
րաբերյալ հարցով, իսկ ոպողիցիան շարու-
նակեց համառ լուսթյուն պահպանել դրա
մասին, ապա չի կարելի ընդունել վոր ոպո-
ղիցիան իրականում հրաժարվել և կուսակ-
ցության գեմ ուղղած իր հին մեղադրանք-
ներից: Կարելի՞ յե արդյոք այս հանդաման-
քը վորակել վորպես ոպողիցիայի փաստա-

հրաժարումն իր մի շաբք հին գաղաւ
փարային դիրքերից: Կարելի յեւ և հարկա-
վոր եւ Դա ոպողիցիայի մարտական դրոշի
գիտակցական ծալումն եւ իր պարտության
հանդեպ: Յեկ այլ կերպ չեր ել կարող լինել
Մեղադրանքներն առաջադրվել եյին նոր
կուսակցություն կառուցելու հուսով: Բայց
քանի վոր այդ հաշիվները վերացան—
պետք եւ, գոնե ժամանակավորապես, վերա-
նային նաև մեղադրանքները:

Յերրորդ ետապ—այդ՝ ոպողիցիայի լիա-
կատար մեկուսացումն եր Համեկ ԽՎ կոն-
ֆերենցիայում: Հարկավոր եւ նշել, վոր ոպո-
ղիցիան ԽՎ կոնֆերենցիայում վոչ մի ձայն
չստացավ, այդպիսով լիակատար մեկուսաց-
ման դրության մեջ ընկնելով: Պատկերաց-
րեք այն աղմուկն ու աղալակը, վոր
բարձրացրեց ոպողիցիան այս տարվա սեպ-
տեմբերի վերջին՝ արշավի մեկնելիս, բա-
ցահայտ արշավի կուսակցության դեմ, ու
այդ հարայի բոցը համեմատեցիք այն փաստի
ցիան, ինչպես ասում են, յեղակի թիվ կազ-

մեց,—և դուք կհասկանաք, վոր ավելի «լավ»
պարտություն չեր կարելի ցանկալ ուղո-
վիցիային:

Կարելի՞ յեւ արդյոք Ժխտել այն փաստը,
վոր ոպողիցիան իրականում հրաժարվեց
կուսակցության գեմ ուղղած իր մեղադրանք-
ներից, չամարձակվեց դրանք կրկնել ԽՎ
կոնֆերենցիայում, չնայած պատվիրակների
պահանջներին:

Վաչ, չի կարելի, վորովհետև դա փաստ եւ:
Իսկ ինչու այդ ուղին բռնեց ոպողիցիան,
ինչու նա ծալեց իր դրոշը:

Այն պատճառով, վոր ոպողիցիայի գա-
ղափարային դրոշի ծածանումը նշանակում
եւ պարտավորապես ու անխուսափելիքին՝
յերկու կուսակցության թեորիա, ամեն տե-
սակ կացերի, Կորշերի, Մասլովսերի, Սու-
վարինների և այլ կեղտու տարբերի աշ-
խուժացում, հակապլուխտարական ուժերի
սահմալուծում մեր յերկրում, գովեստներ
ու համբույրներ ուսւական հմիգրացիային
պատկանող սոցիալ-դեմոկրատիայի և լի-
բերալ բուրժուաների կողմից:

Ոպոզիցիայի գաղտփարային դրասն սպա-
նում ե ոպոզիցիային, — ահա ինչումն ե բա-
նը, ընկերներ:

Այս պատճառով, վերջնականապես
չնեխվելու համար, ոսկողիցիան ստիպված յե-
ղագ նահանջել ու դեն նետել իր դրոշը:

Այս ե ոպոզիցիոն բլոկի պարտության
հիմքը:

VII. ՀԱՄԿԿ ԽՎ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԻՍԱՍՏՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յես վերջացնում եմ, ընկերներ: Ինձ մը-
նում է ՀամկԿ ԽՎ կոնֆերենցիայի իմաստի
ու նշանակության տեսակետից միայն մի-
քանի խոսք ասել յեզրակացությունների
մասին:

Առաջին յեզրակացությունն այն ե, վոր
կոնֆերենցիան տվեց ԽՎ համագումարից
հետո յեղած ներկուսակցական պայքարի
հանրագումարը, ձևավորվեց այն հաղթու-
թյունը, վոր տարել եր կուսակցությունն
ոսկողիցիայի դեմ, ու, մեկուսացնելով ոպո-
զիցիան, վերջ գրեց այն Փրակցիոն վակ-
խանալիային, վոր նախորդ ժամանակաշրպ-

ջանում ոպողիցիան փաթաթել եր մեր կուսակցության վղին:

Յերկրորդ յեզրակացությունն այն ե, վոր կոնֆերենցիան, մեր շինարարության սոցիալիստական հեռանկարի հիման վրա, սոցիալիստական շինարարության հաղթության համար պայքարելու՝ գաղափարի հիման վրա համախմբեց մեր կուսակցությունն ավելի, քան յեղել եր յերբեք՝ մեր կուսակցության բոլոր ոպողիցիոն հոսանքների դեմ, մեր կուսակցության մեջ յեղած բոլոր թեքությունների դեմ: Այժմ մեր կուսակցության մեջ ամենաակտուալ հարցը — մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցն եւ կենինն իրավացի յեր, յերբ ասում եր, վոր ամբողջ աշխարհը մեզ ե նայում, մեր տնտեսական շինարարությանը, շինարարության ճակատի մեր հաջողություններին: Բայց այդ ճակատում հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ ե, վոր պրոլետարիատի դիկտատոր ըայի հիմնական գործիքը, մեր կուսակցությունը, պատրաստ լինի այդ գործին, վոր նա գիտակցի այդ խնդրի կարևորու-

թյունը և կարողանա մեր յերկրի սոցիալիստական շինարարության հաղթության համար իբրև լժակ ձառայել: XV կոնֆերենցիայի իմաստն ու նշանակությունն այն ե, վոր նա ձևավորել ե ու ավարտել՝ մեր կուսակցությանը մեր յերկրի սոցիալիստական շինարարության հաղթության գաղափարով զինելու գործը:

Յերրորդ յեզրակացությունն այն ե, վոր կոնֆերենցիան վճռական հականարգված և տվել մեր կուսակցության մեջ յեղած բոլոր ու ամեն տեսակ գաղափարային յերերությունն ու դրանով ել նենց հեշտացը ել ենինիզմի լիակատար հաղթությունը համեկ մեջ:

Յեթե կոմինտերնի Դործաղիր կոմիտեյի ընդլայնված պլենումը հավանություն տա չամեկ և XV կոնֆերենցիայի վորոշությունն ու ճիշտ ճանաչի մեր կուսակցության քաղաքականությունն ուղղողիցիայի նկատմամբ, վորի մասին կասկածելու հիմքեր յես չունեմ, ապա դա կհանգեցնի չորրորդ յեզրակացությանն — այն մասին, վոր XV կոնֆերենցիան նախապատրաստել և միքանի

վոչ-անկարելոր պայմաններ, վորոնք անհրաշ
ժեշտ են, վորակեսզի լենինիզմը հաղթանակի
ամբողջ Կոմինտերնում, բոլոր յերկիրների
ու ժողովուրդների հեղափոխական պրոլետարիատի շարքերում: (Բայոն ծափանարու-
թյաններ: Ամբողջ պլինումի ովացիաներ):

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

(1926 թ. դեկտեմբերի 19-ին)

I. ԱՌԱՆՁԻՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ ՓԱՍՏԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ, ՅԵՎ ՎՈԶ
ԶԵՐՅՈՒԹՅՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԲԱՄԲԱՍԱՆՔՆԵՐ

Ընկերներ, նախքան հարցի եյությանն
անցնելը՝ թույլ տվեք միքանի փաստա-
կան ուղղումներ անել ոպողիցիայի հայտա-
րաբությունների առթիվ, այն հայտարա-
բությունների, վորոնք կամ աղավաղում են
փաստերը, կամ հերյուրանքներ ու բամբա-
սանքներ են:

1) Առաջին հարցը—դա ԿԻԳԿ-ի ընդլայն-
ված պլենումում ոպողիցիայի ունեցած յե-
լույթների հարցն է: Ոպողիցիան հայտա-
րաբում-եր, վոր ինքը վճռեց յելույթ ունենալ
վորովհետև ՀամկԿ կկ-ն ուղղակի ցուցում
չարեց, թե ոպողիցիայի յելույթը կարող ե
լախտել ոպողիցիայի՝ 1926թ. հոկտեմ-

բերի 16-ի «Հայտարարությունը», վոր
յիթե Կե-ն արգելիր նրանց յելույթը, ապա
ոպողիցիայի լիդեները սիրտ չեցին անի
յլութ ունենալու։ Այնուհետև ոպողիցիան
հայտարարեց, վոր հանդես գալով այստեղ,
ընդլայնված պլինումում, նա ամեն միշ-
ջոց ձեռք կառնի, վորպիսզի չսրի պայքա-
րը, վոր նա կսահմանափակի հասարակ «բա-
ցատրություններով», վոր նա, աստված հե-
ռու տանի մտքով ել չի անցկացնում կու-
սաւցության դեմ գրոհի գնալու, վոր նա,
աստված հեռու տանի, կուսակցության դեմ
վորեն մեղադրանք առաջադրելու և նրա
վորոշումները բողոքարկելու վոչ մի մտա-
դրություն չունի։

Սա ճիշտ չե, ընկերներ։ Սա իրականու-
թանը բոլորովին չի համապատասխանում։
Սա կեղծավորություն և ոպողիցիայի կող-
մից, Փաստերը ցույց տվին, և մանավանդ
ընկ. Կամենեկի յելույթը ցույց տվեց, վոր
ընդլայնված պլինումում ոպողիցիայի լի-
դերների յելույթները «բացատրություններ»

չեցին, այլ գրոհ կուսակցության դեմ, հար-
ձակում կուսակցության վրա։

Ի՞նչ և նշանակում բացահայտորեն հարց
դնել կուսակցության աջ թեքման մեջ մե-
ղադրելու մասին։ Սա գրոհ և կուսակցու-
թյան դեմ, սա արտելք (վալազկա) և կու-
սակցության դեմ։ *

Միթե Համկե Կե-ն իր վորոշման մեջ չի
նշել վոր ոպողիցիայի յելույթը կսրի պայ-
քարը, զարկ կտա Փրակցիոն պայքարին։
Այն, նշել և Հենց այդ ել նախազգուշացում
եր ոպողիցիային Համկե Կե-ի կողմից, Կե-ն
կարծի եր արդյոք դրանից ավելի հեռուն
դնալ։ Վհչ, չեր կարող ինչու վորովհետե
կե-ն չեր կարող արգելել յելույթը կու-
սակցության յուրաքանչյուր անդամ իրա-
վունք ունի կուսակցության վորոշումը
բողոքարկելու ավելի բարձր ինստանցիայում։
Կե-ն չեր կարող հաշվի չառնել կուսակցու-
թյան անդամների այդ իրավունքը։ Հետե-
վապես, Համկե Կե-ն իր ուժի ներած ամեն
ինչ արել և, վորպեսզի կանխի պայքարի

նոր սրումը, Գրակցիոն պայքարի նոր ուժեղացումը:

Ուղղվցիայի լիգերները, նույն իրենք կե-ի անդամները, պետք ե գիտենային, վոր իրենց յելույթները չեն կարող չդառնալ իրենց կուսակցության վորոշումների դեմ բողոքարկում, արտելք կուսակցության դեմ, հարձակում կուսակցության վրա:

Այսպիսով, ոպողիցիայի յելույթները, և մանավանդ ընկ. Կամենելի յելույթը, վորը վոչ թե նրա անձնական յելույթն ե, այլ ամբողջ ոպողիցիոն բլոկի յելույթը,—վորով հետև գրավոր կարդացած նրա ճառն ստորագրել եյին ընկ. Ծրոցկին, Կամենենիմ ու Զինովյելը,—ընկ. Կամենելի այդ յելույթը ոպողիցիոն բլոկի զարգացման մեջ մի դարձակետ ե 1926 թ. հոկտեմբերի 16-ի «Հայտարարությունից», վորտեղ ոպողիցիան հրաժարվում եր պայքարի ֆրակցիոն մեթոդներից, դեպի ոպողիցիայի գոյության մի նոր շրջան, վորտեղ նա նորից ե վերադառնում կուսակցության դեմ մղվող պայքարի ֆրակցիոն մեթոդներին:

Այստեղից՝ հետևություն. ոպողիցիան խախտել ե 1926թ. հոկտեմբերի 16-ի իր իսկ սեփական «Հայտարարությունը», վերադառնալով պայքարի ֆրակցիոն մեթոդներին:

Այդպիս ել գրի առնենք, ընկերներ, կեղծավորություն անելու կարիք չկա: Իրավացի յեր կամենելը, յերը ասում եր, վոր կատվին պետք ե անվանել կատու: (Զայներ — «Ճիշտ ե»: Բոլիսարին — «Եսկ խոզի՛ խոզ»):

2) Ըստ Տրոցկին իր ճառում ասում եր, թե «Փետրվարյան հեղափոխությունից հետո Ստալինը քարողում եր մի սխալ տակտիկա, վոր Լինինը բնութագրեց իրը կառցկիական թեքում»:

Սա ճիշտ չե, ընկերներ: Սա բամբասանք ե: Ստալինը վոչ մի կառցկիական թեքում չի «քարողել»: Այն, վոր յես աքսորից վերադառնալուց հետո վորոշ տատանումներ ունեցել եմ, յես այդ չեմ թագցրել և ինքս դրել եմ այդ մասին իմ «Դեպի Հոկտեմբեր տանող ուղիներում» բրոշյու-

րում: Բայց մեզանից մի չի ունեցել թեթև վակի տատանումներ: Ինչ վերաբերում է Լենինի դիրքին և նրա ապրիլյան թեղիսներին 1917 թվականին,—ինչի մասին վորե և խոսքն այստեղ, — առա կուսակցությունը հիանալի գիտե, վոր յես այն ժամանակ ընկ. Լենինի հետ մի շարքում եյի կանգնած Կամենեվի և նրա խմբի դեմ, վորոնք այն ժամանակ պարաբռում եյին Լենինի թեղիսների դեմ: Մեր կուսակցության՝ 1917 թ. ապրիլյան կոնֆերենցիայի արձանագրություններին ծանոթ մարդիկ չեն կարող չիմանար վոր յես Լենինի հետ մի շարքում եյի կանգնած՝ նրա հետ միասին պատերազմելով ընկ. Կամենեվի ոպողիցիայի դեմ:

Այսակա աչքակապությունն այն ե, վոր ընկ. Տրոցկին ինձ շփոթել ե ընկ. Կամենեվի հետ: (Նիմադադ: Ծափանարաւըյուննեն):

Սա ճիշտ ե, վոր ընկ. Կամենեվը այն ժամանակ ոպողիցիայումն եր Լենինի դեմ, նրա թեղիսների դեմ, կուսակցության մեծամասնության դեմ և զարգացնում եր մի տեսակետ, վորը պաշտպանողականության

եր սահմանակցվում: Սա ճիշտ ե, վոր ընկ. Կամենեվը այն ժամանակ «Պրավդա» յում, որինակ, մարտ ամսին, գրում եր կիսապաշտպանողական բնույթի հողվածներ, ինչպիսի հողվածների համար յես, իհարկե, չեմ կարող պատասխանատու լինել վոչ մի չափով:

Բայց Ստալինն այստեղ ինչ գործ ունի:
Ընկ. Տրոցկու գրախտությունն այն ե, վոր նա այստեղ Ստալինին շփոթել ե Կամենեվի հետ:

Իսկ թե վարեկա եր ընկ. Տրոցկին այն ժամանակ, ապրիլյան կոնֆերենցիայի ժամանակ 1917 թվականին, յերբ կուսակցությունը պայքար եր մղում ընկ. Կամենեվի խմբի դեմ, ինչ կուսակցության մեջ եր գտնվում նա այն ժամանակ—ձախ-մենշեվիկյան թե աջ-մենշեվիկյան, և ինչու նա այն ժամանակ Ցիմմերվալդի ձախի շարքերում չեր,—թող այդ մասին մեզ պատմի ընկ. Տրոցկին, թեկուզ մամուլում: Բայց վոր նա այն ժամանակ մեր կուսակցության

մեջ չեր, — այդ փաստ ե, վոր ընկ. Տրոց-
կին արժեք վոր հիշեր:

3) Ընկ. Տրոցկին իր ճառում ասում եր,
թե «ազգային հարցում Ստալինը բավական
խոշոր սխալ գործեց»: Թե ինչ սխալ ինչ
հանդամանքներում, — ընկ. Տրոցկին այնպես
ել չասաց:

Սա ճիշտ չե, ընկերներ: Սա բամբա-
սանք ե: Ազգային հարցում յես վոչ մի տա-
րածայնություն չեմ ունեցել յերբեք կու-
սակցության կամ լենինի հետ: Տրոցկու
խոսքն այստեղ, յերկի, մի աննշան միջա-
դիպի մասին ե, յերբ մեր կուսակցության
XII համագումարից առաջ ընկ. լենինն ինձ
կշտամբում եր, վոր յես կազմակերպական
չափազանց խիստ քաղաքականություն եմ
վարում վերջերս Թրանսիայում առևտրա-
կան ներկայացուցիչ յեղած ընկ. Մդիվանու
տիպի՝ վրացի կիսաազգայնականների, կի-
սակոմունիստների նկատմամբ, վոր յես
«հալածում եմ» նրանց: Սակայն հետագա
փաստերը ցույց տվին, վոր այսպես կոչ-
դամ «ուկոնիստները», ընկ. Մդիվանու

տիպի մարդիկ, իրոք ավելի խիստ վերա-
բերմունքի ելին արժանի, քան ինչ յես
եյի անում իբրև մեր կուսակցության կե-ի
քարտուղարներից մեկը: Հետագա դեպքերը
ցույց տվին, վոր «ուկոնիստներն» ամենա-
անսքող ոպորտունիզմի քայլայվող ֆրակ-
ցիա յեն: Թող ընկ. Տրոցկին ապացուցի,
վոր սա այսպես չե: Լենինը չգիտեր և չեր
կարող գիտենալ այդ փաստերը, վորովհետև
նա հիվանդ եր, պառկած եր անկողնում և
հնարավորություն չուներ դեպքերին հե-
տեւելու: Բայց ինչ առնչություն կարող
ե ունենալ այդ աննշան միջադեպը դեպի
Ստալինի սկզբունքային դիրքը: Այստեղ
Տրոցկին, յերկի, բամբասողաբար ինչ-վոր
«տարածայնություններ» և ակնարկում իմ
ու կուսակցության միջև: Բայց միթե սա
փաստ չե, վոր կե-ն ամբողջությամբ, նույն
թվում նաև ընկ. Տրոցկին, միաձայն քվե
յե տվել Ստալինի՝ ազգային հարցի վե-
րաբերյալ թեղիններին: Միթե սա փաստ
չե, վոր այդ ձայնտվությունը տեղի յե ու-
նեցել ընկ. Մդիվանու հետ ունեցած

միջադեպից հետո, մեր կուսակցության ԽII համագումարից առաջ: Միթե սա փաստ չե, վոր ԽII համագումարում ազգային հարցի մասին զեկուցողը հենց Ստալինն եր, և վոչ որիշ վորեկ մեկը: Ել վորտեղ են «տարածայնություններն» ազգային հարցում, և ինչի՞ համար Տրոցկին ցանկացել ե հիշատակել այդ անհան միջադեպը:

4) Բնեկ Կամենեվը իր ճառում հայտարեց, թե մեր կուսակցության XIV համագումարը սխալ ե գործել՝ «կրակ բաց անելով դեպի ձախ», այսինքն՝ կրակ բաց անելով ոպողիցիայի դեմ: Դուրս ե գալիս, վոր կուսակցությունը պայքարել ե և շարունակում ե պայքարել կուսակցության հեղափոխական միջուկի դեմ: Դուրս ե գալիս, վոր մեր ոպողիցիան ձախ ե, և վոչ թե այ:

Այս ամենը դատարկ բաներ են, ընկերներ: Սա մի բամբասանք ե, վոր մեր ոպողիցիոններն են տարածում: XIV համագումարը միտք չի ունեցել և չեր ել կարող կրակ բաց անել հեղափոխական մեծամաս-

նության դեմ: Նա իրոք կրակ ե բաց արել աշերի դեմ, մեր ոպողիցիոններների դեմ, վորոնք աջ ոպողիցիա յեն, թեսկու և «Ճախ» քղամիդով են ծածկվում: Իհարկե, ոպողիցիան հակամետ ե իրեն «հեղափոխական Ճախ» համարելու: Բայց մեր կուսակցության XIV համագումարը վորոշեց, ընդհակառակությունը, վոր ոպողիցիան լոկ դիմակավորվում և «Ճախ» ֆըադով, իսկ իրոք ոպողատունիստական ոպողիցիա յեւ Մենք գիտենք, թե ինչպես աջ ոպողիցիան հաճախ «Ճախ» քղամիդով ե դիմակավորվում, վորպեսզի մոլորության մեջ զցի բանվոր դասակարգին: «Բանվորական ոպողիցիան» ել իրեն ամենքից ավելի ձախ եր համարում, սակայն նա իրոք բոլորից ավելի աջ դուրս յեկավ: Ներկայիս ոպողիցիան նույնպես իրեն ամենքից ավելի ձախ ե համարում, սակայն ներկայիս ոպողիցիայի պրակտիկան և ամբողջ աշխատանքն ապացուցում են, վոր նա բոլոր աջ ոպորտունիստական հոսանքների միաձգման կենտրոնն ու ոջախն ե՝ սկսած «բանվորական ոպողիցիայից» ու

տրոցկիզմից մինչև «նոր ռազմիցիան» ու
ամեն տեսակի Սովորինները:

Ընկ. Կամենեվը «փոքրիկ» խարդախու-
թյուն և արել «ձախերի» ու «աջերի» վե-
րաբերյալ:

5) Ընկ. Կամենեվը լենինից ցիտատ բե-
րեց այն մասին, վոր մենք դեռևս չենք
ավարտել մեր եկոնոմիկայի սոցիալիստա-
կան հիմքի կառուցումը, և հայտարարեց,
թե կուսակցությունը սխալ և գործում
պնդելով, իբր թե, վոր մենք արդեն ավար-
տել ենք մեր եկոնոմիկայի սոցիալիստա-
կան հիմքը:

Մըանք դատարկ բաներ են, ընկերներ:
Սա ընկ. Կամենեվի մանը բամբասանքն և
կուսակցությունը դեռևս յերբեք չի հայ-
տարարել թե ինքն արդեն ավարտել և
մեր եկոնոմիկայի սոցիալիստական հիմքը:
Այժմ վեճը բնավ այն մասին չե, ավարտել
ենք արդյոք, թե դեռևս չենք ավարտել
մեր եկոնոմիկայի սոցիալիստական հիմքը:
Այժմ վեճն այդ չե, վեճը լոկ այն մասին և
կարո՞ղ ինք արդյօք մենք մեր սեփական

ուժիրով ավարտել մեր եկոնոմիկայի սոցիա-
լիստական հիմքը, թե չենք կարող կուսակ-
ցությունը պնդում ե; վոր մենք հնարավու-
րություններ ունենք մեր եկոնոմիկայի
սոցիալիստական հիմքն ավարտելու: Ոպո-
ղիցիան այդ ժխտում ե, դրանով իսկ գլոր-
վելով պարտվողականության և կապիտու-
լանտության ուղին: Ահա թե ինչի մասին
և այժմ վեճը: Ընկ. Կամենեվը, զգալով իր
դիրքի անկայունությունը, աշխատում և
խուսափել այդ հարցից: Բայց այդ նրան
չի հաջողվի:

Ընկ. Կամենեվը դարձյալ մի «փոքրիկ»
խարդախում թույլ տվեց:

6) Ընկ. Տրոցկին իր ճառում հայտա-
րաբեց, թե ինքը «1917 թվականի մարտ-
ապրիլին կանխահայտել և լենինի քաղա-
քականությունը»: Դուրս ե զալիս, այսպի-
սով, վոր ընկ. Տրոցկին «կանխահայտել» ե
ընկ. լենինի ապրիլյան թեզիսները: Դուրս
ե զալիս, վոր ընկ. Տրոցկին պեռևս 1917 թ.
փետրվար-մարտին ինքնուրույն կերպով
հանդել ե այն քաղաքականության, վոր

ընկ. Լենինն եր պաշտպանում 1917 թվա-
կանի ապրիլ-մայիսին իր ապրիլյան թե-
զիսներում:

Թույլ ավեք, ընկերներ, հայտարարեք
վոր դա հիմար ու անվայելուչ պարծեն-
կուություն եւ Լենինին «կանխահայտո՞ղ»
Տրոցկին—դա մի այնպիսի պատկեր ե, վո-
րի վրա արժե մի քիչ ծիծաղել: Բոլորովին
երավացի յեն գյուղացիները, յերբ նման
դեպքերում սովորաբար ասում են. «Ճանճը-
աշտարակին թայ արեց»: (Միջադա): Լենի-
նին «կանխահայտո՞ղ» Տրոցկի... Թող մի
Տրոցկին փորձի գուրս զալ ու մամուլի մեջ
ապացուցել այդ բանը: Ինչու նա գեթ մի
անգամ չփորձեց այդ: Տրոցկին «կանխահայ-
տեց» Լենինին... Բայց այդ ժամանակ
ինչով բացատրել այն փաստը, վոր ընկ.
Լենինը Ռուսաստանում իր ասպարեզ գա-
լիս հենց, 1917 թվականի ապրիլին, ան-
հրաժեշտ համարեց սահմանածրվել Տրոցկու
դիրքից: Ինչով բացատրել այն փաստը,
վոր «կանխահայտովող» հարկավոր և հա-
մարում ցանկազատվել «կանխահայտողից»:

Միթե սա փաստ չե, վոր Լենինը 1917 թվա-
կանի ապրիլին միքանի անգամ հայտարա-
րել ե, վոր ինքը վոչ մի ընդհանուր բան
չունի Տրոցկու «առանց ցարի, իսկ կառա-
վարությունը՝ բանվորական» հիմնական
ֆորմուլացի հետ: Միթե սա փաստ չե, վոր
Լենինը հենց այն ժամանակ միքանի ան-
գամ հայտարարել ե, վոր ինքը վոչ մի ընդ-
հանուր բան չունի Տրոցկու հետ, վորը
փորձում ե ցատկել գյուղացիական շարժ-
ման գլխով, ագրարային հեղափոխության
գլխով:

Վհրատեղ ե այստեղ «կանխահայտումը»:

Ցեղակացություն. մեզ փաստեր են հար-
կավոր, և վոչ հերյուրանքներ ու բամբա-
սանքներ, այնինչ ոպողիցիան դերադառում
ե հերյուրանքներով ու բամբասանքներով
գործել:

ՀԱՅ, ԹԵ ԻՆՁԻ ՀԱՄԱՐ ԵՆ ԳՈՎԱՐԱՆՈՒՄ
ՈՊՈԶԻՑԻԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ
ԴԻԿԱՍՏՈՒՐԱՅԻ ԹԵՆԱՄՄԻՆԵՐԸ

Ցես իմ զեկուցման մեջ ասացի, վոր պրո-
լետարիատի դիկտատուրայի թշնամիները,

մենշեկիներն ու կադետները ռուսական հմիւգրացիայից, գովարանում են ոպողիցիային: Յես ասացի, վոր նրանք ոպողիցիային գովաբանում են այնպիսի աշխատանքի համար, վորը տանում է դեպի կուսակցության միասնականության խարխլում և, կնշանակի, դեպի պրոլետարիատի դիկտատուրայի խարխլում: Յես մի շարք ցիտատներ բերի, վորոնք խոսում են այն մասին, վոր հենց դրա համար են ոպողիցիային գովում պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիները, նրա համար, վոր ոպողիցիան իր աշխատանքով սանձալուծում և հակապրոլետարական ուժերը յերկրում, աշխատում և պսակաղերծ անել մեր կուսակցությունը, պսակաղերծ անել պրոլետարական դիկտատուրան և դրանով իսկ հեշտացնում ե պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիների գործը:

Դրան ի պատասխան ընկեր Կամենեվը (նունակես և ընկ. Զինովյանը) սկզբում վկայակոչեց Արևմուտքի կապիտալիստական մամուլը, վորը, բանից դուրս ե գալիս, գո-

վարանում ե մեր կուսակցությանը, նույնապես և Ստալինին, իսկ հետո վկայակոչեց Ռևոլյույտին, մի սմենովեխովլեցի, բուրժուական մասնագետների ներկայացուցչին մեր յերկրում, վորը համերաշխվում ե մեր կուսակցության դիրքի հետ:

Ինչ վերաբերում ե կապիտալիստներին, ապա այնտեղ նրանց մոտ մեծ տարածայնություններ կան մեր կուսակցության վերաբերյալ Ահա, որինակը, վերջերքս ամերիկական մամուլում գովարանում եյին Ստալինին, վոր նա, իբր, նրանց հնարավորություն կտա խոշոր կոնցեսիաներ ստանալու: Իսկ այժմ, բանից դուրս ե գալիս, նախատում ու հայհոյում են Ստալինին, անդելով, վոր նա, Ստալինը, «խարել ե» իրենց: Մի ժամանակ բուրժուական մամուլում ծաղրանկար յերեվաց Ստալինի վրա, վորը ձեռքին դույլով ջուր ե բռնել և հանգցնում ե հեղափոխության հրդեհը: Իսկ հետո դրան իբրև հերքում յերեաց մի ուրիշ ծաղրանկար, վորտեղ Ստալինը ձեռքին դռւյլ ե բռնել բայց դույլի մեջ վհչ թե ջուր ե, այլ նավթ,

և, բանից դուքս և գալիս, վոր Ստալինը
հեղափոխության հրդեհը վճռ թե հանգնում
են, այլ բորբոքում: (Մաֆահարություններ, ծի-
ծառ):

Ինչպես տեսնում եք, այնտեղ նրանցում,
կտպիտալիսաների մոտ, մեծ տարածայնու-
թյուններ գոյություն ունեն մեր կուսակցու-
թյան դիրքի վերաբերյալ ինչպես և
Ստալինի դիրքի վերաբերյալ:

Անցնենք Ուստրյալովի հարցին: Ի՞նչ
մարդ և Ուստրյալովը Ուստրյալովը—դա
բուրժուական մասնագիտների և առհասա-
րակ նոր բուրժուագիտյի ներկայացուցիչն եւ
Նա պրոլետարիատի դասակարգային թշնա-
մին եւ: Սա անվիճելի յէ: Բայց թշնամիները
դանազան են լինում: Կան դասակարգային
թշնամիներ, վորոնք չեն հաշտվում Խորհը-
դային իշխանության հետ և ձգտում են
ինչ ել վոր լինի՝ տապալել այն: Կան նաև
այնպիսի դասակարգային թշնամիներ, վո-
րոնք, այսպիս թե այնպես, հաշտվում են
Խորհրդային իշխանության հետ թշնամի-
ներ կան, վորոնք աշխատում են պայման-

ներ նախապատրաստել պրոլետարիատի
դիկտուտուրան տապալելու համար: Դրանք
մենշերիներն են, ես-երները, կադետները և
այլն: Բայց այնպիսի թշնամիներ ել կան,
վորոնք աշխատակցում են Խորհրդային իշ-
խանությանը և պայքարում նրանց դեմ:
ովքեր Խորհրդային իշխանությունը տապա-
լելու տեսակետին են, հուսալով, վոր դիկ-
տատուրան քիչ-քիչ կիթուլանա, կվերասեր-
վի և հետո ընդառաջ կգնա նոր բուրժու-
ագիայի շահերին: Թշնամիների վերջին կա-
տեղորիային և պատկանում Ուստրյալովը:

Ըսկե, կամենեմ ինչի՞ն համար վկայակոչեց
Ուստրյալովին: Գուցե նրան համար, վորպեսզի
ցույց տա, թե մեզանում կուսակցությունը
վերասերվել ե, և Ուստրյալովը հենց դրա
պատճառով ե գովաբանում Ստալինին, կամ
առհասարակ մեր կուսակցությանը: Յերեի
վոչ դրա համար, վորովհետև ընկ. Կամենեմը
սիրտ չարեց այդ ուղղակի ասելու: Հապա-
ինչի՞ն համար Ուստրյալովին վկայակոչեց
ընկ. Կամենեմը: Ակներեաբար նրա համար,

վորպեսդի ակնարկ անի «վերասերման»
վերաբերյալ:

Բայց ընկ. Կամենեվը մոռացավ ասեր
վոր հենց այդ Ուստրյալովն ել ավելի շատ
գովարանում եր Լենինին: Ուստրյալովի հող-
վածները լենինի հասցեյին արած գովա-
րանությամբ՝ հայտնի յեն մեր ամբողջ կու-
սակցությանը: Հապա այստեղ ինչնիմն ե
բանը: Գուցի ընկ. Լենինը «վերասերվեց»
կամ սկսեց «վերասերվել», յերբ նմակ եր
մտցնում: Բավական ե այդ հարցը դնել
վոր համարանք «վերասերման» վերաբերյալ
այլպիսի յենթադրության ամբողջ անհե-
թեթությունը:

Ուրեմն, ինչի համար ե լենինին և մեր
կուսակցությանը գովարանում Ուստրյալովը
և ինչի համար են ոպողիցիային գովարանում
մենշևիկներն ու կաղետները,—ահա մի հարց,
վոր հարկավոր ե ամենից առաջ լուծել և
վոր ամեն կերպ շրջանցել ե փորձում ընկ.
Կամենենեվը:

Մենշևիկներն ու կաղետները ոպողիցի-
ային գովարանում են նրա համար, վոր նա

խարիսում և մեր կուսակցության միաս-
նականությունը, թուլացնում պրոլետարիա-
տի դիկտուտուբան և դրանով հենց հեշտաց-
նում մենշևիկների ու կաղետների աշխա-
տանքը՝ Խորհրդային իշխանությունը տա-
պահելու գործում: Այդ ապացուցում են
ցիտատները: Իսկ Ուստրյալովը մեր կուսակ-
ցությանը գովարանում ե նրա համար, վոր
Խորհրդային իշխանությունը թույլ տվեց
նեպը, թույլ տվեց մասնավոր կապիտալը,
թույլ տվեց բուրժուական մասնագետներին,
վորոնց ոգնության ու փորձի կարիքն ունի
ողբույսարիատը:

Մենշևիկներն ու կաղետները ոպողիցիա-
յին գովարանում են նրա համար, վոր նա
իր ֆրակցիոն աշխատանքով նրանց ոգնում
ե, ակամայից ոգնում, պրոլետարիատի դիկ-
տուտուբան տապալելու համար պայմաններ
նախապատրաստելու գործում: Իսկ Ուստ-
րյալովները, գիտենալով, վոր դիկտուտուրան
չեն տապալի, դեն են զլրտում Խորհրդային
իշխանությունը տապալելու տեսակետը, աշ-
խատում են մի անկյունիկ ստանալ դիկտու-

տուրայի մոտին, աշխատում են կպչել նրան
և—զովաբանում են կռւսակցությանը նրա
համար, վորնա նեպ մտցրեց և վորոշ պայման-
ներում նոր բուրժուազիա թույլատրեց,
վորն ուղղում է Խորհրդային իշխանությունն
ոգտագործել իր դասակարգային նպատակ-
ներով, բայց վորին Խորհրդային իշխանու-
թյունն ինքը կողտագործի պրոլետարական
դիկտուրայի նպատակների համար:

Ահա թե վորակեղ և տարբերությունը
մեր յերկրի պրոլետարիատի դասակարգային
զանազան թշնամիների միջև:

Ահա թե վորակեղ և արմատն այն բանի, վոր
մենշևիկներն ու կադետները գովարանում
են ողողեցիային, իսկ պարոնայք Ուստրյա-
լովները՝ մեր կռւսակցությանը:

Յես կուզեյի ձեր ուշազրությունը դարձ-
նել այս հարցի վերաբերյալ Լենինի ու-
նեցած աեսակետի վրա:

«Մեր խորհրդային հանրապետության մեջ,—ա-
սում ե լենինը,—սոցիալական կարգը հիմքած և
յերկու դասակարգերի՝ բանվորների ու գյուղացիների
աշխատակցության վրա, վորին այժմ վորոշ պայման-

ներով մասնակցել թույլատրված ե նաև Շնեպման-
նի ընդունությունը՝ բուրժուազիային» (Լենին, «
XVIII, մ. 2, էջ 124):

Նոր բուրժուազիային, ինարկե, վորոշ
պայմաններով ու Խորհրդային իշխանության
կողմից վերստուգիւլու պայմանով, վորոշ
պայմանական աշխատակցություն թույլա-
տրելու համար,—ահա հենց դրա համար ել
Ուստրյալովը գովարանում և մեր կռւսակ-
ցությանը, հուսալով կառչել այդ բանին ու
Խորհրդային իշխանությունն ոգտագործել
բուրժուազիայի նպատակների համար: Իսկ
մենք, կռւսակցությունը, ուրիշ հաշիմներ
ունիք: ոգտագործել նոր բուրժուազիայի
ներկայացուցիչներին, նրանց փորձը, նրանց
գիտելիքները, վորապեսզի խորհրդայնաց-
նենք, միաձուլենք նրանց մի մասը, իսկ
մյուս մասը, վորն ի վիճակի չի լինի խոր-
հրդայնանալու, դեն շպրտենք:

Միթե սա փաստ չե, վոր Լենինը տար-
բերություն եր դնում նոր բուրժուազիայի
և մենշևիկների ու կադետների միջև, թույլ

տալով ու ոգտագործելով առաջինը և առաջարկելով կալանավորել յերկրորդներին:

Ահա թե ինչ եր գրում այդ մասին Հենինն իր «Պարենհարկում».

«Զվաբենալ այն բանից, վոր կոմունիստները կըսովորեն» բուրժուական մասնագետներից, նույն թվում թե առևտարականներից, թե կապիտալիստիկ-կոռպերատուններից, թե կապիտալիստներից Սովորել նրանցից ձեռվ այլ կերպ, իսկ գործի երությամբ նույն կերպ, ինչպես սովորում եյինք ու սովորեցինք զինմասնագետներից «Գիտության» արդյունքներն ստուգել միմիայն պրակտիկ փորձով. արա պելի լավ, քան կողքիդ արքն բուրժուական մասնագետները, կարողացիր այսպես ել այնպես ել հասնել հողագործության վերելքին, արդյունաբերության վերելքին, հողագործության ու արդյունաբերության շրջանառության զարգացմանը: Մի՛ Ժատանատ վճարելու «գիտության համար». գիտության համար թանգ վճարելը ցավ չէ, միայն թե ուսուցումը կարգին գնա (Հենին, հ. XVIII, մ. 1, եջ 234—235):

Այսպես եր ասում լենինը բուրժուազիայի և բուրժուական մասնագետների մասին, վորոնց ներկայացուցիչն և Ուստորյալով:

Իսկ ահա թե ինչ եր ասում լենինը մենչևիկների ու ես-երների մասին.

«Իսկ կրոնշտադտյան անկօսասկցական մողայական դպեստ վերահագած մենչևիկներին ու ես-երներին ինամքով պահել բանուում կամ ուղարկել Բեռլին, Մարտովի մօտ, մաքուը դեմոկրատիայի բոլոր սքանչելիքներն ազատ ոգտագործելու, Զերնովի, Միլյուկովի, վրացի մենչևիկների հետ մտքերի ազատ փոխանակություն անելու համար» (աեւ նույն տեղում):

Այսպես եր ասում լենինը:

Գուցի ոպղիցիան համաձմյն չե լենինի հետ: Թող նա այս ուղղակի ասի:

Ահա թե ինչով ե բացատրվում այն փաստը, վոր մենչևիկներն ու կաղետները մեզանում կալանավորվում են, իսկ նոր բուրժուազիա մենք թույլ ենք տալիս վորոշ պայմաններով և վորոշ սահմանափակումներով, վորպեսզի, պայքարելով նրա գեմ տնտեսական կարգի միջոցառութերով և քայլ առ քայլ հաղթահարելով նրան՝ միաժամանակ ոգտագործենք նրա փորձը, նըս

գիտելիքները մեր անտեսական շինարարության համար:

Դուքս ե գալիս, այսպիսով, վոր Ռւսաց բարձրի տեսակի միքանի դասակարգային թշնամիներ գովարանում են մեր կուսակցությանը նրա համար, վոր մենք նեպ մտցրինք և բուրժուազիային թույլ տվինք վորոշ պայմանական ու սահմանափակ աշխատակցություն ունենալու գոյություն ունեցող հասարակակարգի հետ, ընդուրուժ մենք միենույն ժամանակ նպատակ ունենք այդ բուրժուազիայի գիտելիքներն ու փորձն ոգտագործել մեր շինարարության համար, վորպիսի նպատակն իրականացնում ենք, ինչպես հայտնի յե, վոչ առանց հաջողությունների: Իսկ մենշևիկների ու կաղետների տեսակի ուրիշ դասակարգային թշնամիներ ուղղողիցիային գովարանում են նրա համար, վոր նրա աշխատանքը տանում եղեղի մեր կուսակցության միասնականության խարխում, դեպի պրոլետարիատի դիկտուտուրայի խարիսրում և դեպի մենշևիկների ու կաղետների աշխատանքի

դում՝ դիկտուտուրայի տապալման գործում: Հույս ունեմ, վոր սպողիցիան վերջապես կհասկանա առաջին տեսակի գովարանության և յերկրորդ տեսակի գովարանության միջև յեղած տարբերության ամբողջ խորոշությունը:

ՍԽԱՆԵՐ ԵԼ ԿԱՆ, ՍԽԱՆԵՐ ԵԼ

Ոպողիցիան այստեղ խոսում եր ԿԿ-ի սուանձին անդամների միքանի սխալների մասին: Առանձին սխալներ, ինարկե, յեղել են: Մեզանում բացարձակ «անսխալական» մարդիկ չկան: Այդպիսի մարդիկ չեն ել լինում: Բայց լինում են դանազան սխալներ: Սխալներ են լինում, վորոնց վրա սխալների հեղինակները չեն պնդում և վորոնցից չեն աճում պլատֆորմներ, հոսանքներ, գրակցիաներ: Այդպիսի սխալները շուտով մոռացվում են: Ուրիշ տեսակի սխալներ ել են լինում, վորոնց վրա սխալների հեղինակները պնդում են և վորոնցից աճում են գրակցիաներ, պլատֆորմներ և պայքար

կուսակցության մեջ, Այդպիսի սխալները
չեն կարող շուտ մոռացվել

Սխալների այդ յերկու կատեգորիաների
միջև հարկավոր ե խիստ տարբերություն
դնել:

Ահա, որինակ, ~~բնակ~~ Տրոցկին ասում ե,
թե յես մի ժամանակ սխալ եմ թույլ տվել
արտաքին առևտորի մենաշնորհի վերաբերյալ
Եյդ ճիշտ ե: Մեր մթերող որգանների
քայլքայման ժամանակաշրջանում յես իս-
կապես առաջարկում եյի ժամանակավորա-
պես բանալ մեր նավահանգիստներից մեկը՝
հաց արտահանելու համար: Բայց յես իմ
սխալը չեմ պնդել և լենինի հետ ունեցած ս-
րանակցություններից հետո անհապաղ ուղ-
ղել եմ այս: Յես կարող եյի ընկ. Տրոցկու
տասնյակ, հարյուրավոր այնպիսի սխալներ
հաշվել, վորոնք հետո ուղղել ե ԿԿ-ն, վո-
րոնց վրա նա հետո չեր պնդում: Յեթե յես
դրադղեյի այն բոլոր շատ լուրջ ավելի քիչ
լուրջ ե քիչ լուրջ սխալները թվելով, վոր
ընկ. Տրոցկին ե թույլ տվել իր աշխատան-
քի մեջ ԿԿ-ում, բայց վորոնց վրա նա չի-

պնդել և վորոնք մոռացվել են, — հարկ կլի-
ներ, վոր յես միքանի սեփերատ կարդայի
այդ առթիվ: Բայց յես կարծում եմ, վոր
քաղաքական պայքարում, քաղաքական քա-
նակովում պետք ե վոր խոսվեր զնչ թե
այդպիսի սխալների մասին, այլ այն սխալ-
ների մասին, վորոնք հետո զարդացել,
պլատֆորմ են դարձել և պայքար առաջ
բերել կուսակցության ներսում:

Բայց ~~բնակ~~ Տրոցկին ու ընկ. Կամենեվը
շոշափեցին հենց այն տեսակի սխալների
հարցը, վորոնք չեն զարգացել ու հոսանք
դարձել և վորոնք շուտով մոռացվել են:
Յեվ վորոնք հետև ոպողիցիան շոշափեց հենց
այդ հարցերը, ապա ինձ ել թույլ տվեք
այսեղ հիշեցնել այդ տեսակի միքանի
սխալներ, վոր իր ժամանակին ոպողիցիայի
լիդերներն են թույլ տվել: Դուքս դա նրանց
դաս լինի, և ուրիշ անգամ նրանք չփորձեն
կառչել արգեն մոռացված սխալներից:

Ժամանակ կար, յերբ ընկ. Տրոցկին մեր
կուսակցության ԿԿ-ում պնդում եր, թե
Խորհրդային իշխանությունը մաղից ե կախ-

ված, թե «Հկուն արդեն կանչել ե», և Խոր-
հըրդային իշխանությանը միայն միքանի
ամիս, յեթե վոչ միքանի շաբաթ և մուացել
ապրելու. Այդ կարծեմ, 1921 թվականին
եր: Դա ամենավտանգավոր մի սխալ եր,
վոր խոսում եր ընկ. Տրոցկու վտանգավոր
տրամադրությունների մասին: Բայց Կեն
նրան դրա համար ծաղրեց, իսկ ընկ. Տրոց-
կին չեր պնդում եր այդ սխալը, և սխալը
մոռացվեց:

Կար ժամանակ,— այդ 1922 թվականին
եր,— յերբ ընկ. Տրոցկին առաջարկում եր
թույլ տալ մեր արդյունաբերական ձեռ-
նարկություններին ու արեսաներին գրավ
դնել պետական գույքը, նույն թվում նաև
հիմնական կապիտալը, մասնավոր կապի-
տալիստներին՝ վարկ ստանալու համար: (Ընկ.
Յարովավսկի—«Դա կապիտալացիայի
ուղին ե»): Թերևս այդպես ե: Համենայն
դեպս, դա կլիներ մեր ձեռնարկությունների
ապազգայնացման նախադրյալ Բայց Կեն
մերժեց այդ պլանը, ընկ. Տրոցկին պայքա-

րում եր, բայց հետո դադարեց իր սխալը
պնդելոց, և այժմ սխալը մոռացված ե:

Կար ժամանակ,— այդ, կարծեմ, 1922
թվականին եր,— յերբ ընկ. Տրոցկին առա-
ջարկում եր մեր արդյունաբերության խիստ
համակենտրոնացում, այնպիսի խելացնոր
համակենտրոնացում, վորը Փարբիկաներից
ու գործարաններից անխուսափելիորեն գուրս
կթողներ մեր բանվոր դասակարգի մոտ մեկ
յերբորդը: (Բուխարին—«Այդ 23 բվականին
եր»): Այն, այդ, կարծեմ, 23 թվականին եր:
Կեն մերժեց ընկ. Տրոցկու այդ առաջարկն
իբրև սխոլաստիկ խելացնոր ու քաղաքա-
կանապես վտանգավոր մի բան: Ծնկ. Տրոցկին
միքանի անգամ հիշեցրեց Կենին, վոր հարկ
կլինի ապագայում այնուամենայնիվ այդ ու-
ղին բռնել: Սակայն մենք այդ ուղին չբռնե-
ցինք: (Տեղից մի ձայն—«Հարկ կլիներ փա-
կել Պաւսիլովի գործարանը»): Այն, դեպի այդ
եր ընթանում գործը: Բայց հետագայում
ընկ. Տրոցկին դադարեց իր սխալը պնդե-
լուց, և սխալը մոռացվեց:

Եթե այլն, և այլն:

Կամ վերցնենք ընկ. Տըոսկու բարեկամ-
ներին — ընկ. ընկ. Զինովյանին ու Կամե-
նիվին, վորոնք սիրում են հաճախ հիշեց-
նել վոր Բուխարինը մի ժամանակ ասել և
«հարստացեք», և պարում են այդ «հարս-
տացեք»-ի շուրջը:

Այդ՝ 1922 թվականին եր, յերբ մեզա-
նում քննարկվում եր Ուրկվաբարի կոնցե-
սիայի, այդ կոնցեսիայի ամենաստրկացու-
ցիչ պայմանների հարցը՝ Ցեղ Բնչ: Միթե
սա փաստ չե, վոր ընկ. ընկ. Կամենեֆը ու
Զինովյանը առաջարկում եյին ընդունել
Ուրկվաբարի կոնցեսիայի ստրկացուցիչ պայ-
մանները և, առաջարկելով՝ պնդում եյին
իրենց առաջարկը: Սակայն կկան մերժեց
ուրկվաբարյան կոնցեսիան, Զինովյանը ու
Կամենեֆը այլևս չեյին պնդում իրենց սիւ-
լը, և սխալը մոռացկեց:

Կամ վերցնենք, որինակ, ընկ. Կամենեվի
սխալներից ելի մի փաստ, վորի մասին
յես չեյի ցանկանա խոսել բայց վորի մա-
սին հիշեցնել ինձ հարկադրում ե ընկ. Կա-
մենեվը, վորովհետեւ նա ձանձրացրեց ընկ.

Բուխարինի սխալը հիշեցնելով, մի սխալ
վոր ընկ. Բուխարինը վաղուց արդեն ուղ-
ղել ու լիկվիդացիայի յե յենթարկել Յես
խոսում եմ ընկ. Կամենեվի հետ տեղի ու-
նեցած մի միջադեպի մասին, յերբ նա Սի-
րիբի աքսորումն եր, Փետրվարյան հեղա-
փոխությունից հետո, յերբ ընկ. Կամենեվը
Սիրիբում (Աշխնսկում) անվանի վաճառա-
կանների հետ միասին մասնակցեց սահմա-
նադրական Միխայիլ Ռոմանովին վողջույնի
հեռագիր ուղարկելուն (բղավոցներ—ընալ-
տառակուրյաններ), հենց այն Միխայիլ Ռո-
մանովին, վորին ցարը, զահից Հրաժարվե-
լով, հանձնել ել «գահի իրավունքը»: Իհար-
կե, սա հիմարագույն սխալ եր, և այդ սխա-
լի համար ընկ. Կամենեվը մեր կոստեցու-
թյան կողմից մեծ գնաքոց կերավ 1917 թվա-
կանին ապրիլյան կոնֆերենցիայի ժամա-
նակ: Բայց ընկ. Կամենեվը ընդունեց իր
սխալը, և սխալը մոռացվեց:

Հարկավագնը և արդյոք հիշեցնել այդ տե-
սակի սխալների մասին իհարկե, հարկավոր
չե, վորովհետեւ նրանք մոռացված են և վա-

դուց արդեն լիկվեղացիայի յենթարկված։
Հսապա ինչու ընկ. ընկ. Տրոցկին ու Կամե-
նեվը այդ տեսակի սխալներն իրենց կու-
սակցական ընդգիմախոսների աչքն են կո-
խում։ Պարզ չեւ արդյօք, վոր գրանով նրանք
մեղ լոկ հարկադրում են հիշեցնել ոպողի-
ցիայի լիգերների բազմաթիվ սխալների
մասին։ Յեկ մենք հարկադրված ենք այդ
աներ թեկուղ նրա համար, վոր ոպողիցիային
թողնել տանք բժախնդրությունն ու բամ-
բասանքը։

Բայց լինում են ուրիշ տեսակի սխալ-
ներ, այնպիսի սխալներ, վորոնց վրա հա-
մառում են այդ սխալների հեղինակները և
վորոնցից հետո աճում են ֆրակցիոն պլատ-
ֆորմներ։ Այդ արդեն բոլորովին ուրիշ տե-
սակի սխալներ են։ Կուսակցության ինդիքն
այն ե, վոր բանա այդպիսի սխալները և
հաղթահարի նրանց։ Վորովհետեւ այդպիսի
սխալներն հաղթահարելը միակ միջոցն է՝
մարքսիզմի սկզբունքները կուսակցության
մեջ հաստատելու, կուսակցության մեջ միաս-
նականություն պահպանելու, ֆրակցիոնու-

թյունը լիկվեղացիայի յենթարկելու և այդ-
պիսի սխալների կրկնվելու դեմ յերաշխիք
ստեղծելու։

Վերցնենք, որինակ, ընկ. Տրոցկու սխա-
լը Բրեստի հաշտության ժամանակ, վորը
մի ամբողջ պլատֆորմ դարձավ կուսակցու-
թյան գեմ։ Հարկավոր և այդպիսի սխալ-
ների գեմ պայքարել բացահայտ ու վճռա-
կան կերպով։ Այն, հարկավոր և։

Կամ ընկ. Տրոցկու մի ուրիշ սխալը
արհմիութենական դիսկուսիայի ժամանակ,
վորը (սխալը) մեր կուսակցության մեջ հա-
մառուսական դիսկուսիա առաջ ըներեց։

Կամ, որինակ, ընկ. ընկ. Զինվելի ու
կամենեվի հոկտեմբերյան սխալը, վորը
ճնաժամ ստեղծեց կուսակցության մեջ
ապստամբությունից առաջ։

Կամ, որինակ, ոպողիցիոն բլոկի ներ-
կայիս սխալները, վորոնք ֆրակցիոն պլատ-
ֆորմի ձեւ ընդունեցին և պայքար դարձան
կուսակցության գեմ։

Յեկ այլն, և այլն։

Հարկավոր և արդյօք այդպիսի սխալնե-

ըի դիմ սլայքարել բացահայտ ու վճռական
կերպով։ Այս, հարկավոր եւ

Կարելի յի արդյոք լոռության տալ այդ-
պիսի սխալները, յերբ խոսքը կուսակցու-
թյան մեջ յեղած տարածայնությունների
մասին եւ Պարզ եւ, վոր չի կարելի

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿԱՏՈՒՐԱՆ

ԸՆՏԱԿՑԵՎԻ

Բնկ. Զինովյեֆս իր ճառում խոսում եր
պրոլետարիատի դիկտատուրայի մասին և
հավատացնում եր, թե Ստալինը «Լենինիշ-
մի հարցերի շուրջը» հայտնի հոգվածում
սխալ եւ պարզաբանում պրոլետարիատի
դիկտատուրայի հասկացողությունը։

Դրանք դատարկ բաներ են, ընկերներ։
Ընկ. Զինովյեֆս այստեղ իր մեղքն ուրիշի
վրա յի գցումն իրոք խոսք լինել կարող ե
միայն այն մասին, վոր ընկ. Զինովյեֆը
խեղաթյուրում եւ պրոլետարիատի դիկտա-
տուրայի լենինյան ըմբռնումը։

Ընկ. Զինովյեֆը պրոլետարիատի դիկ-

տատուրայի վերաբերյալ յերկու վերսիա
ունի, վորոնցից վոչ մեկն ել չի կարող
մարքսիստական կոչվել և վորոնք արմա-
տապես հակասում են մեկը մյուսին։

Առաջին վերսիան Յելենելով այն ճիշտ
դրույթից, թե կուսակցությունը պրոլե-
տարիատի դիկտատուրայի սիստեմում հիմ-
նական դեկավար ուժն ե, ընկ. Զինովյեվը
գալիս ե բոլորովին սխալ յեղակացության
այն մասին, թե պրոլետարիատի դիկտատու-
րան կուսակցության դիկտատուրան ե Դրա-
նով հենց ընկ. Զինովյեվը կուսակցության
դիկտատուրան նույնացնում ե պրոլետա-
րիատի դիկտատուրայի հետ։

Բայց ինչ ե նշանակում կուսակցության
դիկտատուրան նույնացնել պրոլետարիատի
դիկտատուրայի հետ։

Այդ նշանակում ե, նախ հավասարու-
թյան նշան դնել դասակարգի և կուսակ-
ցության միջև, ամբողջի և այդ ամբողջի մի
մասի միջև, վոր անհեթեթ ե և վորեւ բա-
նի անհամակերպ։ Լենինը յերբեք չի նույ-
նացրել և չեր կարող նույնացնել կուսակ-

յությունը դասակարգի հետո Կուսակցության և գասակարգի միջև պրոլետարիատի մի ամբողջ շարք մասսայական անկուսակցական կազմակերպություններ կան, իսկ այդ կազմակերպությունների հետեւ կանգնած ե պրոլետարների դասակարգի ամբողջ մասսան: Անտեսել այդ մասսայական անկուսակցական կազմակերպությունների և, մասնավանդ, բանվոր դասակարգի ամբողջ մասսայի գերն ու անսակարար կշիռ և կարծեր, թե կուսակցությունը կարող ե փոխարինել ալրոլետարիատի մասսայական անկուսակցական կազմակերպությունները և պրոլետարական ամբողջ մասսան առհասարակ,— նշանակում է կուսակցությունը կտրել մասսաներից, կուսակցության բյուրոկրատացումը հասցնել ամենաբարձր կետի, կուսակցությունը դարձնել անսխալական միուժ, կուսակցության մեջ արմատացնել Շնեչչայեվականություն, «արակչելելականություն»:

Կարիք ել չկա ասելու, վոր կենինը վոչ մի ընդհանուր բան չունի պրոլետարիատի

դիկտատուրայի այլպիսի «թեորիայի» հետ: Այդ նշանակում ե, յերկրորդ, կուսակցության դիկտատուրան հասկանալ վոչ թե փոխարինական իմաստով, վոչ թե այն իմաստով, վոր կուսակցությունը դեկալարում ե բանվոր դասակարգին, հենց ինչպես այդ ընկ. կենինն եր հասկանում, այլ այն հասկանալ «դիկտատուրա» բառի բուն իմաստով, այսինքն՝ այն իմաստով, թե դեկավարությունը փոխարինված ե կուսակցության բնաւրյամբ բանվոր դասակարգի վրա: Վորովհետեւ ինչ բան ե դիկտատուրան այդ բառի ճշգրիտ իմաստով: Դիկտատուրան, այդ բառի ճշգրիտ իմաստով, բունության վրա հենվող իշխանություն ե, վորովհետեւ առանց բոնության տարրերի դիկտատուրա չի լինում, յեթե դիկտատուրան վերցնենք այդ բառի ճշգրիտ իմաստով: Կարմու և արդյոք կուսակցությունը լինել բոնության վրա հենվող իշխանություն իր դասակարգի նկատմամբ, բանվոր դասակարգի մեծամասնության նկատմամբ: Պարզ ե, վոր չի կարող կուսակցությունն իր դա-

ստկարգի ուցուցիչն ե, դեկավորը, առաջ-
նորդը, և վոչ թե բռնության վրա հենվող
իշխանություն բանվոր դասակարգի մեծա-
մասնության նկատմամբ: Այլապես կարիք ել
չեր լինի խոսելու համոզման մեթոդի մա-
սին իրեն բանվոր դասակարգի շարքերում
պլոյետարական կուսակցության աշխատան-
քի հիմնական մեթոդի մասին: Այլապես կա-
րիք ել չեր լինի խոսելու այն մասին, վոր
կուսակցությունը պլոյետարիատի լայն
մասսաներին պետք ե համոզի իր քաղա-
քականության ճշությանը, վոր կուսակ-
ցությունն այդ խնդիրը կատարելու ըն-
թացքում միայն կկարողանար իրեն համա-
րել իսկապես մասսայական կուսակցություն,
վորն ընդունակ ե պրոլետարիատին մարտի
տանելու: Այլապես կուսակցությունն ստիպ-
ված կլիներ համոզման մեթոդը հրամանով
և պլոյետարիատի նկատմամբ սպառնալի-
քով փոխարինելու, վոր անհեթեթ ե և վոր
բոլորովին անհամատելի յե պլոյետարիա-
տի դիկտատորայի մարքսիստական ըմ-
բռնման հետ:

Ահա թե ինչ անմոռության և հասցնում
ընկ. Զինովյանի «թեորիան» կուսակցության
դիկտատորան (ղեկավարությունը) պրոլե-
տարիատի դիկտատորայի հետ նույնացնե-
լու մասին:

Կարիք ել չկա ասելու, վոր Լենինը վոչ
մի ընդհանուր բան չունի այդ «թեորիայի»
հետ:

Հենց այդ անմոռության դեմ եյի առար-
կում յես իմ «Լենինիզմի հարցերի շուրջը»
հողվածում, յերբ հանդիս եյի գալիս ընկ.
Զինովյանի դեմ:

Գուցե ավելորդ չլինի հայտարարել վոր
այդ հողվածը գրված և տպագրության եր
հանձնված մեր կուսակցության ղեկավար
ընկերների լիակատաշ համաձայնությամբ
ու հավանությամբ:

Այսպես ե պլոյետարիատի ըստ Զինովյանի
դիկտատորայի սուաջին վերսիայի բանը:

Ահա և յերկրորդ վերսիան: Յեթի առա-
ջին վերսիան լենինիզմի խեղաթյուրումն ե
մեկ ուղղությամբ, ապա յերկրորդ վերսիան
խեղաթյուրումն ե բոլորովին ուրիշ ուղղու-

թյամբ, վորն ուղղակի հակագիր և առաջին ուղղությանը: Նա, այդ յերկըորդ վերսիան այն ե, վոր ընկ. Զինովյանվը պրոլետարիատի դիկտատուրան բնորոշում և իրքեւ դեկավարություն վնչ թե մեկ դասակարգի, վնչ թե պրոլետարների դասակարգի, այլ իրքեւ դեկավարություն յերկու դասակարգերի—բանվորների ու դյուզացիների:

Ահա թե դրա վերաբերյալ ինչ ե ասում ընկ. Զինովյանվը.

«Ներկայում դեկավարությունը, զեկը, պետական կյանքին ուղղություն աալը գտնվում է յերկու դասակարգերի—բանվոր դասակարգի ու դյուզացիության—ձեռքին» (Դ. Զինովյան, «Բանվորա-դյուզացիական դաշինքը և Կարմիր բանակը». Հըատ. «Պըիբոյ», Ե., 1925 թ., եջ 4):

Կարելի՞ յե արդյոք բացասել վոր ներակայում մեզանում գոյություն ունի պրոլետարիատի դիկտատուրա: Վահ, չի կարելի: Ինչն ե պրոլետարիատի դիկտատուրայի եյությունը մեր յերկըում: Ըստ Զինովյանվի, բանից դուրս ե գալիս, նրա եյությունն այն ե, վոր մեր յերկըի պետական կյանքը կառավարում են յերկու դասակարգեր: Հա-

մատեղելի՞ յե այս արդյոք պրոլետարիատի դիկտատուրայի մարքսիստական ըմբանման հետ: Պարզ ե, վոր անհամատեղելի յե:

Լենինն ասում ե, վոր պրոլետարիատի դիկտատուրան մեկ դասակարգի, պրոլետարների դասակարգի տիրապետությունն ե: Պրոլետարիատի ու դյուզացիության դաշինքի պայմաններում պրոլետարիատի այդ միահեծանությունը նրանով ե արտահայտվում, վոր այդ դաշինքի մեջ դեկավարող ուժ հանդիսանում ե պրոլետարիատը, նրա կուսակցությունը, վորը պետական կյանքի դեկավարումը չի բաժանում և չի կարող բաժանել մի ուրիշ ուժի կամ մի ուրիշ կուսակցության հետ: Այս ամենն այնքան տարրական ու անվիճելի յե, վոր հազիվ թե անհրաժեշտություն կա պարզաբանելու այդ տարրական բաները: Իսկ ընկ. Զինովյանվի մոտ դուրս ե գալիս, վոր պրոլետարիատի դիկտատուրան յերկու դասակարգերի դեկավարությունն ե: Այն ժամանակ ել ինչու այդ պիսի դիկտատուրան չանվաննք վնչ թե պրոլետարիատի դիկտատուրա, այլ պրոլե-

տարիստի ու գյուղացիության դիկտատուրա: Յեզ միթե պարզ չե, վոր զինովյեվյան հասկացողությամբ պըոլիտարիատի դիկտատուրայի դեպքում մենք պետք ե ունենաւ յինք յերկու կուսակցությունների դեկավարություն՝ «պետական կյանքի դեկին» մոտ կանգնած յերկու դասակարգերին համապատասխան: Ի՞նչ ընդհանուր բան կարող ե լինել ընկ. Զինովյեվի այս «թեորիայի» և պըոլիտարիատի դիկտատուրայի մարքսիստական ըմբռնման միջև:

Կարիք ել չկա ասելու, վոր Լենինը վոչ մի ընդհանուր բան չունի այդ «թեորիայի» հետ:

Յեզրակացություն. ընկ. Զինովյեվը բացահայտեն աղավաղում և պըոլիտարիատի դիկտատուրայի լինինյան ըմբռնումը, միենույն ե, խոսքը զինովյեվյան «թեորիայի» առաջին վերսիայի մասին լինի, թե յերկրորդ վերսիայի:

Ըստ. ՏՐՈՑԿՈՒ ՊԱՏԳԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յես, այնուհետև, կցանկանայի կանգ առնել ընկ. Տրոցկու միքանի յերկիմաստ

հայտարարությունների վրա, վորոնց նպատակն ե, ըստ բանի եյության, կուսակցությանը մոլորության մեջ զցել: Յես կուզենայի ընդամենը միքանի փաստ բերել:

Մեկ փաստ: Այն հարցին, թե ընկ. Տրոցկին ինչպես ե վերաբերվում իր մենշեվիկյան անցյալին, ընկ. Տրոցկին առանց իրեն վորոշ դիրք տալու չեր, վոր պատասխանց:

«Արդեն այն փաստն ինքնին, վոր յես մտել եմ բոլշևիկյան կուսակցության մեջ . . . արդեն այս փաստն ինքնին ապացուցում ե, վոր յես կուսակցության շեմքին վայր եմ դրել այն ամենը, ինչ ինձ մինչ այդ բաժանում եր բոլշևիզմից»:

Ի՞նչ ե նշանակում «կուսակցության շեմքին վայր դնել այն ամենը, ինչ» ընկ. Տրոցկուն «բաժանում եր բոլշևիզմից»: Ընկ. Ռեմմելեն իրավացի յեր, յերբ այդ առթիվ բացականչեց. «Ի՞նչպես կարելի յե այդպիսի բաներ վայր դնել կուսակցության շեմքին»: Յեվ իրոք, ինչպես կարելի յե այդպիսի աղտեղություններ վայր դնել կուսակցության շեմքին: (Նիծառ): Այդ հարցն

այնպես ել անողատառիան մնաց ընկ. Տրոց-
կու կողմից: Բացի այդ, ինչ և նշանակում
կուսակցության շեմքին վայր գնել ընկ.
Տրոցկու մենչեւկյան մնացուկները: Նա այդ
բաները կուսակցության շեմքին վայր գրել
ե արդյոք իբրև պաշար կուսակցության
մեջ ապագա մարտերի համար, թե պարզա-
պես վերցրել ե ու այրել դրանք: Ասե՞ ընկ.
Տրոցկին դրանք վայր դրած լինի կուսակ-
ցության շեմքին իբրև պաշար: Վորովհետեւ
այլալես ինչով բացատրել ընկ. Տրոցկու
այն պերմանենու տարածայնությունները
կուսակցության հետ, վորոնք սկավել են
նրա՝ կուսակցություն մտնելուց միքանի
ժամանակ անց և չեն դադարում մինչև վեր-
ջին ժամանակներս: Ինքներդ դատեցիք:
1918 թվական—ընկ. Տրոցկու տարածայնու-
թյունները կուսակցության հետ Բրեստի
հաշտության հարցում և պայքար կուսակ-
ցության ներսում: 1920—21 թ. թ. —ընկ.
Տրոցկու տարածայնությունները կուսակ-
ցության հետ արհետակցական շարժման
շուրջը և համամիութենական դիսկուսիա:

1923 թվական—ընկ. Տրոցկու տարածայնությունները կուսակցության հետ կուսակցական շինարարության և տնտեսական քաղաքականության հիմնական հարցերի շուրջը, դիսկուսիա կուսակցության մեջ:
1924 թվական—ընկ. Տրոցկու տարածայնությունները կուսակցության հետ Հոկտեմբերյան հեղափոխության գնահատության և կուսակցության ղեկավարության հարցում, դիսկուսիա կուսակցության մեջ: 1925 — 26 թ. թ.—ընկ. Տրոցկու և նրա ոպղղիցին ըլոկի տարածայնությունները կուսակցության հետ մեր հեղափոխության և ընթացիկ քաղաքականության հիմնական հարցերի շուրջը:

Արդյոք չափազանց շատ տարածայնություններ չեն մի մարդու համար, վորը «կուսակցության շեմքին վայր և զրել այն ամենը, ինչ նրան բաժանում եր բոլեկիզմից»:

Կարելի՞ յե արդյոք ասել, թե ընկ. Տրոց-
կու այդ պերմանենու տարածայնությունները կուսակցության հետ՝ ոպատճամմիր

պատահած պատահար» են, և վոչ որինաւ-
չափ մի յերկույթ:

Հազիվ թե կարելի յէ այդ ասել:

Այդ դեպքում ի՞նչ նպատակ կարող ե
ճառապնդել ընկ. Տըոցկու այդ ավելի քան
յերկիմաստ հայտարարությունը:

Յես կարծում իմ միայն մի նպատակ.
լսողների աչքերին թող փշել և մոլորության
մեջ գցել նրանց:

Մի ուրիշ փաստ: Հայտնի յե, վոր ընկ.
Տըոցկու պերմանենտ հեղափոխության թե-
որիայի հարցը պակաս կարեռ նշանակու-
թյուն չունի մեր կուսակցության գաղա-
փարախոսության տեսակետից, մեր հեղա-
փոխության հեռանկարների տեսակետից:
Հայոնի յե, վոր այդ թեորիան հավակ-
նություն ուներ և շարունակում և հավակ-
նություն ունենալ մըցելու մեր հեղափո-
խության շարժիչ ուժերի վերաբերյալ լինի-
նիզմի թեորիայի դեմ: Ուստի լիովին հաս-
կանալի յե, վոր բազմիցս դիմել ենք Տըոց-
կուն հարցով, թե ինքն այժմ, 1926 թվա-
կանին, ի՞նչ վերաբերմունք ունի դեպի

պերմանենտ հեղափոխության իր իսկ թե-
որիան: Իսկ ի՞նչ պատասխան տվեց ընկ.
Տըոցկուն կոմինտերնի պլենումում իր ար-
տառանած ճառում: Ավելի քան յերկիմաստ
մի պատասխան: Նա ասաց, վոր պերմա-
նենտ հեղափոխության թեորիան ունի վո-
րոշ «բացեր», վոր այդ թեորիայի միքանի
կողմերն արդարացում չեն գտել մեր հեղա-
փոխական պրակտիկայում: Դուքս ե գալիս,
վոր յեթե այդ թեորիայի միքանի կողմերը
«բացեր» են, ապա կան այդ թեորիայի
ուրիշ կողմեր ես, վորոնք «բացեր» չեն
և վորոնք պետք ե մնան ուժի մեջ: Բայց
ի՞նչպես բաժանենք պերմանենտ հեղափո-
խության թեորիայի միքանի կողմերը այդ
թեորիայի ուրիշ կողմերից: Միթե պերմա-
նենտ հեղափոխության թեորիան հայացք-
ների ամբողջական սիստեմ չե: Միթե
կարելի յե ուերմանենտ հեղափոխության
թեորիան դիտել իրեւ մի արկղ, վորի յեր-
կու անկյուններն, ասենք, դտել են, իսկ
մնացած յերկու անկյուններն ամբողջ ու
անվաս մնացել: Յեվ հետո, միթե այստեղ

կարելի յէ սահմանավակվել հասարակ և
վոչ մի բանի չպարտավորեցնող հայտարա-
րությամբ «բացերի» մասին առհասարակ,
չանվանելով, թե հատկապես ինչպիսի բա-
ցեր նկատի ունի ընկ. Տրոցկին և պերմա-
նենա հեղափոխության թեորիայի հատկա-
պես ինչպիսի կողմերն ենա սխալ համա-
րում, ընկ. Տրոցկին խոսում ե «պերմանենա տ
հեղափոխության թեորիայի» միքանի բա-
ցերի մասին, բայց թե հատկապես ինչպիսի
բացեր նկատի ունի նաև թե այդ թեորիայի
հատկապես ինչպիսի կողմերն ենա սխալ
համարում, — նա այդ ամենի մասին վոչ մի
խոսք չափաց: Ուստի այդ հարցի վերաբե-
րյալ ընկ. Տրոցկու արած հայտարարու-
թյունը պետք են դիտել իբրև հարցից խու-
սագրում, իբրև իրեն պրծացնելու մի փորձ
«բացերի» նկատմամբ այնպիսի յերկիմաստ
մի ֆրազով, վորը վոչնչի չի պարտավորեց-
նում ընկ. Տրոցկուն:

Ընկ Տրոցկին տվյալ դեպքում վարդից
նույն ձեռվ, ինչպես հին ժամանակները
վարվում եյին միքանի հասպիլ ոլտազամա-

խոսներ, յերբ նվաճք տվողներից
գլուխ եյին պրծացնում այնպիսի մի յեր-
կիմաստ պատասխանով, ինչպիս հետյւալն
ե. «գետն անցնելիս՝ մեծ զորք կջարդվի»:
Ինչ գետ, ում զորքը կջարդվի, —ով կարող
և, թող հասկանա: (Ծիծաղ):

Ըստ. Զինովիչեվս Մարքսի, Եւգելսի ու Լենի-
նիս Մեջբերությունը ԱՆՈՂ ԴՐՈՑԱԿԱՆԻ ԴԵՐՈՒՄ

Յես կցանկանայի, այնուհետե, միքանի
խոսք ասել մարքսիզմի կլասիկներից ընկ.
Զինովիեվի մեջբերությունը անելու հատուկ
յեղանակի մասին: Սյդ զինովյեվյան յեղա-
նակի ընորոշ գիծն այն են, զոր նրանով
իրար են խառնվում, մի կույտի մեջ են
լցվում բոլոր ժամանակաշրջաններն ու տա-
րեթվերը, Մարքսի ու Ենգելսի առանձին
գրութներն ու Գուլմուլաները կտրվում են
իրականության հետ ունեցած իրենց կեն-
դանի կապից, գարձակում են հնացած դոգ-
մաներ, և դրանով խախտվում ե Մարքսի
ու Ենգելսի հիմնական պահանջը, վորի ե-
յությունն այն են, թե «մարքսիզմը վոչ թե

դոգմա յեւ, այլ գործողության ուղեցույց»:
Ահա միքանի փաստեր:

1) Առաջին փաստ: Ընկ. Զինովյեան իր Հառում բերեց Մարքսի «Դասակարգերի պայքարը Թրանսիայում» բրոշյուրի (1848—1850 թ.թ.) հայտնի ցիտատը, վորը խոսում է այն մասին, թե՝ «բանվոր դասակարգի խնդիրը (խոսքը սոցիալիզմի հաղթության մասին եւ ի. Ս.։) անլուծելի յեւ ազգային սահմանների շրջանակներում»:

Ընկ. Զինովյեալը բերեց, այնուհետև, Մարքսի՝ Ենգելսին գրած նամակից (1858թ.) հետեւ ցիտատը.

«Մեզ համար դժվար հարցը հետեւյան եւ մայք ցամաքում հեղափոխությունն անխուսափելի յեւ և անհապաղ կընդունի սոցիալիստական բնույթ։ Արդյոք նա այս փոքրիկ անկյունում անխուսափելիորեն չի ճշմվի՝ այն բանի հետեւանքով, վար անհամեմատ ավելի լայն աերթառքիայի վրա բուրժուական հասարակության շարժումը դիոյիլս ընթանում է բարձրացող գծով¹ (աեւ կ. Մարքս և Ֆ. Ենգելս, «Նամակներ», եջ 74—75):

1 Քննդումն իմն եւ ի. Ս.։

Բնկ. Զինովյեալը բերում է Մարքսի այս ցիտատներն անցյալ գարի քառասնական ու հիմնական թվականների ժամանակաշրջանից և հանգում և այն յեզրակացության, թե նենց դրանով եւ առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթելու հարցը բացասար և լուծված կապիտալիզմի բոլոր ժամանակների ու ցրջանենուի համար։

Կարելի յեւ արդյոք ասել թե ընկ. Զինովյեալը հասկացել և Մարքսին, նրա տեսակետը, նրա հիմնական գիծը՝ առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթելու հարցում: Վ.հչ չի կարելի ասել Ընդհակառակը, այս ցիտատներից յերեւում եւ, վոր ընկ. Զինովյեալը ամենեին չի հասկացել Մարքսին, վոր նա խեղաթյուրել և Մարքսի հիմնական տեսակետը։

Մարքսի ցիտատներից բղիստմ և արդյոք, թե առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթությունն անհնարին եւ, կապիտալիզմի զարգացման ամեն տեսակի պայմաններում: Վ.հչ չի բղիստմ: Մարքսի խռովերից լոկ այն եւ բղիստմ, վոր առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթությունն անհնարին եւ մի-

միայն այն դեպքում, յեթե «բուժուական հասարակության շարժումը դեռևս ընթանում է բարձրացող գծով»: Իսկ ինչ անենք, յեթե բուժուական հասարակության շարժումն ամբողջությամբ՝ իրերի ընթացքի բերումով փոխում է իր ուղղությունը և սկսում ընթանալ իշխող գծով: Մարքսի խոսքերից բղասում ե, վոր այդպիսի պայմաններում չքանում ե առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթելու հնարավորությունը ժխտելու հիմունքը:

Ընկ. Զինսվյեվը մսուանում ե, վոր Մարքսի ցիտատները վերաբերում են մինչմոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանին, յերբ կապիտալիզմն ամբողջությամբ առաջ՝ զարգանում եր բարձրացող գծով, յերբ կապիտալիզմի աճումն ամբողջությամբ առաջ՝ չեր ընթացակցվում կապիտալիստորեն զարգացած մի այնպիսի յերկրի վտան պրոցեսով, ինչպիսին Անգլիան ե, յերբ զարգացման անհավասարաշատիության որենքը կապիտալիզմի քայլայման դործում դեռ այն հզոր գործոնը չեր և չեր

կարող լինել ինչովիսին նա դարձավ հետագայում, մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում, իմպերիալիզմի ժամանակաշրջանում: Մինչմոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանի համար միանդամայն ճիշտ են Մարքսի խոսքերն այն մասին, վոր առանձին յերկիրներում անհնարին ե բանվոր դասակարգի հիմնական խընդուի լուծումը: Յես դեռ Համեկ ԽV կոնֆերենցիային արած իմ զեկուցման մեջ ասում եյի, վոր հին ժամանակի համար, մինչմոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանի համար, առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթելու հարցը լուծվում եր բացասաբար, և միանգամայն ճիշտ եր լուծվում այն: Իսկ այժմ, կապիտալիզմի ներկա ժամանակաշրջանում, յերբ մինչմոնոպոլիստական կապիտալիզմը իմպերիալիստական կապիտալիզմի յե վերաճել—կարելի՞ յե արդյոք ասել, թե կապիտալիզմն ամբողջությամբ առաջ՝ այժմ զարգանում ե բարձրացող գծով: Վայ, չի կարելի ասել: Իմպերիալիզմի տնտեսական եյության՝ կենինի տված վեր-

լուծությունն ասում ե, վոր իմպերիալիզմի ժամանակաշրջանում բուրժուական հասարակությունն ամբողջությամբ առած՝ իջնող գծով և ընթանում: Լենինը միանգամայն իրավացի յե, յերբ ասում ե, վոր մոնուարությունական կապիտալիզմը, իմպերիալիստական կապիտալիզմը մեռնող կապիտալիզմ ե: Անա թե ինչ ե ասում դրա վերաբերյալ ընկ լենինը.

«Հասկանալի յե, թե ինչու իմպերիալիզմը մեռնող կապիտալիզմ ե, անցումնային՝ գեպի սոցիալիզմը. կապիտալիզմից են ծնունդ առնազ մոնոպոլիան արդին կապիտալիզմի մահացումն ե, նրա՝ սոցիալիզմին անցնելու սկիզբը. Աշխատանքի հակայական համբայնացումը իմպերիալիզմի կողմից (այն, ինչ ջատագովները—բուրժուական անահետեաներն անվանում են «իմպերիում»)՝ նույնն ե հաշանակում» (Լենին, ճ. XIII, եջ 470):

Մեկ բան ե՝ մինչմոնոպոլիստական կապիտալիզմը, վորն ամբողջությամբ առած՝ զարգանում ե բարձրացող գծով: Այլ բան ե՝ իմպերիալիստական կապիտալիզմը, յերբ աշխարհն արդեն բաժանված ե կապիտա-

լիստական խմբերի միջև, յերբ կապիտալիզմի թուիչքածե զարդացումը պահանջում ե արդեն բաժանված աշխարհի նոր վերաբաժանումներ ուղղման ընդհարումների կարգով, յերբ իմպերիալիստական խմբերի միջև այդ հողի վրա ծագող կոնֆլիկտներն ու պատերազմները թուլացնում են կապիտալիզմի համաշխարհային ճակատը, նրան դյուրախոցելի յեն դարձնում և այդ ճակատի ճեղքման հնարավորություն են ստեղծում առանձին յերկիրներում: Այստեղ մինչմոնոպոլիստական կապիտալիզմի որով, առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթությունն անհնարին եր, Այստեղ, իմպերիալիզմի դարաշխանում, մեռնող կապիտալիզմի ժամանակաշրջանում, առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթությունն արդեն հնարավոր ե դարձել:

Անա թե ինչումն ե բանը, ընկերներ, և անա թե ինչ չի ուզում հասկանալ ընկ. Զինովյեվը:

Դուք տեսնում եք, վոր ընկ. Զինովյեվը Մարքսից ցիտատներ ե բերում դպրոցակա-

նի պես, վորը շեղվում է Մարքսի տեսակե-
տից և Մարքսի առանձին ցիտատներից և
բունում, իսկ այդ ցիտատները նա կիրառում
և վճէ թե իրեն մարքսիստ, այլ իրեն սո-
ցիալ-դեմոկրատ:

Ինչումն և Մարքսից ցիտատներ վերց-
նելու ռեվիվիոնիստական յեղանակը՝ Մարք-
սից ցիտատներ վերցնելու ռեվիվիոնիստա-
կան յեղանակը նրանումն է, վոր Մարքսի
տեսակետը նենգափոխվում է Մարքսի՝ վորոշ
դարաշրջանի կոնկրետ պայմանների կա-
պակցությունից զուրս վերցրած առանձին
դրույթներից առած ցիտատներով:

Ինչումն և Մարքսից ցիտատներ վերց-
նելու գինովյելյան յեղանակը՝ Մարքսից
ցիտատներ վերցնելու գինովյելյան յեղա-
նակը նրանումն է, վոր Մարքսի տեսակետը
նենգափոխվում է տառով, Մարքսից վերց-
րած՝ XIX դարի հիսունական թվականների
դարգացման պայմանների հետ ունեցած
կենդանի կաղից կարլած և զոգմայի փո-
խարկված ցիտատներով:

Յես կարծում եմ, վոր այստեղ մեկնա-
բանություններն ավելուրդ են:

2) Յերկրորդ փաստ: Ընկ. Զինովյեվը
ցիտատ և բերում «Կոմունիզմի սկզբունքնե-
րից» (1847 թ.) Ենգելսի խոսքերն այն
մասին, վոր բանվորական հեղափոխությու-
նը «չի կարող տեղի ունենալ վորեւ մեկ
յերկրում», Ենգելսի այդ խոսքերը զուգա-
պըսմ և Համեկ ԽV կոնֆերենցիալում իմ
արած հայտարարության հետ, թե՛ մենք
ԽՍՀՄ-ում արդեն իրականացրել ենք այն
տասներկու պահանջների իննը տասնորդա-
կանը, վոր Ենգելսն և առաջադրում, և
այստեղից անում ե յերկու յեղակացու-
թյուն. նախ այն մասին, թե առանձին
յերկիրներում սոցիալիզմի հաղթությունն
անհնարին է, յերկրորդ՝ այն մասին, թե
յես իմ հայտարարության մեջ զունազար-
դում եմ ժամանակակից պայմանները ԽՍՀՄ-
ում:

Ինչ վերաբերում և Ենգելսից բերած ցի-
տատներին, ապա պետք ե ասել վոր այս-
տեղ ընկ. Զինովյեվը նույն սխալն և գոր-

ծուռմ ցիսաստները մեկնաբանելիս, ինչուիսի
սխալ նա Մարքսի նկատմամբ եր թույլ
տվել: Հասկանալի յե, վոր մինչմոնոպոլիս-
տական կապիտալիզմի ժամանակաշրջանում,
բուրժուական հասրակության՝ ամրողու-
թյամբ առած բարձրացող գծով զարգանա-
լու ժամանակաշրջանում Ենգելսը պետք է
հանգեր առանձին յերկիրներում սոցիալիզ-
մի հաղթելու հնարավորության հարցը բա-
ցասրար լուծելուն: Կապիտալիզմի հին ժա-
մանակաշրջանի համապատասխանությամբ
առած՝ Ենգելսի այս դրույթը մեխանի-
կորեն տարածել կապիտալիզմի նոր ժամա-
նակաշրջանի վրա, իմպերիալիստական ժա-
մանակաշրջանի վրա,—այդ նշանակում և
Ենգելսի ու Մարքսի տեսակետը խեղաթյու-
րել ի հաճույս տառի, ի հաճույս առանձին
ցիտարի, վոր վերցված և զարգացման ռեալ
պայմանների կապակցությունից դուրս՝ մինչ-
մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանա-
կաշրջանում: Յես Համեկ ԽՎ կոնֆերեն-
ցիայում արածո գեկուցման մեջ արդեն ասել
եմ, վոր Ենգելսի այդ փորմուլան իր ժամա-

նակի միակ ճիշտ փորմուլան եր: Բայց
պետք ե ախը հասկանալ վոր չի կարելի
մեկ մակարդակի վրա դնել անցյալ դարի
40-ական թվականների ժամանակաշրջանը,
յերբ խոսք չեր կարող լինել մեռնող կապի-
տալիզմի մասին, կապիտալիզմի զարգացման
ներկա ժամանակաշրջանի հետ, իմպերիա-
լիզմի ժամանակաշրջանի հետ, յերբ կապի-
տալիզմն ամբողջությամբ առած՝ մեռնող
կապիտալիզմն եւ Միթե դժվար ե հասկանալ
վոր այն, ինչ այն ժամանակ անհնարին եր
համարվում, այժմ, կապիտալիզմի նոր պայ-
մաններում, դարձել ե հնարավոր և անհրա-
ժեշտ:

Դուք տեսնում եք, վոր այստեղ ևս Են-
գելսի վերաբերմամբ նույնպիս, ինչպիս և
Մարքսի վերաբերմամբ, ընկ. Զինովյեվը
հավատարիմ ե մնացել մարքսիզմի կլասիկ-
ներից ցիտաներ բերելու իր ունվագիոնիս-
տական յեղանակին:

Իսկ ինչ վերաբերում ե ընկ. Զինովյե-
վի յերկրորդ յեղակացությանը, ապա նա
Ենգելսի ուղղակի խեղաթյուրում ե թույլ

տովել՝ բանվորական հեղափոխության գծով
նրա 12 պահանջների կամ միջոցառումնե-
րի նկատմամբ Ընկ. Զինովյեվը գործն
այնպես և պատկերում, վոր իրը Ենգելսն
իր 12 պահանջների մեջ տալիս և սոցիա-
լիզմի ծավալուն ծրագիրը ընդհուպ մինչև
դասակարգերի վոչնչացումը, ապրանքային
արտադրության վոչնչացումը և, կնշանակի,
պետության վոչնչացումը։ Այդ միանգամայն
սիստեմ եւ Դա Ենգելսի լիակատար խեղա-
թյուրումն եւ Ենգելսի 12 պահանջների մեջ
վոչ մի խոսք անգամ չկա վոչ դասակարգե-
րի վոչնչացման մասին, վոչ ապրանքային
տնտեսության վոչնչացման մասին, վոչ
պետության վոչնչացման մասին, վոչ ել
մասնավոր սեփականության բոլոր ու ամեն
տեսակի ձևերի վոչնչացման մասին։ Ընդ-
հակառակը, Ենգելսի 12 պահանջները յել-
նում են «դեմոկրատիայի» գոյությունից
(Ենգելսը «դեմոկրատիա» ասելով այն ժա-
մանակ հասկանում եր պրոլետարիատի դիկ-
տատուրա), դասակարգերի առկայությու-
թյունից և ապրանքային տնտեսության

առկայությունից։ Ենգելսն ուղղակի ասում
է, վոր իր 12 պահանջները նկատի ունեն
անմիջական «վոտնձգություն մասնավոր
սեփականության դեմ» (և վոչ թե նրա
լիակատար վոչնչացում) և «պրոլետարիա-
տի գոյության ապահովում» (և վոչ թե պրո-
լետարիատի իրը դասակարգի՝ վոչնչա-
ցում)։ Ահա Ենգելսի խոսքերը.

«Գրուետարշատի հեղափոխությունը, վորը, ամե-
նայն հավանականությամբ, տեղի կունենա, կկարո-
ղանա միայն աստիճանաբար փոխակերպել ներկա-
յիս հասարակությունը և միմիայն դրանից հետո կփե-
րացնի մասնավոր սեփականությունը, յերբ արդեն
ստեղծված կլինի դրա համար անհրաժեշտ՝ արտա-
դրության միջոցների մասնան... Ամենից առաջ նա
կսակագի դեմոկրատական հասարակակարգ և հենց
զրանով եր ուղղակի թե անուղղակի, պրոլետարիա-
տի քաղաքական տերապետություն... Դեմոկրա-
տիան բոլորովին անոգուա կլինի պրոլետարիատի
համար, յեթե անհապաղ չոգտվենք նրանից իբրև
այնպիսի լայն միջոցառություն կիրառելու միջոցից,
վորոնք անմիջականորեն վունձգություն են անում
մասնավոր սեփականության դեմ յեկ ապահովում են
պրոլետարիատի գոյությունը¹։ Այդ գլխավորագույն

¹ Ընդգծ ծումն ամենուրեք իմ եւ ի. ՍՅ.

միջոցառութեալը, վորոնք անհսաժեշտաբար բղխաւմ
են ներկայումս գոյություն ունեցող պայմաններից,
հետեւալներն ենու Յեկ այնուհետև զալիս և արդեն
հայտնի 12 պահանջների կամ միջոցառութեալը
թվարկումը (տես Սնդելս, «Կոմունիզմի սկզբունք-
ները»):

Դուք տեսնում եք, այսպիսով, վոր Են-
գելսի մոտ խոսքը վերաբերում ե վճա թե
սոցիալիզմի ծավալուն ծրագրին՝ դասակար-
գերի, պետության, ապրանքային արտա-
դրության վոչնչացումով և այլն, այլ սո-
ցիալիստական հեղափոխության առաջին
ժայռին, այն առաջին միջոցառումներին,
վորոնք անհրաժեշտ են մասնավոր սեփա-
կանության գեմ անմիջական վոտնագու-
թյուն կատարելու, բանվոր դասակարգի
գոյությունն ապահովելու և պրոլետարիատի
քաղաքական տիրապետությունն ամրացնե-
լու համար:

Յեղրակացությունը մեկ և. ընկ. Զինով-
յելը խեղաթյուրել ե Ենգելսին, նրա 12
պահանջները բնութագրելով վորպես սո-
ցիալիզմի ծավալուն ծրագիր:

Ինչի մասին եյթ խոսում յես իմ յեղ-
րափակման խոսքի մեջ Համ ԿԿ Խոնֆե-
րենցիայում: Այն մասին, վոր սոցիալիս-
տական հեղափոխության առաջին քայլերը
հանդիսացող ենգելայան պահանջների կամ
միջոցառումների ^{9/10-ը} մեղանում, ԽՍՀՄ-ում,
արդեն իրականացված են:

Արդյոք այդ նշանակում ե, թե մեղա-
նում սոցիալիզմն արդեն իրականացված է:
Պարզ բան ե, վոր չի նշանակում:

Հետեւաբար, ընկ. Զինովյելը, ցիտատ
բերելու իր յեղանակին հավատարիմ, «վոք-
րիկ» խարդախում ե թույլ տվել Համ ԿԿ ԽՎ
կոնֆերենցիայում իմ արած հայտարարու-
թյան նկատմամբ:

Ահա թե ինչի յե հասցնում ընկ. Զի-
նովյելին Մարքսից ու Ենգելսից ցիտատ-
ներ բերելու նրա սպիցիֆիկ յեղանակը:

Խոսելով ցիտատներ բերելու այդ յեղա-
նակի մասին, յես մի բավական ծիծաղելի
վերսիա յեմ հիշում, վորը մի ժամանակ մե-
ծապես տարածված եր հեղափոխական սին-
դիկալիստների շրջանում և վորը մի ժա-

մանակ պատմել և մի շվեդացի հեղափոռ
խական սինդիկալիստ Ստոկհոլմում։ Դեպքը
լնում է 1906 թ. մեր կուսակցության
Ստոկհոլմի համագումարի ժամանակ։ Այդ
շվեդ ընկերն իր պատմվածքում բավական
ծիծաղելի պատկերում էր սոցիալ-դեմոկրատ-
ների՝ Մարքսից ու Ենգելսից ցիտատ բե-
րելու յեղանակը, իսկ մենք, համագումարի
պատգամավորներս, լսելով նրան, ծիծա-
ղից թուլանում երինք։ Ահա այդ վերսիստիկ
րովանդակությունը։ Գործը կատարվում է
Դրիմում նավատորմի ու հետեազորի ապլու-
տամբության ժամանակ։ Գալիս են նավա-
տորմի ու հետեազորի ներկայացուցիչները
և ասում սոցիստ-դեմոկրատներին։ դուք
վերջին տարիներս մեզ կոչ եյք առում
ապստամբելու ցարիզմի դեմ։ մենք համոզ-
վեցինք, վոր ձեր կոչն իրավացի յի, մենք,
նավատամիներ ու հետեակ խոսք մեկ ենք
արել ապստամբիում և այժմ դիմում ենք
ձեր խորհ. դին։ Սոցիալ-դեմոկրատներն ան-
հանգստացան և պատասխանեցին, վոր ի-
րենք չեն կարող առանց հատուկ կոնֆե-

րենցիայի լուծել ապստամբության հարցը։
Նավատամիները հասկացնել տվին, վոր դան-
դաղել չի կարելի, վոր զործն արդեն պատ-
րաստ է, և յեթե իրենք ուղղակի պատաս-
խան չստանան սոցիալ-դեմոկրատներից, իսկ
սոցիալ-դեմոկրատները չստանձնեն ապլու-
տամբության դեկավարությունը, ապա զոր-
ծը կարող է վիճել Նավատամիներն ու զին-
վորները հեռացան՝ դիրեկտիվների սպառ-
լով, իսկ սոցիալ-դեմոկրատները կոնֆե-
րենցիա հրավիրեցին՝ հարցը քննարկելու
համար։ Վերցրին «Կապիտալի» առաջին
հատորը, վերցրին «Կապիտալի» յերկրորդ
հատորը, վերցրին, վերջապես, «Կապիտալի»
յերրորդ հատորը։ Ցուցումներ են վորոնում
Դրիմի, Սեվատապոլի վերաբերյալ։ Դրիմի
ապստամբության վերաբերյալ Բայց վհչ
մի, տառացիորեն վհչ մի ցուցում չեն գրա-
նում «Կապիտալի» յերեք հատորներում վհչ
Սեվատապոլի մասին, վհչ Դրիմի մասին,
վհչ նավատամիների ու զինվորների ապլու-
տամբության մասին։ (Ծիծող)։ Թերթում
են Մարքսի ու Ենգելսի ու բիշ յերկերը,

Առցիւթյուն

ցուցումներ են վորոնում,— միւնույն ե,
վոչ մի ցուցում չգտնվեց: (Ծիծաղ): Ի՞նչ—
ակես պետք ե լինի: Իսկ նավաստիներն
արդեն յեկել են, պատասխանի յեն սպա-
սում: Յեզ լինչ: Սոցիալ-դեմոկրատները
հարկադրված յեղան խոստվանելու, վոր
այլպիսի իրադրության ժամանակ իրենք
ի վիճակի չեն վորեն ցուցում տալու նա-
վաստիներին ու դինվորներին: «Այսպիս
ձախողվեց նավաստորմի ու հետևազորի ու-
ղղատամբությունը»,— վերջացրեց իր պատ-
մությունը շվեդացի ընկերը: (Ծիծաղ):

Անտարակուսելի յե, վոր այդ պատմված-
քի մեջ մեծ չափազանցումներ կան: Բայց
անտարակուսելի յե նաև այն, վոր այդ
պատմվածքը բավական դիտուկ կերպով ե
ըմբռնում Մարքսից ու ենգելսից ցիտատ
բերելու զինովյեվյան յեղանակի հիմնական
հիմանդրությունը:

3) Եերբորդ փաստ: Խոսքը վերաբերում
է Լենինի յերկերից բերած ցիտատներին:
Ի՞նչ ասես չարեց ընկ. Զինովյեվը, վորպիս-
դի Լենինից ցիտատների մի ամբողջ կույտ

ալուծովի ու «ՀՀմեցնի» ունկնդիրներին: Զի-
նովյեվը յերեկի կարծում ե, թե ինչքան
շատ ցիտատ լինի, այնքան ավելի լավ,
ընդունելի նա քիչ ե հաշվի առնում, թե
ինչի մասին են խոսում ցիտատները և դե-
պի ուր են տանում: Այսինչ, յեթե խորանաք
այդ ցիտատների ընթերցման մեջ, ապա
դժվար չե հասկանար վոր Զինովյեվը Լե-
նինից վոչ մի ցիտատ չըերեց, վորը, թե-
կուզ ակնարկով, խոսեր հոգուտ ողողիցիոն
բլոկի ներկա կապիտուլանտական դերքի:
Հարկ ե նշել, վոր ընկ. Զինովյեվը ինչ-վոր
պատճառով չըերեց Լենինի հիմնական ցի-
տատներից մեկն այն մասին, վոր դիկտա-
տուրայի «անտեսական պրոբլեմի» իրակա-
նացումը, ԽՍՀՄ-ի պրոլետարիատի հաղ-
թությունն այդ պրոբլեմի իրականացման
դորժում, պետք ե ապահովված համարել:

Ընկ. Զինովյեվը Լենինի «Կոռպերացիա-
յի մասին» բրոշյուրից մի ցիտատ ըերեց,
վորը խոսում ե այն մասին, վոր մեղանում,
ԽՍՀՄ-ում, անհրաժեշտ ու բավական ամեն
ինչ կա լիակատար սոցիալիստական հասա-

բակություն կառուցելու համար։ Բայց նա
փորձ չարեց մատշմատի խփելու, վորպեսզի,
թիկուղ ակնարկով, դնի այս հարցը։ դեպի
ինչ և տանում արդ ցիտատը և ում ոգտին
և նա ըերված՝ ոպոզիցիոն բլոկի ոգտին,
թե Համեն ոգտին։

Ընկ. Զինովյեվս աշխատում եր ապացու-
ցել թե սոցիալիստական շինարարության
հաղթությունը մեր յերկրում անհնարին ե,
բայց այդ դրույթին իրրե ապացույց լենի-
նից այնպիսի ցիտատներ բերեց, վորոնք
գլխիվայր են շրջում ընկ. Զինովյեվի դրույթը։
Ահա, որինսկի, այդպիսի ցիտատներից
մեկը։

«Ես հարկ եմ ունեցել բազմիցս ասելու, առա-
ջապր յերիշների համեմատությամբ՝ ոռւսների հա-
մար ավելի հետ եր պրոլետարական ժեծ հեղափո-
խությունն սկսել, բայց նրանց համար ավելի դժվար
կլինի շարունակել այն և հասցնել վերջնական հաղթա-
նակի՝ սոցիալիստական հասարակության լիակատար
կուկմակւրպման իմաստվա»¹ (Լենին, հ. XVI, եջ
184—185)։

Ընկ. Զինովյեվը նույնիսկ չի մտածել
այն մասին, վոր այդ ցիտատը խոսում ե
վհչ թե ոպոզիցիոն բլոկի ոգտին, այլ կու-
սակցության ոգտին, վորովհետև նրանում
խոսվում ե վհչ թե ԽՍՀՄ-ում սոցիալիզմ
կառուցելու անհնարինության մասին, այլ
այդ կառուցման դժվարությունների մասին,
ընդպորում այդ ցիտատի մեջ ԽՍՀՄ-ում սո-
ցիալիզմ կառուցելու հնարավորությունն
ընդունվում ե իրրե ինքնին հասկանալի մի
բան։ Կուսակցությունը միշտ ել ասել ե,
վոր ԽՍՀՄ-ում հեղափոխություն սկսելն ա-
վելի հեշտ կլինի, քան արևմտայերոպական
կապիտալիստական յերկիրներում, բայց սո-
ցիալիզմ կառուցելն ավելի դժվար կլինի։
Արդյոք այս նշանակում ե, թե այս փաստն
ընդունելը հավասարագոր ե ԽՍՀՄ-ում սո-
ցիալիզմ կառուցելու հնարավորությունը
ժխտելուն։ Իհարկե, չի նշանակում։ Ընդհա-
կառակը, այս փաստից միայն այն յեղրա-
կացությունն ե բղխում, վոր ԽՍՀՄ-ում
սոցիալիզմ կառուցելը լիովին հնարավոր

¹ Հնդգետություն իմն եւ Ի. Սօ.,

և և անհրաժեշտ, չնայած դժվարություններին:

Հարց ե առաջ գալիս. բնկ. Զինովյանին
ինչի՞ համար պետք յեկան այդպիսի ցի-
տատները:

Յերեկի նրա համար, վորպեսզի ունկընո-
դրին «շշմեցնի» ցիտատների կույտով և
ջուր պղտորի: (Ծիծաղ):

Բայց այժմ, կարծում եմ, տղարդ ե, վոր
ընկ. Զինովյանինը չհասավ իր նպատակին, վոր
նրան ամենաաներկմիտ կերպով՝ սխալեցրել
և մարքսիզմի կլասիկներից ցիտատներ բե-
րելու նրա ավելի քան ծիծաղելի յեղանակը:

ՈԵՎԻԶԻՈՆԻՑՄ ԸՆ ԶԻՆՈՎՅԵՎԻ

Վերջապես, միքանի խոսք «ուելիզիոնիզմ» գաղափարի զինովյանին մեկնա-
բանության մասին: Հստ Զինովյանի դուրս և
գալիս, վոր Մարքսի կամ Ենգելսի հին ֆորմուլաների կամ առանձին գրութների
ամեն մի լավացում, ամեն մի ճշգրտում, իսկ
առավել ևս նրանց փոխարինումը նոր պայ-
մաններին համապատասխանող ուրիշ ֆոր-

մուլաներով, ոեվիզիոնիզմ ե: Ինչու, հարց
ե տրվում: Միթե մարքսիզմը գիտու-
թյուն չե, և միթե գիտությունը չի
զարգանում, հարստանալով նոր փորձով
և լավացնելով հին ֆորմուլաները: Վո-
րովիշեան, բանից գուրս և գալիս, «ուելիզիա»
նշանակում և «վերանայում», իսկ հին ֆոր-
մուլաների լավացումն ու ճշգրտումը չե կա-
րող կատարվել առանց այդ ֆորմուլաների
վորոշ վերանայման, ուրիշն, հին ֆորմուլա-
ների ամեն մի ճշգրտում ու լավացում,
մարքսիզմի ամեն մի հարստացում նոր փոր-
ձով ու նոր ֆորմուլաներով՝ ոեվիզիոնիզմ
ե: Այդ ամենն, իհարկե, ծիծաղելի յե: Բայց
ինչ անել ընկ. Զինովյանին, յեթե նա ինքն և
իրեն ծիծաղելի դրության մեջ դնում և
միաժամանակ յերևակայում, թե պատերազ-
մում ե ոեվիզիոնիզմի դեմ:

Որինակ, Սատալինն իրավունք ուներ ար-
դյոք փոփոխելու և ճշգրտելու հենց իր
սեփական ֆորմուլան մեկ յերկրում սոցի-
ալիզմի հաղթության մասին (1924թ.)՝ լի-
ովին համապատասխան լինինիզմի ցուցում-

ներին և հիմնական գծին: Ըստ Զինովյեվի
դուրս ե գալիս, վոր իրավունք չուներ: Ին-
չու: Վորովհետև հին ֆորմուլայի փոփոխութիւն
ու ճշգրտումը այդ ֆորմուլայի վերա-
նայում ե, իսկ վերանայում գերմաներեն
նշանակում եռեվիղիա: Պարզ չէ արդյոք,
վոր Մտալինը ռեվիզիոնիզմի մեջ ե ընկեր:

Դուրս ե գալիս, այսպիսով, վոր մենք
ունենք ռեվիզիոնիզմի մի նոր զինովյեվյան
չափանիշ, վորը ռեվիզիոնիզմի մեղադրանքի
յերկյուղի տակ մարքսիստական միտքը լի-
ակատար անշարժության ե մատնում:

Յեթե, որինակ, Մարքսն անցյալ դարի
կեսերին ասում եր, վոր կապիտալիզմի
դարգացման բարձրացող գծի ժամանակ սո-
ցիալիզմի հաղթությունն ազգային սահման-
ներում անհնարին ե, իսկ Լենինը XX դարի
15 թվականին ասաց, վոր կապիտալիզմի
դարգացման իջնող գծի ժամանակը, մահացող
կապիտալիզմի ժամանակ, այդպիսի հաղ-
թությունը հնարավոր ե, — ապա դուրս ե
գալիս, վոր Լենինը Մարքսի վերաբերմամբ
ռեվիզիոնիզմի մեջ ե ընկեր:

Յեթե, որինակ, Մարքսն անցյալ դա-
րի 50-ական թվականներին ասում եր, վոր
«յեվրոպական մայր ցամաքի ուղածդդ յերկրի
կամ նույնիսկ առանց Անգլիայի՝ յեվրո-
պական ամբողջ մայր ցամաքի» սոցիալիս-
տական «հեղաշրջումը միմիշյն փոթորիկ ե
մեկ բաժակ ջրի մեջ», իսկ ենգելսը, հաշվի
առնելով դասակարգային կովի նոր փորձը,
հետագայում փոփոխեց այդ դրույթը, ասե-
լով, վոր սոցիալիստական հեղափոխությունը
«կոկոի ֆրանսիացին, իսկ գերմանացին կա-
վարուի», — ապա դուրս ե գալիս, վոր են-
գելսը Մարքսի վերաբերմամբ ռեվիզիոնիզ-
մի մեջ ե ընկեր:

Յեթե ենգելսն ասում եր, վոր ֆրան-
սիացին կոկոի սոցիալիստական հեղափո-
խությունը, իսկ գերմանացին կավարուի,
մինչդեռ Լենինը, հաշվի առնելով ԽՍՀՄ-ում
հեղափոխության հաղթելու փորձը, փոփոխեց
այդ ֆորմուլան և մի ուրիշով փոխարինեց,
ասելով, վոր ուռան սկսեց սոցիալիստական
հեղափոխությունը, իսկ գերմանացին,
ֆրանսիացին, անգլիացին կավարուն, — ա-

պա դուրս եւ գալիս, վոր Լենինը Ենգելսի
վերաբերմամբ և առավել ևս Մարքսի վե-
րաբերմամբ ունվիզիոնիզմի մեջ եւ ընկեր:

Ահա, որինակ, գրա վերաբերյալ Լենինի
խոսքերը.

«Սոցիալիզմի մեծ հիմնագերները, Մարքսն ու
Ենգելսը, մի շաբթ տասնամյակների ընթացքում
դիտելով բանվորական շարժման զարդարումը և հա-
մաշխարհային սոցիալիստական հեղափոխության ա-
ռումը, պարզ տեսնում եյին, վոր անցումը կապի-
տալիզմից դեպի սոցիալիզմ կապհանջմբ յերկունքի
յերկարատե տանջանքներ, ամեն հին բանի բեկման
յերկար ժամանակաշրջան, կապիտալիզմի բոլոր ձեւերի
անինա վոչչացում, վոր գրա համար անհրաժեշտ
և բոլոր յերկիրների բանվորների համագործակցու-
թյունը, վորոնք պետք է իրենց բոլոր ջանքերը մի-
ախառնեն, վորակեսդի ապահովեն հաղթությունը մին-
չև վերջ, Յեկարանք ասում եյին. «Թրանսիրացին
կակսի, իսկ գերմանացին կավարտի», — Փրանսիացին
կակսի, վորովհետև հեղափոխության տասնամյակների
ընթացքումնաեր մեջ մշակել և հեղափոխական գոր-
ծողության այն անձնվեր նախաձեռնությունը, վորը
նրան դարձել և սոցիալիստական հեղափոխության
ավանդաբեր։

Մենք այժմ միջազգային սոցիալիզմի ուժերի
սուրբի համակցություն ենք տիսնում Մենք ասում

ենք, վոր շարժումն ամենից ավելի հեշտ սկսվում է
այն յերկիրներում, վորոնք չեն պատկանում ջահա-
գործող այն յերկիրների թվին, վորոնք հնարավո-
րություն ունեն ավելի հեշտ կողովտնութ և կարո-
ղանում են կաշառել իրենց բանվորների վերնախավե-
րին... Պարծերը դասավորվել են այլ կերպ, բան Մարքսն
ու Նեգելսն ելին սպասում ¹. Նրանք մեզ ոռուա-
կան աշխատավորներիս ու շահագործվող դասակար-
գերին, տվին միջազգային սոցիալիստական հեղա-
փոխության ավանդարդի պատվավոր դերը, և մենք
այժմ պարզ տեսնում ենք, թե ինչպես հնուուն կեր-
թա հեղափոխության զարգացումը, ոռուն ակսեց—
դերմանացին, Փրանսիացին, անգլիացին կավարտի և
սոցիալիզմը կեաղթանակի»... (Լենին, հ. XV,
եջ 87—88):

Դուք տեսնում եք, վոր Լենինն այստեղ
ուղղակի «վերանայում ե» Ենգելսին ու
Մարքսին՝ ընկնելով «ուելիդիոնիզմի» մեջ։

Յեթե, որինակ, Ենգելսն ու Մարքսը
Փարիզի կոմունան բնորոշեցին իրեւ պրոլե-
տարիատի զիկտատուրա, վորին, ինչպես
հայտնի յե, զեկավարում եյին յերկու կու-
սակցություն, վորոնցից վոչ մեկը մարքս
սիստական չեր, իսկ Լենինը, հաշվի առնե-

¹ Ընդգծումն իմ՝ հ. ԱՏ, 1

լով դասակարգերի պայքարի նոր փորձը
իմպերիալիզմի պայմաններում, հետո ասաց,
վոր պլութարիատի փոքրիշատե զարգա-
ցած դիկտատուրա կարող ե իրականացվել
միայն մեկ կուսակցության, մարքսիզմի կու-
սակցության ղեկավարության ժամանակ,—
ապա դուրս ե գալիս, վոր կենինը Մարք-
սի ու Ենգելսի վերաբերմամբ ընկել ե բացա-
հայտ ուեվիպիռնիզմի մեջ:

Յեթե կենինը իմպերիալիստական պա-
տերազմից առաջ յեղած ժամանակաշրջա-
նում ասում եր, վոր Փեղերացիան պե-
տական կառուցվածքի անընդունելի տիպ
ե, իսկ 1917 թ., հաշվի առնելով պրոլետա-
րիատի պայքարի նոր փորձը, փոփոխեց, վե-
րանայեց այդ փորմուլան, ասելով, վոր դե-
պի սոցիալիզմ անցնելիս Փեղերացիան պե-
տական կառուցվածքի նպատակահարմար
տիպ ե, — ապա դուրս ե գալիս, վոր կենինը
ուեվիպիռնիզմի մեջ ե ընկել ինքն իր և լե-
նինիզմի վերաբեմամբ:

Յեղ այլն, և այլն:

Հստ Զինովյանի դուրս ե գալիս, այսպի-

սով, վոր մարքսիզմը չպետք ե հարստանա-
նոր փորձով, վոր մարքսիզմի այս կամ այն
կլասիկների առանձին դրույթների ու փոր-
մուլաների ամեն մի լավացում ռեվիզիոնիզմ ե:

Ի՞նչ բան ե մարքսիզմը: Մարքսիզմը գի-
տություն ե: Մարքսիզմը կարող ե արդյոք
պահպանվելու զարգանալ իրեւ գիտություն,
յեթե նա չհարստանա պլութարիատի դա-
սակարգային կովի նոր փորձով, յեթե նա
չմարսի այդ փորձը մարքսիզմի տեսակետից,
մարքսիստական մեթոդի տեսանկյունով: Պարզ
ե, վոր չի կարող:

Դրանից հետո պարզ չէ միթե, վոր
մարքսիզմը պահանջում ե լավացնել ու
հարստացնել հին ֆորմուլաները նոր փորձի
հաշվառքի հիմունքով՝ պահպանելով մարք-
սիզմի տեսակետը, պահպանելով նրա մեթոդը,
իսկ Զինովյանը վարդում ե ընդհակառակը,
պահպանելով տառը և մարքսիզմի առանձին
դրույթների տառով նենդափոխելով մարք-
սիզմի տեսակետը, նրա մեթոդը:

Ի՞նչ ընդհանուր բան կարող ե լինել
իսկական մարքսիզմի և մարքսիզմի հիմնա-

կան գիծը առանձին փորմուլաների առառով ու մարքսիզմի առանձին դրույթներից առած ցիտատներով նենդափոխելու միջև կարելի յե կասկածել միթե, վոր այդ վհչ թե մարքսիզմ ե, այլ մարքսիզմի ծաղրանկար:

Մարքսն ու Ենդելսը հենց այնպիսի «մարքսիստներ» ունեին նկատի, ինչպես ընկ. Զինովյենս ե, յերբ ասում եյին. «Մեր ուսմունքը գողմա չե, այլ գործողության ուղեցույց»:

Ընկ. Զինովյենի դժբախտությունն այն ե, վոր նա չի հասկանում Մարքսի ու Ենդելսի այդ խոսքերի իմաստն ու նշանակությունը:

II. ԱՐԱՆՁԻՆ ԿԱՐԻՏԱԼԻՍԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Յես խոսում եյի ոպողիցիայի առանձին սխալների և ոպողիցիայի լիդերների ճառերի մեջ նկատված փաստական անճառությունների մասին: Յես աշխատեցի այդ հարցը յեզրափակման խոսքի առաջին մասում սպառել առանձին դիտողությունների ձևով: Այժմ թույլ տվեք ուղղակի անցնել գործի եյությանը:

ՊՐՈԼԵՏԱՐԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ
ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Առաջին հարցը — իմպերիալիզմի ժամանակաշրջանում կապիտալիստական առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթելու

հնարավորության հարցն ե: Խոսքն, ինչպես
տեսնում եք, վհշ թե մեկ վորեւ յերկրի
մասին ե, այլ բոլոր քիչ թե շատ զարգա-
ցած կապիտալիստական յերկիրների մասին:

Վժըն ե ոպողիցիայի հիմնական սխալը
կապիտալիստական առանձին յերկիրներում
սոցիալիզմի հաղթանակելու հարցում:

Ոպողիցիայի հիմնական սխալն այն ե,
վոր նա չի հասկանում կամ չի ուզում հաս-
կանալ մինչիմպերիալիստական կապիտալիզ-
մի և իմպերիալիստական կապիտալիզմի մի-
ջև յեղած ամբողջ տարբերությունը, նա չի
հասկանում իմպերիալիզմի տնտեսական ելու-
թյունը և շփոթում ե միմյանց հետ կապի-
տալիզմի յերկու տարբեր փուլերը — մինչ-
իմպերիալիստական փուլը իմպերիալիստա-
կան փուլի հետ:

Ոպողիցիայի այդ սխալից բղխում ե
նրա մի ուրիշ սխալը, վորի եյությունն
այն ե, վոր նա չի հասկանում իմպերիալիզ-
մի ժամանակաշրջանում զարգացման ան-
հավասարաչափության որենքի իմաստն ու
նշանակությունը, այդ որինքին հակադրում

ե դեպի համահարթումն յեղած տենդենցը և,
այդպիսով, գլորվում ե ուլտրա-իմպերիալիզմ
մի կառւցկիական դիրքը:

Այդ յերկու սխալները տանում են դեպի
ոպողիցիայի մի յերրորդ սխալը, դեպի այն
սխալը, վոր նա մինչիմպերիալիստական կա-
պիտալիզմի հիմքի վրա աճած ֆորմուլաներն
ու դրություները մեխանիկորեն տարածում ե
իմպերիալիստական կապիտալիզմի վրա,
վորի շնորհիվ ել նա հանգում ե կապիտա-
լիստական առանձին յերկիրներում սոցիա-
լիզմի հաղթության հնարավորությունը ժըխ-
տելուն:

Ինչի՞ մեջ ե հին, մինչմոնոպոլիստական
կապիտալիզմի և նոր, մոնոպոլիստական
կապիտալիզմի միջև յեղած տարբերությու-
նը, յեթե այդ տարբերությունն արտահայ-
տենք յերկու բառով:

Նրա մեջ, վոր ազատ մրցման միջոցով
կատարվող զարգացումը փոխարինվել ե կա-
կապիտալիստաների մոնոպոլիստական վիթ-
խարի միությունների միջոցով կատարվող
զարգացումով, վոր հին, «կուլտուրական»,

«առաջադիմական» կապիտալը փոխարինվել է ֆինանսական կապիտալով, «փողոց» կապիտալով, վոր կապիտալի «խաղաղ» ընդլայնումը և «ազատ» տերիտորիաների վրա տարածվելը փոխարինվել է թոփչքածե զարգացումով, արդեն բաժանված աշխարհը ուղամական ընդհարումների միջոցով կապիտալիստական խմբերի միջև վերաբաժանելու միջոցով կատարվող զարգացումով, վոր հին կապիտալիզմը, վորն ամբողջությամբ առաջ՝ զարգանում եր բարձրացող գծով, փոխարինվել ե, այսպիսով, մահացող կապիտալիզմով, կապիտալիզմով, վորն ամբողջությամբ առաջ՝ զարգանում ե իջնող գծով:

Անա թե ինչ է ասում Լենինը սրա վերաբերյալ.

«Հիշենք, թե ինչի վրա յե հիմնված կապիտալիզմի նախընթաց, «խաղաղ» ժամանակաշրջանի փոխարինումը արդիականով, իմակերխալիստականով. նրա վրա, վոր ազատ մրցությունը տեղը գեշել է կտպիտալիստների մոնոպոլիստական միություններին, և նրա վրա, վոր ամբողջ յերկրային աշխարհը (յերկրագննդը: Ի. Աս.) բաժանված է: Պարզ ե, վոր այդ յերկրու փաստերը (և գործոններն) ելիբոք համաշը-

հային նշանակություն ունեն. ազատ առևտուրն ու խաղաղ մրցումը հնարավոր և անհրաժեշտ ելին, քանի զեռ կապիտալը կարողանում եր անարգել մեծացնել գաղութները և Ավրիկայումու այլուր չզրավված հողեր զավթել, ընդգործում կապիտալի համակենարկունացումը զեռ թույլ եր, մոնոպոլիստական ձեռնարկություններ, այսինքն՝ այնպիսի վիթխարի ձեռնարկություններ, վոր տիրապետելիս լինելին արդյունաբերության տվյալ ամրուղ ճյուղում, զեռ չկային: Այդպիսի մոնոպոլիստական ձեռնարկությունների ծագումն ու աճումն աննարին և դարձնում նախկին աղատ մրցումը, խում և հողը նրա վոտների տակից, իսկ յերկրագնդի բաժանումը հարկադրում և խաղաղ ընդլայնումից անցնել զինված պայքարի հանուն գաղութների ու ազգեցության շրջանների վերաբաժանման» (Լենին, հ. XIII, հջ 151):

Յեկ այնուհետեւ.

«Զի կարելի հին ձեռով ապրել սահուն ելուրցիա կատարող¹ և աստիճանաբար նոր յերկերների վրա ընդարձակվող կապիտալիզմի համեմատաբար հանգիստ կուլտուրական, խաղաղ միջավայրում, վորովհետեւ ուրիշ գարագրան և յեկեր Ֆինանսական կապիտալը ավյալ յերկերն արտամղում ե և կարտամղի մեծ պետությունների շարքից, կուի նրա գաղութ-

¹ Ընդգծումն իմն եւ Ի. Աս.:

ները և ազդեցության վոլորտները» (Լենին, հ. ՏԻՊ,
եջ 153—154):

Այստեղից՝ Լենինի հիմնական յեղակա-
ցությունը իմպերիալիստական կապիտալիզ-
մի բնույթի մասին.

«Հասկանալի յե, թե ինչու իմպերիալիզմը մեռնող
կապիտալիզմ ե, անցումնային դեպի սոցիալիզմը.
կապիտալիզմից ծնունդ առնող մենաշնորհն արդեն
կապիտալիզմից ճանացումն ե, նոր՝ սոցիալիզմին անց-
կապիտալիզմի մահացումն ե, նոր՝ սոցիալիզմին անց-
նելու սկիզբը։ Աշխատանքի հսկայական հանրայնա-
ցումը իմպերիալիզմի կողմից (այն, ինչ ջատագով-
ները—ըուրժուական տնտեսագետներն անվանում են
«միահյուսում»)՝ նույնն ե նշանակում» (Լենին,
հ. ՏԻՊ, եջ 470):

Մեր ոպողիցիայի դժբախտությունն այն
է, վոր նա չի հասկանում մինչիմպերիալիս-
տական կապիտալիզմի և իմպերիալիստական
կապիտալիզմի միջև յեղած այդ տարբերու-
թյան ամրող կարևորությունը։

Այսպիսով, մեր կուսակցության դիրքի
յելակեան այն փաստն ընդունելն ե, վոր
ներկայիս կապիտալիզմը, իմպերիալիստա-

կան կապիտալիզմը մեռնող կապիտալիզմ ե
հանդիսանում:

Այս գեն, դժբախտաբար, չի նշանակում,
թէ կապիտալիզմն արդեն մեռել ե։ Բայց
այդ անկասկած նշանակում ե, վոր կապի-
տալիզմն ամբողջությամբ առած՝ գնում ե
վնչ թե դեպի վերածնունդ, այլ դեպի մա-
հացում, վոր կապիտալիզմն ամբողջությամբ
առած՝ զարգանում ե վնչ թե բարձրացող
գծով, այլ իջնող գծով։

Այս ընդհանուր հարցից բղինում ե զար-
գացման անհավասարաշափության հարցը
իմպերիալիզմի ժամանակաշրջանում։

Լենինիստների խոսքը սովորաբար ինչի
մասին ե լինում, յերբ նրանք խոսում են
զարգացման անհավասարաշափության մա-
սին իմպերիալիզմի ժամանակաշրջանում։

Արդյոք վնչ այն մասին, վոր մեծ տար-
բերություն գոյություն ունի զանազան կա-
պիտալիստական յերկիրների զարգացման
մակարդակի մեջ, վոր զորոշ յերկիրներ ի-
րենց զարգացման մեջ հետ են մնում ուրիշ-

ներից, վոր այդ տարբերությունը շարունակ ավելի ու ավելի մեծանում ե:

Վհչ վոչ այդ մասին: Իմպերիալիզմի ժամանակվա դարձացման անհավասարությունը շարունակվել է կապիտալիստական յերկիրների գարգացման մակարդակի տարբերության հետո՝ նշանակում ե մեշշանականության մեջ ընկնել: Հենց այդ մեշշանականության մեջ ընկալ ոպողիցիան, յերբ չամհկ XV կոնֆերենցիայում իրար հետ շփոթեց զարգացման անհավասարաշափության հարցը զանգան կապիտալիստական յերկիրների տնտեսական դրության մակարդակի տարբերության հարցի հետո: Հենց այդ խառնաշփոթությունից յենելով՝ ոպողիցիան այն ժամանակ այն միանգամայն սխալ յեղըակացությանն հանգեց, թե առաջ զարգացման անհավասարաշափությունն ավելի մեծ եր, քան իմպերիալիզմի որով: Հենց այդ պատճառով ել XV կոնֆերենցիայում ընկ. Տրոցկին ասում եր, թե «XIX դարում այդ անհավասարաշափությունն ավելի մեծ եր, քան XX-ում» (տես ընկ. Տրոցկու ճառը Համբկ

•XV կոնֆերենցիայում): Այն ժամանակ միենան բանն եր ասում ընկ. Զինովյեվը՝ պնդելով, «սխալ ե, թե կապիտալիստական զարգացման անհավասարաշափությունն իմպերիալիստական դարաշրջանի սկզբից առաջ ավելի քիչ եր» (տես ընկ. Զինովյեվի ճառը Համբկ XIX կոնֆերենցիայում): Ճիշտ ե, այժմ, XV կոնֆերենցիայում տեղի ունեցած գիսկուսիայից հետո, ոպողիցիան հարկավոր համարեց փոխել ֆրոնտը, կիֆկ-ի ընդլայնված պլենումում իր ճառերում բոլորովին հակառակ մի բան հայտարարելով՝ կամ աշխատելով պարզապես լուսնական տալ իր այդ սխալը: Ահա, որինակ, ընկ. Տրոցկու հայտարարությունն ընդլայնված պլենումում նրա արտասանած ճառում, «Ինչ վերաբերում ե զարգացման տեմպին, ապա իմպերիալիզմն այդ անհավասարաշափությունն անսահմանուն սրբ»: Իսկ ինչ ընկ. Զինովյեվին ե վերաբերում, ապա նա կիֆկ-ի պլենումում արտասանած իր ճառում խոհեմություն համարեց պարզապես լուսնական տալ այդ հարցը, թեպեսև նա չեր կարող

չգիտենալ վոր վեճը հենց այն մասին եր, թե՝ անհավասարաշափության որենքի ներ- դրդությունն իմպերիալիզմի դարաշրջա- նում ուժեղանում ե, թե թուլանում: Բայց այդ խոսում ե միայն այն մասին, վոր դիսկուսիան ոպողիցիային մի բան գոնե սովորեցրեց և նրա համար անոգուտ չան- ցավ:

Այսպես ուրիմն զարգացման անհավա- սարաշափության հարցն իմպերիալիզմի դա- րաշրջանում՝ չի կարելի շփոթել զանազան կապիտալիստական յերկիրների տնտեսական դրության մակարդակի տարրերության հարցի հետ:

Գուցե կապիտալիստական յերկիրների զարգացման մակարդակի տարրերության թուլացումը և այդ յերկիրների համահարթ- ման զարգացումը թուլացնելու են իմպե- րիալիզմի ժամանակվա զարգացման անհա- վասարաշափության որենքի ներգործու- թյունը: Մեծանում, թե փոքրանում ե զար- գացման մակարդակի այդ տարրերությունը: Անշուշտ փոքրանում ե: Աճում, թե ընկնում

ե համահարթումը: Անպայման աճում ե: Համահարթման աճումը չի հակասում ար- դյոք իմպերիալիզմի ժամանակվա զարգաց- ման անհավասարաշափության ուժեղաց- մանը: Վայ, չի հակասում: Ընդհակառակը, համահարթումը այն ֆոնն ու այն բաղան ե, վորի հիման վրա յե, վոր հնարավոր ե իմպե- րիալիզմի ժամանակվա զարգացման անհա- վասարաշափության ներգործության ուժե- ղացումը: Միմիայն այն մարդիկ, վորոնք չեն հասկանում իմպերիալիզմի տնտեսական եյությունը, ինչպես են մեր ոպողիցիոներ- ները, կարող են համահարթումը հակադրել իմպերիալիզմի ժամանակվա զարգացման ան- հավասարաշափության որենքին: Հենց այն պատճառով, վոր հետամնաց յերկիրներն արագացնում են իրենց զարգացումը և հա- մահարթվում են առաջավոր յերկիրների հետ,—հենց այդ պատճառով սրվում ե յեր- կիրներից միքանիսի՝ մյուսներից առաջ անցնելու համար մղվող պայքարը, հենց այդ պատճառով յերկիրներից միքանիսի համար հնարավորություն ե ստեղծվում առաջ անցնելու

ուրիշ յերկիրներից և նրանց արտամղելու շուկաներից, դրանով իսկ նախաղըյաներ ստեղծելով ռազմական ընդհարումների համար, կապիտալիզմի համաշխարհային ճակատը տարբեր կապիտալիզմի համար, այդ ճակատը տարբեր կապիտալիզմական յերկիրների պլրութարների կողմից պատռելու համար: Ով այս հասարակ բանը չի հասկացել, նա վոչինչ չի հասկացել մոնոպոլիստական կապիտալիզմի տնտեսական եյության հարցից:

Այսպես ուրեմն՝ համահարթումը հանդիսանում և զարգացման անհավասարաշափությունն ուժեղացնելու պայմաններից մեկը իմպերիալիզմի ժամանակաշրջանում:

Գուցե իմպերիալիզմի ժամանակվա զարգացման անհավասարաշափության եյությունն այն է, վոր յերկիրներից միքանիաը հասնում են մյուսներին և հետո տնտեսական տեսակետից առաջ են անցնում նրանցից սովորակա՞ն կարգով, այսպես ասած՝ եվլուցիս կարգով, առանց թոփչքների, առանց ռազմական կատաստրոֆների, առանց արդեն բաժանված աշխարհի վերաբաժանում-

ների: Վազ, այդ չե: Այդպիսի անհավասարաշափություն մինչմոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում ել կար, վորի մասին դիտեր Մարքսը և վորի մասին գրել և կենինն իր «Կապիտալիզմի զարգացման» մեջ: Այն ժամանակ կապիտալիզմի զարգացումն ընթանում եր քիչ թե շատ սահուն, քիչ թե շատ եվլուցիսն կերպով, և յերկիրներից միքանիաը մյուսներից առաջ եյին անցնում յերկար ժամանակաշրջանի ընթացքում առանց թոփչքների և առանց համաշխարհային մասշտաբի պարտազիր ռազմական ընդհարումների: Խոսքն այժմ այդ անհավասարաշափության մասին չե:

Այդ դեպքում ուրեմն ի՞նչ բան է իմպերիալիզմի ժամանակվա զարգացման անհավասարաշափության որենքը:

Իմպերիալիզմի ժամանակաշրջանում զարգացման անհավասարաշափության որենքը նշանակում է յերկիրներից միքանիաի թոփչքածե զարգացում ուրիշների վերաբերմանը, յերկիրներից միքանիաի համաշխարհային

շուկայից արագ կերպով վտարվելը ուրիշների կողմից, արդեն բաժանված աշխարհի պարբերական վերաբաժանումներ ուղարկան ընդհարումների և ռազմական կատաստրոֆների կարգով, կոնֆլիկտների խորացում և սրում իմպերիալիզմի բանակում, համաշխարհային կապիտալիզմի ճակատի թուրացում, այդ ճակատի առանձին յերկիրների պրոլետարների կողմից ձեղքվելու հնարավորություն, առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթության հնարավորություն։ Վորոնչը են իմպերիալիզմի ժամանակվարդացման անհավասարչափության որենքի հիմնական տարրերը։

Նախ՝ այն փաստը, վոր աշխարհն արդեն բաժանված ե իմպերիալիստական խթարերի միջև, աշխարհում ել չկան «աղաւ», չգրավված տերիտորիաներ, և նոր շուկաներ ու հումքի աղբյուրներ գրավելու համար, ընդլայնվելու համար պետք ե ուրիշներից այդ տերիտորիան ուժով վերցնելու։

Յերկրորդ՝ այն, վոր տեխնիկայի չափանիկամբ գարգացում և կապիտալիստական

յերկիրների զարգացման մակարդակի ուժեղացող համահարթումը հնարավորություննեն ստեղծել և հեշտացրել են յերկիրներից միքանիսի՝ մյուսներից թռիչքածե առաջանցներու գործը, ավելի հզոր յերկիրների արտամղվելու գործը ավելի պակաս հզոր, բայց արագորեն զարգացող յերկիրների կողմից։

Եերրորդ՝ այն, վոր իմպերիալիստական առանձին խմբերի միջև ազգեցության վոլորտների հին բաշխումը յուրաքանչյուր անգամ ընդհարվում ե համաշխարհային շուկայում յեղած՝ ուժերի նոր հարաբերակցության հետ, վոր ազգեցության վոլորտների հին բաշխման և ուժերի նոր հարաբերակցության միջև «հավասարակշռություն» սահմանելու համար անհրաժեշտ են աշխարհի պարբերական վերաբաժանումներ իմպերիալիստական պատերազմների միջնորդ։

Այստեղից—զարգացման անհավասարաչափության ուժեղացումն ու սրումն իմպերիալիզմի գարաշը ջանում։

Այստեղից—իմպերիալիզմի բանակում

կոնֆերանսերը խաղաղ կարգով լուծելու ան-
հնարինությունը:

Սյստեղից—ուլտրա-իմպերիալիզմի կա-
ռացիկական այն թեորիայի սնանկությունը,
վորը քարոզում ե այդ կոնֆլիկտների խա-
ղաղ լուծման հնարավորությունը:

Բայց սրանից հետեւում ե, վոր ոպողի-
ցիան, վորը ժխտում է զարգացման անհավա-
սարաչափության ուժեղացման ու սրբան
փաստն իմպերիալիզմի դարաշրջանում, գլոր-
վում ե ուլտրա-իմպերիալիզմի դիրքը:

Սրանք են զարգացման անհավասարա-
չափության բնորոշ գծերն իմպերիալիզմի
դարաշրջանում:

Յերբ եր ավարտված աշխարհի բաժա-
նումն իմպերիալիստական խմբերի միջև:

Ենթան առում ե, վոր աշխարհի բաժա-
նումն ավարտված եր XX դարի սկզբին:

Իրոք յերբ ե առաջին անգամ դրվել
հարցն արդեն բաժանված աշխարհը վերա-
բաժանելու մասին:

Առաջին համաշխարհային իմպերիալիս-
տական պատերազմի ժամանակաշրջանում:

Բայց սրանից հետևում ե, վոր իմպերիա-
լիզմի ժամանակվա զարդացման անհավա-
սարաչափության որենքը կարող եր հայոնա-
գործկել ու հիմնավորվել միայն XX դարի
սկզբին:

Հենց այդ մասին ել յես խոսում եյի
ՀամկԿ ԽV կոնֆերենցիային արած իմ զե-
կուցման մեջ, յերբ ասացի, վոր իմպերիա-
լիզմի ժամանակվա զարդացման անհավասա-
րաչափության որենքը հայտնագործել ու հիմ-
նավորել ե ընկ. Լենինը:

Համաշխարհային իմպերիալիստական պա-
տերազմն արդեն բաժանված աշխարհը վերա-
բաժանելու առաջին փորձն եր: Այդ փորձը
կապիտալիզմին այն նստեց, վոր Ռուսաս-
տանում հաղթանակեց հեղափոխությունը և
խարիսկեցին իմպերիալիզմի հիմքերը գա-
ղութային ու կախյալ յերկիրներում:

Կարիք ել չկա ասելու, վոր վերաբաժան-
ման առաջին փորձին պետք ե հետեւի յերկ-
րորդ փորձը, դեպի վորը նախապատրաս-
տական աշխատանք ե կատարվում իմպե-
րիալիստների բանակում:

Հազիվ թե կարելի յեւ տարակուսել վոր
վերաբաժանման յերկրորդ փորձը համաշւ-
խարհային կապիտալիզմին շատ ավելի թանգ
կնստի, քան առաջինը:

Սրանք են համաշխարհային կապիտալիզ-
մի զարգացման հեռանկարներն իմպերիա-
լիզմի պայմաններում յեղած անհավասա-
րաչափության որենքի տեսակետից:

Դուք տեսնում եք, վոր այս հեռանկար-
ներն ուղղակի և անմիջականորեն տանում
են գեղի սոցիալիզմի հաղթության հնարա-
վորությունը կապիտալիստական առանձին
յերկիրներում՝ իմպերիալիզմի ժամանակա-
շրջանում:

Հայտնի յերկոր լենինը առանձին յեր-
կիրներում սոցիալիզմի հաղթության հնա-
րավորությունը հետեւցնում եր ուղղակի և
անմիջականորեն կապիտալիստական յերկիր-
ների զարգացման անհավասարաչափության
որենքից: Յեզ լենինը լիովին իրավացի յեր:
Վորովինետև իմպերիալիզմի ժամանակվազար-
գացման անհավասարաչափության որենքը
կոչուած է կապիտալիզմի առան-

ձին յերկիրներում սոցիալիզմի հաղթության
անհնարինության վերաբերյալ՝ բոլոր ու
ամեն տեսակի սոցիալ-դեմոկրատների «թեո-
րիական» վարժությունների ամեն մի
հոգ:

Ահա թե ինչ ե ասում լենինը դրա վերա-
բերյալ իր ծրագրային հոդվածում, վոր
կրկած և 1915 թվականին.

«Տնտեսական ու քաղաքական զարգացման անհա-
վասարաչափությունը կապիտալիզմի անպայմանական
որենքն և Ալյանսից նետելում ել, վոր սոցիալիզմի
հաղթությունը հնարավոր և սկզբնապես միքանի
կամ նույնիսկ մեկը, առանձին վերցրած, կապիտալի-
ական յերկրում» (Լենին, հ. XIII, եջ 133):

Յեզրակացություններ.

ա) Ուղղված հիմնական սխալն այն
է, վոր նա տարբերություն չի տեսնում կա-
պիտալիզմի յերկու փուլի միջև կամ խուսա-
փում ե այդ տարբերությունն ընդգծելուց:
Իսկ ինչու յե նա դրանից խուսափում: Վո-
րովինետև այդ տարբերությունը տանում է

1 Բնդգծութիւն իմն եւ Եսու

գեղի իմպերիալիզմի ժամանակաշրջանում
զարգացման անհավասարաչափ լինելու որեն-
քը:

բ) Ոպողիցիայի յերկրորդ սխալն այն ե,
վոր նա չի հասկանում կամ թերագնահա-
տում ե իմպերիալիզմի որով կապիտալիս-
տական յերկիրների զարգացման անհավա-
սարաչափ լինելու որենքի վճռական նշա-
նակությունը: Իսկ ինչո՞ւ յե նա թերագնա-
հատում այդ: Վորովհետև կապիտալիստական
յերկիրների զարգացման անհավասարաշու-
փության որենքի ճիշտ գնահատությունը
տանում ե դեպի առանձին յերկիրներում
սոցիալիզմի հաղթության հնարավորությու-
նը հետեւունելը:

գ) Այստեղից—ոպողիցիայի յերրորդ սը-
խալը, վորի եյությունն իմպերիալիզմի որով
կապիտալիստական առանձին յերկիրներում
սոցիալիզմի հաղթության հնարավորությու-
նը ժխտելն ե:

Ով ժխտում ե սոցիալիզմի հաղթության
հնարավորությունը, նա հարկադրված ե
լուսության տալ իմպերիալիզմի որով զարգաց-

ման անհավասարաչափ լինելու որենքի նշա-
նակությունը, իսկ ով հարկադրված ե լուս-
թյան տալ անհավասարաչափության որենքի
նշանակությունը, նա չի կարող չսքողել այն
տարրերությունը, վոր գոյություն ունի
մինչիմպերիալիստական կապիտալիզմի և
իմպերիալիստական կապիտալիզմի միջև:

Այսպես ե կապիտալիստական յերկիրնե-
րում կատարվող պրոլետարական հեղափո-
խությունների նախադրյալների հարցի ըա-
նը:

Վերն ե այդ հարցի պրակտիկ նշանա-
կությունը:

Պրակտիկայի տեսակետից՝ մեր առջև
ծառանում են յերկու գիծ: Մեկ գիծը՝ գիծն
ե մեր կուսակցության, վորն առանձին յեր-
կիրների պրոլետարներին կոչ ե անում պատ-
րաստվելու վերահսկության, աշա-
լուրջ հետեւու գեղքերի ընթացքին և պատ-
րաստ լինելու, վոր բարենպատ պայման-
ներում ինքնուրույն կերպով ճեղքեն կապի-
տալի ֆրոնտը, վերցնեն իշխանությունը և
խարխլեն համաշխարհային կապիտալիզմի:

հիմքելը։ Մյուս գիծը՝ գիծն և մեր ոպողից իտայի, վորը կասկածներ և սերմանում կապիտալիստական ֆրոնտն ինքնուրույն կերպով ճեղքելու նպատակահարմարության վերաբերմամբ և առանձին յերկիրների պրոլետարներին կոչ և անում, վոր նրանք սպասին «ընդհանուրական հանդուցալուծման» մոմենտին։

Յեթե մեր կուսակցության գիծը մեր բուժուազիայի վրա հեղափոխական գրունուժեղացնելու և առանձին յերկիրների պրոլետարների նախաձեռնությանն ազատություն տալու գիծն և, ապա մեր ոպողիցիայի գիծը պասսիվորեն սպասելու և առանձին յերկիրների պրոլետարների ձեռներեցությունը իրենց բուժուազիայի դեմ մղած նրանց կովում կաշկանդելու գիծն և։

Առաջին գիծն առանձին յերկիրների պրոլետարներին ակտիվացնելու գիծն և։

Յերկրորդ գիծը պրոլետարիատի՝ հեղափոխության ձգտող կամքի թուլացման, պասսիվության և սպասելու գիծն և։

Անինը հաղար անզամ իրավացի յեր,

յերբ հետեւալ մարդարեյական խոսքերն եր գրում, վորոնք ուղղակի առնչություն ունեն ներկայիս մեր վեճերի հետ։

«Յես զիտեմ, վոր կան իմաստուներ, վորոնք իրենց շատ նեխոք են համարում և նույնիսկ իրենց անվանում են սոցիալիստներ, վորոնք հավատացնում են, թե կարիք չկար իշխանությունը վերցնելու, մինչև վոր հեղափոխություն բորբոքվել բոլոր յերկիրներում։ Նրանք չեն կասկածում, վոր այդպես խոսելով՝ իրենք հեռանում են հեղափոխությունից և անցնում են բուժուազիայի կողմը։ Սպասել մինչեւ աշխատավոր զասակարգերը միջազգային մասշտաբով հեղափոխություն կկատարեն, այդ նշանակում ե՝ բոլորը կանգ առնեն և սպասեն։ Այդ՝ անմտություն ե» (Լենին, հ. XV, էջ 287)։

Անինի այս խոսքերը չի կարելի մոռանալ։

Ինքնեւ և ընկ. Զինովեևու

«ՄՇԱԿՈՒՄ» Լենինին

Յես խոսում եյի պրոլետարական հեղափոխությունների նախադրյաների մասին կապիտալիստական առանձին յերկիրներում։ Յես այժմ կցականայի միքանի խոսք ա-

սել այն մտսին, թե ինչպես ընկ. Զինով-
յևը աղավաղում կամ «մշակում ե» լենինի
հիմնական հոդվածը պրոլետարական հեղա-
փոխությունների նախադրյալների մասին
և սոցիալիզմի հաղթության մասին կապի-
տալիստական առանձին յերկիրներում։ Յհս
նկատի ունեմ լենինի «Յեվրոպայի Միա-
ցյալ Նահանգների լոգունգի մասին» հայունի
հոդվածը, վորը գրված ե 1915 թվականին
և միքանի անգամ քաղվածորեն բերված
մեր ընդդիմախոսությունների ժամանակ։
Ինձ ընկ. Զինովյևը կշտամբում եր այն բա-
նի համար, վոր յես այդ հոդվածն ամբողջու-
թյամբ մեջ չեմ բերել ընդումին նա աշխա-
տում ե այդ հոդվածին այնպիսի մեկնաբա-
նություն տալ վորը չի կարող այլ կերպ
կոչել, բայց յեթե Լենինի հայացքների,
առանձին յերկիրների մեջ սոցիալիզմի հաղ-
թության հարցում նրա ունեցած հիմնական
գծի լրակատար խեղաթյուրում։ Թույլ տվեք
այդ ցիտատը բերել ամբողջությամբ, ըստու-
ման անցյալ անգամ ժամանակի կարճու-
թյան պատճառով բաց թողած տողերը յես

կաշխատեմ շեղաղիր նշիլ։ Ահա ոյդ ցի-
տատը.

«Տնտեսական ու քաղաքական գաղքացման անհա-
վաստակածիությունը կապիտալիզմի անպայմանական
որհնքն եւ Այստեղից հետեւում ե, վոր սոցիալիզմի
հաղթությունը հնարավոր եւ սկզբնապես մերքանի
կամ նույնիսկ մեկ, առանձին վեցբած, կապիտա-
լիստական յիշլրում։ Այդ յերկրի հաղթանակած
պրոլետարիատը, եքսպրոլետացիայի յինթարկած լի-
նելով կապիտալիստներին և իրենում սոցիալիստա-
կան արագդրություն կազմակերպած լինելով, կծա-
ռանար մնացած, կապիտալիստական ազխարհի դեմ,
իր կողմը գրավելով ուրիշ յերկիրների մնջած դա-
սակարգերին, նրանց մեջ առատամբությունն հարու-
ցելով կապիտալիստների դեմ, անհրաժեշտության
դեպքում նույնիսկ առաջական ու ժամկետ գլուխ
շահագործող գասակարգերի և նրանց պետություն-
ների դեմ Քաղաքական ձեվը այն հասարակության,
վարեղ հարդաճակում և պրոլետարիատը, տապակով
բուրժուազիային, կինքի դեմոկրատական հանրապետու-
թյունը, վորը գնալով ավելի յէ կենտրոնացնում սլյալ
ազգուրյան կամ սլյալ ազգուրյաների պրոլետարիատի
ուժեր դեռյեվս դեպի սոցիալիզմ չանցած պետորյան-
ների դեմ մղվող պայքարում։ Անհնարին ե վլոշնացնել
դասակարգերը առանց նեւլած դասակարգի, պրոլետա-
րիատի դիկտատուրայի։ Անհնարին ե սոցիալիզմի մեջ

ավան միավորել ազգությունները՝ առանց սոցիալիստական հանրապետությունների ավելի կամ պակաս յերկանական համար պայմանի նետամենաց սետությունների դեմ» (Լենին, 5 ԽIII, եջ 133).

Այս ցիտատը բերելով՝ ընկ. Զինովյանը յերկու դիտողություն և անում. առաջին՝ դեմոկրատական հանրապետության մասին և յերկրորդ՝ սոցիալիստական արտադրություն կազմակերպելու մասին։

Խոսենք նախ առաջին դիտողության մասին։ Ընկ. Զինովյանը կարծում է, վոր յեթե այստեղ Լենինը խոսում է, դեմոկրատական հանրապետության մասին, ապա խոսք կարող ե լինել, ամենաշատը, պըոլիտարիատի՝ իշխանություն վերցնելու մասին, ընդուրում ընկ. Զինովյանը չամաչեց այստեղ բավական մշուշապատ, բայց հաստատամիտ ակնարկ անելու այն մասին, վոր այստեղ թերեւ, Լենինի խոսքը ըուրժուական հանրապետության մասին և ձի՞շտ և արդյոք այդ։ Իհարկե, ձիշտ չե։ Ընկ. Զինովյանը այդ վոչ-բոլորովին մաքուր ակնարկը հերքելու համար բավական ե կար-

դալ ցիտատի վերջին տողեւը, վորտեղ խոսվում է «սոցիալիստական հանրապետությունների պայքարի» մասին «հետամենաց պետությունների դեմ»։ Պարզ է, վոր, խոսելով դեմոկրատական հանրապետության մասին, Լենինը նկատի ունել վճչ թե ըուրժուական հանրապետությունը, այլ սոցիալիստական հանրապետությունը։ Լենինը 1915 թվականին Խորհրդային իշխանությունը դեռ չեր իմանում իրքեւ պըոլիտարիատի գիկտատուրայի պետական ձև։ Լենինը դեռ 1905 թվականին գիտեր, վոր առանձին խորհուրդները ցարիզմի տապալման ժամանակաշրջանում հեղափոխական իշխանության սաղմեր են հանդիսանում։ Բայց պետական մասշտաբով միավորված Խորհրդային իշխանություն, իրքեւ պըոլիտարիատի գիկտատուրայի պետական ձև, նա դեռ չեր իմանում այն ժամանակ։ Խորհուրդների հանրապետությունն, իրքեւ պըոլիտարիատի գիկտատուրայի պետական ձև, լենինը հանրապետությունն, իրքեւ պըոլիտարիատի գիկտատուրայի պետական ձև, լենինը հայտնագործեց միայն 1917 թվականին և անցումնային հասարակության քա-

ղաքական կազմակերպության այդ նոր ձևի
հարցը մանրամասնորեն մշակեց 1917 թ.
ամառը, ովհասվորապես իր «Պետություն» և
հեղափոխություն» գրքում: Սրանով եւ խո-
կապես, բացատրվում ե, վոր ցիտատի մեջ
Լենինը խոսում ե վոչ թե խորհրդային
հանրապետության մասին, այլ դեմոկրա-
տական հանրապետության մասին, դրանով,
ինչպես ցիտատից յերեսում ե, հասկանալով
սոցիալիստական հանրապետությունը: Լե-
նինն այստեղ վարդել ե ճիշտ այնպէս
ինչպես իր ժամանակին Մարքսն ու Ենգելսն
եյին վարդում, վորոնք Փարիզի Կոմունա-
յից առաջ անցումնային հասարակության
քաղաքական կազմակերպության ձև համա-
րում եյին առհասարակ հանրապետությունը,
իսկ Փարիզի Կոմունայից հետո վերծանե-
ցին (ռաշիֆրօվալ) այդ տերմինը՝ ասե-
լով, վոր այդ հանրապետությունը պետք ե
լինի Փարիզի Կոմունայի տիպի հանրապե-
տություն: Ել յես չեմ խսում այն մասին,
վոր յեթե Լենինն իր ցիտատում նկատի
ունենար բուրժուա-դեմոկրատական հանրա-

պետությունը, ապա խոսք ել չեր կարող
լինել «պրոլետարիատի գիտառությի»
մասին, «կապիտալիստաներին երազը ուսցի-
ցիայի յենթարկելու» մասին և այլն:

Դուք տեսնում եք, վոր չե կարելի հա-
ջող անվանել Լենինին «մշակելու» ընկ. Զի-
նովյեվի վորձը:

Անցնենք ընկ. Զինովյեվի յերկրորդ գի-
տողությանը: Ընկ. Զինովյեվը հավատաց-
նում ե, թե ընկ. Լենինի Փրազը «սոցիա-
լիստական արտադրություն կազմակերպե-
լու» մասին պետք ե հասկանալ վոչ այն-
պես, ինչպես այն առհասարակ պետք ե
հասկանան նորմալ մարդիկ, այլ ինչ-վոր
ուրիշ կերպ, այն եւ այնպես, վոր Լենինն
այստեղ նկատի յե ունեցել լոկ սոցիալիս-
տական արտադրություն կազմակերպելուն
ձեռնախույնինը: Ինչու, ինչ հիման վրա,—
ընկ. Զինովյեվն այնպես ել չբացարձեց:
Թույլ տվեք հայտարարելու, վոր ընկ. Զի-
նովյեվը Լենինին «մշակելու» ելի մի փորձ
ե անում այստեղ Ցիտատում ուղղակի աս-
ված ե, վոր «այդ յերկրի հաղթանակած

պլութարիատը, եքսոլոռպրիացիայի յին-
թարկած լինելով կապիտալիստներին և ի-
րենում սոցիալիստական արտադրություն
կազմտկերպած լինելով, կծառանար մնացած,
կապիտալիստական աշխարհի գեմք։ Այս-
տեղ ասված և «կազմակերպած լինելով», և
վոչ թե «կազմակերպելով»։ Պետք ե ար-
դյոք դեռ ապացուցել, վոր այստեղ ատրբե-
րություն կա։ Պետք ե արդյոք դեռ ապա-
ցուցել վոր յեթե Լենինը նկատի ունենար
միմիայն սոցիալիստական արտադրություն
կազմակերպելուն ձեռնամուխ լինելը, ապա
նա կասեր՝ «կազմակերպելով», և վոչ թե
«կազմակերպած լինելով»։ Ուրիշն՝ Լենինը
նկատի ուներ վոչ միայն սոցիալիստական
արտադրություն կազմակերպելուն ձեռնա-
մուխ լինելը, այլև սոցիալիստական արտա-
դրություն կազմակերպելու հնարավորու-
թյունը, առանձին յերկիրներում սոցիա-
լիստական արտադրություն կառուցելու
հնարավորությունը

Դուք տեսնում եք, վոր Լենինին «մշա-
կելու» ընկ. Զինովյելի այս յերկրորդ փորձն

ևս ավելի քան անհաջող պետք ե համա-
րել։

Ընկ. Զինովյելը ճգնում է Լենինին «մշա-
կելու» իր այս փորձերը քողարկել քմծիծա-
ղով այն մասին, թե «չի կարելի սոցիալիզմ
կառուցել մողական զավագանով յերկու շա-
բաթում կամ յերկու ամսում»։ Վախենամ
թե ընկ. Զինովյելին այդ քմծիծաղը պետք
ե «վատ խաղի ժամանակ լավ տեսք» ըն-
դունելու համար։ Ընկ. Զինովյելը վ՞րահեղ
ե այնպիսի մարդիկ գտել վորոնք պատ-
րաստվում են սոցիալիզմ կառուցել յերկու
շաբաթում, յերկու ամսում կամ յերկու տա-
րում։ Ինչո՞ւ նա չի տալիս այդպիսի մարդ-
կանց անունը, յեթե նրանք առնասարակ
գոյություն ունեն ընության մեջ։ Բայց նա
դրանց անունը չտվեց, վորովհետև այդպիսի
մարդիկ չկան ընության մեջ։ Ընկ. Զինով-
յելին կեղծ քմծիծաղը հարկավոր ե յեկել
նրա համար, վոր Լենինին ու լենինիզմը
«մշակելու» իր «աշխատանքը» քողարկի։

Այսպես ուրեմն՝

ա) յենինով իմոլերիալիզմի որով զար-

գացման անհավասարաչափության որենքից՝ լենինը իր «Յեկապայի Միացյալ Նահանգների լողունգի մասին» հիմնական հոդվածում յեկել եւ այն յեղբակացության, վոր կապիտալիստական առանձին յերկերներում սոցիալիզմի հաղթությունը հնարավոր եւ.

բ) առանձին յերկերներում սոցիալիզմի հաղթություն ասելով՝ լենինը հասկանում է իշխանության գրավումը պլանիտարիատի կողմից, կապիտալիստների եքսպրուզիացիան և սոցիալիստական արտադրության կազմակերպումը, ընդվորում այդ բոլոր խնդիրները վճռ թե ինքնանդատակ են, այլ միջոց, վորապեսզի ծառանանք մնացած, կապիտալիստական աշխարհի դեմ և ողնենք բռլոր յերկերների պլանիտարներին կապիտալիզմի դեմ նրանց սղած պայքարում.

գ) ընկ. Զինովյեվը փորձ արեց պոչատելու լենինիզմի այս դրույթները և «մշակելու» լենինին՝ համապատասխան ուղղվեցիոն բրոկի ներկայիս կիսամենշեկցիան

դիրքի: Բայց այդ փորձը դուրս յեկավ մի փորձ՝ անպետք միջոցներով:

Յս կարծում եմ, վոր հետագա մեկնաբանություններն այստեղ ավելորդ են:

III. ԽԱՀՄ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Այժմ, ընկերներ, թույլ տվեք անցնել
ԽԱՀՄ-ում, մեր յերկրում, սոցիալիզմ կա-
ռուցելու հարցին:

Որոշեցի «ՄԱՆՅՈՎՐՆԵՐԸ» ՅԵՎ ԼԵՆԻՆԻ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ «ՆԱՑԻՈՆԱԼ-ՌԵՖՈՐՄԻԶՄԸ»

Ընկ. Տրոցկին իր ճառում հայտաբարեց,
թե Ստալինի ամենախոշոր սխալը մեկ յերկ-
րում, մեր յերկրում, սոցիալիզմ կառուցե-
լու հնարավորության թեորիան եւ Այսպի-
սով, դուքս ե գալիս, վոր խոսքը վ՞չ թե
մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնա-
րավորության վերաբերյալ Լենինի թե-
որիայի մասին ե, այլ Ստալինի ինչ-վոր,
մահնքին անհայտ, «թեորիայի» մասին
Յես այդ այնպիս եմ հասկանում, վոր ընկ.

Տրոցկին նպատակ է դրել պայքարը մղելու
Լենինի թեորիայի դեմ, բայց վորովհետև
Լենինի դեմ բացահայտ պայքարը մղելը
վտանգավոր բան ե, ապա նա վճռել ե այդ
պայքարը մղել Ստալինի «թեորիայի» դեմ
պայքարելու ձեի տակ: Ընկ. Տրոցկին ու-
ղում ե դրանով իրեն համար հեշտացնել լե-
նինիզմի դեմ մղվող պայքարը, այդ պայ-
քարը, քողարկելով Ստալինի «թեորիայի»
իր քննազատությամբ: Վոր բանն իրոք
այդպես ե, վոր Ստալինն այսեղ գործ
չունի, վոր Ստալինի և վոչ մի «թեորիայի»
մասին չի կարող խոսք լինել վոր Ստա-
լինը յերեք հավակնություն չի ունեցել
թեորիայի մեջ վորեե նոր բանի, այլ մի-
այն բանին ե ձգտել վորպեսզի հնշ-
տացնի լենինիզմի լիակատար հաղթանակը
մեր կուսակցության մեջ, հակառակ ընկ.
Տրոցկու ուղիղիոնիստական ճիգերին,—
այդ յես ստորե կաշխատեմ ցույց տալ: Իսկ
այժմ նշենք, վոր ընկ. Տրոցկու հայտա-
բարությունը Ստալինի «թեորիայի» մասին
մի մանյովը ե, խորամանկություն, յերկ-

Հստու անհաջող խորամանկությունն այն հաշվավ, վոր այդ խորամանկությամբ քուզարկի իր պայքարն առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթանակելու լինինյան թիորիայի դեմ՝ պայքար, վոր սկիզբ ե առել 1915 թվականից և շարունակվում ե մինչև մեր որերը։ Ընկ. Տրոցկու այդ պրեռմն արդյոք ազնիվ բանավեճի նշան ե, — այդ մասին թող ընկերները դատեն։

Մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության հարցի վերաբերյալ մեր կուսակցության վրոշումների յելակետ հանդիսանում են ընկ. Լենինի ծրագրային հայտնի աշխատությունները։ Լենինի այդ աշխատություններում առված ե, վոր առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթությունն իմպերիալիզմի պայմաններում հնարավոր ե, վոր պրոլետարիատի դիկտատուրայի հաղթությունն այդ դիկտատուրայի տնտեսական պրոլետարիատի լուծերու գործում ապահովված ե, վոր մենք, ԽՍՀՄ-ի պրոլետարներս, ունենք այն ամենը, ինչ անհրաժեշտ ու բավական ե լիտկատար սո-

ցիալիստական հասարակությունն կառուցելու համար։

Յես հենց նոր ցիտատ բերի Լենինի հայտնի հոգվածից, վորտեղ նա առաջին անգամ հարց եր գնում առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթության հնարավության մասին, և վորն այդ պատճառով յս չեմ կրկնի այսակը։ Այդ հոգվածը գրված ե 1915 թվականին։ Այդ հոգվածում ասված ե, վոր առանձին յերկիրներում սոցիալիզմի հաղթությունը, պրոլետարիատի իշխանություն վերցնելը, կապիտուլիստների եքսպրոլիտացիան և սոցիալիստական արտադրության կազմակերպումը — հնարավոր են։ Հայտնի յե, վոր ընկ. Տրոցկին հենց այն ժամանակ, նույն 1915 թվականին, մամուլում հանդես յեկավ Լենինի այդ հոգվածի դեմ՝ մեկ յերկրում սոցիալիզմի լինինյան թիորիան անվանելով «ազգային սահմանափակության» թիորիա։

Հարց ե առաջ գալիս, այսակեղ ի՞նչ գործունի Ստալինի «թիորիան»։

Յես այնուհետեւ, իմ զեկուցման մեջ ցի-

տատ բերի Լենինի և Եկոնոմիկան ու քաղաքականությունը պրոլետարիատի դիկտատուրայի դարաշրջանում» հայտնի յերկից, վորտեղ ուղղակի և վորոշակի ասված ե, վոր ԽՍՀՄ-ի պրոլետարիատի հաղթությունը՝ պրոլետարիատի գիլտատուրայի տնտեսական պրոբլեմի իրականացման իմաստով՝ պետք ե համարել ավանդված։ Այդ յերկը գրված ե 1919 թվականին։ Ահա այդ ցիտատը.

«Պորքան ել ստեն, բամբասեն բոլոր յերկեների բուրժուաները և նրանց ուղղակի ու քողարկված աշակեցները (լի ինտերնացիոնալի սոցիալիստները), անտարակունեկի յե մոտ մ. տնտեսական հիմնական պրոլետականությունից մեջ առաջին ապահոված ե նադրույթունը, կոմունիզմի հարդուրյունը կապիտալիզմի դեմ։ Ամբողջ աշխարհի բուրժուազիան հենց այն պատճառով ե կատաղում ու մոլեզնում բոլշևիզմի դեմ, ուազմական արշավանքները գավազըություններ և այլն կազմակերպում բոլշևիզների գեմ, վոր նա հիմնալի համականում ե հասարակական տնտեսույթը վերակառուցման մեջ մեր հարդուրյան անխուսափելիությունը, յերե մեզ չնզմնեն

ուազբական ուժով։ Խոկ մեզ այդ ձեռվ ձղմել նըան չի հաջողվի»¹ (Լենին, հ. XVI, եջ 350)։

Դուք տեսնում եք, վոր Լենինն այստեղ ուղղակի խոսում ե ԽՍՀՄ-ի պրոլետարիատի հաղթության հնարավորության մասին հասարակական տնտեսության վերակառուցման գործում, պրոլետարիատի գիլտատուրայի տնտեսական պրոբլեմի լուծման գործում։

Հայտնի յե, վոր ընկ. Տրոցկին ու ոպողիցիան ամբողջությամբ առաջ՝ համաձայն չեն այդ ցիտատում արված հիմնական գրույթների հետ։

Հարց ե ծագում, ել այստեղ ի՞նչ գործ ունի Ստալինի «թեորիան»։

Ցես ցիտատ բերի, վերջապես, Լենինի հայտնի բորշչուրից, «Կոոպերացիայի մասին» բրոշյուրից, վորը գրված ե 1923 թվականին։ Այդ ցիտատում ասված ե.

* «Իսկապես վոր, պիտության իշխանությունը արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին,

1 Բնդգծումն իմ եւ ի. Ա.։

այդ պըոլետարիատի գաղինքը բազմամիլիոն մանը
ու մանրագույն գյուղացիների հետ, դեկավարու-
թյան ապահովումը այդ պըոլետարիատին գյուղացի-
ության վերաբերմամբ և այն, —միթե սա այն ա-
մենը չե, ինչ հարկավոր ե, վորպեսզի կոռպերացիա-
յից, ուկ սիմիայն կոռպերացիայից, վորը մենք առաջ-
ները քամահում եյինք վորպես չարչիական և
վորը վորոշ կողմից իրավունք ունենք քամահումու-
այժմ նեղի որով նույնակես, —միթե սա այն ամենը
չե, ինչ անեամեես և լիակատար սոցիալիստական հա-
սարակություն կառուցելու համար. Սա դեռևս սոցի-
ալիստական հասարակության կառուցում չե, բայց
սա այն ամենն է, ինչ անհրաժեշտ ու. բավական
և այդ կառուցման համար»¹ (Լենին, հ. XVIII, մ. 2,
էջ 140):

Դուք տեսնում եք, վոր այս ցիտատը վոչ
մի կասկած չի թողնում մեր յերկրում սո-
ցիալիզմ կառուցելու հնարավորության մա-
սին:

Դուք տեսնում եք, վոր այս ցիտատում
թվարկված են մեր յերկրում սոցիալիստական
տնտեսություն կառուցելու գլխավոր գոր-
ծոնները — պըոլետարական իշխանություն,

¹ Բնդգծութիւն իման եւ ի. ԱՏ.:

խոշոր արտադրություն պըոլետարական իշ-
խանության ձեռքին, պըոլետարիատի ու գյու-
ղացիության դաշինք, պըոլետարիատի դեկա-
վարություն այդ գաղինքում, կոռպերացիա:

Վերջերս, Համեկ ԽՎ կոնֆերենցիայում,
ընկ. Տրոցկին փորձում եր այդ ցիտատին
հակազգել Լենինից բերած մի ուրիշ ցի-
տատ, վորտեղ խոսվում ե այն մասին, վոր
«Ըորդհրդային իշխանություն՝ պլյուս ելեկ-
տրիֆիկացիա — սոցիալիզմ ե»: Բայց այդ
ցիտատներն իրար հակազգել նշանակում
ե իեղաթյուրել Լենինի «Կոռպերացիայի
մասին» բառշյուրի հիմնական իմաստը: Մի-
թե ելեկտրիֆիկացիան խոշոր արտադրու-
թյան բազկացուցիչ մտսը չե, և միթե նա
մեր յերկրում առհասարակ հնարավոր և ա-
ռանց պըոլետարական իշխանության ձեռ-
քում կենարունացված խոշոր արտադրու-
թյան, Պարզ չմարդյոք, վոր «Կոռպերացիայի
մասին» բառշյուրում Լենինի խոսքերը խո-
շոր արտադրության՝ իրեւ սոցիալիզմի կա-
ռուցման զորձնուներից մեկի՝ մասին — իրենց
մեջ ելեկտրիֆիկացիան ել են ներառում:

Հայտնի յեւ, վոր ոպողիցիան շատ թե
քիչ բացահայտ, իսկ ավելի հաճախ գաղ-
տազողի պայքար և մղում էնինի «Կոռպե-
րացիայի մասին» ըրոշյուրից վերցրած այդ
ցիտատում շարադրված հիմնական դրույթ-
ների դեմ:

Հարց ե ծագում, ել այստեղ ի՞նչ գործ
ունի Ստալինի «Թեորիան»:

Սրանք են լենինիզմի հիմնական վրույթ-
ները մեր յերկրում սոցիալիզմի կառուց-
ման հարցում:

Կուսակցությունը պնդում ե, վոր լենի-
նիզմի այդ վրույթներին արմատապես հակա-
սում են ընկ. Տրոցկու և ոպողիցիոն բլոկի
հայտնի վրույթներն այս մասին, թե «սո-
ցիալիզմի շինարարությունն աղքային-պե-
տական շրջանակներում անհնարին ե», թե
«մեկ յերկրում սոցիալիզմի թեորիան ազգային
սահմանափակության քեորդական արդարա-
ցումն ե», թե «Մուսասիտանի բանվոր դասա-
կարգը առանց յիշրոպական պրոլետարիա-
տի պետական ուղղակի ոժանդակության

չի կարեղանա իշխանության զլուխ մնալ»
(Տրոցկի):

Կուսակցությունը պնդում ե, վոր ոպո-
ղիցիոն բլոկի այդ գրույթները սոցիալ-դե-
մոկրատական թեքման արտահայտություն
են հանդիսանում մեր կուսակցության մեջ.

Կուսակցությունը պնդում ե, վոր ընկ.
Տրոցկու ֆորմուլան «յիշրոպական պրոլե-
տարիատի պետական ուղղակի ոժանդակու-
թյան» մասին՝ լենինիզմից լիովին խզվելու
փորձության մեջ մեր յերկրում սոցիալիզմի կառուցումը
կախման մեջ դնել «յիշրոպական պրոլե-
տարիատի պետական ուղղակի ոժանդակու-
թյունից»: Հապա ի՞նչ անել, յեթե յեշրո-
պական պրոլետարիատին չհաջողվի մերձա-
վորագույն տարիներում վերցնել իշխանու-
թյունը: Մեր հեղափոխությունը կարմղ ե
արդյոք Արևմուտքում հեղափոխության հաղ-
թանակին սպասելով՝ անորոշ ժամանակի ըն-
թացքում դատարկ տեղը պատվել: Կարելի՞
յեւ արդյոք հույս դնել, վոր մեր յերկրի
բուրժուազիան համաձայնի սպասել հե-

դափոխության հաղթությանն Արևմտաքում,
հրաժարվելով իր աշխատանքնեց և իր պայ-

քարից մեր տնտեսության սոցիալիստական
տարրերի դեմ Ընկ. Տրոցկու այդ Փորձու-

լայից չե՞ բխղում արդյոք իր գիրքերը մեր
տնտեսության կապիտալիստական տարրե-

րին աստիճանաբար հանձնելու հեռանկարը
և հետո Սրմուտքում հաղթական հեղափո-

խության ձգձգվելու դեպքում մեր կուսակ-

ցության՝ իշխանությունից հեռանալու հե-

ռանկարը:

Պարզ չե՞ արդյոք, վոր մենք այստեղ
գործ ունենք յերկու բոլորովին տարբեր
գծերի հետ, զորոնցից մեկը կուսակցության
ու լենինիզմի գիծն է, իսկ մյուսը՝ ուղղիւ-
հիայի ու արոցկիզմի գիծը:

Յես իմ զեկուցման մեջ հարցը ի ընկ.
Տրոցկուն և շարունակում եմ հարցնել մի՞-

թե դա ճիշտ չե, վոր առանձին յերկիրներում
սոցիալիզմի հաղթության հնարավորու-

թյան մասին լենինի թեորիան ընկ. Տրոց-

կին 1915 թ. վորակում եր իրու «ազ-

գային սահմանափակության» թեորիա: Բայց

յես պատճսխան չստացաւ Ինչու: Միթե լոե-
լու ֆիզուրան բանավիճի մեջ ցուցաբեր-
վող արիության նշան և այստեղ:

Յես, այնուհետև, հարցը ի ընկ. Տրոցկուն
և շարունակում եմ հարցնել միթե դա ճիշտ
չե, վոր նա սոցիալիզմի կառուցման թեու-
րիայի դեմ «ազգային սահմանափակության»
վերաբերյալ մեղադրանքը կրկնեց բոլո-
րովին մոտիկ անցյալում, 1926 թ. սեպ-
տեմբերին, ուղղված իր հայտ-
նի վագերագրի մեջ: Բայց յես այս անգամ
ել պատճսխան չստացաւ Ինչու: Արդյոք
վո՞չ այն պատճառով, վոր լուսաբան ֆիզու-
րան նույնպես յուրատեսակ «մանյովը» և
հանդիսանում ընկ. Տրոցկու մոտ:

Ինչի՞ մասին և խոսում այս ամենը:

Այն մասին, վոր ընկ. Տրոցկին մեր
յերկրում սոցիալիզմ կառուցելու հիմնական
հարցում մնում է լենինիզմի դեմ մղվող
ալայքարի իր հին գիրքերում:

Այն մասին, վոր ընկ. Տրոցկին, քաջու-
թյուն չունենալով ուղղակի հանդես գալու
լենինիզմի դեմ, փորձում է իր այդ պայ-

քարն սքողել Ստալինի գոյություն չունեցող
«թեորիայի» քննադատությամբ:

Սնցնենք մի ուրիշ «մանեվրողի», ընկ.
Կամենեվին: Նա, յերկի, վարակվել ե ընկ.
Տրոցկուց և սկսել ե նույնպես մանեվրել
Բայց նրա մանյօվըն ստացվել ե ավելի
կռպիտ, քան ընկ. Տրոցկունը Յեթե ընկ.
Տրոցկին փորձում եր միմիայն Ստալինին մե-
ղադրել տպա ընկ. Կամենեվը վերցրեց ու
մեղադրանք շպրտեց ամբողջ կուսակցու-
թյանը, հայտարարելով, թե նա, այսինքն՝
կուսակցությունը, «միջազգային հեղափո-
խական հեռանկարը նենդափոխում ե ազ-
դային-ուժքորմիստական հեռանկարով»: Զե-
րեք հաճի արդյոք. մեր կուսակցությունը,
բանից գուրս ե գալիս, միջազգային հեղա-
փոխական հեռանկարը նենդափոխում ե ազ-
դային-ուժքորմիստական հեռանկարով: Բայց
վորովհետեւ մեր կուսակցությունը Լե-
նինի կուսակցությունն ե, վորովհետեւ նա
սոցիալիզմի շինարարության մասին իր
վճիռներում ամբողջությամբու լիովին հեն-
դում ե Լենինի հայտնի դրույթների վրա,

ապա գուրս ե գալիս, վոր սոցիալիզմի շի-
նարարության լենինյան թեորիան ազգա-
յին-ուժքորմիզմի թեորիան ե, Լենինը՝
«աղջային-ուժքորմիստ» — ահա թե ինչ հի-
մարությամբ ե մեզ հյուրասիրում ընկ. Կա-
մենեվը:

Մեր կուսակցությունն արզյոք վորեն
վճիռ ունի մեր յերկրում սոցիալիզմ կա-
ռուցելու հարցի մասին: Այս, ունի, և նույն-
իսկ շատ վորոշակի վճիռներ: Յերբ ե ըն-
դունել կուսակցությունն այդ վճիռները:
Նա դրանք ընդունել ե մեր կուսակցության
XIV կոնֆերենցիայում 1925 թ. ապրիլին:
Յես նկատի ունեմ XIV կոնֆերենցիայի
հայտնի բանաձեռ ԿիԴԿ. ի աշխատանքի և
մեր յերկրի սոցիալիստական շինարարու-
թյան մասին: Լենինյան ե արդյոք այդ
բանաձեռը: Այս, լենինյան ե, վորովհետեւ դրա
համար մեզ կարող են յերաշխավորել այն-
պիսի իրազեկ մարդիկ, ինչպես ընկ. Զինով-
յեֆը ե, վորը XIV կոնֆերենցիայում զե-
կուցում եր ի պատպանություն այդ բանա-
ձեռի, և ընկ. Կամենեվը, վորը նախադահում եր

այդ կոնֆերենցիայում և վորը ձայն ե տպել
այդ բանաձեկի ոգտին:

Իսկ ինչու այն ժամանակ ընկ. ընկ.
Կամենեմին ու Զինովյեվը չաշխատեցին բըռ-
նել կուսակցության հակասությունները,
նրա տարընթացությունը ՏԽՎ կոնֆերեն-
ցիայի բանաձեկի հետ՝ մեր յերկրում սոցիա-
լիզմ կառուցելու մասին, վորը (բանաձեկ),
ինչպես հայտնի յե, ընդունվեց միաժամ:

Թվում ե, թե զրանից ել հեշտ բնին.
կուսակցությունը հատուկ բանաձեւ ունի
սոցիալիզմի կառուցման հարցի մասին, այդ
բանաձեկի ոգտին ձայն են տվել Կամենեմին
ու Զինովյեվը, այդ յերկու ընկերներն ել
կուսակցությանը մեղադրում են նացիոնալ-
ռեֆորմիզմի միջ, —ինչու այդ ընկերները
չուտածառաբանելին կուսակցական այնպիսի
մի կարեոր վավերագրից յելնելով, ինչ-
պիսին ՏԽՎ կոնֆերենցիայի բանաձեւ ե,
վորը խոսում է մեր յերկրում սոցիալիզմ
կառուցելու մասին և վորը, ակներեւ ե, սկզբ-
բից մինչև վերջը լենինյան ե:

Դուք արդյոք ուշադրություն դարձրիք,

վոր ոպողիցիան առհասարակ, կամենեմին
առանձնապես շրջանցում եյին ՏԽՎ կոնֆե-
րենցիայի բանաձեկը, ինչպես կատուն տաք
քաշովին: (Նիծաղ): Վարտեղից ե, վոր նրանք
այդպես վախենում են ՏԽՎ կոնֆերենցիա-
յի բանաձեկից, վորն ընդունվել եր
ընկ. Զինովյեվի զեկուցման առթիվ և անցել
ընկ. Կամենեմի գործոն մասնակցությամբ:
Ինչու Կամենեմին ու Զինովյեվը վախենում
են նույնիսկ հարևանցի հիշատակել այդ
բանաձեկի մասին: Միթե նա, այդ բանաձեկը,
չի խոսում մեր յերկրում սոցիալիզմի կառու-
ցելու մասին: Միթե սոցիալիզմի կառուց-
ման հարցը մեր գիսկուսիայի հիմնական
վիճելի հարցը չե:

Այստեղ ինչն ե բանը:

Հենց այն, վոր ընկ. ընկ. Կամենեմին ու
Զինովյեվը, 1925 թվականին ՏԽՎ կոնֆե-
րենցիայի բանաձեկի կողմանից լինելով՝
հետո հրաժարվեցին այդ բանաձեկից, հրա-
ժարվեցին, ասել կուզի, լենինիզմից, ան-
ցան արոցկիզմի կողմը, և այժմ նրանք վա-
խենում են թեկուզ հարևանցիորեն շոշափել

այդ բանաձեւը, յերկյուղ կը ելով մերկաց-
վելուց:

Ինչի՞ մասին և խոսում այդ բանաձեւը:
Ահա մի ցիտատ այդ բանաձեւից.

«Ընդհանրապես սոցիալիզմի հաղթությունը (վոչ
վերջնական հաղթության իմաստով) անպայման հնա-
րավոր և մեկ յերկրում»:

Յեղ այնուհետեւ.

«...Հասարակական ուղղակի հակագիր յերկու
սիստեմների առկայությունը կապիտալիստական ըլո-
կադի, անտեսական ճնշման ուրիշ ձեերի, զինված
ինտերվենցիայի, ռեսուտվացիայի մշտական սպառ-
նալիք են առաջ քերում. Սոցիալիզմի վերջնական հաղ-
թության միակ յերաշնէքը, այսինքն յերաժիշտը
ռեսուտվացիայի գետ, հետեւաբար, հանդիսանում է
սոցիալիստական հաղթական հեղափոխությունը մի
շարք յերկիրներում: Սրանից բնալ չի բղխում, քե-
անհնար և լիակատար սոցիալիստական հասարակու-
թյան կառուցաւմը այնպիսի նետամեաց մի յերկում,
ինչպիսին Ռուսաստանն է, առանց տեխնիկա-անտե-
սականի կողմից ավելի զարգացած յերկիրների ռավ-
սական ոգնության»¹ (Տրոցկի), Պերմանենտ հեղափո-
խության տրոցկիստական թեորիայի բաղկացուցիչ

մասն այն պնդումն է, թե Շմասաստանում սոցիա-
լիստական անտեսության իսկական վերկրթը հնարա-
վոր կղառնա միայն Յեղոպայի կարևորագույն յեր-
կիրներում պրոլետարիատի հաղթությունից հետո
(Տրոցկի, 1922 թ.), մի պնդում, վորը ներկա ժամա-
նակացընում ԽՍՀՄ-ի պրակտարիատին ֆաստակիս-
տական պասոիվության և գաստարարում նմանութե-
նակ թերթիաների դեմ ընկ. Լենինը դրում եր. «Ան-
վերջորեն շարլոտ և նրանց այն փաստարկը, վոր
նրանք անդիք են արել արեմուայելվողական սո-
ւիալ-գեմուկըստայի զարգացման ժամանակ և վորի
եյությունն այն է, թե մենք չենք անել սոցիալիզմի
հասնելու չսփ, թե մնանում չկան, ինչպես նրան-
ցից զանազան Շփորնական պարուններ են արտա-
հայտվում, որյեկտիվ նախադրյալներ սոցյալիզմի
համար (Դիտողություններ Սուխանովի մասին»²
(ՈՒԿ ԽIV կոնֆերնենցիայի բանաձեւը «Կոմինտերնի
և ՈՒԿ(Բ)Կ խնդիրների մասին Կիցի ի ընդլայնված
պլենումի կապտելցությամբ»),

Դուք տեսնում եք, վոր XIV կոնֆերնե-
նցիայի բանաձեւը մեր յերկրում սոցիալիզմ
կառուցելու հնարավորության հարցում լե-
նինիզմի ունեցած հիմնական դրույթների
ճշգրիտ շարպերանքն է:

Դուք տեսնում եք, վոր բանաձեւի մեջ
տրոցկիզմը վորակվում է իրրե հակադրու-

¹ Ընդդժումն իմն եւ ի. Աս.:

թյուն լենինիզմին, իսկ բանաձևի մի շարք
թեղիսները յենում են տրոցկիզմի հիմունք-
ների ուղղակի բացասումից:

Դուք տեսնում եք, վոր բանաձևն ամ-
բողջությամբ արտացոլում ե այն վեճերը,
վոր այժմ նորից տեղի ունեցան մեր յերկ-
ռում սոցիալիստական հասարակություն կա-
ռուցելու հարցում:

Դուք գիտեք, վոր իմ զեկուցումը
կառուցված եր այդ բանաձևի զեկալարող
դրույթների հիմքի վրա:

Դուք հիշում եք, յերեխ, վոր յես իմ զե-
կուցման մեջ հատկապես հիշատակեցի ՏՎ
կոնֆերենցիայի բանաձևը, ընկ. ընկ. Կա-
մենեվին և Զինովյեվին մեղադրելով այդ
բանաձևը խախտելու համար, այդ բանա-
ձևից նահանջելու համար:

Համար ինչու ընկ. ընկ. Կամենեվին ու Զի-
նովյեվը չփորձեցին ցըել այդ մեղադրանքը:

Այստեղ ինչումն ե գաղանիքը:

Գաղտնիքն այստեղ նրանումն ե, վոր
Կամենեվին ու Զինովյեվը վաղուց արդեն

հրաժարվել են այդ բանաձևից և, հրաժար-
վելով՝ անցել տրոցկիզմի կողմը:

Վորովհետև յերկուսից մեկը. կա՛մ ՏՎ
կոնֆերենցիայի բանաձևը լենինյան չե,—
և այն ժամանակ ընկ. ընկ. Կամենեվին ու
Զինովյեվը, ձայն տալով այդ բանաձևի ոգ-
տին, լենինիստներ չեյին. կա՛մ այդ բանա-
ձևը լենինյան ե,—և այն ժամանակ ընկ.
ընկ. Կամենեվին ու Զինովյեվը, կտրելով կա-
պերն այդ բանաձևից, դադարել են լենի-
նիստներ լինելուց:

Այստեղ միքանի հոետորներ (նույն թվում,
կարծեմ, ընկ. Միզեն) ասում եյին, վոր վհչ
թե Զինովյեվին ու Կամենեվին են անցել զեղի
տրոցկիզմ, այլ, ընդհակառակը, Տրոցկին և
անցել Զինովյեվին ու Կամենեվի կողմը: Այդ
ամենը դատարկ բաներ են, ընկերներ: ՏՎ
կոնֆերենցիայի բանաձևից Կամենեվի ու
Զինովյեվի հրաժարութելու փաստն ուղղակի
ապացույց ե այն բանի, վոր հենց Կամե-
նեվին ու Զինովյեվին են անցել տրոցկիզմի
կողմը:

Այսպես ուրեմն.

Ո՞վ և հրաժարվել ԽՍՀՄ-ում սոցիալիզմ
կառուցելու հարցում լենինյան գծից, վորը
ձեակերպված և Համկե XIV կոնֆերենցիայի
բանաձեռում: Դուրս և գալիս, վոր ընկ. ընկ.
Կամենեֆը ու Զինովյեվը:

Ո՞վ և «միջազգային հեղափոխական հե-
ռանկարը նենդափոխել» տրոցկիզմով: Դուրս
և գալիս, վոր ընկ. ընկ. Կամենեֆը ու Զի-
նովյեվը:

Յեթե այժմ Կամենեֆը աղմկում ու աղա-
ղակում և մեր կուսակցության «նացիոնալ-
ուիֆորմիզմի» մասին, ապա այդ այն պատ-
ճառով, վոր նա փորձում է դրանով ընկեր-
ների ուշագրությունը հեռացնել իր մեղան-
չումից և մեղքն ուրիշի վրա զցել:

Ահա թե ինչու մեր կուսակցության
«նացիոնալ-ուեֆորմիզմի» վերաբերյալ ընկ.
Կամենեվի «մանյովրը» մի հնարանք ե, տգեղ
ու կոպիտ հնարանք այն ակնկալումով, վոր
մեր կուսակցության «նացիոնալ-ուեֆորմիզ-
մի» մասին աղաղակելով քողարկի իր հրա-
ժարումը XIV կոնֆերենցիայի բանաձեռից,

իր հրաժարումը լմնինիզմից, իր անցումը
տրոցկիզմի կողմբ:

Մենք ԽՍՀՄ-ում կառություն ենք
ՅԵՎ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼ
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԶԱՆ

1) Յես իմ զեկուցման մեջ ասում եյի,
վոր սոցիալիզմի բազական բազան
նում արդեն ստեղծված ե. դա պրոլետարիա-
տի զիկտատուրան ե: Յես ասում եյի, վոր
սոցիալիզմի անտեսական բազան դեռ բնակ
ստեղծված չե և այն դեռ պետք ե ստեղծել:
Յես, այնունետեւ, ասում եյի, վոր հարցն
այդ պատճառով այսպես և դրված. արդյոք
հնարավորություն ունենք մեր սեփական
ուժեղով կառուցելու սոցիալիզմի անտեսա-
կան բազան մեր յերկրում: Յես ասում
եյի, վերջուպես, վոր, յեթե այդ հարցը փո-
խադրենք դասակարգայինի, ապա նա հետե-
յալ տեսքը կընդունի. արդյոք հնարավո-
րություն ունենք մեր սեփական ուժեղով
հաղթահարելու մեր, խորհրդային, բուրժու-
ակիային:

Ըսկ. Տրոցկին իր ճառում պնդում ե, թե, խոսելով ԽՍՀՄ-ի բուրժուազիային հաղթահարելու մասին, յես նկատի ունեյի նրանք քաղաքականապես հաղթահարելը, Այդ սխալ ե, իհարկե՛, Դա ընկ. Տրոցկու փրակցիոն գայթակղությունն եւ իմ գեկուցումից յիրեվում ե, վոր, խոսելով ԽՍՀՄ-ի բուրժուազիային հաղթահարելու մասին, յես նկատի ունեյի նրան անտեսապես հաղթահարելը, վորովհետեւ քաղաքականապես նա արգեն հաղթահարված ե:

Ի՞նչ ե նշանակում ԽՍՀՄ-ի բուրժուազիային անտեսապես հաղթահարել: Կամ այլ կերպ՝ ի՞նչ ե նշանակում ԽՍՀՄ-ում սոցիալիզմի անտեսական բազա ստեղծել:

«Սոցիալիզմի անտեսական բազա ստեղծել՝ դա նշանակում ե զյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ մեկ ամբողջական անտեսության մեջ զողել, զյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի զեկավարմանը յինթարկել զյուղատնտեսության ու ինդուստրիայի արտադրանքների ուղղակի փոխանակման հիման վակարգի գցել հարաբերությունները քաղաքի ու գյուղի միջև, փակելու միևնուրացիայի յինթարկել այն բոլոր

կանալները, վորոնց ոգնությամբ ծնվում են գասահարդիքները և ծնվում ե, ամենից առաջ, կապիտալը, վերջիվերջո, ստեղծել արտագրության ու բաշխման այնպիսի պայմաններ, վորոնք ուղղակի ու անմիջականորեն տանում են դեպի գասակարգերի վոչնչացում» (աևս Ստալինի զեկուցումը Կիֆկի ՎII ընդլայնված պլենումում):

Ահա թե իմ զեկուցման մեջ յես ինչպես եյի բնորոշում սոցիալիզմի անտեսական բաղայի եյությունը ԽՍՀՄ-ում:

Այդ բնորոշումը սոցիալիզմի «անտեսական եյության», անտեսական բազայի» այն բնորոշման ձգորիտ շարադրանքն ե, վոր Լենինն ե ավել «Պարենհարկի մասին» բրոցյուրի իր հայտնի ուրվագծի մեջ:

Ճիշտ ե արդյոք այդ բնորոշումը, և կարող ենք արդյոք մենք հուսալ թե հնարավոր ե սոցիալիզմի անտեսական բազայի կառուցումը մեր յերկրում,—ահա թե վորն ե այժմ մեր առաջայնությունների հիմնական հարցը:

Ըսկ. Տրոցկին նույնիսկ չշոշափեց այդ հարցը: Նա պարզապես զանց արավ այն,

ըստ յերեսութիւն գտնելով, վոր ավելի խոռ
հեմություն կլինի լոել:

Իսկ վոր մենք կառուցում ենք և կարող
ենք կառուցել սոցիալիզմի տնտեսական բար-
դան, այդ յերեսում ե թեկուղ նրանից, վոր

ա) Մեր հանրայնացված արտադրությունը
խոշոր և միավորված արտադրություն ե,
այնինչ չհանրայնացված արտադրությունը
մեր յերկրում մանր ու ցիրուցան արտա-
դրություն ե, ընդուրում հայտնի յե, վոր
խոշոր, այն ել միավորված արտադրության
գերազանցությունը մանր արտադրության
հանդեպ՝ անվիճելի փաստ է:

բ) Մեր հանրայնացված արտադրու-
թյունն արդեն զեկավարում ե և սկսում ե
իրեն յենթարկել մանր արտադրությունը,
միևնույն ե, խոսքը վերաբերում ե արդյոք
քաղաքային մանր արտադրությանը, թե
գյուղականին:

գ) Մեր տնտեսության սոցիալիստական
տարրերի՝ կապիտալիստական տարրերի գեմ
մդած պայքարի ճակատում՝ առաջիններն
ուժերի անկանածելի գերակշռություն ուշ-

նեն յերկրութների հանդեպ և քայլ առ քայլ
առաջ են շարժվում՝ հաղթահարելով մեր
տնտեսության կապիտալիստական տարրե-
րին ինչպես արտադրության բնագավառում,
այնպես ել շրջանառության բնագավառում:

Ել յես չեմ խոսում ուրիշ գործոնների
մասին, վորոնք տանում են դեպի մեր տըն-
տեսության սոցիալիստական տարրերի հաղ-
թությունը կապիտալիստական տարրերի
դեմ:

Ի՞նչ հիմքեր կան յենթադրելու, թե մեր
տնտեսության կապիտալիստական տարրե-
րին հաղթահարելու պըսցեսն այսուհետեւ ել
չի շարունակվի:

2) Բնկ. Տըսցին իր ճառում ասում եր,

«Ստալինն ասում է, թե մենք սոցիալիզմի կա-
ռուցում ենք իրականացնում, այսինքն՝ ձգտում ենք
դասակարգերի ու պետության վոչչացման, այսին-
քըն՝ հաղթահարում ենք մեր բուժուազիային: Այս,
ըստ նկերներ, բայց չե վոր պետությանը բանակ է հար-
ընկերներ, արտաքին թշնամիների գեմ» (ցիտատը բերում
կավոր արտաքին թշնամիների գեմ):

Այդ ի՞նչ և նշանակում, վ՞եցն ե այս ցի-

տասաի լմաստըւ Այս ցիտատից կարելի յե
միայն մեկ յեղակացություն անել. վորով-
հետև սոցիալիզմի տնտեսական բազայն
կառուցումը նշանակում է դասակարգերի ու
պետության վոչնչացում, և վորովհետև բա-
նակը մեղ այնուամենայնիվ կհարկավորվի
սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու
համար, այնինչ բանակն առանց պետու-
թյան անհնարին և (այսպես և կարծում
ընկ. Տրոցկին),—ապա դուքս և գալիս, վոր
մենք սոցիալիզմի՝ տնտեսական բազա կա-
ռուցել չենք կարող մինչև այն մոմենտը,
քանի դեռ չի անհետացել սոցիալիստական
հայրենիքը զինված կերպով ոլաշտպանելու
անհրաժեշտությունը:

Այս, ընկերներ, բոլոր հասկացողություն-
ների խառնաշփոթումն եւ կամ այստեղ պե-
տություն ասելով հասկացվում է պարզա-
պես սոցիալիստական հասարակության զին-
ված պաշտպանության ավարատ, մի բան,
վոր անհեթեթ եւ, վորովհետև պետությունն,
ամենից առաջ, մեկ դասակարգի գործիքն և
մյուս դասակարգերի դեմ, ընդվորում, ինք-

նին հասկանալի յե, վոր քանի դասակար-
գեր չկան, պետություն եւ չի կարող լինել:
կամ սոցիալիստական հասարակության
պաշտպանության բանակն այստեղ մատածելի
չե առանց պետության առկայության, մի բան,
վոր այսուամենայնիվ անհեթեթ ե, վորով-
հետև թեորիապիս լիովին կարելիյե հասարա-
կության այնպիսի վիճակ թույլատրել, վորի
ժամանակ չկան դասակարգեր, չկա պետու-
թյուն, բայց կա զինված ժողովուրդ, վորն
իր անդասակարգ հասարակությունը պաշտ-
պանում ե արտաքին թշնամիներից: Սոցիո-
լոգիան քիչ որինակներ չի տալիս այն բա-
նի, վոր մարդկության պատմության մեջ
յեղել են հասարակություններ, վորոնք դա-
սակարգեր չեն ունեցել պետություն չեն
ունեցել, բայց այսպիս թե այնպիս պաշտ-
պանվել են արտաքին թշնամիներից: Նույն
բանը պետք է ասել ապագա անդասակարգ
հասարակության մասին, վորը, դասակար-
գեր ու պետություն չունենալով, կարող է
այնուամենայնիվ սոցիալիստական միլիցիա
ունենալ վորն անհրաժեշտ և արտաքին

Աշնամիներից պաշտպանովելու համար Յես
քիչ հավանական ևմ համարում, վոր մեղառ
նում բանը կարողանա հասնել այդպիսի
վիճակի, վորովհետեւ կասկածի յենթակա չե,
վոր սոցիալիստական շինարարության հա-
ջողությունները մեր յերկրում, իսկ մանա-
վանդ սոցիալիզմի հաղթությունն ու դասա-
կարգերի վոչնչացումը,—սրանք համաշխար-
հային-պատմական նշանակություն ունեցող
այնպիսի փաստեր են, վորոնք չեն կարող
առաջ չըերել կապիտալիստական յերկեր-
ների պրոլետարների հողը ձգտումը դեսպի-
սոցիալիզմ, վորոնք չեն կարող նեղափոխա-
կան պրոլետարներ առաջ չըերել ուրիշ յեր-
կերներում: Բայց թեորիապես լիովին թույ-
լատրելի յե հասարակության այնպիսի վի-
ճակ, վորի ժամանակ մտածելի յե սոցիա-
լիստական միլիցիայի գոյությունը առանց
դասակարգերի ու պետությունների առկա-
յության:

Ասենք, այս հարցը վորոշ չափով լուսա-
բանված և մեր կուսակցության ծրագրում;
Ահա թե այնտեղ ինչ և առված,

«Կարմիր բանակը, իբրև պրոլետարական դիկտա-
տուրայի զենքը և անհրաժեշտաբար ունենա
բացահայտորեն դասակարգային բնույթ, այդինքն՝
կազմվի բացառապես պլութարքիստակց և զյուղացի-
ության՝ նրան մոռիկ կիսապրոլետարական խավերից:
Նաև նորինակ դասակարգային բանակը դասակարգերի
վոչնչացման կապակցությամբ միայն կիուսարկի հա-
մաժառությական սոցիալիստական միլիցիայի» ¹ (առև
Համի (ը)կ ծրագիւը):

Ընկ. Տրոցկին, ըստ յերկութին, մոռա-
ցել և մեր ծրագրի այդ կետը:

3) Ընկ. Տրոցկին իր ճառի մեջ խոսում
եր համաշխարհային կապիտալիստական
անտեսությունից մեր ժողովրդական անտե-
սության ունեցած կախման մասին և հավա-
տացնում եր, թե «մեկուսացած ուղմական
կոմունիզմից մենք ավելի ու ավելի գալիս
ենք դեպի սերտաճում համաշխարհային
անտեսության հետ»:

Այսպիսով, գուրս և գալիս, վոր մեր ժո-
ղովրդական անտեսությունը կապիտալիս-
տական ու սոցիալիստական տարրերի

¹ Ընդգծումն իմ և Ի. Ս.:

իր պայքարով մեկտեղ սերանում և համաշշաբարհային կտպիտալիստական տնտեսության հետ։ Յես խոսում եմ կտպիտալիստական համաշխարհային տնտեսության մասին, վորովհետև բնության մեջ ներկա մոմենտում ուրիշ համաշխարհային տնտեսություն գոյություն չունի։

Դա սխալ է, ընկերներ։ Դա անհեթեթություն եւ։ Դա ընկեր Տրոցկու Փրակցիոն գայթակղությունն եւ։

Վոչ վոք չի ժխտում, վոր գոյություն ունի մեր ժողովրդական տնտեսության կախումը համաշխարհային կապիտալիստական տնտեսությունից։ Այդ բանը վոչ վոք չի ժխտում, ինչպես նաև վոչ վոք չի ժխտում, վոր գոյություն ունի յուրաքանչյուր յերկրի և յուրաքանչյուր ժողովրդական տնտեսության կախումը միջազգային կապիտալիստական տնտեսությունից, չբացառելով նաև ամերիկական ժողովրդական տնտեսությունը։ Բայց այդ կախումը յերկրուստիկան է ամերիկուստիկան միջազգային կապիտալիստական տնտեսությունն եւ կախված կապիտալիստական յերկիրներից։ Այս ամենը կապիտալիստական յերկիրների կախումն մեր տնտեսությունից։ Կախումն այստեղ յերկրուստիկ է, ամերիկական շուկա յի վաճառահանման համար, և կապիտալիստական յերկիրները չեն կարող յոլա գնալ առանց մեր շուկայի հետ այս կամ այն կապն ունենալու։ Այս ամենը կապիտալիստական յերկիրների կախումն եւ մեր տնտեսությունից։ Կախումն այստեղ յերկուստեղ է։

Կան յերկիրներից, այլև կապիտալիստական յերկիրները կախված են մեր տնտեսությունից, մեր նավթից, մեր հացից, մեր փայտեղնից, վերջապես, մեր անձայրածից շուկայից։ Մենք, ասենք, վարկեր ենք ստանում «Ստանդարտ-Ռյլից»։ Վարկեր ենք ստանում գերմանական կապիտալիստներից։ Բայց այդ բաները մեր գեղեցիկ աչքերի համար չենք ստանում, այլ՝ վորովհետեւ կապիտալիստական յերկիրները կարիք ունեն մեր նավթին, մեր շուկային՝ սարքավորում վաճառահանման համար։ Զի կարելի մոռանալ, վոր մեր յերկիրն աշխարհի միջ վեցերորդ մասն ե, հսկայական շուկա յի վաճառահանման համար, և կապիտալիստական յերկիրները չեն կարող յոլա գնալ առանց մեր շուկայի հետ այս կամ այն կապն ունենալու։ Այս ամենը կապիտալիստական յերկիրների կախումն եւ մեր տնտեսությունից։ Կախումն այստեղ յերկուստեղ է։

Այս նշանակմամբ և արդյոք, թե կապիտալիստական յերկիրներից մեր ժողովրդա-

կան անտեսության կախումը բացառում և մեր յերկրում սոցիալիստական աշխատեառություն կառուցելու ճնարավորությունը: Ի՞նարկե, չի նշանակում: Սոցիալիստական անտեսությունը պատկերացնել իրեւ բացարձակորեն ինքնամփոփի և բացարձակորեն անկախ շրջապատող ժողովրդական տնտեսություններից, — նշանակում և հիմարություն պնդել: Կարելի՞ յի արդյոք պնդել թե սոցիալիստական անտեսությունը բացարձակորեն վոչ մի արտահանում և ներառում չեւ ունենա, չի ներմուծի յերկրում չունեցած պրոդուկտները և դրա կազմակցությամբ չի արտահանի իր պրոդուկտները: Վաչ, չի կարելի պնդել: Իսկ ի՞նչ բան են արտահանումն ու ներմուծումը: Դա մի խումբ յերկիրների՝ մի այլ խումբ յերկիրներից ունեցած կախման արտահայտությունն եւ: Դա անտեսական փոխադարձ կախման արտահայտությունն եւ:

Հենց նույն բանը պետք է ասել մեր ժամանակի կապիտալիստական յերկիրների մասին: Դուք չեք կարող պատկերացնել

վոչ մի յերկիր, վորն արտահանում ու ներառում չունենար: Վերցնենք Ամերիկան, աշխարհի բոլոր յերկիրներից ամենաարուստ յերկիրը: Կարելի՞ յի արդյոք ասեմ թե ներկա կապիտալիստական պետությունները, ասենք, Անգլիան կամ Ամերիկան, բացարձակապես անկախ յերկիրներ են: Վաչ, չի կարելի ասել ինչեւ: Վորովհեան նրանք կախում ունեն արտահանումից ու ներմուծումից, նրանք կախում ունեն ուրիշ յերկիրներից բերվող հումքից (Ամերիկան, որինակ, կախում ունի կառուչուկից և հումքի այլ առարկաներից), նըանք կախում ունեն վաճառուհանման այն շուկաներից, ուր նըանք արտահանում են իրենց սարքավորումն ու այլ պատրամտի ապրանքները:

Այդ նշանակում է արդյոք, վոր յեթե բացարձակ անկախ յերկիրներ չկան, ապա դրանով հենց բացառվում է առանձին ժողովրդական տնտեսությունների ինքնուրույնությունը: Վաչ, չի նշանակում: Մեր յերկիրը կախում ունի ուրիշ յերկիրներից, ճիշտ այնպիս, ինչպես ուրիշ յերկիրներ

կախում ունեն մեր ժողովրդական տնտեսությունից, բայց այդ դեռ չի նշանակում, թե մեր յերկիրը հենց դրանով ել կորցրել և կամ կորցնելու յի իր ինքնուրույնությունը, թե նա չի կարող պաշտպանել իր ինքնուրույնությունը, թե նա պետք ե դառնա միջազգային կապիտալիստական տնտեսության մի պատուակիկը: Պետք ե տարբերություն դնել մի խումբ յերկիրների՝ ուրիշ յերկիրներից ունեցած կախման և այդ յերկիրների տնտեսական ինքնուրույնության միջև: Առանձին ժողովրդական-տնտեսական միավորների բացարձակ անկախությունը ժխտելը դեռ չի նշանակում և չի կարող նշանակել այդ միավորների տնտեսական ինքնուրույնությունը ժխտել:

Բայց ընկ. Տրոցկին մեր ժողովրդական տնտեսության ունեցած կախման մասին չի խոսում միայն: Նա այդ կախումը փոխարկում ե մեր տնտեսության սերտաճան՝ համաշխարհային կապիտալիստական տնտեսության հետ: Բայց ինչ և նշանակում մեր ժողովրդական տնտեսության սերտաճում համաշխարհային կապիտալիստական

տնտեսության հետ: Այդ նշանակում ե՝ մեր տնտեսությունը դարձնել համաշխարհային կապիտալիզմի կցորդը: Բայց մեր յերկիրը միթե համաշխարհային կապիտալիզմի կցորդն ե: Ինտերկե, վնչ Դա հիմարություն ե, ընկերներ: Դա լուրջ բան չե Յեթե այդ ճիշտ լիներ, ապա մենք վոչ մի հասարակություն չելինք ունենա պաշտպանելու մեր սոցիալիստական արդյունաբերությունը, արտաքին առևտորի մեր մենաշնորհը, մեր աղգայնացված տրանսպորտը, մեր աղգայնացված վարկը, տնտեսության մեր պլանային ղեկավարությունը: Յեթե այդ ճիշտ լիներ, ապա մենք կանգնած կլինելինք մեր սոցիալիստական արդյունաբերության՝ սովորական կապիտալիստական արդյունաբերությանը վերասերվելու ճանապարհին: Եեթե այդ ճիշտ լիներ, ապա մենք հաջողություններ չելինք ունենա կապիտալիստական տարբերի դեմ մեր տնտեսության սոցիալիստական տարբերի մղած պայքարի ճակատում:

4) Ծնկ. Տրոցկին իր ճառում ասում եր, թե «իրականում մենք ամբողջ ժամանակ

գտնվելու յենք համաշխարհային տնտեսության կոնցեռնի տակ»:

Այսպիսով, դուքս և գալիս, վոր մեր ժողովրդական տնտեսությունը զարգանալու յի համաշխարհային կապիտալիստական տնտեսության կոնտրոլի տակ, վորովհետեւ այժմ ուշը իշխանական տնտեսություն, բացի կապիտալիստականից, չկա բնության մեջ:

Ճիշտ և արդյոք սա: Վոչ, ճիշտ չե: Դա կապիտալիստական գայլաձկների յերազն և, վորը յերբեք չի կենացրեծվի:

Ի՞նչ և նշանակում համաշխարհային կապիտալիստական տնտեսության կոնտրոլ: Կոնտրոլը կապիտալիստների բերանում դատարկ խոսք չե: Կոնտրոլը կապիտալիստների բերանում մի ռեալ բան և:

Կապիտալիստական կոնտրոլը — դա, առանից առաջ, նշանակում և ֆինանսական կոնտրոլ: Բայց միթե ազգայնացված չեն մեր բանկերը և միթե նրանք յեվրոպական կապիտալիստական բանկերի զեկավարությամբ ին աշխատում: Ֆինանսական կոնտրոլ — այդ նշանակում և մեր յերկրում ապա-

մատավորել կապիտալիստական խոշոր բանկերի բաժանմունքներ, այդ նշանակում և այսպես կոչված «գումար» բանկեր կազմակերպել: Բայց միթե մենք այդպիսի բանկեր ունենք, իհարկե, վճչ: Յեկ վճչ միայն չունենք, այլ յերբեք ել չենք ունենա, քանի վող և Խորհրդային իշխանությունը:

Կապիտալիստական կոնտրոլ — դա նշանակում և կոնտրոլ մեր արդյունաբերության վրա, մեր սոցիալիստական արդյունաբերության ավաղգայնացում, մեր տրանսպորտի անվազգայնացում: Բայց միթե ազգայնացված չե մեր արդյունաբերությունը, և միթե նա չի առում հենց իբրև աղքայնացված արդյունաբերություն: Միթե մեկնումեկը պատրաստվում և ապազգայնացնելու աղքայնացված հիմնարկություններից թեկուզ մեկը: Յես չգիտեմ, իհարկե, թե ինչ յենթաղբություններ կան այստեղ, Կոնցեռնումում: (Միծադ): Բայց վոր աղքայնացնողները կը անք չեն ունենամեր յերկրում, քանի ասլրում և Խորհրդա-

յին իշանությունը, — գրա մասին կարող
եք չկասկածել:

Կապիտալիստական կոնտրոլ — դա նշաւ-
նակում և մեր շուկայի վերաբերյալ տնօրի-
նության իրավունք, դա նշանակում և ար-
տաքին առևտրի մենաշնորհի վերացում:
Յս գիտեմ, վոր Արևմուտքի կապիտալիստ-
ները հաճախ են ճակատները պատին տվել,
աշխատելով ձեղքել արտաքին առևտրի մե-
նաշնորհի զրահը Հայտնի ե, վոր արտա-
քին առևտրի մենաշնորհը մեր յերիտասարդ
սոցիալիստական արդյունաբերության վա-
հանն ու պատվարն եւ Բայց միթե կապի-
տալիստներն արդեն կարողացել են հաջո-
ղություններ ձեռք բերել արտաքին առև-
տրի մենաշնորհը լիկիդացիայի յենթարկե-
լու գործում: Միթե գժվար և հասկանալը,
վոր քանի կա Խորհրդային իշխանությունը,
արտաքին առևտրի մենաշնորհը կապրի ու
վողջ կլինի, չնայած և վոչ մի բանի:

Կապիտալիստական կոնտրոլը նշանա-
կում ե, վերջապես, քաղաքական կոնտրոլը
մեր յերկրի քաղաքական ինքնուրույնու-

թյան վոչնշացում, յերկրի որենքների հար-
մարեցում միջազգային կապիտալիստական
տնտեսության շահերին ու ճաշակներին:
Բայց միթե մեր յերկրը քաղաքականա-
պես ինքնուրույն յերկրը չե, Միթե մեր
ուրենքները մեր յերկրի պըռութարիատի և
աշխատավոր մասաների շահերի կողմից
չեն թելադրվում: Ինչու փաստեր չըերեւ
թեկուզ մեկ փաստ, վորը խօսեր մեր յերկրի
քաղաքական ինքնուրույնության կորստի
մասին թող փորձեն ըերել:

Ոհա թե կտակիտալիստների մոտ ինչ-
պես և հասկացվում կոնտրոլը յեթե, իհար-
կե, խոսելու լինենք խսկական կոնտրոլի
մասին, և զայ թե դատարկ շաղակրատենք
ինչ-վոր անմարմին կոնտրոլի մասին:

Յեթե խոսքը վերաբերում է այդպիսի
խսկական կապիտալիստական կոնտրոլին—
խսկ խոսքը վերաբերել կարող և միայն այդ-
պիսի կոնտրոլին, վորովհետեւ անմարմին
կոնտրոլի մասին դատարկ շաղակրատան-
քով զբաղվել կարող են միայն վատ գրա-
կանագետները, — ապա յս պետք ե հայ-

ատարարեմ, վոր այդպիսի կոնսարոլ մեղանում
չկա, և նա յերբեք չի լինի, քանի կենդանի
յի մեր պըռլետարիատը և քանի մեղանում
կա պըռլետարիատի դիկտատուրա: (Ծափա-
հայրուրյուններ):

5) Ընկ. Տրոցկին իր ճառում ասում եր.

«Խոսքն այն մասին ե, վոր համարխարհային կա-
պիտալիստական տնտեսության շրջադատման մեջ
կառուցենք մեկուսացած սոցիալիստական պետու-
թյուն Դրան հասնել կարելի յե լոկ նրանով, վոր
այդ մեկուսացած պետության արտադրողական ուժերն
ավելի բարձր լինեն կապիտալիզմի արտադրողական
ուժերից, վորովհետեւ հեռանկարում վճէ թե մեկ տա-
րով կամ տաս ատրով, այլ կես դարով, նույնիսկ մեկ
դրանվականդվել կարող ե լոկ այն պետությունը,
այն նոր հասարակական ձևը, վորի արտադրողական
ուժերն ավելի հզոր զուրս կդան, քան հին տնտեսա-
կան սիստեմի արտադրողական ուժերը» (տես Կիջելի
Վ.Ա ընդլայնված պլենումում ընկ. Տրոցկու արտասա-
նած ճառի սղագրությունը):

Այսպիսով, դուրս ե գալիս, վոր մի հի-
սուն կամ նույնիսկ հարյուր տարի յե տն-
հրաժեշտ, վորպիսզի տնտեսության սոցիա-
լիստական սիստեմը գործով ապացուցի

արտադրողական ուժերի զարգացման ան-
սակետից իր գերազանցությունը տնտե-
սության կապիտալիստական սիստեմից:

Դա սխալ ե, ընկերներ: Դա բոլոր հե-
ռանկարների շփոթումն ե:

Վորպիսզի տնտեսության ֆեոդալական
սիստեմն ապացուցեր իր գերազանցությունը
տնտեսության ստրկական սիստեմից, գրա-
վրա, կարծեմ, զնաց մոտ յերկու հարյուր
տարի, յեթի վաչ պակաս: Յեկ այլ կերպ
չեր ել կարող լիներ վորովհետեւ այն ժա-
մանակ զարգացման տեմպը սարսավելի
դանդաղ եր, իսկ արտադրության տեխնի-
կան ավելի քան պըռմիտիվ եր:

Վորպիսզի տնտեսության բուրժուական
սիստեմն ապացուցեր իր գերազանցությու-
նը տնտեսության ֆեոդալական սիստեմից,
գրա վրա զնաց ինչ վոր մատ հարյուր տա-
րի կամ դրանից ել քիչ: Արդեն ֆեոդալա-
կան հասարակության ընդերքում տնտե-
սության բուրժուական սիստեմը ցույց տվեց,
վոր ինքն ավելի բարձր ե, շատ ավելի
բարձր, քան տնտեսության ֆեոդալական

սիստեմը: Ժամկետների տարբերությունն
այստեղ բացատրվում է զարգացման ավելի
արագ տեմպով և տնտեսության բուրժուա-
կան սիստեմի ավելի զարգացած տեխնի-
կայով:

Այն ժամանակվանից տեխնիկան չտես-
նըված հաջողություններ և ցույց տվել
իսկ զարգացման տևման ուղղակի դարձել
և կատաղի: Հարց և ծագում. ընկ. Տրոցկին
բնչ հիմք ունի յենթադրելու, թե անտե-
սության սոցիալիստական սիստեմին ինչ-
վոր մոտ հարյուր տարի կհարկավորվի տըն-
տեսության կապիտալիստական սիստեմից
իր գերազանցությունն ապացուցելու հա-
մար: Միթե այն փաստը, վոր արտադրու-
թյան գրուխ կանգնած կլինեն վճ թե
ձրիակերներ, այլ արտադրողներն իրենք, —
միթե այդ փաստը մեծագույն զործոնը
չե այն բանի, վոր տնտեսության սոցիա-
լիստական սիստեմը բոլոր շահարն ունե-
նալու յե, վորպեսզի յոթ մզնանոց քայլե-
րով առաջ շարժի տնտեսությունը և ավելի
կարճ ժամկետում ապացուցի իր գերազան-

ցությունը տնտեսության կապիտալիստա-
կան սիստեմից: Միթե այն փաստը, վոր
սոցիալիստական տնտեսությունն ամենից
ավելի միավորված տնտեսությունն ե, վոր
սոցիալիստական տնտեսությունը տարվում
և պլանային կարգով, — միթե այս փաստը
չի խոսում այն բանի ոգտին, վոր սոցիա-
լիստական տնտեսությունը կունենա բոլոր
պլյուսները, վորպեսզի համեմատաբար կարճ
ժամկետում ապացուցի իր գերազանցու-
թյունը տնտեսության կապիտալիստական
սիստեմից, վորին բգկտում են ներքին հա-
կասությունները և կրծում են ճնշաժա-
մերը:

Այս ամենից հետո պամբզ չե արդյոք,
վոր այստեղ հիսուն և հարյուր տարվա հե-
ռուսնկարով զործելք — դա նշանակում է
վախեցած քաղքենու սնուտի հավատ տածել
դեպի տնտեսության կապիտալիստական
սիստեմի ամենազորությունը: (Զայներ—
«Ճիշտ ե»):

Իսկ վորմաք են յեզրակացությունները:
Այստեղ յերկու յեզրակացություն կա:

Առաջին: Մեր յերկըում սոցիալիզմ կա-
ռուցելու հարցի վերաբերյալ իր առար-
կություններում ընկ. Տրոցկին բանակուլի
հին բազայից նահանջեց դեպի նոր բազան:
Առաջ սովորիցիան առարկում եր ներքին հա-
կասությունների տեսակետից, պրոլետա-
րիատի ու գյուղացիության միջև յեղած
հակասությունների տեսակետից, այդ հա-
կասությունները համարելով անհաղթահա-
րելի: Այժմ ընկ. Տրոցկին ընդունում է ար-
տաքին հակասությունները, մեր ժողովրդա-
կան տնտեսության և համաշխարհային կա-
պիտալիստական տնտեսության միջև յեղած
հակասությունները, այդ հակասություն-
ները համարելով անհաղթահարելի: Յեթե
առաջ ընկ. Տրոցկին գտնում եր, վոր մեր
յերկըում սոցիալիստական շինարարության
համար փորձության քար հանդիսանում են
պրոլետարիատի ու գյուղացիության միջև
յեղած հակասությունները, ապա այժմ նա
փոխում ե ճակատը, նահանջում և դեպի
կուսակցական դիրքի քննադատության մի
պազար և պնդում, թե սոցիալիստական

շինարարության համար փորձության քար
հանդիսանում են տնտեսության մեր սիս-
տեմի և համաշխարհային կապիտալիստա-
կան տնտեսության միջև յեղած հակասու-
թյունները: Դրանով նա իրականում ընդու-
նեց սովորիցիայի հին փաստարկների սնան-
կությունը:

Յերկըորդ: Բայց ընկ. Տրոցկու նահանջը
մի նահանջ և դեպի թավուտները, դեպի
ճանիճը: Ընկ. Տրոցկին ըստ բանի եյու-
թյան նահանջել և դեպի Սուխանովը ուղ-
ղակի և բացահայտորեն: Հստ բանի եյու-
թյան ինչի՞ յեն հանդում ընկ. Տրոցկու
«նոր» փաստարկները: Նըանք հանդում են
այն բանին, վոր մեր տնտեսական հետա-
մացության պատճառով մենք չենք անել-
հասել սոցիալիզմին, վոր մենք ոբյեկտիվ
նախադրյաներ չունենք սոցիալիստական
տնտեսություն կառուցելու համար, վոր այդ
պատճառով մեր ժողովրդական տնտեսու-
թյունը փոխարկվում և և պետք և փոխարկվի
համաշխարհային կապիտալիստական տնտե-
սության կցորդի, համաշխարհային կապի-

տալիպմի՝ կոնտրոլի յենթակա տնտեսական
միավորի:

Բայց սա «սուխանովշինա» յե, բացահայտ
ու վոչնչով չսքողվող «սուխանովշինա»:

Ոպողիցիան գլորվել ե դեպի մենշևիկ
Սուխանովը, դեպի մեր յերկրում սոցիալիս-
տական հաղթական շինարարության հնա-
րավորությունն ուղղակի ժխտելու նրա
դիրքը:

ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԵՆՔ ԿԱՌՈՒՑՈՒՄ՝ ԴԱՇՆԱԿՑԱՄ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԵՏ

Վոր մենք սոցիալիզմ ենք կառուցում՝
դաշնակցած գյուղացիության հետ, այդ,
կարծեմ, ուղղակի ժխտելու սիրտ չի անում
մեր ոպողիցիան։ Արդյոք մենք սոցիալիզմ
կառուցում ենք համաշխարհային պրոլետա-
րիատի հետ դաշնակցած, — դրա մասին ո-
պողիցիան նկրտում ունի կասկածելու։ Ո-
պողիցիան վոմանք նույնիսկ պըն-
դում են, թե մեր կուսակցությունը թերա-
գնահատում ե այդ դաշինքի նշանակու-

թյունը, իսկ նրանցից մեկը, ընկ. կամենե-
վը, նույնիսկ այն տեղը հասավ, վոր սկսեց
կուսակցությանը մեղադրել նացիոնալ-ռե-
ֆորմիզմի մեջ, միջազգային հեղափոխական
հեռանկարը նացիոնալ-ռեֆորմիստական հե-
ռանկարով նենդափիխելու մեջ։

Սա, ընկերներ, հիմարություն եւ Ան-
հուսալի հիմարություն։ Միայն խելագար-
ները կարող են ժխտել սոցիալիզմի կառուց-
ման գործում մեր յերկրի պրոլետարների՝
մնացած բոլոր յերկիրների պրոլետարների
հետ ունենալիք դաշինքի մեծագույն նշա-
նակությունը։ Միայն խելագարները կարող
են մեր կուսակցությանը մեղադրել բոլոր
յերկիրների պրոլետարների դաշինքի գոր-
ծը թերագնահատելու մեջ։ Միայն համաշ-
խարհային պրոլետարիատի հետ դաշինք
ունենալով ե, վոր կարելի յե սոցիալիզմ կա-
ռուցել մեր յերկրում։

Ամբողջ հարցն այն ե, թե ինչպես հաս-
կանալ այդ դաշինքը։

Թերբ ԽՍՀՄ-ի պրոլետարները 1917 թվա-
կանի հոկտեմբերին վեցըրին իշխանու-

թյունը,— ապա դա մի ոգնություն եր բոլոր յերկիրների պրոլետարներին, դա մի դաշինք եր նրանց հետ:

Յերբ Գերմանիայի պրոլետարները 1918 թվականին հեղափոխություն բարձրացրին,— ապա դա մի ոգնություն եր բոլոր յերկիրների պրոլետարներին, մանավանդ ԽՍՀՄ-ի պրոլետարներին, դա մի դաշինք եր ԽՍՀՄ-ի պրոլետարիատի հետ:

Յերբ Արևմտյան Յեկրոպայի պրոլետարները քայլայում եյին ինտերվենցիայի գործը ԽՍՀՄ-ում, զենք չեյին փոխազրում հականեղափոխական գեներալների համար, գործողության կոմիտեներ եյին սարքում և խարխլում եյին իրենց կապիտալիստների թիկունքը,— դա ոգնություն եր ԽՍՀՄ-ի պրոլետարներին դա արևմտա-յեկրոպական պրոլետարների դաշինքն եր ԽՍՀՄ-ի պրոլետարների հետ: Առանց այդպիսի ոժանդակության և առանց այդպիսի սանձի՛ մենք այժմ դադար չեյինք ունենա, իսկ առանց դադարի չեյինք ունենա մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու ծավալուն աշխատանք:

Յերբ կապիտալիստական յերկիրների պրոլետարները մեզ մոտ մի ամբողջ շարք պատվիրակություններ են ուղարկում, կոնտըլի յեն յենթարկում մեր շինարարությունը և հետո մեր շինարարության հաջողությունների համբավը տարածում են ամբողջ աշխատավորական Յեկրոպայում,— ապա դա ոգնություն և ԽՍՀՄ-ի պրոլետարներին, դա մեծագույն ոժանդակություն և ԽՍՀՄ-ի պրոլետարներին, դա դաշինք և ԽՍՀՄ-ի պրոլետարների հետ և սանձ և իմակերիալիստական հնարավոր ինտերվենցիայի դեմ մեր յերկրի վերաբերմաք: Առանց այդպիսի ոժանդակության և առանց այդպիսի սանձի՛ մենք այժմ դադար չեյինք ունենա, իսկ առանց դադարի չեյինք ունենա մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու ծավալուն աշխատանք:

Յերբ ԽՍՀՄ-ի պրոլետարներն ամրապնդում են իրենց դիկտուտուրան, լիկվիդացիայի յեն յենթարկում տնտեսական փլուզումը, շինարար աշխատանք են ծավալում և հաջողություններ ունենում սո-

ցիալիդմի կառուցման գործում,—ապա դա
մեծագույն ոժանդակությունն ե բոլոր յեր-
կիրների պրոլետարներին, նրանց պայքա-
րին կապիտալիզմի դեմ, նրանց պայքարին
իշխանության համար, վորովհետև խորհր-
դային հանրապետության գոյությունը,
նրա կայունությունը, նրա հաջողություն-
ները սոցիալիստական շինարարության
ճակատում համաշխարհային հեղափոխու-
թյան մեծագույն գործոն են, վորը բոլոր
յերկիրների պրոլետարներին խրախուսում
ե կապիտալիզմի դեմ մղած նրանց պայքա-
րում։ Հազիվ թե կարելի յե կասկածել, վոր
խորհրդային հանրապետության վոչչա-
ցումն իր հետեւց կը երեք ամենասև ու ամե-
նավատթար ռեակցիա կապիտալիստական
բոլոր յերկիրներում։

Մեր հեղափոխության ուժը և կապի-
տալիստական յերկիրների հեղափոխական
շարժման ուժը այդ փոխադարձ ոժանդա-
կության և բոլոր յերկիրների պրոլետար-
ների այդ դաշինքի մեջ ե։

Սրանք են ԽՍՀՄ-ի պրոլետարների՝

համաշխարհային պրոլետարիատի հետ ու-
նեցած դաշինքի զանազանատեսակ ձեւերը։

Ուղղղիցիային սխալն այն ե, վոր նա չի
հասկանում և կամ չի ընդունում դաշինքի
այդ ձեւերը։ Ուղղղիցիայի դժբախտությունն
այն ե, վոր նա դաշինքի միայն մի ձեւ ե
ընդունում, ԽՍՀՄ-ի պրոլետարիատի՝ Սրբ-
մոյան Յեվրոպայի պրոլետարների կողմից
«պետական ուղղակի ոժանդակություն»
ստանալու ձեւը, այսինքն՝ այն ձեւը, վորն
առայժմ, ցավոք սրտի, կիրառում չունի,
ընդվորում ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինա-
րարության բախտը նա ուղղակի կախման
մեջ ե դնում ապագայի այդ ոժանդակու-
թյունից։ Ուղղղիցիան կարծում ե, թե ո-
ժանդակության այլպիսի ձեւ ընդունելով
միայն կարելի յե կուսակցության համար
պահպանել ռեղափոխական միջազգային
հեռանկարը։ Բայց յես արդեն ասացի, վոր
համաշխարհային հեղափոխության ձգձգվե-
լու դեպքում այդպիսի դիրքը կարող է տա-
նել լոկ դեպի անդադար զիջումներ մեր
տնտեսության կապիտալիստական տարրե-

բին և, վերջիկերջո, դեպի կապիտուլանտուլ
թուն, դեպի պարտվողականություն:

Այսպիսով, դուրս ե գալիս. վոր ոպոզի-
ցիայի առաջարկած «պետական ուղղակի
ոժանդակությունը», իբրև համաշխարհային
պրոլետարիատի հետ ունեցած դաշինքի
միակ ձև, համաշխարհային հեղափոխու-
թյան ձգձգման գեպօւմ կապիտուլանտու-
թյան սքողումն ե հանդիսանում:

Ընկ. Կամենեվի «միջազգային հեղափո-
խական հեռանկարն» իբրև կապիտուլանտու-
թյան սքողումն,—ահա թե ընկ. Կամենեվը,
բանից դուրս ե գալիս, դեպի ուր ե տա-
նում գործը:

Ուստի միայն զարմանալ կարելի յե այն
համարձակության վրա, վորով այսուեղ
հանդես յեկավ ընկ. Կամենեվը, մեր կու-
սակցությանը մեղադրելով նացիոնալ-ռեֆոր-
միզմի մեջ:

Վ՞րտեղից—ի՞նչպես այլելի մեղմ ասենք—
այդպիսի համարձակություն ստացավ ընկ.
Կամենեվը, վորը մեղանում յերբեք աչքի

չի ընկել վեչ հեղափոխականությամբ, վեչ
ինտերնացիոնալիզմով:

Վ՞րտեղից այդպիսի համարձակությունը
ընկ. Կամենեվին, վորը մեզանում միշտ յե-
ղել ե բոլցելիկ մենշևիկների մեջ և մենա-
շեկ բոլցելիկների մեջ։ (Միծաղ)։

Վ՞րտեղից այդպիսի համարձակություն
ձեռք բերեց ընկ. Կամենեվը, վորին կենքնն
իր ժամանակին լիակատար հիմունքով ան-
վանեց Հոկտեմբերյան հեղափոխության
«շտրայկը բերեր»։

Ընկ. Կամենեվը ցանկանում ե իմանալ՝
իՍՀՄ-ի պրոլետարիատն ինտերնացիոնալ
ե արդյոք։ Յես պետք ե հայտարարեմ, վոր
իՍՀՄ-ի պրոլետարիատը կարոտ չե Հոկ-
տեմբերյան հեղափոխության «շտրայկը բերե-
իրի» վկայականին։

Դուք ուզում եք ԽՍՀՄ-ի պրոլետարիա-
տի ինտերնացիոնալիզմի չմփն իմանալ
Հարցը բանդիկական բանվորներին, հարց-
ը քերմանական բանվորներին (բուռն
ծափահարություններ), հարցը քթուրքական
բանվորներին, հարցը չինական բանվոր-

ներին,—և նրանք ձեզ կպատմեն ԽՍՀՄ-ի
պլութարիատի ինտերնացիոնալիզմի մա-
սին:

ՎԵՐԱՍԵՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Այսպիսով, կարելի յէ ապացուցված հա-
մարել, վոր ոպողիցիան կանգնած ե մեր
յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավո-
րությունն ուղղակի ժխտելու տեսակետի
վրա:

Բայց սոցիալիզմի կառուցման հնարա-
վորությունը ժխտելը տանում ե դեպի կու-
սակցության վերասերման հեռանկարը, իսկ
վերասերման հեռանկարը, իր հերթին, տա-
նում ե դեպի հեռացում իշխանությունից և
դեպի նոր կուսակցություն կազմելու հար-
ցը:

Հնկ. Տրոցկին ձևացավ, թե ինքը չի
կարող լրջորեն վերաբերվել այս հարցին:
Սա դիմակավորումն ե:

Կասկած չի կարող լինել, վոր յեթե մենք
չենք կարող սոցիալիզմ կառուցել, իսկ հե-
ղափոխությունն ուրիշ յերկրներում ձբդ-

ձբդում ե, մինչդեռ մեզանում կապիտալն
աճում ե, նույնպես, ինչպես աճում ե մեր
ժողովրդական տնտեսության ևսերտաճումը»
համաշխարհային կապիտալիստական տնտե-
սության հետ,—ապա ոպողիցիայի տեսակե-
տով միայն յերկու յելք ե մնում.

ա) Կամ իշխանության գլուխ մնալ և
բուրժուական դեմոկրատիայի քաղաքակա-
նություն կիրառել, մասնակցել բուրժուա-
կան կառավարությանը, ուրեմն «միլյորա-
նիզմ» կիրառել:

բ) Կամ հեռանալ իշխանությունից, չվե-
րասերվելու համար, և պաշտօնական կու-
սակցության կողքին կազմել մի նոր կու-
սակցություն, ինչի վոր, իսկապես, ձգտում
եր և շարունակում ե, ըստ հյության, ձգտել
մեր ոպողիցիան:

Յերկու կուսակցության թեորիան կամ
նոր կուսակցության թեորիան սոցիալիզմի
կառուցման հնարավորությունը ժխտելու
ուղղակի արդյունքն ե, վերասերման հեռա-
նկարի ուղղակի արդյունքը:

Թե այս և թե այն յելքը տանում են

դեպի կապիտուլանություն, դեպի պարա-
վողականություն:

Ի՞նչպես եր դրված հարցը քաղաքացի-
ական պատերազմի ժամանակաշրջանում:
Հարցն այսպես եր դրված. յիթե մենք
չկարողանանք բանակ կազմակերպել և հա-
կահարված տալ թշնամիներին, ապա դիկ-
տատուրան կընկնի, և մենք կկորցնենք իշ-
խանությունը: Այն ժամանակ պատերազմն
առաջին տեղումն եր:

Ի՞նչպես ե դրված հարցն այժմ, յերբ
քաղաքացիական պատերազմը վերջացել է,
և տնտեսական շինարարության խնդիրնե-
րըն են անցել առաջին տեղը: Այժմ հարցն
այսպես ե դրված. յիթե մենք չենք կարող
սոցիալիստական տնտեսություն կառուցել,
ապա պրոլետարիատի դեկտատուրան, բուր-
ժուազիային ավելի ու ավելի լուրջ զիջում-
ներ անելու ուղին բռնելով, հարկադրված
կլինի վերասերվելու և քարշ գալու բուր-
ժուազան դեմոկրատիայի պոչից:

Կտրմղ են արգյուք կոմունիստները հա-
մաձայնել վերասերվող դիկտատուրայի որով

բուրժուական քաղաքականություն վարե-
լուն:

Վո՞չ չեն կարող և չպետք ե համաձայ-
նեն:

Այստեղից՝ յեղակացություն, հեռանալ
իշխանությունից և ստեղծել նոր կուսակ-
ցություն, ճանապարհ բանալով վերանորոգ-
վող կապիտալիզմին:

Կապիտուլանտություն, իբրև ոպողիցիոն
բլոկի ներկայիս դիրքի բնական արդյուն-
քը,—այս ե յեղակացությունը:

IV. ՈՐՈՉԻՑԻԱՆ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Անցնում եմ վերջին հարցին, ոպողիցիոն բլոկի և մեր կուսակցության միասնականության հարցին:

Ի՞նչպես ե կազմվել ոպողիցիան բլոկ:

Կուսակցությունը պնդում է, վոր ոպողիցիոն բլոկ կազմվել ե «նոր ոպողիցիայի» անցման միջոցով, ընկ. ընկ. Կամենեվի ու Զինովյեվի՝ տրոցկիզմի կողմն անցնելու միջոցով:

Ընկ. ընկ. Զինովյեվի ու Կամենեվը ժըխտում են այդ, ակնարկելով, վոր վճռ թե իրենք են Տրոցկու մոտ յեկել այլ Տրոցկին ե իրենց մոտ յեկել

Դիմենք փաստերին:

Յես խոսեցի մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցի վերաբերյալ XIV կոն-

ֆերենցիայի բանաձևի մասին: Յես խոսեցի այն մասին, վոր Կամենեվի ու Զինովյեվը հրաժարվել են այդ բանաձևից, վոր չի ընդունի և չի կարող ընդունել ընկ. Տրոցկին, հրաժարվել են, վորպեսզի մոտենան Տրոցկուն և անցնեն տրոցկիզմի կողմը: Ճիշտ ե այս, թե վոչ: Այն, ճիշտ ե: Ընկ. ընկ. Կամենեվի ու Զինովյեվը փորձել են արդյոք վորեւ բան հակադրելու այդ պնդմանը: Վճռ, չեն փորձել: Նրանք շրջանցել են հարցը լուռթյամբ:

Մենք, այնուհետև, ունենք մեր կուսակցության XIII կոնֆերենցիայի բանաձևը, վորը տրոցկիզմը վորակում ե իրեւ մանր-բուրժուական թեքում և լինինիզմի ռեվերսիա: Այդ բանաձևը հաստատված է, ինչպես հայտնի յե, Կոմինտերնի V կոնգրեսի կողմից: Յես իմ գեկուցման մեջ ասացի, վոր ընկ. ընկ. Կամենեվի ու Զինովյեվը հրաժարվեցին այդ բանաձևից՝ իրենց հասուկ հայտարարություններում ընդունելով տրոցկիզմի իրավացիությունը նրա պայքարում կուսակցության դեմ 1923 թվականին: Ճիշտ ե այդ,

թե վոչ։ Այս, ձիշտ եւ Ընկ. ընկ. Զինովյելից
ու Կամենելից փորձել են արդյոք վորևե բան
հակադրելու այդ պնդմանը։ Վաշ չեն փոր-
ձել։ Նրանք լուսթյամբ են պատասխանել։
Դարձյալ փաստեր։

Ընկ. Կամենելից 1925 թվականին հետե-
յալն եր գրում տրոցկիզմի մասին։

«Ընկ. Տրոցկին դարձավ այն կանալը, վորով մա-
նըր-բուրժուական տարերքն իրեն դրսեղում ե մեր
կուսակցության ներսում։ Նրա յելույթների ամբողջ
բնույթը, նրա ամբողջ պատմուկան անցյալը ցույց ե
տալիս, վոր այդ այդպես եւ Կուսակցության դեմ
մղած իր պայքարում նա յերկրի մեջ արդեն դարձել
ե այն ամենի սիմբոլը, ինչ մեր կուսակցության դեմ
ե ուղղված այս մետք ե ձեռք առնենք բոլոր
միջոցառութեար, վորպեսզի այդ վոչ-բոլշևիկյան ուս-
մունքի վարակից պաշտպանենք կուսակցության այն
խավերը, վորոնց վրա նա հույս ե զնում, այն ե
մեր յերիտասարդությունը, այն ապագա կազմը, վորը
պետք ե իր ձեռքն առնի կուսակցության բախար-
եկ այդ պատճառով ընկ. Տրոցկու դիրքերի սխալա-
կանության մասին ամեն տեսակի բացատրություն-
ների ուժեղացումը, այն մասին, թե անք ե լինու-
թում ամեն երացլիքի լին լինիքի միջնի, թե չի կա-

րելի այս յեկ այն զուգակցել ։ — այդ պետք ե մեր
կուսակցության հերթական խնդիրը լինեա (այս
Կամենելի ։ «Կուսակցությունը և արողիկզմը», «Լե-
նինիզմի համար» ժողովածու, էջ 84—86)։

Ընկ. Կամենելի համարձակությունը կրա-
վականանմ արդյոք այժմ այդ խոսքերը
կրկնելու։ Յեթե նա պատրաստ ե դրանք
կրկնելու, ինչու յե նա այժմ ընկ. Տրոցկու
հետ բոկի մեջ գտնվում։ Յեթե նա սիրտ չի
անում դրանք կրկնելու, ապա պարզ չի
արդյոք, վոր ընկ. Կամենելից նահանջել ե
իր հին դիրքերից և տրոցկիզմի կողմն ան-
ցել։

Ընկ. Զինովյելից 1925 թվականին հետե-
յալն եր գրում տրոցկիզմի մասին։

«Ընկ. Տրոցկու վերջին յելույթը («Հոկտեմբերի
դասերը») այլ բան չե, բայց յեթի լենինիզմի հիմուն-
ների ուժիվիլայի կամ նույնիսկ ուղղակի լիկվիդա-
ցիայի արգեն բավական բացահայտ մի փորձ։ Ամե-
նակարծ ժամանակ կանցնի, և այդ պարզ կլենի մեր
ամբողջ կուսակցության և ամբողջ ինտերնացիոնա-
լի համար» (այս Զինովյելի, «Բոլշևիզմը թե տրոցկիզմը»,
«Լենինիզմի համար» ժողովածու, էջ 120)։

1 Հսդգծութեալ իմ եւ Խ. Ս.։

Զինովյեվի այս ցիտատը համեմատեցեք
Կամենեվի հայտարարության հետ իր ճա-
ռում, թե «Մենք Տրոցկու հետ ենք, վորով-
հետև նա ունիզիայի չի յենթարկում լենի-
նի հիմնական գաղափարները», —և դուք
կհասկանաք ընկ. ընկ. Կամենեվի ու Զի-
նովյեվի անկման ամբողջ խորությունը:

Նույն 1925 թվականին ընկ. Զինովյեվը
հետեւյալն եր գրում Տրոցկու մասին.

Ալլիժմ վճռվում ե այն հարցը, թե ինչ բան և
ո՞նք-ն 1925 թվականին 1903 թվականին այդ հար-
ցը վճռվում եր կանոնադրության առաջին պարա-
գրաֆին ցույց տրվող վերաբերմունքով, իսկ 1925
թվականին՝ վերաբերմունքով դեպի Տրոցկին, գեպի
տրոցկիզմը: Ով ասում ե, թե արոցկիզմը բոլշե-
կյան կուսակցության մեջ կարող ե դառնալ Հորինա-
կան յերանգը, նա ինքը դադարում ե բոլոկի լինե-
լուց: Ով ուզում է այժմ կուսակցություն կառուցել
Տրոցկու հետ դաշնակցած, գործակցելով այն տրոցկիզ-
մի հետ, վորդ բացահայտուեն նաևնես ե գալիս բոլե-
վիզմի դեմ, նա նահանջում է լենինիզմի նիմուններից:
Պետք ե հասկանալ, վոր արոցկիզմն անցած ետապ ե,

1 Ընդգծումն իմ եւ ի. Աս.:

վոր լենինյան կուսակցությունն կառուցել այժմ
հնարավոր և միտիայն արոցկիզմին հակառակ»
(«Պրավդա», 5 փետրվարի 1925 թ.):

Ընկ. Զինովյեվի համարձակությունը
կբավականանմ արդյոք այժմ այդ խոսքե-
րը կրկնելու: Յեթե նա պատրաստ ե
կրկնելու, ինչու յե նա այժմ ընկ. Տրոցկու
հետ բլոկի մեջ գտնվում: Յեթե նա չի կա-
րող դրանք կրկնել ապա պարզ չե արդյոք,
վոր ընկ. Զինովյեվը նահանջել ե լենինիզ-
մից և անցել գեպի տրոցկիզմ:

Ինչի՞ մասին են խոսում այս բոլոր
փաստերը:

Այն մասին, վոր ոպողիցիոն բլոկը կազմ-
վել ե ընկ. ընկ. Կամենեվի ու Զինովյեվի՝
տրոցկիզմի կողմն անցնելու ձանալարհով:

Վո՞րն ե ոպողիցիոն բլոկի պլատֆորմը:

Ոպողիցիոն բլոկի պլատֆորմը սոցիալ-
դեմոկրատական թեքման պլատֆորմն ե, աջ
թեքման պլատֆորմը մեր կուսակցության
մեջ, բոլոր ու ամեն տեսակի ոպորտունիս-
տական հոսանքները հավաքելու պլատֆոր-
մը՝ կուսակցության դեմ, նրա միասնակա-
նության դեմ, նրա հեղինակության դեմ

պայքար կազմակերպելու համար: Ընկ. Կամենեվը խոսում է աջ թեքման մասին մեր կուսակցության մեջ, գլխով անելով կենտրոնական Կոմիտեյի կողմը: Բայց դա հնարք է, կոպիտ ու կեղծ հնարք, վորը նպատակ ունի կուսակցության դեմ ուղղված աղմբակալից մեղադրանքներով սքողել ոպողիցիոն բլոկի ոպորտունիզմը: Իրոք մեր կուսակցության մեջ աջ թեքման արտահայտությունն ոպողիցիոն բլոկն ե: Մենք ոպողիցիայի մասին դատում ենք վոչ թե նրա հայտարարություններով, այլ նրա գործերով: Իսկ ոպողիցիայի գործերը խոսում են այն մասին, վոր նա բոլոր ու ամեն տեսակի ոպորտունիստական տարրերի հավաքակեան ու ոշախն և՝ Ռուվսկուց ու «բանվորական ոպողիցիայից» մինչև Մոռվարինն ու Մասլովը, Կորչն ու Ռուտ Ֆիշերը, Ֆրակցիոնականության վերականգնում, մեր կուսակցության մեջ ֆրակցիաների ազատության թեորիայի վերականգնում, մեր կուսակցության բոլոր ոպորտունիստական տարրերի հավաքում, պայ-

քար կուսակցության միասնականության դեմ, պայքար նրա ղեկավար կազմերի դեմ, պայքար նոր կուսակցություն կազմելու համար,—ահա թե դեպի ուր և ծոռմայժման ոպողիցիան, յեթե դատենք ընկ. Կամենեվի յելույթով: Այդ կողմից ընկ Կամենեվի յելույթը դարձակեատ և ոպողիցիայի 1926 թ. հոկտեմբերին արած «Հայտարարություննից» դեպի ոպողիցիայի պառակտողական գծի վերականգնումը:

Ի՞նչ բան և ոպողիցիոն բնիքը կուսակցության միասնականության տեսակեցից:

Ոպողիցիոն բլոկը մի նոր կուսակցության սաղմն և մեր կուսակցության ներռում: Սա միթե փաստ չե, վոր ոպողիցիան ուներ իր կենտրոնական կոմիտեն և իր զուգահեռ տեղական կոմիտեները: 1926 թվականի հոկտեմբերի 16-ի իր «Հայտարարության» մեջ ոպողիցիան հավատացնում եր, թե ինքը հրաժարվել և ֆրակցիոնականությունից: Բայց միթե ընկ. Կամենեվի յելույթը չի խոսում այն մասին, վոր նա նորից վերադարձել և ֆրակցիոն ոլայքարին: Ի՞նչ յե-

բաշխիք, ին նա արդեն չի վերականգնել
ոպղիցիայի կենտրոնական ու տեղական
զուգահեռ կազմակերպությունները։ Սա մի՛
թե փաստ չե, վոր ոպղիցիան հասուել ան-
դամավճարներ եր հավաքում, իր դրամարկո-
ղի համար։ Ի՞նչ յերաշխիք, թե նա նորից
չի բռնել այդ պառակտողական ուղին։

Ոպղիցիան բլոկը նոր կուսակցության
սաղմնե, վորը խարխլում և մեր կուսակ-
ցության միասնականությունը։

Խնդիրն այն ե, վոր ջարդենք այդ բլո-
կը և լիկվիդացիայի յենթարկենք այն։
(Բառն ծափանարաւրյուններ)։

Ընկերներ, պրոլետարիատի դիկտատու-
րան, յերբ ուրիշ յերկիրներում իմալերիալիզմն
և տիրապետում, յերբ մեկ յերկիր, միայն մեկ
յերկիր և կարողացել ճեղքել կապիտալի-
ճակատը, — պրոլետարիատի դիկտատուրան
այդպիսի պայմաններում վոչ մի ըոպե չի
կարող գոյություն ունենալ առանց յերկա-
թե դիսցիպլինայով զինված կուսակցու-
թյան միասնականության։ Կուսակցության
միասնականությունը խարխլելու վորձերը,

նոր կուսակցություն կազմելու փորձերը
պետք ե արմատում վոչնչացվեն, յեթե
մենք ուզում ենք պահպանել պրոլետարիա-
տի դիկտատուրան, յեթե մենք ուզում ենք
սոցիալիզմ կառուցեն։

Ուստի խնդիրն այն ե, վոր լիկվիդա-
ցիայի յենթարկենք ոպղիցիոն բլոկը և
ամրապնդենք մեր կուսակցության միաս-
նականությունը։

~~ՀԱՅԱ~~

V. ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Յես վերջացնում եմ, ընկերներ:

Յեթե հանենք վիճաբանությունների հանրագումարը, ապա կարելի յե գալ մի ընդհանուր յեզրակացության, վորը վոչ մի կասկած չի թույլ տալիս, այն եւ յեզրակացության, վոր մեր կուսակցության XIX համագումարն իրավացի յեր՝ ասելով, վոր ոպողիցիան տառապում ե մեր պլուկտարիատի ուժերին չհավատալով, մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությանը չհավատալով:

Սա տպավորությունից մնացած այն ընդհանուր մրուրն ու այն ընդհանուր յեզրակացությունն ե, վորը չեր կարող չկազմվել ընկերների մոտ:

Այսպիսով, ձեր առջև յերկու ուժեր են կանդնած: Մեկ կողմից՝ մեր կուսակցու-

թյունը, վորը վստահորեն առաջ ե տանում և ՍՀՄ-ի պրոլետարիատին, սոցիալիզմ և կառուցում և բոլոր յերկիրների պրոլետարներին պայքարի յե կանչում: Մյուս կողմից՝ ոպողիցիան, վորը քարշ ե գալիս մեր կուսակցության հետեւյց, ինչպես զառամյալ մի ծերունի՝ հոդացավը վոտներում, մեջքը ցավոտ, գլուխը միզրենով բռնված,— ոպողիցիան, վորը չորս կողմը հոռետեսություն և սփոռում և ողը թունավորում շաղակրատան-քով այն մասին, թե մեզանում, ԽՍՀ-ում սոցիալիզմից վոչինչ չի դուրս գա, թե այնտեղ, բուրժուաների մոտ, ամեն ինչ լավ ե, իսկ մեզանում, պրոլետարների մոտ, ամեն ինչ վատ ե:

Սրանք են, ընկերներ, ձեր առջև կանդնած յերկու ուժերը:

Դուք պետք ե ընտրություն անեք նրանց միջև: (Ծիծաղ):

Յես չեմ կասկածում, վոր դուք ճիշտ ընտրություն կանեք: (Ծափանարություններ):

Ոպողիցիան իր քրակցիոն կուրության մեջ մեր հեղափոխությունը դիտում և վոր-

պես վորեւ ինքնուրույն ուժից գուրել մի
բան, վորակես Արևմուտքի դեռևս չհաղթաւ
նակած ապագա հեղափոխության ձրինաւ
վելքածի պես մի բան:

Ընկ. Իենինն այդպես չեր նայում մեր
հեղափոխության վրա, խորհուրդների հանու
րապետության վրա: Ընկ. Իենինը խորհ
ուրդների հանրապետությունը համարում
եր բոլոր յերկիրների պրոլետարների ուղին
լուսավորող մի ջահ:

Ահա թէ ինչ եր ասում այդ մասին
ընկ. Իենինը.

«Խորհրդային Հանրապետության որինանց նրանց
(այսինքն՝ բոլոր յերկիրների պրոլետարների և. ԱՅ.)
առջեւ յերկար ժամանակ կանգնած կլինի: Խորհուրդների
մեր սոցիալիստական հանրապետությունն ամ-
րապես կանգնած կլինի իբրև միջազգային սոցիա-
լիզմի ջահ և իբրև որինակ բոլոր աշխատավոր մաս-
ների առջև: Այսուեղ՝ ծեծիռառք, պատերազմ,
արյունհեղություն, միլլոնավոլ մարդկանց զոհեր,
կապիտալի շահագործում, այստեղ՝ իսկական հաշտու-
թյան քաղաքականություն և Խորհուրդների սոցիա-
լիստական հանրապետություն» (տես Իենին, է. ԽV,
էջ 88):

Այդ ջահը շուրջը յերկու ճակատ ե-
ստեղծվել—պրոլետարական դիկտատուրայի
թշնամիների ճակատ, վորոնք աշխատում են
պակաղերծ անել այդ ջահը, յերեցնել
ու հանգցնել այն, և պրոլետարիատի դիկ-
տատուրայի բարեկամների ճակատ, վորոնք
աշխատում են պահպանել ջահը և բորբո-
քել նրա բոցը:

Խնդիրն այն է, վոր աջակցենք այդ
ջահին և ամրացնենք նրա գոյությունը հա-
նուն համաշխարհային հեղափոխության
հաղթանակի:

Ընկերներ: Յես չեմ կասկածում, վոր
դուք բոլոր միջոցառումները ձեռք կառնեք,
վորպեսզի այդ ջահը վառվի և լուսավորի
բոլոր ճնշվածների ու ստրկացվածների
ուղին:

Յես չեմ կասկածում, վոր դուք բոլոր
միջոցառումները ձեռք կառնեք, վորպեսզի
այդ ջահի բոցն ամբողջ թափով բոլերքվե՛
և սարսափ պրոլետարիատի թշնամիների:

Յես չեմ կասկածում, վոր դուք բոլոր
միջոցառումները ձեռք կառնեք, վորպեսզի

այդպիսի ջահեր վառվեն աշխարհի բոլոր
մասերում՝ հուրախություն բոլոր յերկիր-
ների պրոլետարների: (Յերկարաև, յերկար
չդադարող ծափանարություններ: Բոլոր պատ-
վիրակները վօժի յեն կանգնում և յերգում
«Ինտենացիոնալ»: Յերեք անգամ «հուռոռա»):

ԲԱՆԱՁԵՎ «ՈՌԻՍԱԿԱՆ» ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընդունված Կեդուի VII ընդլայնված պլենումի
կողմից սնկ. Սատլինի զնկուցման առքիվ

Կիջկե-ի VII ընդլայնված պլենումը,
քննարկելով Համ կ(բ)կ մեջ յեղած ոպողի-
ցիոն բլոկի հարցը, վ"րոշում ե.

1. Համ կ(բ)կ մեջ յեղած ոպողիցիան իր
գաղափարային բովանդակությամբ ըստ բա-
նի եյության աջ վտանգ ե Համկ(բ)կ ներ-
սում՝ յերբեմն ձախ ֆրազներով քողարկված:

2. Նրա բնորոշ գիծը զարգացման ներ-
քին ուժերի թերագնահատումն ե ԽՍՀՄ-ում,
մի բան, վոր արտահայտվում ե ԽՍՀՄ-ում
սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը
ժխտելում: Կիջկ-ի VII ընդլայնված պլե-
նումը կարծում ե, վոր խորհրդային յերկի-
րը որյեկտիվորեն հանդիսանում ե միջազ-
գային հեղափոխության գլխավոր կազմա-
կերպող կենտրոնը: Ընդլայնված պլենումն
արձանագրում ե, վոր Համկ(բ)կ իր ամ-
բողջ անցյալ և իր ամբողջ ներկա աշխա-
տանքով վնչ թե խոսքով, այլ գործով ապա-

սուցել և իր ինտերնացիոնալիզմը և տվել ե
այդ ինտերնացիոնալիզմի մեծագույն որի-
նակները: Բնդլայնված պլենումը Համ-
կ(բ)կին աղջային սահմանափակվածու-
թյան համար մեղադրելը համարում ե զըր-
ալարտություն: Իր ամբողջ աշխատանքի մեջ
կողմնորոշվելով միջազգային հեղափոխության
կողմը, ընդունելով, վոր սոցիալիզմի վերջ-
նական հաղթությունը հնարավոր և միայն
իրեն համաշխարհային հեղափոխության
հաղթություն, վոր միայն այդ հեղափո-
խությունը կարող է ԽՍՀՄ-ն ապահովել պա-
տերազմից ու ինտերվենցիայից և կողնի ել
ավելի արագացնելու անտեսական զարգաց-
ման տեմպը ԽՍՀՄ-ում, Համկ(բ)կ միանգա-
մայն ճիշտ և վարում սոցիալիստական շի-
նարարության քաղաքականությունը՝ լիո-
վին վստահ, վոր ԽՍՀՄ-ն յերկրի ներսում
ունի այն «ամենը, ինչ անհրաժեշտ և և բա-
վական» լիակատար սոցիալիստական հասա-
րակություն կառուցելու համար: Այդ հնա-
րավորության ժխտումը ուղղվեցիր կող-
մից՝ այլ բան չե, բայց յեթե Ռուսաստանի

սոցիալիստական հեղափոխության նախա-
դրյանների ժխտում, այսինքն՝ սոցիալ-դե-
մոկրատական թեքում:

3. Այդ ժխտումից, այսինքն՝ այդ ոպոր-
տունիստական տենդենցից, անհրաժեշտա-
րար բղխում և նեալի սխալ գնահատականն
իրեկ սխտեմատիկ նահանջ—և միայն այդ-
քան (այնինչ նեալի ուելսերով ԽՍՀՄ անդա-
դար շարժվում և սոցիալիզմի ուղղությամբ),
ԽՍՀՄ-ի պետձեռնարկությունների և ամ-
բողջ եկոնոմիկայի սխալ գնահատականը,
կուլակային վտանգի չափազանցումը, գյու-
ղի սոցիալիստական զարգացման ուղիները
չհականալը, պետական իշխանության
բնույթի սխալ գնահատականը (ընկ. Տրոց-
կու «բնակ վոչ՝ պրոլետարական պետու-
թյունը», ընկ. Կամենեվի հայտարարու-
թյունները և այլն) և, վերջապես, պնդումնե-
րըն այն մասին, թե պրոլետարական դիկ-
տատուրան և Համկ(բ)կ վերասերվել են,
ընդհուպ մինչև վրդովեցուցիչ ու հականե-
ղափոխության սահմանին կանգնած ասե-
կուները տերմիդորի մասին: Այս բոլոր գու-

խովին սխալ և ուղղակի զրապարտչական պնդումներով Համկ(թ)կ մեջ յեղած ոպոզիցիան որյեկտիվորեն ոժանդակություն եցույց տալիս պրոլետարական դիկտատուրայի թշնամիներին ու կոմոնիզմի ռենեգատներին (Կորշ, Մասլով, Ռուբենիս, մենշևիկներ, ու ես-երներ, միջազգային սոցիալ-դեմոկրատիա) նրանց ջանքերի մեջ՝ անվատահություն սերմաներու պրոլետարիատի շարքերում դեպի պրոլետարական հեղափոխությունը և սոցիալիզմի կառուցման հնարավորությունը:

4. Կիդեմի VII ընդլայնված պլենումն արձանագրում ե, վոր սոցիալիստական շինարարության կարևորագույն հարցերում ոպոզիցիոն մի շարք խոշորագույն առաջնորդների փաստական դիրքը կբերեր իր հետեւ դիկտատուրայի խարխլում և իրական ոգնություն յերկրի բուրժուական տարրերին: Դրան են վերաբերում. արդյունաբերության պրոդուկտների բարձր գների բաղադրականության վերաբերության պարագաների թուլացում, չերվոնեցի թուլացում,

հարոված գյուղացիական չքավորությանը, ոգնություն կուլտիվին, պետական-տնտեսական ապարատի բյուրոկրատացում. արդյունաբերական շինարարությունն ուժեղացնելու պատրվակով պետական կապիտալներն առևտրից հանելու առաջարկը, վորը կնշանակեր մասնավոր կապիտալի իշխանություն շրջանառության մեջ և նրա անմիջական դոդումը գյուղացիության հետ. գյուղացիության չափից դուրս հարկման քաղաքականությունը, վորը կտաներ դեպի հումքի աղբյուրների թուլացում սոցիալիստական արդյունաբերության համար և գեղի բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի քանդում և այլն:

5. Ընդլայնված պլենումը նշում և ՇԱԱպնիկով-Մեդվեդյեվի խմբի (ոպոզիցիոն բլոկի բաղկացուցիչ մասի) աղաղակող ոպորտունիստական թեքումը, խմբի, վորը հասավ մինչև սոցիալ-դեմոկրատական առաջնորդների ռենաբիլիտացիան, մինչև լիկվիդացություն Կիդեմի և Պրոֆինտերնի վերաբերամբ, մինչև լիկվիդատորություն ԽՍՀՄ-ի

սոցիալիստական շինարարության վերաբերա-
մամբ:

Ընկ. ընկ. Շլյապնիկովի և Մեղլեզյանի
հայտարարությունը, վորի մեջ նրանք հրա-
ժարվեցին իրենց պլատֆորմի ամենից ա-
վելի բացահայտ-ուղղությունիստական մասե-
րից, մի ավելորդ անգամ ընդգծում ե, վոր
Համկ(բ)կ քաղաքականությունը աջ թեք-
ման գեմ նրա մղած պայքարում միանգա-
մայն ճիշտ եր և վոր Համկ(բ)կ ներսում
աջ վտանգի ոջախ հանդիսանում են ոպո-
ղիցիոն բլոկն ու նրա դաշնակիցները:

6. Ընդլայնված պլինումն արձանագրում
ե, վոր, այսպիսով, Համկ(բ)կ մեջ յեղած
ուղղիցիան ըստ բանի եյության աջ վտանգ
ե հանդիսանում կուսակցության ներսում:
Կուսակցական ամենատարբական նորմա-
ների խախտումով պայքար մղելով կուսակ-
ցության դեմ, հրաժարվելով—թէ թեորիա-
յում, թէ պրակտիկայում— լենինի ուսմուն-
քից կաղմակերպական հարցի մասին, Համ-
կ(բ)կ ներսում իր լիակատար պարտու-
թյունից հետո և նույնիսկ իր կապիտուլա-

ցիայից հետո (ահս հոկտեմբերի 16-ի հայ-
տարարությունը) ձգտելով պայքարն ուրիշ
կոմկուսակցություններ փոխադրելու, պլատ-
ֆորմ ստեղծելով կի-ի մեջ և նույնիսկ
նրանից դուրս բոլոր ոպողիցիոն տարրերի
համար,—ուղղիցիան դրանով իսկ ծառայու-
թյուն ե մատուցանում կոմունիզմի հակա-
ռակորդներին:

7. Նկատի ունենալով վերը ասածները՝
կիդկ-ի ընդլայնված պլինումը կի-ի բոլոր
սեկցիաներին պարտավորեցնում ե վճռա-
կան պայքար մղել ինչպես Համ կ(բ)կ մեջ
յեղած ուղղիցիայի և ուրիշ կոմկուսակցու-
թյուններում յեղած նրա կողմնակիցների
ամեն տեսակ փորձերի դեմ՝ կոմունիստական
ինսերնացիոնալի շարքերի գաղափարային
ու կաղմակերպական միասնականությունը
խախտելու, այնպես ել այն չափազանց
վնասակար հետեւանքների ու ազդեցության
դեմ, վոր կարող ե ունենալ ոպողիցիայի՝
մեր հակառակորդների կողմից ոգտագործ-
վող՝ պրոպագանդանքան մեր կուսակցություն-
ների տարած աշխատանքի վրա՝ միջազ-

գային պրոլետարիատի լայն մասսաները
հեղափոխության ու սոցիալիզմի կողմը նվա-
ճելու համար։ Ոպողիցիայի դեմ այդ պայ-
քարն առանձնապես անհրաժեշտ ե ներ-
կայումս, յերբ իմպերիալիստական պետու-
թյունները փորձում են շրջապատել ԽՍՀՄ,
յերբ սոցիալ-դեմոկրատիան աջակցում ե
այդ տենդենցներին պացիֆիստական Փրազ-
ների քողարկման տակ և յերբ կոմունիզմի
ուսնեղատները (Կորշ, Շվարց և ուր.) բա-
ցահայտորեն քարոզում են ԽՍՀՄ-ն իմպե-
րիալիստական պետությունների դեմ պաշտ-
պանելու վնասը։

Կիդկի-ի ընդլայնված պլենումը նմանա-
պես պարտավորեցնում ե բոլոր սեկցիանե-
րին և առաջին հերթին իրեն՝ Համ Կ(բ)Կ-
ին՝ բոլոր միջոցներով պաշտպանել լինի-
նյան կուսակցության, աշխարհում առաջին
պրոլետարական պետության դեկավարի,
միասնականությունը։

8. Ընդլայնված պլենումը հաստատում
ե ոպողիցիոն բլոկի մասին Համ Կ(բ)Կ ԽՄ կոն-
ֆերենցիայի բանաձեռ, վորը ոպողիցիոն

ըլոկի պլատֆորմն ու աշխատանքը դատա-
պարտում ե իրրև սոցիալ-դեմոկրատական
թեքման արտահայտությունն և իրրև սպառ-
նալիք Համ Կ(բ)Կ միասնականությանը, և
վորոշում ե Համ Կ(բ)Կ ԽՄ կոնֆերենցիայի
բանաձեռ կցել ներկա վորոշմանը, իրրև
Կիդկի-ի VII ընդլայնված պլենումի վճիռ։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ԶԵԿՈՒՑՈՒՄ ԿԻԳԿ-Ի ԸՆԴԱՅՆՎԱՆ ՊԼԵՆՈՒՄԻՆ

I.	Նախնական դիտողություններ	5
	Ներկուսակցական զարգացման հակասությունները	5
	Հակասությունների աղբյուրները կուսակցության ներսում	18
II.	Համեմ մեջ յեղած սպովիցիալի առանձնահատկությունները	26
III.	Տարածայնությունները Համեմ մեջ	43
	Սոցիալիստական շինարարության հարցերը	44
	«Դադարի» գործոնները	53
	Հեղափոխության «ազգային» և ինտերնացիոնալ խնդիրների միասնություննու անբաժանելիությունը	57
	Սոցիալիզմի կառուցման հարցի պատմության շուրջը	61
	ԿԾՀ-ում սոցիալիզմ կառուցելու հարցի առանձնապես կարևոր նշանակությունը տվյալ մոմենտին	73
	Հեղափոխության հեռանկարների մասին	80

Իրականում ինչպես և դրված հարցը	84
Հաղթության շանսերի մասին	88
Գործնական-քաղաքական տարածայնությունները	93
IV. Ապոզիցիան աժխատամիջի մեջ	100
V. Պրոլետարիատի դիկտատորայի քենամիներն ինչի համար են գովում ապօզիցիային	110
VI. Ապոզիցիոն բլոկի պարտաւրյունը	119
VII. Համեկ ԽՄ կոնֆերենցիայի զործնական իմասն ու հանակությունը	127
ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ	
I. Առանձին դիտողություններ	133
Մեզ փաստեր են հարկավոր, և վոչ հերությանքներ ու բամբասանքներ	133
Հարց, թե ինչի համար են գովաբանում ոպոզիցիային պրոլետարիատի դիկտատուրայի թշնամիները	147
Միաներ ել կան, սխալներ ել	159
Պրոլետարիատի դիկտատուրան ըստ Զինովյեվի	168
Ընկ. Տրոցկու պատգամախոսությունները	176
Ընկ. Զինովյեվը Մարքսից, Ենգելից ու Լենինից մեջբերություններ անող դպրոցականի դերում	183
Ռեվոլյոնիզմ ըստ Զինովյեվի	204
II. Առանձին կապիտալիստական յերկիրներում սոցիալիզմի հաղթելու հարցը	213

Պրոլետարական հեղափոխությունների նախադրյալներն առանձին յերկիրներում իմպերիալիզմի ժամանակաշրջանում ինչպես և ընկ. Զինովյեվը «մշակում» Լենինին	213
III. ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հարցը Ոպօզիցիայի «մանյովըները» և Լենինի կուսակցության «նացիոնալ-սեփարմիզմը» Մենք ԽՍՀՄ-ում կառուցում ենք և կարող ենք կառուցել սոցիալիզմի տնտեսական բազան Մենք սոցիալիզմ ենք կառուցում՝ դաշնակցած համաշխարհային պրոլետարիատի հետ Վերասակրման հարցը	235
IV. Ապոզիցիան յեվ կուսակցության միասնակնության հարցը	246
V. Յեզրափակման հարցը Բանաձեռնության վերաբերյալ, ընդունված ԿԻԳԿ-ի VII ընդլայնված պլենումի կողմից ընկ. Մատլինի գեկուցման առքի	246
	267
	292
	300
	304
	314
	319

1. M. Moni սույնը.
Young see հունը.
2. շունը
3. կրող ցամքի օթ լուս
Power lightbulb
4. շունքի օթ լուսներ
Lighting of suns
(1925/0)

Արդի 136
ԽօՏ 312
3



ՀՀ Ազգային գրադարան



NL0178600

3
ЧИСЛО 1 Р. 50 Ч.
ЧИСЛО 50 Ч.

ЦЕНА 1 Р. 50 К.
ПЕРЕПЛ. 50 К.



И. В. СТАЛИН
ЕЩЕ РАЗ О СОЦИАЛ-ДЕМОКРАТИЧЕСКОМ
УКЛОНЕ В НАШЕЙ ПАРТИИ
Баринов, Фризель